ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Վանաձոր – 2012

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Գիտաժողովը նվիրված է
հայ գրատպության 500-ամյակին

Վանաձոր

ՍԻՄ տպագրատուն

2012

ՀՏԴ 93/94:06
ԳՄԴ 63.3
Մ 730

Տպագրվում է
Վանաձորի Հովի. Թումանյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակության է երաշխավորել
ՎՊՄԻ պատմության ամբիոնը

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ֆելիքս ՄՈՎՍԻՍՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Համլետ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սամսոն ՔԱՌՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԵԹԻՄՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր

Սուսաննա ԹՈՒՄԱՆՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Արթուր ՄԵԼԻՔՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ / ՀՀ ԿԳՆ, Վանաձորի պետ.
Մ 730 մանկավարժ. ինստիտուտ; Խմբ. խորհուրդ՝ Գ. Խաչատրյան և
ուրիշ.- Վանաձոր: ՍԻՄ տպագրատուն, 2012.- 250 էջ:

Ժողովածուն ներառում է 2012 թ. հոկտեմբերի 4-ին Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցած միջազգային գիտաժողովի զեկուցումներ, որոնք ՎՊՄԻ գիտխորհրդի որոշմամբ տպագրվում են որպես գիտական հոդվածներ:

Ժողովածուն ամփոփում է պատմագիտական հոդվածներ, որոնք գիտական խմբագրական խորհրդի անդամների կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ՀՏԴ 93/94:06
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-809-80-9 © Հեղինակային խումբ, 2012
© Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական
մանկավարժական ինստիտուտ, 2012

ԱՄՊՐՈՊԻ ԱՍՏԾՈՒ ՄԱԿԴԻՐՆԵՐԸ ԳԱՀԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Սարգիս Պետրոսյան
պատմական գիտությունների դոկտոր

Արևելագիտության մեջ ժամանակին տարածում գտած տեսակետի համաձայն, Արևմտյան Տիգրիսի ավազանի նաիրի-ուրարտական դարաշրջանի բնակչությունը ունեցել է խուռիական ծագում:[1] Այս տեսակետի պահպանման մեջ առանցքային դեր այսօր վերագրվում է տեղի իշխող տոհմերի գահանուններում *Թեշուբ* դիցանվան՝ որպես երկրորդ բաղադրիչ, կիրառվելու փաստին: *Թեշուբ*-ը համարվում է ուրարտական *Թեյշեբա*-ի խուռիական զուգահեռը:[2] Այս երկուսին վերագրում են նաև ոչ խուռիական՝ սուբարիական,[3] կամ հնդեվրոպական[4] ծագում: *Թեշուբ* դիցանվան խուռիական ծագման դեպքում անգամ հնարավոր չէ նրա միջոցով դիցանվանակիր որևէ գահակալի էթնիկական պատկանելիությունը բացահայտել, որովհետև այդպիսիք կրում էին նաև Խեթական թագավորության և հյուսիս-ասորիքային մանր թագավորությունների գահակալները:[5]

Նման դեպքերում կարևորվում են ոչ թե դիցանունները, որոնք հաճախ բերված են գաղափարագրերով կամ դրանց արժեքն ունեցող հնչյունագիր անուններով, այլ դրանց կից գործածված դիցական մակդիրները՝ գահանունների առաջին բաղադրիչները: Ի նկատի առնենք, որ դրանք, որպես համապատասխան աստվածություններին առավել դիպուկ բնորոշող մակդիրներ, գրեթե անբաժան էին նրանց անուններից: Հայասական դիցարանում, օրինակ, կային Ամպրոպի երեք աստվածներ: Սուպիլուլիումա-Խուկաննա դաշնագրի (մ.թ.ա. XIVդ. կեսեր) հավելվածում երեքն էլ հանդես են գալիս ^{D}U գաղափարագրի տակ: Սրանցից երկուսի անունները հիշատակված են իրենց մակդիրների հետ միասին՝

---

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր.,1971, էջ 147-148:

[2] Г. Меликишвили, Наири-Урарту, Тб., 1954, стр. 165, Ս. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Եր.,1990, էջ 42-43:

[3] Гр. Капанцян, Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, стр.276, пр 2.

[4] Н. Адонц,Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 405, пр.2, Ա.Պետրոսյան, Արամազդ. Կերպար, պաշտամունք, նախատիպեր, Եր., 2006, էջ 20-21:

[5] О. Герни, Хетты, М., 1987, стр. 26-27.

^{D}U.GUR և ^{D}U.takšanaš:[1] Այս մակդիրներից առաջինը ևս գաղափարագիր է, իսկ երկրորդը՝ takšanaš (կարդա՝ *taksana-)՝ հնչյունագիր: Երկրորդը հնդեվրոպական ծագում ունի, նշանակում է «թեքող, կռանող, շինող»[2] և արմատակիցն է հայերեն *թեքել* («կռանելով կոկել, շինել, սրել») բառի:[3] Նույն հավելվածում հայասական Արևի աստվածը հանդես է գալիս իր խեթ-խաթական (արձանագրությունը խեթերեն է) համարժեքի ^{D}Izziištanuš (կարդա՝ *Izzi-Istanu) անվան տակ,[4] որը բառացիորեն նշանակում է «Բարի Արև»:[5] Հայ հեթանոսական դիցարանի գլխավոր աստվածությունների անունները ևս հաճախ հիշատակվել են իրենց ամենահայտնի մակդիրների հետ միասին. *Արի Արամազդ, Անահիտ Տիկին, Քաջ Վահագն*: Այս օրինակները ցույց են տալիս, որ դիցանունը կարող էր և օտար ծագում ունենալ, բայց դրանք կրած աստվածությունների մակդիրները բնիկ լինել: Այսպես, իրանական ծագում ունի հայոց մայր դիցուհի Անահիտի անունը, բայց նրա մակդիրների ամբողջ շարքը բնիկ հայկական է. *Տիկին, Մեծ, Կեցուցիչ, Մայր, Ոսկեմայր, Ոսկեծին, Ոսկեհատ*:[6] Ընդ որում, այս բառերի ի բոլոր բաղադրիչները հնդեվրոպական ծագում ունեն, այսինքն՝ հայոց մեջ շատ ավելի վաղ են կիրառվել, քան մեր դիցուհու *Անահիտ* փոխառյալ անունը:

Ելակետ ընդունելով այն սկզբունքը, թե դիցանվանածին առանձին գահանունների առաջին բաղադրիչները Ամպրոպի աստծու մակդիրներն են, ստորև կփորձենք ստուգաբանել դրանցից մի քանիսը: Այդ կերպ մենք կարող ենք հասնել համապատասխան գահանունները կրած անձանց և նրանց շրջապատի էթնիկական ինքնության բացահայտմանը: Ուրարտական դարաշրջանի Ամպրոպի աստվածը (գաղափարագիր՝ ^{D}IM, հնչյունագիր՝ ^{D}Teišeba) «հրաչյա» է ընբռնվել, ուստի Բուդինի հավաքածուի (ժնև)

---

[1] Keilschrifturkunden aus Boghazkëi (այսուհետև՝ KUB), HF. 1-30, Berlin, 1923-1939, XXVI, 39, IV 26, 29, 32.

[2] Ս.Պետրոսյան, Մուրսիլի I-ի արևելյան արշավանքի երթուղին, «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ», IV, Գյուրի, 2001, էջ 55-56:

[3] Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. II, Եր., 1973, էջ 178-179:

[4] KUB, XXVI, 39, IV, 28.

[5] Ս.Պետրոսյան, Հին հայոց եռամասն ամսուայ խորհուրդը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1996, էջ 422-423:

[6] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Եր., 1983, Ե. 53, Ե. 59, Զ. 68, ԺԲ. 127, ՃԺԴ. 809:

ուրարտական բրոնզե թիթեղին նրա գլխավերևին մեծ աչք է պատկերված՝ նրա շանթահարելու կարողությունն ապացուցող խորհրդանիշը:[1] Հիշենք դեռևս Մովսես Խորենացու ժամանակ կենսունակ այն առասպել-ավանդազրույցը, որն այդպիսի կարողությունն էր վերագրում Երվանդ Վերջին թագավորին՝ Հայոց հնագույն Ամպրոպի աստծու անվանակցին:[2] «Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, եւ ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն»:[3] Որ կայծակն ու փայլակը անբաժան մասն են ըմբռնվել «աչք» հասկացության, ցույց են տալիս բնության այդ երևույթների *կայծակն* (կայծ+ակն «աչք») և *փայլակն* (փայլ+ակն) անունները:[4] Հիշենք հետևյալ արտահայտությունները.*Աչքի լույսիցը պեծ ու կրակ վար թափվել* ՝«շատ զայրանալ», *Աչքի հանդիպել, Աչքի գալ* «չար աչքի գալ, կախարդության ենթարկվել»,[5] *Աչքով տալ* «մի գեղեցիկ՝ լավ բանի վրա նախանձով նայել՝ չար հայացքով անմիջապես վնասել»:[6]

Մենք հակված ենք կարծելու, որ ամպրոպաբնույթ աստվածությունների նույնպիսի հատկանիշներն են պայմանավորել Արևմտյան Տիգրիսի ավազանի Կադմուխի երկրի (հին հայկական ավանդազրույցներում՝ *Կադմեայ տուն)* թագավորներից երկուսի՝ Քալի-Թեշուբի և Քիլի-Թեշուբի, անուններում *Քալի* և *Քիլի* բաղադրիչների հայտնվելը: Մ.թ.ա. 1115-1113 թթ. Արևելյան Տիգրիսի ավազան իր բանակով ներխուժած Ասորեստանի Թիգլաթփալասար I թագավորը նրանց հիշատակում է իր արձանագրության մեջ. «Նրանց թագավորին՝ Քալի-Թեշշուբի որդուն՝ Քիլի-Թեշշուբին, որին անվանում էին (նաև) Իրրուպի, ձեռքերովս բռնեցի, նրա կանանց, նրա հարազատ որդիներին, ազգականներին, (ինչպես նաև) 180 պղնձե

[1] Ս.Պետրոսյան, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 40 (նկարը՝ էջ 35-ում):

[2] *Երուանդ-եան* < հ.-ե. *perun̥to- հմմտ. հին հնդկ. Parjanya, լիտվ. Perkunas, սլավ. Perun դիցանունները: Տե՛ս Ս. Պետրոսյան, «Վահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, «Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1981, թիվ 4, էջ 81-85:

[3] «Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց», 1981, Բ, խբ:

[4] Ս. Պետրոսյան, Հայոց մեհենագրության ակունքներում, էջ 39-40:

[5] Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հ. I, Եր., 1944, էջ 201:

[6] Նույնը, էջ 202:

անոթ, հինգ բրոնզե տաշտ, նրանց աստվածների հետ, ոսկի և արծաթ, նրանց ունեցվածքի լավագույնը ես տարա, ռազմավարը, հարստությունը դուրս բերի»:[1]

Kali-Teššub անվան Kali (<*kal-i հմմտ. Azz-i, Alz-i, Šubr-i) բաղադրիչի հիմքում *քաղց* «անոթություն» բառի *քաղ//*քալ* արմատն է: Հայերեն բառի իմաստակիցներից հիշենք հին գերմ. *sṵelt-/*sṵeld- նախաձևից սերած հին հյուս. svelta և շվեդ. svälta բառերը, իսկ արմատի նախնական նշանակությունը պահածներից՝ հուն. εἴλη «արևի տաքությունը», լիտվ. svilti «խանձել», հբգ. swelzan «այրել», անգլ.-սաքս. swelan «կամաց-կամաց այրվել»:[2] Հ.-ե. *sṵḷ->հայ. *քալ-//քաղ-* անցման օրինաչափ լինելու տեսանկյունից հմմտ. հ.-ե. *sṵeni̯o->*քենի*, *sṵesōr>*քոյր*, *sṵopno->*քուն*: Հ.-ե. sṵel- արմատի վերին ձայնդարձից էլ ունեցել ենք **քիլ-* արմատը՝ առկա բարբառային հետևյալ բառերում. *քլքլման* (*<*քիլ-քիլ* ՝ արմատի կրկնությամբ), որը նշանակում է «սաստիկ տաք» (օրինակ, *Թոնիրը քլքլման տաք է), աչքիլել (<*աչ «աչք»+քիլ),* որը «աչքով տալ» է նշանակում (օրինակ, *Երեխին նա աչքիլեց),* իսկ բառացիորեն՝ «աչքով այրել»:[3] Ուրեմն, Kali-Teššub անվան մեջ առկա է հնդեվրոպական արմատի *sṵḷ-ստորին ձայնդարձը, իսկ Kili-Teššub անվան մեջ՝ վերին *sṵel- ձայնդարձը, որոնք մի դեպքում կարող էին կիրառվել ամպրոպի այրող (կայծակ) մյուսում՝ լուսավորող (փայլակ) հատկանիշներն առաջնային համարելիս:

Խեթերը, ինչպես իրենց, այսպես էլ օտար Ամպրոպի աստվածներին հաճախ նույնացնում էին Թեշուբին և հիշատակում նրա անվան տակ:[4] Ուրարտուի սեպագիր բնագրերում Ամպրոպի աստվածը հիշատակված է ինչպես շումերական ^{D}IM գաղափարագրի տակ, այնպես էլ *Թուշուբ*-ի զուգահեռ *Թեյշեբա* դիցանվամբ: Ասորիք-հյուսիսմիջագետքյան տարածքում Ամպրոպի աստվածը հիշատակված է թե՛ շումերական համապատասխան գաղափարագրով, թե՝ աքադական *Ադադ* անվամբ, թե՛ որպես *Թեշուբ:*[5] Ուրեմն, հնչյունագիր հիշատակվելիս անգամ, այս դիցանուններները գաղափարագրի արժեք են ունեցել և միշտ չէ, որ ընթերցվել են *Թեշուբ, Թեյշեբա, Ադադ:* Առանձին դեպքերում դրանք, հետերոգրաֆիկ գրության սկզբունքով, կարող էին ընթերցվել Ամպրոպի աստծու տեղա-

[1] «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. I, Եր., 1981, էջ 17:
[2] ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 545:
[3] ՀԲԲ, հ. IV, Եր., 1945, էջ 577, հ. I, էջ 202:
[4] В. В. Иванов, Хеттская мифология, “Мифы народов мира”, т. II, М., 1988, стр. 591.
[5] М.Л.Хачикян, Хурритская мифология, նույն տեղում, էջ 608:

կան անուններով: Հիշենք նաև միջին պարսկերեն (պահլավերեն) բնագրերին բնորոշ հուզվարիշ երևույթը:[1]

Ամպրոպի աստծու գաղափարագիրը միևնույն ժամանակ *Թեշուբ և Ադադ* ընթերցվելու հնարավորության մասին է խոսում Աքադի Նարամ-Սուեն թագավորի (մ.թ.ա. XXIIIդ. վերջեր) արձանագրությունները: Դրանցում Արմանում և Ափիշալ երկրների թագավորների նույնական անունները բերված են ^{m}rí-id-^{D}IM ձևով՝ որպես վերջին բաղադրիչ ունենալով Ամպրոպի աստծու գաղափարագիրը:[2] Արմանումի արքային հիշատակող արձանագրությունը թարգմանում են հետևյալ կերպ. «Այսպես է ասում Նարամ- Սուենը՝ Հզորը, արքան (աշխարհի) չորս կողմերի. «Դագան աստվածը տվեց ինձ Արմանումն ու Էբլան, և ես հաղթեցի Ռիդ/շ-Թեշուբին (Ռիդ/շ-Ադադին)՝ Արմանումի արքային»:[3] Ռ. Իշխանյանի կարծիքով, *Ռիդ-Ադադը* «ըստ երևույթին, հայ թագավորի ինչ-որ անվան սեմական թարգմանությունն է»:[4] Բայց այդպիսին կարելի է համարել միայն գահանվան ^{D}IM բաղադրիչի *Ադադ* ընթերցման դեպքում: Իսկ, ինչպես տեսանք, այն նաև *Թեշուբ* են ընթերցում: Բացառված չէ, որ վերջինս ևս անվան միակ ընթերցումը չի եղել, որովհետև ^{D}IM գաղափարագրի տակ կարող էին հասկացվել ոչ միայն Թեշուբն ու Ադադը, այլև Ամպրոպի մեկ ուրիշ աստվածություն:[5]

---

[1] Հայտնի է, որ միջին պարսկերեն բնագրերը խճողված են արամեերեն բառերով, որոնք ոչ թե արամեերեն, այլ միջին պարսկերեն էին ընթերցվում: Օրինակ, համապատասխան գրությունը malk-ān-malka ընթերցելու փոխարեն՝ ընթերցում էին šāh-ān-šāh «արքայից արքա» (արամ. malka//միջ. պարս. šāh «արքա»):

[2] G. A. Barton, The royal inscriptions of Sumer and Akkad, London, 1929, vol. I, p. 140-141.

[3] Ա.Մովսիսյան, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Եր., 2005, էջ 152:

[4] Ռ. Իշխանյան, Համեմատական լեզվաբանության նոր հայտնագործումները և հայերի ծագման ու հնագույն պատմության հարցերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, թիվ 2, էջ 102:

[5] Այդպիսի ամպրոպաբնույթ աստվածություն է եղել վաղ շրջանի Տորքը: Անգամ Մովսես Խորենացու երկում Տորքին վերագրված են Ամպրոպի աստծուն բնորոշ գծեր. նա տգեղ է՝ ինչպես մռայլ ամպը, գերհզոր՝ ինչպես կայծակը՝ ժայռեր է ճեղքում-հղկում, հակառակորդների ուղղությամբ ժայռեր շպրտում (Խորենացի, Բ, Ը): Ժամանակին հայագիտության մեջ գերիշխած այն կարծիքը, թե Տորքը ժառանգորդն է խեթալուվիական Տարկու/Տարխու (Տարխոնտ) աստվածության, չի հաստատվում: Տորքը բնիկ հայկական աստվածություն է՝ հնդեվրոպական հեռավոր անցյալից եկած այնպիսի մի ժառանգություն, ինչպիսին է նաև Տարկու/Տարխուն: Դրա վկան նրա անվան հունարեն զուգահեռ δορκός «այծքաղ»

Նարամ-Սուենի մասին գոյություն ունի «Նարամսինը և իր թշնամիները» կոչված և մ.թ.ա. II հազարամյակի կեսերով թվագրվող հին խեթերեն մի արձանագրություն: Նարամ-Սուենի 17 հակառակորդների շարքում հիշատակված է նաև Արմանի երկրի թագավոր Մադակինան:[1] Ի. Մ. Դյակոնովը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Արման/Արմանում երկրի թագավորը աքադերեն տեքստում կոչվում է ոչ թե *Մադակինա,* այլ *Ռիդ-Ադադ*:[2] Ի. Գելբի կարծիքով, *Մադակինան* նույնքան հին անուն է և ունի սուբարյան ծագում:[3] Մեր կարծիքով, «սուբարյան» որակված Մադակինա արքայի անունը նույնպես հնդեվրոպական-հայկական ծագում ունի և Ամպրոպի աստծու զինվածությունը նշող մակդիրից ածանցված գահանուն է:

Ամպրոպի աստծուն բնորոշ զինատեսակներից է եղել մարտական տապարը: Դրա տափակ տեսակը նախապես եղել է տնտեսական գործիք՝ կիրառված տաշելու, կտրելու, փորելու և այլնի համար, իսկ նրանց տարատեսակ սակրերը գործածվել են որպես զենք և իշխանության սրբազան խորհրդանիշ:[4] Ի տարբերություն անտառազուկ հարավային Միջագետքի, Հայկական լեռնաշխարհը՝ մասնավորապես հայկական Տավրոսը, հարուստ էր երկնասլաց ծառերի սաղարթախիտ անտառներով: Բնականաբար, այդպիսի միջավայրում տապարի գործածումը դառնում էր անհրաժեշտություն: Ըստ երևույթին, ամպրոպի ժամանակ հսկա ծառերը գետին տապալող կայծակը՝ հին մարդկանց բնորոշ առասպելաբանական մտածողությամբ, համադրվել էր նույնպիսի գործողություն իրականացնող կացնի հետ, որի պատճառով մարտական տապարը հա-

---

բառն է, որը *Տորք* և Tarku/Tarhu դիցանունների նման իր հիմքում ունի *dork-նախաձևը (Ս.Պետրոսյան, հնագույն հայաստանի գլխավոր աստվածությունների շուրջ, «Հայաստանի էկոլոգիական հանդես», 2003, թիվ 2, էջ 127-128): Հ.-ե. *dork->խեթ. Tarhu/Tarku, իսկ հայ. *Տորք,* որովհետև հ.-ե. d->խեթ.t-, հայ. *տ-*, հ.-ե. -o->խեթ. -a-, հայ. *ո*, հ.-ե. -k>խեթ. -h/-k, հայ. *ք* (Գ.Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 135): Ամպրոպաբնույթ աստվածությունների այծակերպ պատկերացման իրողությունը իր արտացոլումն է գտել «կայծակ» պատասխանն ակնկալող «Ինքը՝ էծ, մեջքը՝ պեծ» հանելուկում (Մ. Աբեղյան, Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 66):

[1] B.Hrozny, Naram-sin et ses ennemis d'apres un texte Hittite, "Archiv Orientalni", 1939, vol. I, No 1, p. 66-71; I.J.Gelb, Hurrians and Subarians; Chicago, 1944, p. 103-107.

[2] И.М.Дьяконов, Общественний и политический строй древнего Двуречья. Шумер, М., 1959, стр. 232.

[3] I. J. Gelb, նշվ. աշխ., էջ 103:

[4] Խ.Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. II, Եր., 1941, էջ 53:

մարվել է Ամպրոպի աստծուն բնորոշ զենք: Այդպես էր ոչ միայն Միջագետքում,[1] այլև Ասորիքում, Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում, որտեղ թե խեթ-խուռիական Թեշուբն էր պատկերվում մարտական տապարը ձեռքին,[2] թե հյուսիսասորիքյան Թեշուբը,[3] թե' նրանց զուգահեռ ուրարտական DIM//Թեյշեբան: Վերջինս Կարմիր բլուրից հայտնաբերված մի պեղածոյի վրա պատկերված է մի ձեռքին սկավառակաձև գուրզ, մյուսին՝ մարտական տապար:[4]

Ասվածները մեզ հիմք են տալիս Արման(ում)ի արքայի *Մադակինա* անունը բաժանելու Ma-dak-ina կամ Ma-dag-ina բղադրիչների և նրա -dak-/-dag- բաղադրիչը առնչելու հայերեն *դակու/դակուր* (<**դակ*-արմատ և -*ու* կամ -*ուր* վերջածանց) բառին: *Դակու/դակուր* նշանակում է «գործի հիւսանց եւ մշակաց տապարաձև» (հմմտ. «զգերանդի եւ զմանկաղ, եւ զդակու եւ զուրագ». Ոսկիփորիկ):[5] Հայերեն բառը հնդեվրոպական ծագում ունի: Նրա հիմքում ընկած հ.-ե. *dhag^{u}- «սրել,սուր» արմատից են ծագում նաև հուն. θήγω «սրել», θηγάνεον «սուր, հատու», լատին. dag(g)a, daggarius «դաշույն» բառերը[6] և, հավանաբար, ասորիք-միջագետքյան տարածաշրջանից հայտնի *Դագոն* կամ *Դագան* (արմատը՝ *dag-) աստծու անունը:[7] Այս գահանվան առաջին բաղադրիչը՝ Ma-ն, մեր

---

[1] Նույնը, էջ 52:

[2] Fernand Comte, Larousse des Mythologies du Monde, Éditions France Loisirs, Larousse, 2005, p. 144.

[3] Ա.Ա.Դրուժինինա, Հին ու նոր Սիրիա, Եր., 1981, էջ 80:

[4] Ս.Հմայակյան, նշվ. աշխ., էջ 41-42:

[5] «Նոր բառագիրք հայկազեան լեզուի», հ. I, Եր., 1979, էջ 592:

[6] ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 613:

[7] Dagon/Dagan դիցանվանը տարբեր ստուգաբանություններ են տրվել «եղջյուր», «ձուկ», «հասկ», ("Иллюстрированная полная популярная Библейская энциклопедия архимандрита Никифора", М., 1891, стр. 182-183; И.И.Шифман, Дагон, "Мифологический словарь", М., 1991, стр. 168): Կարծիք կա, որ սա հովանավոր աստվածն է եղել հողագործության կամ ձկնորսության, իսկ նախապես, ըստ երևույթին, համարվել է սննդատու աստված (Լ.Լ.ՄՈՒՎՈվ, նույն տեղում): Բայց փաստերն այլ բան են ասում: Փղշտացիները Դագոնին ոչ միայն որպես գերագույն աստված, այլև որպես պատերազմի աստված էին պաշտում: Ուգարիտում նրան համարում էին հողմ-ամպրոպային բնույթի պտղաբերության աստված Բալուի հայրը, հյուսիս միջագետքյան մի բնագրում Դագանը հանդես է գալիս Ադադի հոր դերում, իսկ միջին Եփրատի ավազանում նրա կին Շալան համարվում էր նաև Ադադի կինը (В.К.Афанасьева, Дагон, նույն տեղում, էջ 168): Վերջինս խոսում է Դագանի և Ադադի նույնացված լինելու մասին: Ուրեմն, որպես ամպրոպաբնույթ աստվածություն Դագան/Դագոնը կարող էր կրել հիշյալ հ.-ե. *dhag^{u}_ արմատով կազմված մի անուն:

կարծիքով, իր հիմքում ունի հ.-ե. *mē-/*mō- «մեծ, ակնառու»[1] արմատի *mā- տարբերակը (ստորին ձայնդարձ): Ըստ այսմ, *Ma-dak-/*Ma-dag- նշանակելու է «մեծ տապար», իսկ -ina բաղադրիչի հավելումով ստացված Madakina/Madagina-ն՝ «մեծ տապարավոր, մեծ տապար ունեցող»: Սրա -ina բաղադրիչը, հմմտ. հայ. -*ին* (<հ.-ե. *-en) վերջածանցի հետ՝ առկա *ամուսին, գետին, դարբին, եղեւին և* այլ բառերում: Հայերենի հնդեվրոպական ծագումով այս վերջածանցը «հնդեվրոպականում կազմել է ածականներ ու բայանուններ»:[2] Գահանվան «մեծ տապարավոր» ստուգաբանությունը բացահայտում է նրա բնույթը որպես Ամպրոպի աստծու մակդիրներից մեկի (հմմտ. շումերական էպոսի Գիլգամեշի «մայրիներ հատող» մակդիրը:)[3]

Հոդվածում քննարկման առարկա դարձած գահանունների ստուգաբանությունները ավելի վաղ մեր կողմից ստուգաբանված Šubria երկանվան[4] և Diglat//Dignat «Տիգրիս» գետանվան[5] նման, բացահայտելով դրանց հնդեվրոպական-հայկական բնույթը, կասկած չեն թողնում, որ Արևմտյան Տիգրիսի ավազանի նաիրի-ուրարտական դարաշրջանի բնակչությունը հայկական էթնոսին է պատկանել: Այս իրողությունն է արտացոլվել հին հայկական այն ավանդազրույցում, որի համաձայն, Արևմտյան Տիգրիսի ավազանն է եղել հայոց նախահայր Հայկի առաջին հանգրվաններից մեկը,[6] իսկ տեղի տոհմիկ իշխողները համարվել են Հայկի Արամանյակ որդու ուղղագիծ սերունդները:[7]

---

[1] Г.Б.Джаукян, Взаимоотношение индоевропейских, хурритско-урартских и кавказских языков, Ер., 1967, стр. 43, 149.

[2] Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 234:

[3] Ա.Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 119:

[4] С.Петросян, Древнейшие навания Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, «ԼՀԳ», 1986, թիվ 4, էջ 61:

[5] Ս. Պետրոսյան, Ծ. Պետրոսյան, հնագույն Ծոփքի դիցական գլխավոր եռյակի շուրջ, «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտ. աշխատություններ», IV, էջ 94:

[6] Խորենացի, Ա, Ժ, Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939, գլ.Ա, էջ 3,5:

[7] Խորենացի, Ա, Ժ-Ժբ, Սեբէոս, գլ. Ա, էջ 3-7, 9, Ս.Պետրոսյան, Արամանյակի որդիները եռադասության տեսանկյունից, «ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտ. աշխատություններ», XIII, Եր., 2010, էջ 28-32:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. VII, Եր., 1975:
2. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Եր., 1983:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. II, Եր.,1973:
4. Դրուժինինա Ա., Հին ու նոր Սիրիա, Եր., 1981:
5. Իշխանյան Ռ., Համեմատական լեզվաբանության նոր հայտնագործումները և հայերի ծագման ու հնագույն պատմության հարցերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, թիվ 2:
6. Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր.,1971:
7. «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. I, Եր., 1981:
8. Հմայակյան Ս., Վանի թագավորության պետական կրոնը, Եր.,1990:
9. Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. I, Եր., 1944:
10. Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, Եր., 1981:
11. Մովսիսյան Ա., Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Եր., 2005:
12. «Նոր բառագիրք հայկազեան լեզուի», հ. I, Եր., 1979:
13. Պետրոսյան Ա., Արամազդ. Կերպար, պաշտամունք, նախատիպեր, Եր., 2006:
14. Պետրոսյան Ս., Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008:
15. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր.,
1987, էջ 234:
16. Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ.II, Եր., 1941:
17. Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, Եր., 1939:
18. Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ер., 1971.
19. Герни О., Хетты, М., 1987.
20. Дьяконов И.М., Общественний и политический строй древнего Двуречья. Шумер, М., 1959.
21. Иванов В.В., Хеттская мифология, “Мифы народов мира”, т. II, М., 1988.
22. Капанцян Гр., Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956.
23. Меликишвили Г., Наири-Урарту, Тб., 1954.
24. Петросян С., Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, «ԼՀԳ», 1986, թիվ 4:
25. Barton G.A., The royal inscriptions of Sumer and Akkad, London, 1929.
26. Gelb I.J., Hurrians and Subarians; Chicago, 1944.
27. Hrozny B., Naram-sin et ses ennemis d’apres un texte Hittite, “Archiv Orientalni”, 1939, vol. I, No 1.
28. Keilschrifturkunden aus Boghazkëi, HF. 1-30, Berlin, 1923-1939.

ЭПИТЕТЫ БОГА ГРОЗЫ В ТРОННЫХ ИМЕНАХ

Саркис Петросян
доктор исторических наук, доцент

РЕЗЮМЕ

В бассейне Западного Тигра местные царки и царевичи носили тронные имена с компонентами *Тешуб* и *Адад*. В статье выдвигается тезис о том, что первые компоненты в именах Kali-Teššub и Kili-Teššub происходят из эпитетов бога Грозы (хуррит. Тешуб, аккад. Адад). Эти слова индоевропейско-армянского происхождения. Ср. Kali- и арм. *ù³Õó<*ù³Õ* (<и.-е. *su̯l̥-); Kili- и арм. ùÉùÉÙ³Ý<*ùÇÉ-ùÇÉ (<и.-е. *su̯el-). Индоевропейско-армянское происхождение имеет также имя Madakina. В этом тронном имени наличествуют компоненты Ma- (<и.-е. *mā-, ср. *mē-/*mō- “большой”), -dak-//арм. *¹³Ïáõ* “топор” (<и.-е. *dhagu̯- “точить”, “острый”) и -in-//арм. суфф. -*ÇÝ* (<и.-е. *-en). Этот эпитет бога Грозы означает “с большым топором”.

EPITHETS OF DEITY OF THUNDER IN THRONE-NAMES

Sargis Petrosyan
Doctor of Historical Sciences, Associate Professor

SUMMARY

In the Vestern Tigris basin kings and princes were given throne-name with the components Tešub and Adad. In the article the author suggests the theory that first components in the names Kali-Teššub and Kili-Teššub come from the epithets of the Deity of thunder (hoorit. Tešub, akkad. Adad). These words are of the IE-Armenian origin: Cf: Kali- and Arm. *ù³Õó<*ù³Õ* (<IE *su̯l̥-); Kili- and Arm. *ùÉùÉÙ³Ý<*ùÇÉ-ùÇÉ* (<IE *su̯el-). Madakina, another epithet of Deity of thunder, is also of IE-Armenian origin.

ՆԱԲՈՊԱԼԱՍԱՐԻ (Ք.Ա. 625-605 ԹԹ.) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 18-ՐԴ ՏԱՐԻՆ (B.M. 22047, 1-13) ԵՎ «Bīt- ^{m}Ḫa-a-nu-ni-ia»-Ի ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ռուսլան Ցականյան

Ասսուրա-բաբելոնյան հակամարտության եզրափակիչ փուլում՝ Բաբելոնիայի թագավոր Նաբոպալասարի (Ք.ա. 625-605 թթ.) կառավարման տասնութերորդ տարում՝ Ք.ա. 608 թվականին, բաբելական զորքերը գահաժառանգ Նաբուգոդոնոսորի[1] գլխավորությամբ արշավի ելան դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջանները և հասան քննարկվող թեմա հանդիսացող հիմնախնդրային Բիթ-Խանունիայի լեռներին:

Մասնագիտական գրականության մեջ հիմնախնդրին անդրադարձել են բազմաթիվ մասնագետներ, սակայն դրանցից միայն երեքում է առկա (Ի. Մ. Դյակոնովի[2], Հ. Խորիկյանի[3] և տողերիս հեղինակի[4]) խնդրի հանգամանալից ու համապարփակ և ինչ-որ չափով ընդարձակ մեկնաբանությունը: Սույն հոդվածի շրջանակներում մենք հանգամանորեն կներկայացնենք այդ տեսակետները:

Այս արշավանքը մանրամասն նկարագրված է B.M. 22047 (96-4-9,152) ժամանակագրությունում[5]:

Պատմագրության մեջ հիմնախնդրային և բավականին վիճելի այս խնդրի վերաբերյալ արձանագրության առաջին համապատասխան տողերը մեջ ենք բերում ամբողջությամբ՝

«1. Šattu XVIII$^{kám\ md}$Nabû-ápla-úṣur ina ^{arab}Ulūli šàr Akkadî^{ki} ummāni^{me}-šú id-ke-e-ma

---

[1] Նոր բաբելոնյան թագավորության ապագա Նաբուգոդոնոսոր II (Ք.ա. 605-562 թթ.) թագավորը:

[2] Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э. и северные походы вавилонских царей, ВДИ, 1981, № 2 стр. 43-44.

[3] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ.թ.ա. VI-IV դարերում, ՊԲՀ, 2005, № 3, էջ 185-186:

[4] Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը և Նաբոպալասարի հյուսիսային արշավանքները, ՊԲՀ, 2011, № 1, էջ 269-270:

[5] Wiseman D. J., Chronicles of Chaldaean Kings (626-556 B. C.) in the British Museum, London, 1956, pp. 20ff., 46, 64-66; Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley, New York, 1975, Chron. 4, pp. 97-98; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Atlanta, 2004, Chron. 23, pp. 224-226; Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э., стр. 39-46: Այսուհետ հարկ եղած դեպքում կօգտագործենք արձանագրության ընդունված համարակալումը՝ B.M. 22047:

2. aḫ ^{nar}Idiqlat irtedi(uš)-ma ana šadî^{i} šá Bīt- ^{m}Ḫa-a-nu-ni-ia

3. pi-ḫat ^{māt}Ú-ra-áš-ṭu i-li-ma ālāni^{me} ina išāti ⌜iš-ru-up⌝

4. ḫu-bu-ut-su-nu ma-diš iḫ-tab-ta ina ^{arah}Ṭebēti šàr Akkadî^{ki} ana māti-šú ⌜itūra^{ra}⌝».

«1.Նաբոպալասարի տասնութերորդ տարին, Ուլուլու[1] ամսին՝ Աքքադի թագավորը իր զորքերը հավաքագրեց

2. և Տիգրիսի երկայնքով շարժվեց դեպի Բիթ-Խանունիայի լեռները

3. Ուրարտու երկրի շրջանում, քաղաքները հրի մատնեց (և)

4. մեծ քանակությամբ ավար զավթեց: Թեբետ[2] ամսին Աքքադի թագավորը վերադարձավ իր երկիր»[3]:

Արձանագրության տվյալների համաձայն Ք.ա. 608 թվականին բաբելոնյան զորքերը հայտնվում են Հայկական լեռնաշխարհի մատույցներում և հասնում Ուրարտուի[4] շրջան հանդիսացող կամ ավելի ճիշտ նրա սահմաններին մոտ Բիթ–Խանունիայի լեռներին:

Մասնագետները Բիթ-Խանունիայի տեղադրության հարցում միակարծիք չեն: Դ. Ջ. Ուայզմանի կարծիքով, այն գտնվել է Իզալայից հյուսիս, նույն լեռների և Տիգրիս գետի միջև ու Նածիբինայից հյուսիս-արևմուտք[5]: Սակայն տվյալ տարածաշրջանում Բիթ-Խանունիայի տեղադրությունը անհավանական է թվում ըստ որոշ մասնագետների, նշված տարածաշրջանում, ինչպես նաև Ամիդի շրջանում, ոմանք տեղադրում են Բիթ-Զամանին[6]: Իսկ Ջ. Ռիդը կարծում է, որ այն ամենայն հավանականությամբ գտնվել էր Տիգրիս գետի վերին հոսանքից հյուսիս ընկած շրջաննե-

---

[1] Օգոստոս-սեպտեմբեր:

[2] Դեկտեմբեր-հունվար:

[3] B.M. 22047, ll. 1-4.

[4] «Ուրարտուի շրջան» արտահայտությունը հանդես է գալիս որպես աշխարհագրական անվանում և ոչ մի կամ չունի Ք.ա. VII դարի 3-րդ քառորդում սկզբնապես տրոհված, ապա և վերացած Ուրարտական թագավորության հետ:

[5] Wiseman D. J., Chronicles of Chaldaean Kings (626-556 B. C.), pp. 20, 82f., տես նաև № 2 քարտեզը; Salvini M., Geschichte und Kultur Urartäer, Darmstadt, 1995, S. 118.

[6] Russel H.F., Shalmaneser's Campaign to Urarṭu in 856 B.C. and the Historical Geography of Eastern Anatolia according to the Assyrian soures, Anatolian Studies, Journal of the Institute of Archaeology at Ankara, 1984, № 34, p. 199, ինչպես նաև նույն էջի քարտեզը, Rollinger R., The Western Expansion of the Median "Empire": A Re-Examination, History of the Ancient Near East, Monographs-V, Continuty of Empire(?): Assyria, Media, Persia, Ed. G.B. Lanfranchi, M. Roaf, R. Rollinger, Padova, 2003, p. 293f.; Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2, № 26, стр. 294 прим. 34; Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 70, 81:

ռում[1]: Հարկ է նշել նաև, որ Դ. Ջ. Ուայզմանի և Ջ. Ռիդի մոտեցումները կարծես թե մոտ են այն տարածաշրջանին, որտեղ մենք ենք այն տեղադրում:

Պետք է նշել նաև, որ ուրարտագիտության մեջ վերոհիշյալ խնդրին գրեթե անդրադարձ չի կատարվել: Տվյալ բնագավառի աշխատություններում շեշտվել է միայն, որ բաբելացիները հասել են Բիթ-Խանունիա և վերջ[2]:

Քիչ այլ է Ի.Մ. Դյակոնովի տեսակետը. նա գտնում է, որ Բիթ-Խանունիան համապատասխանում է միջնադարյան Հայաստանի Խնուս բնակավայրին: Ի.Մ. Դյակոնովը փորձում է իր տեսակետը հաստատել լեզվաբանական հիմքերից ելնելով[3]:

Լեզվաբանական խորը քննության ենթարկելով «Ḫanunia» բառը՝ Ի. Մ. Դյակոնովը հանգում է այն մտքին, որ բառի սկզբնական տարբերակը պետք է լիներ «Ḫanūnə» կամ «Ḫanūnia»[4]: Նա նշում է, որ «Ḫanūnianos»-ի հայկական նախատիպը պետք է որ լիներ «Xnunean» (կամ «Xnune(w)oy» սեռական հոլովով), «Ḫanūni(a)»-ի ուրարտական նախատիպը, սեռական հոլովով «Ḫanūnej(ə)»՝ կտար «Xnuni» կամ «Xnun», նույն ձևը (կամ, հավանաբար «Xnuniw») կտար խուրրիտական «Ḫanūni(a)-wə» նախատիպը, վերջապես լուվիական «Ḫanūniassas», «Ḫanūnissas», նախատիպը պետք է տար «Xnuneas» կամ «Xnunis» ձևը[5]:

Բիթ-Խանունիայի տեղադրության մասին Ի.Մ. Դյակոնովի տեսակետը մեզ անհավանական է թվում, քան որ խնդրո առարկա երկրամասը հազիվ թե այդչափ հյուսիս գտնվեր: Այն բավականաչափ հեռու է գտնվում ռազմական գործողությունների թատերաբեմից, ինչպես նաև բուն Բաբելոնիայի սահմաններից: Բացի այդ նրանք ուղղակի հարվածի տակ կթողնեին իրենց թիկունքն ու հետդարձի ճանապարհը, որը կարող էին փակել ասորեստանյան դաշնակիցները: Այս էլ այն դեպքում, երբ

---

[1] Reade J., Why did the Medes invade Assyria?, History of the Ancient Near East, Monographs-V, Continuty of Empire(?), p. 154.

[2] Меликишвили Г. А., Наири-Урарту. Древневосточные материалы по истории народов Закавказья, № 1, Тбилиси, 1954, стр. 423; Пиотровский Б. Б., Ванское царство (Урарту), Москва, 1959, стр. 116; Арутюнян Н. В., Биайнили (Урарту), Военно-политическая история и вопросы топонимикы, Ереван, 1970, стр. 333; Barnett R. D., Urartu, The Cambridge Ancient History, 1982, 3/1, p. 369f.; Salvini M., Geschichte und Kultur Urartäer, S. 117-118.

[3] Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э., стр. 43-44; Diakonoff I. M., Media, The Camridge History of Iran, vol. 2, 1985, p. 124.

[4] Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э., стр. 43.

[5] Նույն տեղում, էջ 44:

բաբելացիներն իրականում չկարողացան հաղթական ավարտին հասցնել իրենց առջև դրված կարևորագույն խնդիրները, չկարողացան օգնության հասնել իրենց իսկ կայազորներին, և դեռ ավելին, ինչպես արդեն նշել ենք մեր մեկ այլ աշխատանքում՝ ասորեստանցիներին հաջողվել էր վերագրավել նաև Խառան քաղաքը[1]: Հակառակ դեպքում Նաբոպալասարի նմանատիպ քայլը կարելի կլիներ բնութագրել որպես արկածախնդրություն և ոչ ավելին:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է ամենայն հստակությամբ նշել, որ Նաբոպալասարն իր այս արշավանքի ժամանակ ունեցել է միմիայն մի խնդիր՝ փրկել Խառանը, որը սակայն նրան չհաջողվեց: Ուստի, բնական պետք է համարել այն, որ փաստացի հուսահատության մեջ հայտնված Բաբելոնիայի թագավորը Խառանի շրջակա բնակավայրերն ամայացնելուց և հրի մատնելուց հետո էլ վերադառնում Բաբելոնիա: Այս ամենը մեզ հիմք է տալիս բացառելու բաբելական զորքերի Խնուս հասնելու մասին Ի. Մ. Դյակոնովի տեսակետը:

Մասնագետների մեծամասնությունը Բիթ-Խանունիան տեղադրում է կամ Հայկական լեռնաշխարհի արևմտյան կամ հարավ-արևմտյան տարածքներում[2]: Թերևս բացառություն է կազմում Հ. Խորիկյանը, որի հիշատակված ուշագրավ աշխատանքի մեջ տեղ է հատկացված նաև հիշյալ խնդրին՝ Բիթ-Խանունիան նույնացնելով Մեծ Հայքի Կորդուք նահանգի հետ[3]:

Մինչ հեղինակի մեկնաբանությանն անցնելը՝ տեսնենք, թե արդյո՞ք նշված տարածքում բաբելացիները կարևոր խնդիրներ ունեցել են, թե ոչ:

Ք.ա. 610 թվականի դրությամբ գրեթե ամբողջ Ասորեստանը գտնվում էր բաբելացիների վերահսկողության տակ, այս էլ այն դեպքում, երբ Ասորեստանի վերջին արքա Աշշուրուբալլիտ II-ը (Ք.ա. մոտ 612-607(?) թթ.) գահ բարձրացավ Խառան քաղաքում, իսկ մեկ տարի անց՝ Ք.ա. 609 թվականին, ասորեստանցիներին օգնության շտապած եգիպտացիները փարավոն Նեխո II-ի (Ք.ա. 610-595 թթ.) գլխավորությամբ, կարողացան հաջողության նժարը փոքր-ինչ ժամանակով թեքել իրենց կողմը՝ պաշարելով և գրավելով Խառանը:

---

[1] Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը …, էջ 267:

[2] Rollinger R., The Median "Empire", the End Urartu and Cyrus the Great Campaign in 547 B. C.: (Nabonidus Chronicle II, 16), In Ancient West and East, Tehran, 2009, № 7, p. 56ff.

[3] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները, էջ 185-186:

Սակայն բաբելացիների համարժեք գործողություններն իրենց երկար սպասեցնել չտվեցին, և շուտով՝ Ք.ա. 609 թվականի ամռանը, բաբելոնյան զորքը Նաբոպալասար արքայի գլխավորությամբ ելավ թշնամուն ընդառաջ: Այստեղ սպասելի էր, որ բաբելացիները կշտապեն իրենց իսկ կայազորներին օգնության և անմիջապես թիկունքից կհարվածեն թշնամուն: Սակայն մեր կողմից քննարկվող արձանագրությանը նախորդող B.M. 21901 «ժամանակագրության»[1] 70-րդ տողի հաղորդումների համաձայն՝ Նաբոպալասարը Խառանի իր կայազորին օգնություն ցույց տալու փոխարեն կռիվներ է մղում Իզալայի լեռներում[2] և հասնում «Ուրարտուի շրջան» կոչվող ինչ-որ բնակավայրի՝

«70. šàr Akkadî^{ki} ana re-ṣu-ut ummāni^{me}-šú illik-ma x [. . . ana ^{kur}] ⌜I⌝-za-al-la i-li-ma

71. ālāni^{me} šá šadâni^{me} ma-a-du-t[ú] x [. . .] x-⌜šú-nu⌝ ina išāti iš-ru-up

72. ina ūmi^{mi}- šú-ma ummāni^{me} [. . .] adi pi-ḫat $^{ālu?}$Ú-ra-áš-ṭu»

«70. Աքքադի թագավորը իր զորքերին օգնության շտապեց և . . . [. . .] բարձրացավ դեպի Իզալա

71. (և) բազմաթիվ լեռնային քաղաքներ . . . [. . .] հրի մատնեց նրանց [. . .]:

72. Այդ ժամանակ (այդ օրերին) [. . . . .] զորքերը մինչև Ուրարտուի մարզ»[3]:

Այս դեպքերից հետո նա կրկին վերադառնում է Բաբելոն՝ այդպես էլ օգնություն չցուցաբերելով Խառանի կայազորին[4]:

Իսկ արդեն հաջորդ՝ Ք.ա. 608 թվականին, բաբելացիները կրկին դուրս եկան արշավի և շարժվեցին դեպի Բիթ-Խանունիայի լեռները: Դեպի հյուսիսարևմուտք կրկնակի արշավանքի փաստն ինքնին խոսում է այն մասին, որ բաբելացիները լուրջ խնդիրներ ունեին տերության հյուսիս-արևմուտքում՝ ի դեմս ասսուրա-եգիպտական միացյալ ուժերի, և դեռ ավելին, նրանք տանուլ էին տվել այնչափ կարևոր հենակետ հանդիսացող Խառան քաղաքը: Եվ անիմաստ կլինի կարծել, որ երկու անհաջող

---

[1] Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը …, էջ 266-267:
[2] Арутюнян Н. В., Биайнили (Урарту), стр. 369-378; Նույնի՝ Топонимика Урарту, Ер., 1985, стр. 86.
[3] Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը …, էջ 266-267:
[4] Նույն տեղում, էջ 264-265, 267-269:

ռազմարշավից հետո Նաբոպալասարը հարվածի տակ թողներ իր ծախ թևն ու հարձակվեր հյուսիս՝ այս պարագայում կարծեցյալ Կորդուքի տարածքի վրա, իսկ թե որպես ինչ, դժվար է ասել:

Մի բան փաստ է, որ շուրջ քսան տարվա ասսուրա-բաբելոնյան հակամարտության ժամանակահատվածում դեպի նշված տարածք գեթ մեկ արշավանք չի արձանագրվել, իսկ հիշյալ թվականին էլ այն առավելապես բացառված է: Այս ժամանակահատվածում բաբելացիների հետաքրքրության հիմնական առարկան ասսուրա-եգիպտական միացյալ ուժերն էին ու Խառան քաղաքը, որի գրավումն անչափ հրատապ էր նրանց համար:

Հ. Խորիկյանը, որը շոշափելի ներդրում ունի այս շրջանի պատմական աշխարհագրության բնագավառում, ըստ երևույթին, նկատի ունենալով «Bīt-^{m}Ḫa-a-nu-ni-ia» երկրանվան հնչյունական նմանությունը Սարգոն II-ին (Ք.ա. 722-705 թթ.) Աշշուրրիծուայի հղած հետախուզական նամակում (տող 9) հիշատակված ուրարտական «^{mātu}Qa-ni-un» «𒀀𒈬 𒅀𒄿 𒄷𒄭 𒄷𒄭𒄭» նահանգի[1] հետ, ենթադրում է նրանց նույնական լինելը:

---

[1] «1. [a-na šarri bêli-ia]
2. [ardu-ka ^{m}Aššur-ri-ṣu-u-a] (?)
3. [lu] šulmu^{mu} a-na šarri bêli-[ia]
4. V ^{amêlu}bêl piḫâti^{meš} ša ^{mâtu}Ur[arṭi]
5. ina libbi ^{alu}Ú-e-si e-tar-[bu]
6. ^{m}Si-ti-nu ^{amêlu}bêl piḫâti ša ^{mâtu}..-te-ni
7. ^{m}Kaq-qa-da-nu ša pu-tu-[u]
8. ^{mâtu}Ú-ka-a-a ^{m}Sa-ku-a-ta-a
9. ša ^{mâtu}***Qa-ni-un*** ^{m}Si-ip-li-a
10. ša ^{mâtu}Al-zi ^{m}Ṭu-ki
11. ša ^{mâtu}Ár-mir-a-li-u.
12. an-nu-te šuumâte^{meš}-šú-nu» -

«1. [Արքային՝ իմ տիրոջը,
2. քո ծառա Աշշուր-ռիծուա]:
3. Ողջյուն արքային՝ իմ տիրոջը:
4. Ուր[արտուի] հինգ կուսակալներ
5. մտան Ուեսի քաղաք:
6. […]տենի մարզի (տառացի երկրի) կուսակալ Սիտինուն (կամ ըստ Ս. Պարպոլայի թարգմանության՝ «Սիտինուն՝ մեր դիմացի կուսակալը»),
7. Կակկադանուն, ով որ տեղակայված էր
8. ուկկացիների դիմաց, Սակուատան՝
9. Քանիունից, Սիպիլան՝
10. Ալզիից, Թուկին՝

Հեղինակը հետևելով Ի. Մ. Դյակոնովին և Ն. Ադոնցին՝ նշում է «Կանիուն», որն անշուշտ սխալ է: Առաջինիս պարագայում հասկանալի է, իսկ երկրորդի դեպքում մենք գործ ունենք ֆրանսերենից հայերեն թարգմանության հետ: Հեղինակի «Կանիուն» իրականում հայերեն պետք է արտասանվի «Քանիուն»[1]՝ «^{mātu}Qa-ni-un» (տեղանունը սկսվում է «Qa» «𒆠» սեպանշանով այլ ոչ թե «Ka» «𒅀𒈠𒀀» »):

Օրինակ, երկու գրելաձևն էլ առկա են Ռ. Փֆայֆֆերի մոտ: Աքքադերենի տառադարձված տեքստում նշված է «^{mātu}Qa-ni-un», իսկ թարգմանված է անգլերեն լեզվին և նրա հնչյունաբանությանը համապատասխան՝ «Kaniun»: Եվ քանի որ մենք հայերենում ունենք մոտ համարժեքությամբ և «K» և թե «Q»՝ «Կ» և «Ք», դեռ ավելին, քանի որ աքքադերենի հնչյունաբանությունում «Ք - Խ» անցում որպես այդպիսին ուղղակի բացառված է[2], սրանից էլ հետևում է, որ այդ երկու անվանումների միջև լեզվաբանական կապն ուղղակի բացառված է, իսկ ինչ վերաբերվում է տվյալ անվանմանը, ապա այն հայերեն պետք է ընթերցվի «Քանիուն»:

Քանիուն երկրամասի տեղորոշման խնդիրներին անդրադարձել է նաև Դ. Ն. Սարգսյանը: Նա գտնում է, որ Քանիունը (հեղինակի մոտ Կանիունը) գտնվել է Արդինի-Մուծածիր[3] երկրի և Ուրարտուի միջև, հատկապես Արդինի-Մուծածիր երկրի արևմտյան սահմաններում, այն է՝ Վանա լճից հարավ-արևելք տարածված տարածքներում: Ըստ նրա՝ Քանիուն մարզը կարելի է փնտրել Վանից հարավ-արևելք տարածված Արծրունի

11. Արմիրալիից:

12. Սրանք են նրանց անունները» -

Harper R. F., Assyrian and Babylonian Letters belonging to the Kouyunjik collection of the British Museum, Chicago, vol. V, 1896, № 444, ll. 1-12; Waterman L., Royal Correspondence of the Assyrian Empire, Ann Arbor, 1930, I, № 444, ll. 1-12; Pfeiffer R.H., State letters of Assyria. A transliteration and translation of 355 official Assyrian letters dating from the Sargonid Period (722-625 B.C.), New Haven, 1935, № 8, ll. 1-12; Lanfranci G. B., Parpola S., The Correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern Provinces, State Archives of Assyria, № V, Helsinki, 1990, № 87, ll. 1-12, p. 71; Дьяконов И. М., АВИИУ, ВДИ, № 2, 1951, № 50 (4), стр. 338; Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 114-115, 211-212:

[1] Harper R. F., Assyrian and Babylonian Letters, № 444 (K. 645), l. 9), p. 472.

[2] Языки мира: Семитские языки. Аккадский язык. Северозападносемитские языки. Ред. колл.: А. Г. Белова, Л. Е. Коган, С. В. Лёзов, О. И. Романова, М., 2009, стр. 113-204.

[3] Վերջինիս տեղադրության առումով մանրամասն տես՝ Арутюнян Н. В., Топонимика Урарту, стр. 33-34.

մարզի կամ Մեծ Աղբակ գավառի[1] շուրջը, որտեղ, ըստ Խորենացու հաղորդած տեղեկությունների, գտնվել է Գնունի մարզը[2]: Այստեղ ակնհայտ է այն, որ Դ. Ն. Սարգսյանն էլ իր հերթին ելնում է «Քանիուն» - «Գնունի» հեռավոր հնչյունական նմանությունից: Սակայն, այնուամենայնիվ, պետք է նշել, որ «Քանիունի» Ն. Ադոնցի և Հ. Խորիկյանի տեղադրությունն ավելի հավանական է թվում:

Հաջորդ կարևորագույն խնդիրը, որին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ, այն է, որ Հ. Խորիկյանը փորձում է «Հայկյան Արամի» զրույցը տեղավորել հիշյալ ժամանակահատվածում, որը կարող էր և տեղավորվել մեկ այլ շրջանում: Իհարկե, նմանատիպ ամեն մի փորձ անգնահատելի է, սակայն տվյալ պարագայում գտնում ենք, որ անտեղի:

Ինչևէ, հեղինակը նշում է. «... հնարավոր է, որ Բարշամի[3] անվան տակ թաքնված Նաբոպալասարը, այսուհանդերձ, վերջին հաշվով, Միջագետքի հյուսիս-արևմուտքը հարկադրված թողել է Արամին, քանի որ Նաբոպալասարը և' Իզալա, և' Բիթ-Խանունիա կատարած արշավանքներից հետո չի նշում, թե գրավել է այդ շրջանները, այլ խոսում է միայն ավարի ու թալանի մասին»[4]:

Անշուշտ, համաձայն ենք հեղինակի հետ, որ հիշյալ տարածքները բաբելացիները չեն գրավել, սակայն խիստ անհասկանալի է, թե ինչու պետք է բաբելացիները զիջումներ կատարեին, այն էլ Միջագետքի հյուսիս-արևմուտքում: Այստեղ մեզ համար մի քիչ անհասկանալի է «հյուսիս արևմուտքում» արտահայտությունը, որը բավականին լայն իմաստ ունի: Դեռ ավելին, չունենք ոչ մի փաստ, որպեսզի հստակորեն նշենք, որ բաբելացիները տարածքային զիջումներ կատարած լինեն որևէ երկրին, դեռ ավելին, մեր խորին համոզմամբ Միջագետքի ամբողջ հյուսիս - արևմուտ-

---

[1] Մեծ Հայքի Վասպուրական նահանգի 17-րդ գավառը՝ Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, Եր., 2001, էջ 356, 362-363; Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, հեղինակ՝ Բ. Հ. Հարությունյան, Եր., 2004, էջ 42-43, 3 (Զ-է):

[2] Սարգսյան Դ. Ն., Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Հայաստան երկիրը Ուրարտուն է, այլ ոչ թե Շուբրիան, ՊԲՀ, 1984, № 3, էջ 187:

[3] Բարշամը «Հայկյան Արամի» զրույցում Արամ նահապետի ասորեստանցի հակառակորդն էր՝ Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ և մեկն. Ս. Տ. Մալխասյանի, Երևան, 1981, Ա, ԺԴ:

[4] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները, էջ 186:

քը եղել է բաբելացիների տիրապետության տակ:

Այստեղ չենք ցանկանում մանրամասն անդրադառնալ վերոհիշյալ խնդրին, նշենք միայն այն հանգամանքը, որ Բաբելոնիայի թագավոր Ներիգլիսսարի (Ք.ա. 559–556 թթ.) օրոք բաբելացիները Ք.ա. 557 թվականին արշավանք կատարեցին դեպի Կիլիկիա[1]: Դեռ ավելին, ոչ միայն Հյուսիսային Միջագետքը, այլև նրա հյուսիս-արևմտյան շրջաններն այս թագավորի ժամանակ հաստատապես Բաբելոնիայի տիրապետության տակ են եղել:

Իսկ մեկ այլ տեղ նա նշում է, որ եթե նույնիսկ Բաբելոնը գրավել էր Իզալան և Բիթ-Խանունիան, ապա Ասորեստանի ժառանգությունը բաժանելուց հետո Հյուսիսային Միջագետքն անցնում է Մարաստանին, իսկ Միջագետքի հյուսիսարևմտյան շրջանները, թերևս, կրկին վերադարձվել են Հայաստանին, ինչը և հաստատվում է Աքեմենյան շրջանի տեղեկություններով[2]:

2003 թվականին Պադովայում հրատարակվեց հերթական մասնագիտական հոդվածների ուշագրավ ժողովածուն, որտեղ հանգամանորեն քննության էր առնված Մարաստանի քաղաքական պատմության և այլ հարցերը: Բավականին մեծ ուշադրություն է դարձվել նաև Մարաստանի արևմտյան սահմանների և մասնավորապես Հյուսիսային Միջագետքում մարերի տիրապետության հարցերին: Ի թիվս քաղաքացիություն ստացած այլ հարցերի, միանշանակորեն ժխտվեց մարերի կողմից վերոնշյալ տարածքներում տիրելու հավանականությունը[3], և այս միտումը շարունակվում է մինչ օրս:

Ինչևէ, տվյալ ժամանակաշրջանում, ելնելով բաբելացիների ռազմական գործողությունների թատերաբեմից և բուն նպատակներից՝ վերջին համապատասխանեցումն առավելապես բացառված է, քանզի բաբելացիներն առայժմ կոնկրետ այդ տարածաշրջանում անելիքներ չունեին:

---

[1] Wiseman D. J., Chronicles of Chaldaean Kings (626-556 B. C.), pp. 74-76, ինչպես նաև տես էջ 41 № 3 քարտեզը; Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 6, pp. 103-104; Glassner J.-J., Mesopotamian Chronicles,, Chron. 25, pp. 230, 232-233; Rollinger R., The Western Expansion of the Median "Empire": A Re-Examination, p. 295f.; նույնի The Median "Empire", the End Urartu and Cyrus the Great Campaign in 547 B. C., p. 52.

[2] Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները, էջ 186:

[3] Տե՛ս History of the Ancient Near East, Monographs-V, Continuty of Empire(?): Assyria, Media, Persia, Ed. G.B. Lanfranchi, M. Roaf, R. Rollinger, Padova, S.a.r.g.o.n. Editrice e Libera, 2003.

Դեռ ավելին, գտնում ենք, որ տեսականորեն Խնուսն ավելի հավանական է, քան Կորդուքը:

Հիմնախնդրի վերաբերյալ մեր մոտեցումը հետևյալն է. ելնելով արձանագրության հաղորդած տվյալներից՝ կարելի է եզրակացնել, որ Բիթ-Խանունիայի շրջանը պետք է որ գտնվելիս լիներ Իզալա լեռների մոտակայքում՝ նրանից հյուսիս: Ակնհայտ է մի կարևոր փաստ, որ Տիգրիս գետի երկայնքով ընկած ճանապարհը զորքերի արշավի համար նախընտրելի չէ, որովհետև, ինչպես նշում է Ռ. Ռոլլինգերը, գրեթե նույն ճանապարհով անցած Կյուրոս II Մեծի (Ք.ա. 550-530 թթ.) զորաբանակի երթուղին, որն էլ միաժամանակ համեմատում է բաբելացիների անցած ռազմուղու հետ, չափազանց վատն է ու լեռնային[1]:

Սակայն եթե Կյուրոս II Մեծը դուրս է եկել Արբելայից և ստիպված եղել հատելու Տիգրիս գետն արևելքից արևմուտք և անցել գետի աջ ափն ու շարժվել առաջ Արբելա - Ջեզիրե-իբն-Օմար (Բզաբդե) - Մծբին - Մարդին - Ամիդ - Մելիտենե կամ Արբելա - Ջեզիրե-իբն-Օմար - Արզան - Նփրկերտ - Ամիդ - Մելիտենե ուղղությունը[2], ապա բաբելացիները գոնե արշավանքի ելակետի շրջանում Տիգրիս գետը հատելու կարիք չունեին, դեռ ավելին, չեն էլ հատել: Իսկ եթե բաբելացիները հատած լինեին Տիգրիս գետը արևմուտքից արևելք, ապա չենք կասկածում, որ այն անպայմանորեն կարձանագրվեր մի արձանագրությունում, որտեղ առկա են բազում մանրամասն նկարագրություններ: Հակառակ պարագայում արձանագրության մեջ կնշվեր, որ նրանք հատել են այն, օրինակ՝ «nāra ībir-ma»՝ «անցան գետը» կամ «ībir-ma ^{nar}Idiqlat»՝ «անցան Տիգրիսը»:

Մի կարևոր խնդիր ևս, նշված երկու արձանագրություններում էլ առկա է բաբելացիների կողմից գետն անցնելու դրվագներ: Առաջին դրվագը վերաբերում է ասսուրա-եգիպտական զորքերի կողմից Եփրատ գետի մյուս ափ անցնելուն և Խառան քաղաքի բաբելական կայազորի դեմ արշավանքին[3]: Երկրորդ դրվագն արդեն մեր կողմից քննարկվող B.M. 22047 ժամանակագրության 14-րդ տողում է, երբ բաբելացիները անցան Եփրատ գետը և շարժվեցին Կիմուխու քաղաքի դեմ[4]:

---

[1] Rollinger R., The Median “Empire”, the End Urartu and Cyrus the Great Campaign in 547 B. C..., p. 57.

[2] Rollinger R., The Median “Empire”, the End Urartu and Cyrus the Great Campaign in 547 B. C..., p. 54ff.

[3] Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը …, էջ 266:

[4] B.M. 22047, l. 14.

Բաբելացիները դուրս են եկել, ամենայն հավանականությամբ, հենց մայրաքաղաք Բաբելոնից: (Մասնագետների շրջանակներում քաջ հայտնի է, որ ամեն մի արշավանքից հետո բաբելացիները վերադարձել են տուն՝ «իր երկիր վերադարձավ» արտահայտությունը նկատի ունի, որ վերադարձել են Բաբելոն: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ հենց նույն արձանագրությունում հանդիպում ենք «ana Bābìli^{ki} itūra^{ra}» «վերադարձավ Բաբելոն»[1]՝ միանշանակորեն վկայում է այն մասին, որ «šàr Akkadî^{ki} ana māti-šú itūra^{ra}» նախադասությունը պետք է հասկանալ, որ բաբելացիները վերադարձել են ոչ այլ տեղ, քան մայրաքաղաք Բաբելոն: Բացի այդ էլ, տեսականորեն եթե փորձենք պատկերացնել, որ բաբելացիները դուրս են եկել ոչ թե Բաբելոնից, այլ Աքքադի մեկ այլ ցանկացած քաղաքից, ապա սրանից պատկերը գրեթե չի փոխվում, քանզի Միջագետքի հարավում գտնվող Աքքադի բոլոր քաղաքները գտնվում են Եփրատ և Տիգրիս գետերի միջև[2] և հետևաբար Տիգրիս գետի աջ ափին: Հիշատակված արձանագրության սկիզբը գտնվում է B.M. 21901 (96-4-9,6) արձանագրության վերջում, որտեղ նշված է՝

«75. šàr Akkadî^{ki} ana māti-šú itūra^{ra}»՝ «75. Աքքադի թագավորն իր երկիր վերադարձավ»[3]: Իսկ նույն արձանագրության 76-րդ տողը սկսվում է գրեթե նույն կերպ, ինչ որ B.M. 22047 (96-4-9,152) արձանագրության առաջին տողը): Դուրս գալով Բաբելոնից՝ Տիգրիս գետի աջ ափով շարժվեցին հյուսիս, իսկ ներկայիս Մոսուլ քաղաքի մոտ նրանց առջև արդեն ընկած էր երկու ճանապարհ՝ Մոսուլ - Մծբին - Մարդին - Ամիդ կամ Մոսուլ - Ջեզիրե-իբն-Օմար - Արզան - Նփրկերտ - Ամիդ ուղղությունը[4]: Այս ուղղություններից առավել հավանականն առաջինն է քանզի մեր կարծիքով այն առավել մոտ էր ռազմական գործողությունների թատերաբեմին, և հետևաբար այս ողղությամբ էլ պետք է փնտրել Բիթ-Խանունիան:

Բաբելացիները դուրս գալով ասսուրա-եգիպտական դաշնակիցների դեմ և խուսափելով անմիջական ընդհարումից, ինչը բազում անգամ ար-

---

[1] B.M. 22047, ll. 8, 12.

[2] Բացառությամբ այն քաղաքների, ինչպիսիք էին ասենք Բորսիպպան, Ուրուկը, Էրիդուն և այլն, որոնք գտնվում էին Եփրատ գետի աջ ափին

[3] Gadd C.J., The Fall of Nineveh, The Newly Discovered Babylonian Chronicle № 21.901 in the British Museum, London, 1923, p. 42, l. 75.

[4] Տես ներկայիս Իրաքի Իսլամական Հանրապետության կենտրոնական մայրուղին՝ Բաղդադ - Մոսուլ - Էլ-Կամըշլի (Սիրիայի Ի.Հ.) – Մարդին (Թուրքիա) – Վիրանշեհիր – Ուրֆա - Դիարբեքիր ավտոմայրուղին:

ձանագրվել է, փորձել են անցնել թշնամու թիկունք, բայց արդյունքում հեռու են գտնվել իրենց անմիջական նպատակներից և բախվել են ինչ-որ ուժերի հետ:

Մեր կարծիքով, ամենևին էլ չի բացառվում, որ վերոհիշյալ տարածքում կարող էր լինել, ինչպես նշում է Ի.Մ. Դյակոնովը՝ մեր կողմից հաշվի չառնված մեկ այլ քաղաքական ուժ[1]: Սակայն մի քանի տարի անց, Ի. Մ. Դյակոնովը կրկին անդրադառնալով վերոհիշյալ խնդրին՝ փորձեց հաստատել իր նախկին վարկածը, նշելով, որ բաբելացիների արշավանքի նպատակն, ըստ երևույթին, եղել է «Տուն Թորգոմայ»-ի[2] և Ուրարտուի հավանական հարձակման կանխումը դեպի բաբելացիների թիկունք այն ժամանակ, երբ նրանք պայքարում էին ասսուրական ուժերի մնացուկների և եգիպտացիների դեմ[3]:

Հեղինակի այս մոտեցումներից ընդունելի կարելի է համարել միայն առաջին տեսակետը, քանզի ելնելով արդի ուրարտագիտության նվաճումներից՝ կարելի է ամենայն հստակությամբ պնդել, որ տվյալ տարածաշրջանում այդպիսի քաղաքական միավոր գոյություն չուներ:

Այսպիսով, այդպիսի քաղաքական ուժ կարելի է դիտել «Տուն Թորգոմայ» քաղաքական միավորը, որը Ք.ա. 627 թվականին Աշշուրբանապալի (Ք.ա. 669-627 թթ.) մահից հետո[4], և մասնավորապես՝ ասսուրա-բաբելական հակամարտության տարիներին կարող էր նպաստավոր պայմաններից ելնելով՝ անցնել Եփրատը և տարածվել ավելի արևելք, օրինակ նախկին Շուպրիայի տարածք: Այս պարագայում կարող է և նրանք բախված լինեն բաբելացիների հետ[5]:

Հաջորդ տարի՝ Ք.ա. 607 թվականին, Սիմանու[6] ամսին, Նաբոպալասարը գահաժառանգ որդու՝ Նաբուգոդոնոսորի հետ ելնում են արշավի և շարժվում դեպի «… ? երկրի լեռները»՝

---

[1] Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э., стр. 41-42.

[2] Տե՛ս Քոսյան Ա., Տուն Թորգոմայ (առասպել և իրականություն), Եր., 1998, էջ 46-65; նույնի՝ Արամ նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ), ՊԲՀ, № 1, 1999, էջ 237-259:

[3] Дьяконов И. М., Урарту, Фригия, Лидия, История древнего мира, т. 2, изд. 3-е, М., 1989, стр. 68, հմմտ. նաև նույնի Малая Азия и Армения около 600 г. до н.э., стр. 60.

[4] Աշշուրբանապալի կառավարման վերջին տարվա համար տես՝ Ցականյան Ռ., Աշշուրբանապալի կառավարման վերջին տարին, Մերձավոր Արևելք, հոդվածների ժողովածու, 2011, № VII, 270-276:

[5] Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը …, էջ 271:

[6] Մայիս-հունիս:

«5. Šattu XIX^{kám} ina ^{arah}Simāni šàr Akkadî^{ki} ummāni^{me}-šú id-[ke]-e-ma

6. ^{md}Nabû-kudurrī-ú-ṣu-ur mār-šú rabû^{ú} mār šarri šá bīt re-e-du-tú

7. ummāni^{me}-šú id-ke-e-ma a-na šadê^{meš} šá ^{māt}Za-x-x [illikū^{ku}]-ma

8. šàr Akkadî^{ki} mār šarri u ummāni^{me}-šú ina māti ú-maš-ši[r] [u] ina ^{arah}[Du'ūzi] ana Bābìli^{ki} itūra^{ra}

9. arki-šú ^{d}Nabû-kudurrī-úṣur a-na ^{āl}[bi-ra-na-a-^{1}t]ú(?) šá šadê^{me} ṣal-tú īpuš-ma

10. ^{āl}bi-ra-na-a-tú iṣ-bat ina [išāti(?) iš-ru-u]p(?) ḫu-bu-ut šadî

11. [m]a-a-diš iḫ-[tab]-ta adi pi-ḫat ^{māt}[^{u}. . . gi-m]ir šadê^{me} ik-šu-ud»

«5.Նաբոպալասարի տասնիներորդ տարին, Սիմանու ամսին՝ Աքքադի թագավորը իր զորքերը հավաքագրեց

6. (և) Նաբուգոդոնոսորը՝ նրա ավագ որդին, գահաժառանգը[2]

7. զորքերը հավաքագրեց և նրանք արշավեցին դեպի Զա[...] եկրի լեռները:

8. Սակայն Աքքադի թագավորը արքայազնին ու զորքը թողեց լեռներում, իսկ ինքը Դու'ուզու[3] ամսին վերադարձավ Բաբելոն:

9. Այս ամենից հետո Նաբուգոդոնոսորը լեռներում գտնվող ամրոցների դեմ

10. ճակատամարտ տվեց և ամրոցները վերցրեց ու հրի մատնեց և լեռների ավարը

11. բազմաթիվ տարավ: Նա նվաճեց բոլոր լեռնային տարածքները՝ մինչև [.....] երկրի շրջանը»[4]:

Ինչպես երևում է, արձանագրության մեջ 7-րդ տողի երկրանունը վնասված է, պահպանվել է միայն երկրանվան առաջին վանկը՝ «Za»: Վերականգնման առումով առաջարկվել է մի քանի տարբերակ. Ու. Ֆ. Օլբրայթն առաջարկում էր երկրանունը վերականգնել «^{mātu}Za-[ma-ni]»[5], իսկ Ջ. Ռիդը՝ «^{mātu}Za-⌜tu-ri⌝»[6]՝ նախկին Շուպրիայի տարածքում, և այլն:

---

[1] Վերականգնումն ըստ Ա. Կ. Գրեյսոնի՝ Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 4, l. 9.

[2] Տառացի «դաստիարակության տնից»՝ «bīt re-e-du-tú».

[3] Հունիս-հուլիս:

[4] B.M. 22047, ll. 5-11.

[5] Albright W. F., The Nebuchadnezzar and Neriglissar Chronicles, BASOR, 1956, № 143, 143, p. 29.

[6] Reade J., Why did the Medes invade Assyria?, p. 154: Իսկ Ի. Մ. Դյակոնովը գտնում էր, որ այն կարող էր գտնվել Տիգրիսի վերին շրջաններից մինչև Մելիտենե և Կամ-

Այս դեպքերից հետո, Նաբոպալասարը այնտեղ թողնում է որդուն, իսկ ինքը Դու՛ուզու ամսին զորքի մի մասի հետ ետ վերադառնում[1]: Այդ ընթացքում Նաբուգոդոնոսորին հաջողվում է այդ անհայտ երկրի լեռներում նվաճումներ կատարել՝ iḫ-[tab]-ta adi pi-ḫat ^{mātᵘ}[. . . gi-m]ir šadê^{me} ik-šu-ud[2]: Ա.Կ. Գրեյսոնի մոտ վերականգնումը նույնն է, սակայն նա կարդում է. «Նա նվաճեց բոլոր լեռնային տարածքները՝ մինչև [Ուրարտուի] շրջանը»[3]: Երկրանունը նույն կերպ է վերականգնում նաև Ջ.-Ջ. Գլասսները[4]:

Ա.Կ. Գրեյսոնի կողմից երկրանվան «Ուրարտու» վերականգնման առումով Ի.Մ. Դյակոնովը նշում է, որ երկրանունն ամենայն հավանականությամբ սկսվում է Pi- կամ Ru-/Šub- վանկերով[5], իսկ Դ.Ջ. Ուայզմանը տողի թարգմանության մեջ երկրանունը բաց է թողնում[6]:

Հիմնախնդրի առումով այլ է Ջ. Ռիդի մոտեցումը: Նա վնասված տողում առաջարկում է կարդալ «adi pi-[ḫat] tam-[tim?]», այսինքն՝ «մինչև ծովի (ըստ հեղինակի Վանա լճի) շրջանը»[7]: Սակայն բաբելացիների գործողությունների թատերաբեմը մեզ ստիպում է չհամաձայնվել Ջ. Ռիդի հետ, քանի որ այն կրկին գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում, այլ ոչ թե Վանա լճի շրջակայքում: Իսկ ինչ վերաբերում է «adi pi-[ḫat] tam-[tim?]»՝ «մինչև ծովի շրջանը» արտահայտությանը, ապա գտնում ենք, որ եթե անգամ ճիշտ է այս վերականգնումը, ապա դրանից չի կարելի ենթադրել, որ խոսքն անպայմանորեն վերաբերում է հենց Վանա լճին:

Որքանով, որ մեզ է հայտնի՝ բաբելացիները «tam-tim» բառն առանց որևէ կոնկրետ օբյեկտի նշման օգտագործում էին Բիթ-Յակինը, այսինքն՝ Ծովի երկիրը[8] նշելու համար: Ասվածի ամենավառ վկայությունը կարող է հանդիսանալ այն, որ Բիթ-Յակինի կառավարչին հիշատակելիս բաբելա-

մագենե ընկած տարածքներում և ըստ երևույթին համապատասխանում է կամ Զամբա երկրին կամ Զապշա քաղաքին, Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э., стр. 44-45.

[1] B.M. 22047, ll. 1-9.

[2] B.M. 22047, l. 7.

[3] Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 4, l. 11, p. 97.

[4] Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 23, l. 11, p. 224.

[5] Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э., стр. 39 прим. 49.

[6] Wiseman D. J., Chronicles of Chaldaean Kings (626-556 B. C.), l. 11, p. 65.

[7] Reade J., Why did the Medes invade Assyria?, pp. 149, 152-156.

[8] Պարսից ծոցի ավազանում:

ցիները նշում էին «LUGAL ^{KUR}Tam-tim»՝ «Ծովի երկրի արքա», որտեղ «TՉmti(m)»-ը ցույց է տալիս հենց Ծովի երկիրը[1]:

Աքքադերենում «tam-tim, tam-tum, tâmatu» բառը կարող է թարգմանվել և թե՛ որպես ծով, օվկիանոս, և թե՛ լիճ կամ այլ ջրային խոշոր ավազան[2], իսկ այս դեպքում պարտադիր չէ, որ այդ ջրային ավազանը լինի Վանա լիճը, բացի այդ էլ մասնագետների շրջանում քաջ հայտնի է, որ ասորեստանցիները Վանա լճին անվանում էին «tâmatu ša ^{mātu}Na'iri կամ tâmatu ša ^{mātu}Urarṭaya», և գտնում ենք, որ ասորեստանցիների միջոցով էլ լիճի անունը գրեթե անփոփոխ պետք է որ անցած լինի նաև բաբելացիներին: Եվ ելնելով բաբելացիների ռազմերթի բուն նպատակներից և պատերազմների թատերաբեմից՝ ենթադրում ենք, որ խոսքը կարող է վերաբերել Ծուա (հայկական Ծովքը, ներկայիս Գյոլջիկը) լճին Մեծ Հայքի Ծոփք նահանգի Անձիտ գավառում: Այս գավառը հյուսիս-արևմուտքից սահմանակցում էր Անգեղտուն գավառին[3]:

Չի բացառվում, որ հենց այս ընթացքում էլ բաբելացիները վերջնականապես գրաված լինեն նաև Խառան քաղաքը, որը կրկին իրենց ենթակայության տակ էին վերցրել ասսուրա-եգիպտական դաշնակիցները դեռևս Ք.ա. 609 թվականին[4]:

Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում ռազմական վերոհիշյալ գործողություններից հետո, գահաժառանգ Նաբուգոդոնոսորը՝ Ուլուլու[5] ամսին վերադարձավ Բաբելոն, որտեղ բաբելացիները նոր զորահավաք կազմակերպեցին և արդեն հաջորդ Տաշրիտու[6] ամսին շարժվեցին դեպի Կիմուխու (Սամսատ[7]՝ Եփրատի մեծ ոլորանի շրջա-

---

[1] Brinkman J. A., A Political History of Post-Kassite Babylonia 1158-722 B.C., Roma, 1968, p. 150f.; Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Chron. 1, l. 39, p. 82; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Chron. 16, l. 39, p. 200f. - «^{m}Zēr-kítti-līšir šakin māt tam-tim»՝ «Զեր-կիտտի-լիշիր՝ Ծովի երկրի կառավարիչ», և այլն:

[2] The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago, Chicago & Glückstadt, T, vol. 18, 2006, pp. 150-157.

[3] Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, էջ 42-43, ՅԴ:

[4] Մանրամասն տես Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը …, էջ 265-268:

[5] Օգոստոս-սեպտեմբեր:

[6] Սեպտեմբեր-հոկտեմբեր:

[7] Wiseman D. J., Chronicles of Chaldaean Kings (626-556 B. C.), p. 21f.; Oates J., The fall of Assyria (635-609 B.C.), CAH, 1991, III/2, p. 182; Wiseman D. J., Babylonia 605-539 B.C., CAH, 1991, III/2, p. 229f.; Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э., стр. 45.

նում՝ Կարքեմիշից հյուսիս-արևելք):

Այս քաղաքը բաբելացիների համար, ըստ երևույթին, ուներ ռազմաստրատեգիական նշանակություն և նրանք մտադիր էին այն վերածել եգիպտացիների դեմ հետագա պայքարի համար ռազմական հենակետի: Վերջապես Կիսլիմու[1] ամսին բաբելացիներին հաջողվեց անցնել Եփրատ գետը և գրավել Կիմուխուն: Կիմուխուում բաբելացիները կայազորներ թողեցին և գերիներով ու մեծ ավարով Շաբաթու[2] ամսին հետ քաշվեցին[3]: Սկսվեց պայքարն էբիրնարիում՝ «^{mātu}E-bir-nāri»[4] գերիշխանության համար, մար, որն ասորեստանցիներն օգնության դիմաց զիջել էին եգիպտացիներին:

Այսպիսով, ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ Բիթ-Խանունիան գտնվել է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան շրջաններում՝ Իզալայի լեռներից հյուսիս կամ հյուսիս-արևմուտք՝ ընդհուպ մինչև Հայկական Տավրոս: Եվ ինչպես արդեն վերը նշվեց, ելնելով բաբելական զորքերի արշավանքի ուղղությունից և բուն նպատակներից, որոնք միանշանակորեն ընթանում էին Մեծ Հայքի Աղձնիք և մասամբ էլ Ծոփք նահանգների սահմանամերձ տարածքներում՝ բացառված չենք համարում այն հնարավոր տարբերակը, որ «Բիթ-Խանունիան» իր տեղադրությամբ համապատասխաներ «Աշխարհացույցյան» Աղձնիք նահանգի Անգեղտուն[5] կամ էլ այդ նահանգի որևէ այլ գավառին:

Դեռ ավելին՝ միանշանակ է, որ բաբելացիների վերոհիշյալ երեք արշավանքներն էլ՝ Ք.ա. 609 թվականին դեպի Իզալայի շրջան, Ք.ա. 608 թվականին դեպի Բիթ-Խանունիայի լեռների շրջան և Ք.ա. 607 թվականին դեպի «մինչև ծովի շրջան», ունեին մեկ միտում և իրականում ուղղված էին Ասորեստանի երբեմնի աշխարհակալ տերության վերջին մնացուկների վերացմանը, իսկ ռազմական թատերաբեմը միանշանակորեն գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան տարածաշրջանում:

---

[1] Նոյեմբեր-դեկտեմբեր:

[2] Հունվար-փետրվար:

[3] B.M. 22047, ll. 12-15.

[4] Միջագետքի բնակիչներն այսպես էին անվանում անդրեփրատյան տարածքները, իսկ «E-bir-nāri» տառացի նշանակում է «գետից այն կողմ»:

[5] Գավառի տեղադրության առումներով տես և համեմատիր՝ Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Եր., 1963, էջ 35 և էջ 116 աղ. III; Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1968, էջ 234; Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 156-161:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972:
2. Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:
3. Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ.թ.ա. VI-IV դարերում, ՊԲՀ, 2005, № 3, էջ 173-192:
4. Հակոբյան Թ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968:
5. Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, հեղինակ Բ. Հ. Հարությունյան, Երևան, 2004:
6. Հարությունյան Բ. Հ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001:
7. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ և մեկն. Ս. Տ. Մալխասյանի, Երևան, 1981:
8. Սարգսյան Դ. Ն., Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Հայաստան երկիրը Ուրարտուն է, այլ ոչ թե Շուբրիան, ՊԲՀ, 1984, № 3, էջ 177-188:
9. Ցականյան Ռ., Ասսուրա-բաբելոնյան հակամարտությունը և Նաբոպալա-

սարի հյուսիսային արշավանքները, ՊԲՀ, 2011, № 1, էջ 261-273:
10. Ցականյան Ռ., Աշշուրբանապալի կառավարման վերջին տարին, Մերձավոր Արևելք, հոդվածների ժողովածու, 2011, № VII, 270-276:
11. Քոսյան Ա., Տուն Թորգոմայ (առասպել և իրականություն), Երևան, 1998:
12. Քոսյան Ա., Արամ նահապետը Կապադովկիայում (Մի վարկածի առթիվ), ՊԲՀ, № 1, 1999, էջ 237-259:
13. Albright W. F., The Nebuchadnezzar and Neriglissar Chronicles, BASOR, 1956, № 143, pp. 28-33.
14. Barnett R. D., Urartu, The Cambridge Ancient History, 1982, 3/1, pp. 314-371.
15. Brinkman J. A., A Political History of Post-Kassite Babylonia 1158-722 B.C., Roma, 1968.
16. Diakonoff I. M., Media, The Camridge History of Iran, vol. 2, 1985, pp. 36-148.
17. Gadd C.J., The Fall of Nineveh, The Newly Discovered Babylonian Chronicle № 21.901 in the British Museum, London, 1923.
18. Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Atlanta, 2004.
19. Grayson A. K., Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley, New York, 1975.
20. Harper R. F., Assyrian and Babylonian Letters belonging to the Kouyunjik collection of the British Museum, Chicago, vol. V, 1896.
21. Oates J., The fall of Assyria (635-609 B.C.), The Cambridge Ancient History, 1991, III/2, pp. 162-193.
22. Lanfranci G. B., Parpola S., The Correspondence of Sargon II, Part II, Letters from the Northern and Northeastern Provinces, State Archives of Assyria, № V, Helsinki, 1990.
23. Pfeiffer R.H., State letters of Assyria. A transliteration and translation of 355 official Assyrian letters dating from the Sargonid Period (722-625 B.C.), New Haven, 1935.
24. Reade J., Why did the Medes invade Assyria?, History of the Ancient Near East, Monographs-V, Continuty of Empire (?): Assyria, Media, Persia, Ed. G.B. Lanfranchi, M. Roaf, R. Rollinger, Padova, 2003, pp. 149-156.
25. Rollinger R., The Median “Empire”, the End Urartu and Cyrus the Great Campaign in 547 B. C.: (Nabonidus Chronicle II, 16), In Ancient West and East, Tehran, 2009, № 7, pp. 49-63.
26. Rollinger R., The Western Expansion of the Median “Empire”: A Re-Examination, History of the Ancient Near East, Monographs-V, Continuty of Empire (?): Assyria, Media, Persia, Ed. G.B. Lanfranchi, M. Roaf, R. Rollinger, Padova, 2003, pp. 289-319.
27. Russel H.F., Shalmaneser’s Campaign to Urartu in 856 B.C. and the Historical Geography of Eastern Anatolia according to the Assyrian soures, Anatolian Studies, Journal of the Institute of Archaeology at Ankara, 1984, № 34, pp. 171-201.

28. Salvini M., Geschichte und Kultur Urartäer, Darmstadt, 1995.
29. The Assyrian Dictionary of the Oriental Institute of the University of Chicago, Chicago & Glückstadt, T, vol. 18, 2006.
30. Waterman L., Royal Correspondence of the Assyrian Empire, I, Ann Arbor, 1930.
31. Wiseman D. J., Chronicles of Chaldaean Kings (626-556 B. C.) in the British Museum, London, 1956.
32. Wiseman D. J., Babylonia 605-539 B.C., The Cambridge Ancient History, 1991, III/2, pp. 229-251.
33. Арутюнян Н. В., Биайнили (Урарту), Военно-политическая история и вопросы топонимики, Ереван, 1970.
34. Арутюнян Н. В., Топонимика Урарту, Ереван, 1985
35. Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, № 2, стр. 255-356.
36. Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н.э. и северные походы вавилонских царей, ВДИ, 1981, № 2 стр. 34-64.
37. Дьяконов И. М., Урарту, Фригия, Лидия, История древнего мира, т. 2, изд. 3-е, М., 1989.
38. Меликишвили Г. А., Наири-Урарту. Древневосточные материалы по истории народов Закавказья, № 1, Тбилиси, 1954.
39. Пиотровский Б. Б., Ванское царство (Урарту), Москва, 1959.
40. Языки мира: Семитские языки. Аккадский язык. Северозападносемитские языки. Ред. колл.: А. Г. Белова, Л. Е. Коган, С. В. Лёзов, О. И. Романова, М., 2009.

18-Й ГОД ПРАВЛЕНИИ НАБОПАЛАСАРА (625-605 ГГ. ДО Р.Х.) (B.M. 22047, 1-13) И ПРОБЛЕМА ЛОКАЛИЗАЦИИ «Bīt- ^{m}Ḫa-a-nu-ni-ia»

Руслан Цаканян

РЕЗЮМЕ

В 608 до Р.Х., во время северного похода вавилонского царя Набопаласара (625-605 гг. До Р.Х.) (B.M. 22047 (96-4-9,152), стк. 1-4) – вавилонские войска появились на подступах Армянского нагорья и дошли до границ или области Урарту – до гор «**Bīt-^{m}Ḫa-a-nu-ni-ia**». У специалистов по локалиьации последнего, нет единого мнения. Но, всетаки, следуя маршруту вавилонской армии, можно заключить, что она находилась в северо-западном или северном направлении от гор Ицаллы и, наверно, соответствовал уезду Ангелтун (**Անգեղտուն**) «Армянской Географий». И исходя из высшесказанного, можно утверждать, что отождествление **«Bīt- ^{m}Ḫa-a-nu-ni-ia»** с лувийской Hanuni(a)ssas и др. армянским Хнусом или с Кордуком (Կորդուք) – явно ошибочны.

А что касается словосочетанию «adi pi-ḫat ^{māt}Ú-ra-áš-ṭu» («до области Урарту»), как уже отмечалось в работе, то нужно принимать как географическое а не политическое название.

THE 18TH YEAR OF THE REIGN OF NABOPALASAR (625-605 B.C.) (B.M. 22047, 1-13) AND THE PROBLEM OF LOCALLIZATION OF THE «Bīt- ^{m}Ḫa-a-nu-ni-ia»

Rooslan Tsakanyan

SUMMARY

In the 608 B. C., during of the reign Babylonian King Nabopolassar (625-605 B.C.) (B.M. 22047 (96-4-9,152), lines 1-4) the army of Babylonia approached to the Armenian Highland and reached to the borders of Urartu- to the mountain of **“Bīt- ^{m}Ḫa-a-nu-ni-ia”**, of the localization of which specialists have no common opinion. However, according to the march of the Babylonian army one can conclude that it was situated in the north-western or northern part from Izalla and probably corresponded with the Angełtun (**Անգեղտուն**) region of the “Armenian Geography”. The author has come to conclusion that the identification of **«Bīt- ^{m}Ḫa-a-nu-ni-ia»** with Luwian Hanuni(a)ssas and Old Armenian Khnunis or Korduk (Կորդուք) - is wrong.

And, as to the phrase «adi pi-ḫat ^{māt}Ú-ra-áš-ṭu» (“the district of Urartu”) one must accept it as the geographical name not as the political one.

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿ ԱՌԱՋԻՆԻ ԴՐԱՄՆԵՐԻ ՎՐԱ

Արթուր Մելիքյան
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հնուց ի վեր դրամներն իրենց բուն նշանակությունից բացի ծառայել են իբրև պաշտոնական գաղափարների քարոզամիջոցներ և կարևորագույն իրադարձությունները նշանավորող հուշանշաններ, որոնց պատկերներն ու խորհրդանիշերի համակարգերն արտացոլել են տվյալ դարաշրջանի պաշտոնական տեսակետներն ու գաղափարական միտումները[1]: Դա հավասարապես վերաբերում է նաև Արշակունիների դրամահատությանը, որը, երևան գալով Պարթևական պետության արշալույսին,[2] նրա գոյության ավելի քան չորս դարերի ընթացքում հավատարմորեն արտահայտեց Արշակունիների գաղափարական ոգորումները, նրանց քաղաքական հավակնությունները, վերելքներն ու անկումները:

Սույն հոդվածի շրջանակներում քննության առարկա ենք դարձրել պարթևական պետության ձևավորման շրջանի դրամահատության մեջ անկախության գաղափարի պատկերագրական դրսևորումների հարցը՝ հավակնելով բացահայտել նաև դրանց վրա արքայական իշխանության, նրա սուվերենության մասին հին առաջավորասիական և հելլենիստական գաղափարական պատկերացումների ու արտահայտչական ձևերի հնարավոր ազդեցությունները:

---

[1] Массон М.Е., “Находка на городище Старая Ниса датированной парфянской тетрадрахмы Митридата I”, Вестник Древней Истории (այսուհետ՝ *ВДИ*), 1963, N 2, с. 152 и сл..

[2] Պարթևական պետության առաջացման ժամանակի և հանգամանքների, անտիկ մատենագրության մեջ դրանց լուսաբանման հարցերի շուրջ վերջին տարիներին կատարված ուսումնասիրություններից նշանակալից են. Assar G.F., “Genealogy and Coinage of the Early Parthian Rulers. I”, *Parthica*, 6, 2004, pp. 69-93; *Ibid*, “Genealogy and Coinage of the Early Parthian Rulers. II. A Revised Stemma”, *Parthica*, 7, 2005, pp. 29-63; Gaslain J., "Arsaces I, the First Arsacid King? Some Remarks on the Nature of Early Parthian Power", in *Central Asia from the Achaemenids to the Timurids. Archaeology, History, Ethnology, Culture*. Materials of an International Scientic Conference dedicated to the Centenary of A. M. Belentitsky, St. Petersburg, November 2-5, 2004, St. Petersburg, 2005, pp. 221-224; *Ibid.*, "Le bachlik d'Arsace Ier ou la representation du nomade-roi", in *Bulletin of Parthian and Mixed Oriental Studies*, I, (2005), pp. 9-30; *Ibid.*, "A propos d' Arsace Ier", *Electrum*, 15 (2009), pp.. 27-39.

Արշակ Ի-ից մեզ հասած պղնձե երկքաղուսները, արծաթե դրահմաներն ու հեմիդրահմները ոչ միայն անթվակիր են, այլև պատկերագրորեն դժվար զանազանելի: Բնականաբար, դրամների վրա պարթևների անկախացման գործընթացի պատկերագրական արտահայտությունների դինամիկան պարզելու ցանկացած փորձ կամա թե ակամա հանգում է ժամանակի մեջ նրանց բաշխվածության հարցին:

Հիմնախնդրի լուսաբանմանը միտված առանցքային հարցադրումների մեջ, ելակետային նշանակություն ունեն այն հարցերը, թե երբ է սկզբնավորվել Արշակունիների դրամահատությունը և Արշակ Ի-ի՝ միևնույն ΑΡΣΑΚΟΥ (Արշակ անվան սեռական հոլովածևը) լեգենդը կրող արծաթե դրահմաների ու երկքաղքուսների թողարկումը միաժամանակ է սկսվել, թե՞ առանձին-առանձին: Առաջին հարցի շուրջ ծավալված ավելի քան հարյուրամյա բանավեճից[1] հետո (դրամագիտությունը, հատկապես նորահայտ գանձերի ուսումնասիրության հիման վրա) հանգել է վերջնական եզրակացության. պարթևական դրամահատությունը սկզբնավորվել է այս պետության ամենավաղ շրջանում, և նրա առաջին թողարկումները կատարվել են հենց Արշակ Ի-ի կողմից:

Երկրորդ հարցի վերաբերյալ միանշանակ հետևության գալ, ըստ էության, հնարավոր չէ: Վաղ պարթևական պղնձե դրամների ավերսի պատկերները իրենց տիպով բավականին ընդհանրանում են ΑΡΣΑΚΟΥ լեգենդով դրահմաների ավերսի պատկերներին: Բայց, դատելով այն իրողությունից, որ պղնձե երկքաղքուսների կատարողական մակարդակը դրահմաների նկատմամբ անհամեմատ ցածր է, իսկ դրանց երեսի ու դարձերեսի պատկերագրությունը՝ շատ ավելի պարզ, կարելի է ենթադրել, որ դրանց թողարկումը նախորդել է արծաթների թողարկմանը:

Պարթևական բոլոր վաղագույն պղնձադրամները հայտնի են դարձել Դ. Սելվուդի նշանավոր «Տիպահամար»-ի հրատարակությունից (1971թ.) հետո[2]: Հետագայում, նրանց որոշ նմուշներ տեղ են գտել «Տիպահա-

---

[1] Bikerman E., Notes on Seleucid and Parthian Chronology, *Berytus*, Vol. VIII, 1944, N 2, pp. 82-83. Кошеленко Г.А., “Некоторые вопросы истории ранней Парфии”, *ВДИ,* 1968, но. 1, с. 53-68.

[2] Ա. Կ. Մարկովը 1892թ. իր հրապարակած վաղ պարթևական պղնձե դրամները, որոնք հատկանշվում են ավերսի անմորուս դիմապատկերով և աջ դարձած փղի ու ձիու պատկերներով, վերագրում էր Տրդատ Արշակունուն (իմա՝ Արշակ Ի-ին) (Марков А.К., Неизданные арсакидские монеты, СПб, 1892, с. 5, табл. III, 2, 3): Իրականում դրանք պետք է վերագրել Միհրդատ Ի-ին, քանի որ հիշյալ կենդանական

մար»-ի երկրորդ հրատարակության III տիպում[1]: Հայտնի են նաև ոճական առումով դրանց հետ նույնական, բայց չնչին դետալներով դրանցից զանազանվող օրինակներ, որոնք վերագրվել են Դ. Սելվուդի դասակարգման II և IV տիպերին[2]:

Որպես կանոն Արշակի երկքաղքուսների դարձերեսին դրոշմված է «MT» կամ «M» մոնոգրամը: Սակայն հայտնի են նաև օրինակներ, որոնց վրա դրանք բացակայում են: Այս հանգամանքը, ինչպես նաև դրամների քաշի[3], մաշվածության աստիճանի, պատկերների ձևի ու դրամի առանցքի նկատմամբ դրանց հարաբերության տարբերությունները ցույց են տալիս, որ երկքաղքուսների թողարկումը ոչ թե միանվագ, այլ պարբերական բնույթ է ունեցել: Չի բացառվում, որ դրանք հատվել են տարբեր դրամահատարաններում[4]:

պատկերները Արշակունիների դրամահատության մեջ են ներմուծվել պարթևական այդ արքայի օրոք:

[1] Sellwood D., An Introduction to the Coinage of Parthia, 2 nd edition, London, 1980, Taype 3.

[2] Numismatic Lanz München, Auction 102, (28 May 2001), Lot 306; Jacquier, *Numismatique Antique*, List 16, (Autumn 1994), Lot 204.

[3] Վերոնշյալ երկքաղքուսների քաշը համապատասխանեցված է Ք.ա. III դ. ատտիկյան դրամական համակարգին և տատանվում է 3,20-3,88 գ միջև:

[4] Պարթևական առաջին դրամահատարանի հարցը առ այսօր լուրջ քննարկումների առարկա է: Նախքան Բուջնուրդի գանձի հրապարակումը, Ե.Տ. Նյուելը Հեկատոմպիլոսի դրամահատարանում Սելևկոս II-ի հատած դրամների և պարթևական այսպես կոչված «անմորուս դիմապատկերով» դրամների միջև առկա կատարողական և ոճական որոշ ընդհանրությունների հիման վրա գտնում է, որ Արշակունիների դրամահատությունը սկզբնավորվել է Հեկատումպոլիսում (Newell E. T., "The Coinage of the Parthia" in *Survey of Persian Art*, I, London-New York, 1938, N 733-745, Tab. IV, 9-15): Այս կարծիքը պաշտպանում է նաև Գ.Ա. Կոշելենկոն (Кошеленко Г.А., “Некоторые вопросы..., с. 61-62): Դ. Սելվուդը վաղ պարթևական դրահմաների ու քաղքուսների որոշ մասի դարձերեսին առկա «MT» և «M» մոնոգրամները համարում է Հին Նիսայի միջնաբերդ Միհրդատակերտի դրամահատարանի դրոշմանիշը (Sellwood D., "Parthian Coins", in *Cambrige History of Iran (այսուհետ՝ CHIr),* Vol. 3 (1), ed. by E. Yarshater, 6th printing, New York, 2006, p. 280): Այս կարծիքը պաշտպանում է նաև Գ. Ասսարը (Assar G.F., Genealogy and Coinage..., I., p. 80): Ջ. Գալլի կարծիքով, Հին Նիսա-Միհրդատակերտը չէր կարող լինել Արշակ I-ի դրամահատական կենտրոնը, քանի որ նրա հնագույն մշակութային շերտերը վերաբերում են Ք.ա. III դ. վերջերին կամ II դ. (Galle S., "Une Drachme inconnue d'Arsace Ier et la problème des monogrammes," *Iranica Antiqua*, 1982, vol. 17, p. 175-180): Համանման դիրքորոշում ունի նաև Ջ. Գեսլինը, (Gaslain J., A propos d'Arsace Ier, p. 36.) որը, նկատի առնելով մի կողմից արդի գիտության մեջ ընդունված Հին Նիսա-Միհրդատակերտ տեղագրական նույնացումը (Invernizzi A., "Thoughts on Parthian Nisa", *Parthica* 6 (2004), pp. 133-137), մյուս կողմից՝ ընդունված

Այդուհանդերձ, բոլոր պղնձադրամների պատկերագրությունը նույնն է (*պատկ. 1*): Դրանց երեսին պարթևական առաջնորդը ներկայացված է հելլենիստական նորաձևությանը համապատասխան՝ սափրված դեմքով՝ ձախ դարձած դիրքով: Սակայն ի տարբերություն հունա-հելլենիստական միապետների, որոնք պատկերված են կամ դիադեմայով, կամ էլ խիստ ոճավորված սաղավարտներով, Արշակը ներկայացվել է պարսկական կուրբասիով (պարսկ. *kurpāsa*) կամ բաշլիկով (թուրք. *bašlik*)՝ կոշտ մանվածքի կտորից պատրաստված ականջակալներով ու ծոծրակակալով սաղավարտաձև գլխարկով, որը քոչվորների հանդերձանքին բնորոշ տարր էր և նախորդ՝ Աքեմենյան դարաշրջանում հանդիսանում էր արևելաիրանական և միջինասիական սատրապների գլխի հարդարանքի հիմնական ձևը[1]:

Աքեմենյան դարաշրջանի «սատրապական հարդարանք»-ի մեջ կուրբասին, ինչպես տիարան, մշտապես համադրված է ծոծրակին հանգուցվող դիադեմայի հետ: Երկքաղքուսների ավերսին Արշակի գլխի հարդարանքի մեջ իշանության այս խորհրդանիշը բացակայում է, մինչդեռ այն առկա է նույն ΑΡΣΑΚΟΥ լեգենդը կրող որոշ դրահմաների երեսին[2]: Այս իրողությունը ծանրակշիռ փաստարկ է հօգուտ մեր այն կարծիքի, որ Արշակի պղնձե թողարկումները նախորդել են արծաթների թողարկմանը:

Բավական պարզունակ է նաև երկքաղքուսների դարձերեսի պատկե-

այն դրույթը, որ Հին Նիսան Միհրդատակերտ է անվանակոչվել Միհրդատ I-ի (Ք.ա. 171-132 թ.թ.) կողմից՝ կապված Միթրայի պաշտամունքին համապետական նշանակություն տալու և քաղաքը Պարթևական տերության կրոնական կենտրոն դարձնելու հետ, վիճարկելի է համարում Միհրդատակերտը առաջին Արշակունիների դրամահատական կենտրոն լինելու հնարավորությունը: Ամեն դեպքում, Նիսա (Հին Նիսա) քաղաքանվան հետ նրա միջնաբերդի Միհրդատակերտ անվան զուգահեռ գործածությունը հիմք է տալիս կարծելու, որ միջնաբերդը գոյություն է ունեցել Ք.ա. III դ. երկրորդ կեսից՝ ավելի վաղ, քան քաղաքը, և որ այդ անունը գործածական է եղել Միհրդատ I-ի կողմից Հին Նիսայի անվանափոխությունից առաջ (Фаррох К., Персы: армия великих царей, М., 2009, с. 129; Dąbrova E., “Mithrdates I and the Beginning of the Ruler-cult in Parthia”, *Electrum*, 15 (2009), p. 42):

[1] Sellwood D., Parthian Coins, p. 279-280; Kawami T.S., Monumental Art of the Parthian Period in Iran, *Acta Iranica*, 13 Leiden, 1987, p. 3; Peck E.H., Crown II. From the Seleucids to the Islamic Conquest, *Enciclopaedia Iranica (այսուհետ՝EIr)*, 1993, Vol. VI, Fasc. 4, p. 408. Գ. Ա. Կոշելենկոն, վաղ Արշակունիների գլխի հարդարանքը համարելով «բաշլիկ հիշեցնող քոչվորական գլխարկ» և մատնացույց անելով նրա պարզ ձևը, հրաժարվում է այն նույնացնել «ավելի բարդ և ծոխ սատրապական հարդարանքի» հետ (Кошеленко Г.А., Некоторые вопросы..., с. 59-60):

[2] Sellwood D., An Introduction..., 5. 1.

ռագրությունը: Դրամի առանցքին սիմետրիկ ներկայացված է պահունակի մեջ դրված աղեղ, որի աջ կողմում հունարեն ΑΡΣΑΚΟΥ լեգենդն է[1]:

Որոշ ուսումնասիրողներ, նկատի առնելով այն իրողությունները, որ խնդրո առարկա պղնձադրամների վրա Արշակը ներկայացված է առանց ժապավենազարդ դիադեմայի, իսկ դարձերեսին էլ Արշակի անունը լրացված չէ հելլենիստական միապետներին բնորոշ ΒΑΣΙΛΕΩΣ տիտղոսով, եզրակացնում են, որ սկզբնապես նա հրապարակավ չի հայտարարել Սելևկյաններից իր անկախությունը: Նրանց կարծիքով դա հնարավորություն է տվել Արշակին թաքնվելու կենտրոնական կառավարության դեմ պայքարի ուղին բռնած Անդրագորասի դեմ մարտնչողի դիմակի տակ[2]: Գ.Ա. Կոշելենկոն նույնիսկ եզրակացնում է, որ Արշակը նմանակել է իրեն նախորդած Անդրագորասին, որը ևս դրամների վրա ոչ մի տիտղոս չէր կրում, այլ միայն անձնական անունը՝ սեռական հոլովով՝ ΑΝΔΡΑΓΟΡΟΥ[3]:

Սակայն վերոնշյալ մեկնաբանությունը չի պաշտպանվում ո՛չ մատենագրական, ո՛չ էլ դրամագիտական տվյալներով: Բացի այդ, Արշակի գլխի «սատրապական» հարդարանքը բնավ չի կարող առիթ տալ կարծելու, թե այն ամենը, ինչին հավակնել է պարների ցեղառաջնորդը, եղել է Սելևկյանների կողմից իբրև Պարթուենեի սատրապ ճանաչվելը: Այս առումով միանգամայն իրավացի է Ջ. Գեսլինը, ով նկատում է, թե պարների ապստամբ ցեղառաջնորդի գլխին կուրբասին, դադարելով սատրապական իշխանության խորհրդանիշ լինելուց, դառնում է «նոր նվաճողի կարգավիճակի, նրա ծագման և էթնո-մշակութային պատկանելության խորհրդանիշը»[4]:

Մյուս կողմից, Արշակի կողմից սեփական դրամի հատումը, թեկուզ և առանց արքայական տիտղոսի, ինքնին մարտահրավեր էր կենտրոնական կառավարությանը, որը, ինչպես հայտնի է, բացառիկ խանդով էր վերաբերվում այսօրինակ դեպքերին: Անտիոքոս I-ը նույնիսկ պետական դավաճանության մեղադրանքով մահապատժի էր ենթարկել հարազատ

---

[1] Abgarians M.T., Sellwood,D., "A Hoard of Early Parthian Drachms" *Numismatic Chronicle* 7/11, London, 1971, pl. 20, 3/5 and 3/6; Numismatic Lanz München, Auction 102 (28 May 2001), lot 306. Sellwood D., An Introduction..., Type 3.

[2] Массон В.М., Ромодин В.А., История Афганистана, Տ. 1, Ծ., 1964, ր. 102-103. Кошеленко Г.А., “Царская власть и ее обоснование в ранней Парфии”, см. История иранского государства и культуры: к 2500-летию Иранского государства, под ред. Б.Г. Гафурова и др., 1971, с. 212; Narain A.K., The Indo-Greeks, Oxford, 1962, pp. 16-17.

[3] Кошеленко Г.А., Некоторые вопросы…, с. 65.

[4] Gaslain J., Le bachlik d’Arsace Ier ..., pp. 9-30.

որդուն՝ Սելևկոսին, որը համարձակվել էր սեփական անունով և պատկերով դրամ հատել[1]: Ուստի, պաշտոնական տեսանկյունից հազիվ թե Անդրագորասը տարբերվեր Սելևկոսից, կամ Արշակը՝ Անդրագորասից:

Իրականում Արշակի անդրանիկ դրամների վրա դիադեմայի և βασιληύς տիտղոսի բացակայությունը պետք է համարել ոչ թե սահմանափակ ինքնիշխանության կամ էլ քաղաքական զգուշավորության արտահայտություն, այլ տուրք հելլենիստական աշխարհում դեռևս Ալեքսանդրի դիադոքների օրոք սկզբնավորված ավանդակարգին: Դրա համաձայն՝ ընդարձակ տարածքների, նյութական և մարդկային ռեսուրսների տիրացած մակեդոնական զորապետները հետաձգում էին իրենց պաշտոնական թագադրությունը մինչև այն պահը, երբ արտաքին թշնամու դեմ կտանեին որևէ նշանակալից հաղթանակ[2]: Սովորաբար, այս ավանդակարգի ծագումը բացատրվում է վաղ հելլենիստական դարաշրջանի արքայական իշխանության «ռազմական» բնույթով և նրա իրավական ձևակերպումներում «նվաճման փաստի» կարևորմամբ, մի հանգամանք, որը ընդունում են անխտիր բոլոր անտիկ հեղինակները[3]:

Սակայն հաղթանակը ոչ միայն ապահովում էր միապետի փաստացի տիրապետությունը, այլև, նրա «անպարտելիությունը» ի ցույց դնելով, բավարարում էր նաև հաղթողի գահակալության նկատմամբ հարուցվող հիմնական՝ աստվածների հովանավորության ներքո գտնվելու գաղափարական պահանջը[4]: Այս առումով, դեպի արքայական խույրը տանող ճանապարհին տպավորիչ հաղթանակը Արշակի համար կարևոր էր նույն-

[1] Бикерман Э., Государство Селевкидов, М., 1985, с. 24.

[2] Diodorus of Sicily, The Library of History in twelve volumes with an English translation by C. H. Oldfather, London, 1967 (այսուհետ՝ Diod.), XX, 53, 3; Аппиан, Римская история, под ред. Е.С. Голубцова, М., 1998, XI, 54 (այսուհետ՝ Аппиан).

[3] Diod., XXI, 1, 5; Полибий, Всеобщая история, в 2 томах, перев. с древнегр. Ф. Мищенко, т. 1, М., 2004, V, 67, 4; Тит Ливий, История Рима от основания города, т. М., 1994, XXXIV, 57, 7. Մովսիսի Խորենացիոյ Պատմութիւն Հայոց, քննակ. բնագ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխ. թարգմ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, I, Ը (այսուհետ՝ Մ. Խորենացի):

[4] Վաղ հելլենիստական պատկերացումների համաձայն արքան «երջանիկ զինվոր» էր, որի տարած հաղթանակը տալիս էր ոչ միայն փաստացի տնօրինության, այլև տիրապետության իրավունք: Սակայն անչափ կարևոր էր այդ իրավական դրույթի ծիսա-գաղափարական հիմնավորումը. ռազմիկ արքայի «բախտավորությունը» նրա նկատմամբ աստվածների բարեհաճությունն էր, իսկ հաղթանակը՝ ընդամենը նրանց «բարեհաճության» պտուղը, քանզի այն, ինչպես որ արքայական իշխանությունն ընդհանրապես, համաձայն հնամենի պատկերացումների, կարող էր միայն աստվածատուր լինելել:

քան, որքան որ Անտիգոնոսի կամ Սելևկոսի համար:

Անշուշտ, վերոնշյալ հունա-հելլենիստական հայեցակարգը հասու և ընկալելի էր նորանկախ պարներին, որոնք Սելևկյանների տիրապետության տասնամյակներին կամա թե ակամա հաղորդակցվել էին դրա հետ: Սակայն արքայական իշխանության ծագման և նրա իրավական հիմնաքարի վերաբերյալ վերոնշյալ պատկերացումները բացառապես հելլենիզմի արտադրանքը չէին: Հին իրանական-առաջավորասիական գաղափարախոսության մեջ դրանք ունեին իրենց զուգահեռները, որոնք ավելի հին էին և նախահելլենիստական դարաշրջաններում բանահյուսական և պատկերագրական շերտերում բավականին հղկվել և կանոնականացվել էին[1]: Հնարավոր է, որ հենց արքայի փուլային կայացման մասին հին

[1] Դրա վառ ապացույցն է այն, որ նոր հարստությունների հիմնադիրների վերաբերյալ հին արևելյան լեգենդներից ու ավանդազրույցներից յուրաքանչյուրի մեջ, որպես նոր իշխանության կայացման պարտադիր տարր, հանդիպում ենք լեգենդի հերոսի՝ իր նախորդ տիրակալի դեմ մղած պայքարի ու հաղթական ճակատամարտի դրվագին (Кошеленко Г.А., Некоторые вопросы..., с. 65): Իրանական գրավոր և պատկերագրական ավանդության մեջ արքայի փուլային կայացման այս պայմանաձևը վառ դրսևորված է Աժդահակի դեմ Կյուրոսի (Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1986, I, 125-128) և Արտավան V-ի դեմ Արտաշիրի պայքարի մասին ավանդազրույցներում (The Karnamak-e Ardeshir-e Papakan By: Charles F. Horne The Sacred Books and Early Literature of the East, New York, 1917, chapter IV): Բուն Իրանից բացի, արքայի կայացման այս մոդելը տարածված է եղել նաև սկյութների ու սարմաթների, ինչպես նաև Միջին Ասիայի իրանալեզու ցեղերի շրջանում, որոնց հետ սերտ կապի մեջ է ներկայացնում Արշակի վերելքը անտիկ ավանդությունը (Frye R.N., The Charisma of Kingship in Ancient Iran" *Iranica Antiqua*, 4 (1964), p. 48):

Պատկերագրական արվեստում արքայի կայացման նախնական կամ «հերոսական» փուլը մեծամասամբ ներկայացված է աստվածային ինվեստիտուրայի ժանրի կոմպոզիցիաներում: Սակայն դրանցում, որպես կանոն, ինվեստիտուրան կատարվում է ճակատամարտում հերոսի տարած հաղթանակի պատկերագրական շերտի վրա, ինչը խորհրդանշված է կամ կապկպված գերիների, կամ էլ գետնաթավալ հակառակորդների պատկերաձևերով (Herzfeld E., Iran in the Ancient East, London-New York, 1941, p. 183, Fig. 297**;** Westenholz J., "The King, The Emperor, and the Empire. Continuity and Discontinuity of Royal Representation in Text and Image" see The Neo-Assyrian Text Corpus, ed. Sanno Aro and R. M. Whiting, Helsinki, 2000, p. 103, Fig. 1; p. 109, Fig. 3; p. 121, Fig. 7; Ланно-Данилевский А., и Мальберг В., Древности Южной России. Курган Карагодеуашх, Спб.: Изд. Императорской Археологической комиссии (Типография Императорской Академии Наук, Вос. Остр., 9, лин. N 12), 1894, с. 139-153. Hinz W., Altiranische Funde und Forschungen, Berlin, 1969, S. 126-127, Tafel 60, S. 172, Tafel 100): Հին առաջավորասիական մշակույթում այսպիսի կոմպոզիցիաներով հուշարձանների մեծ թիվը վկայում է, որ արքայական իշխանության ուժային, ռազմական բնույթի, ինչպես նաև հաղթանակի, որպես այդ

իրանական պատկերացումների ուժով է, որ պաների ցեղառաջնորդն հաղթական ապստամբությունից անմիջապես հետո իր գլխին արքայական խույր չդրեց:

Արշակի քաղաքական բարձրացման փուլային շարժընթացը՝ վերափոխվելը հասարակ ցեղառաջնորդից նախ «հերոս առաջնորդ»-ի, ապա և սուվերեն ինքնակալի, արտահայտված է դրամների թե՛ երեսին՝ Արշակի գլխի հարդարանքի ձևի, թե՛ դրամների դարձերեսներին՝ դյուրընկալելի խորհրդանշանների միջոցով:

«Պահունակի մեջ դրված աղեղ»-ի խորհրդանիշը, որով հատկանշվում են Արշակի երկքաղքուսները, նորույթ չէր հելլենիստական դարաշրջանի պատկերագրության մեջ: Այն ավելի վաղ հայտնի է Ալեքսանդր Մակեդոնացու[1] (*պատկ. 2*) և Մակեդոնիայի արքա Անտիգոնոսի արծաթե դրամներից[2]: Սակայն երկու դեպքերում էլ աղեղի կողքին պատկերված է մահակ, ինչն ինքնին հասկանալի է դարձնում, որ ամբողջ կոմպոզիցիան խորհրդանշում է Հերակլեսին, որից Արգեադյաններն ու Անտիգոնյանները բխեցնում էին իրենց ծագումնաբանությունը:

Իհարկե, բավական դյուրին է Արշակի պղնձադրամների վրա «պահունակի մեջ դրված աղեղ»-ի սիմվոլի առկայությունը մակեդոնական նախատիպի կրկնօրինակմամբ պայմանավորելը, մանավանդ, ընդունված է կարծել, որ «Ալեքսանդրի ներխուժմանը հաջորդած ժամանակաշրջանում Հերակլեսի մոտիվը ընդունված ու ժողովրդական էր ոչ միայն հունա-մակեդոնական միջավայրում, այլ նաև տեղաբնիկների շրջաններում»[3]: Արշակի երկքաղքուսների դարձերեսի պահունակի մեջ դրված աղեղի պատկերը Հերակլես/Ռուստամի հերոսական ինքնության խորհրդանիշը հա-

---

իշխանության իրական նախապայմանի մասին պատկերացումները արևելյան, մասնավորապես, իրանական միջավայրում շատ ավելի հին էին, քան հունական աշխարհում կենցաղավարած դրանց հնարավոր զուգահեռները:

[1] Forum Ancient Coins, GB82968, http://www.forumancientcoins.com/catalog/roman-and-greekcoins.asp?param=82968q00.jpg&vpar=552&zpg=49944&fld=http://www.forumancientcoins.com/Coins2//

[2] Classical Numismatic Group *(այսուհետ՝ CNG)* 58 (18 May, 2011), lot 379

[3] Olbryucht M.J., On Coin Portraits of Alexander the Great and his Iranian Regalia: Some Remarks Ocassioned by the Book by F. Smith: L 'immaginedi Alessandro il Grande sulle monete del regno (336-323), *Notae Numismaticae*, VI, Kraków, 2011, p. 25. Սովորաբար Իրանում Հերակլեսի պաշտամունքի տարածումը պայմանավորում են նրա և իրանական հերոս Ռուստամի մասին պատմող էպիկական զրույցներում առկա նմանություններով (Melikian-Chirvani A. S., “Rostam and Herakles,a Family Resemblance”, *Bulletin of the Asia Institute* 12, 1998, pp. 171–199):

մարելու դեպքում, բնականաբար, դրամների ամբողջ պատկերագրական կոմպոզիցիան էլ պետք է մեկնաբանենք իբրև Արշակի նկատմամբ Կայենիդների դարաշրջանի իրանական հերոսի հովանավորության նշան: Այսպիսի մեկնաբանությունը հավանական է թվում, երբ նկատի ենք առնում, որ ինչպես Արգեադյաններն ու Անտիգոնյաններն էին իրենց ծագումնաբանությունը բխեցնում Հերակլեսից, նույնպես և Արշակունիներն էին հավակնում Կայենիդների հետևորդները լինել[1]: Այդուհանդերձ, բազմաթիվ իրողություններ հարկադրում են մեզ քննադատորեն վերաբերվել վաղ պարթևական դարաշրջանում Հերակլես-Ռուստամ նույնացման հավանականությանը[2] և բացառել Արշակի երկքաղքուսների պատկերագրության վրա մակեդոնական նախատիպերի ազդեցության հնարավորությունը:

Նախ՝ հակառակ պատկերացրածին, կրոնական սինկրետիզացիայի երևույթը բնավ էլ դյուրին, արագընթաց և համատարած երևույթ չէր: Եվ եթե Ք.ա. IVդ. վերջերին Մարաստանում կամ Հիրկանիայում սրանց ուրբանիզացիայի բարձր աստիճանի շնորհիվ հելլենականացումը, մասնավորապես Հերակլեսի պաշտամունքն արդեն նկատելի տարածում ուներ, նույնը չի կարելի ասել մինչև Ք.ա. III դ. կեսերը անդրարալյան տափաստաններում վաչկատուն կյանքով ապրող դահերի արևելաիրանական հասարակության համար: Պարթևական արվեստում մահակավոր Հերակլեսի պատկերն առաջին անգամ ի հայտ է գալիս միայն Միհրդատ I-ի՝ Տիգրիսի վրայի Սելևկիայում Ք.ա. 141/140թ. հատած տետրադրահիմանների վրա[3]: Սակայն, անգամ այս դեպքում, ակնհայտ է, որ պարթևական դրամի վրա իրանական մշակույթին խորթ մերկ աստծո պատկերաձևի դրոշմելը, այնպես, ինչպես որ արքայի կողմից «φιλέλλην» տիտղոսի յուրացումը պայմանավորվել է ոչ թե պարթևական հասարակության հելլենականացման բարձր մակարդակով, այլ «Միջագետքի հունական համայնքների հետ բարեկամական երկխոսության գնալու համաձայնու-

[1] Olbrycht M.J., “Titulatura Pierwszych Arshakido’w i Jej Polityczno-Religijne Knotacje” in Gniezno European Studies Monograph Series, Vol. IV. The World of Antiquity, its Polish Researchers and the Cult of the Ruler, pod redakcją Leszka Mrozewicza i Katarzyny Balbuzy, Poznań 2011, p. 233.

[2] Պարթևների հոգևոր պատկերացումներում Հերակլես-Ռուստամ-Վերեթրահնա լիարժեք նույնացման մասին խոսել կարելի է միայն Միհրդատ II-ի ժամանակներից սկսած, քանի որ մահակն իբրև այդ երեքին խորհրդանշող զինատեսակ առաջին անգամ երևան է գալիս Արշակունի այս արքայի դրամների վրա (Sellwood D., An Introduction..., 27.12; 28.16; 28.18-20):

[3] Ibid., 13. 1-5

թյամբ»[1], իսկ ավելի ճիշտ՝ «Միջագետքի հույն և հելլենականացած բնակչության համակրանքը շահելու մտայնությամբ»[2]:

Հակառակ վերը նշվածին՝ Արշակ II-ի դրահիմաների վրա արծվի պատկերների առկայությունը[3] համոզիչ կերպով վկայում է, որ քննարկվող ժամանակաշրջանում դահերի շրջանում շարունակել է հարատևել զրադաշտական դավանանքը և Վերեթրահնան շարունակել է պատկերացվել ավանդական իրանական այլակերպությամբ (հունական պատկերագրության մեջ արծիվը Զևսի, այլ ոչ թե նրա որդի Հերակլեսի խորհրդանիշն էր):

Մեր ունեցած մատենագրական և դրամագիտական նյութերը բավարար հիմք են տալիս կարծելու, որ Արշակի երկքաղքուսների վրա «պահունակի մեջ դրված աղեղ»-ի խորհրդանիշի առկայությունը պայմանավորվել է դահերի արևելաիրանական ցեղային հանրության սպառազինության մեջ այս զինատեսակի կարևորագույն դերով:

Դեռևս Հերոդոտոսը նկատում էր իրանցիների դաստիարակության գործում ձիավարության և նետաձգության կարևոր նշանակությունը[4]: Ավելի ուշ՝ Հուստինոսը դա մասնավորեցնում է իբրև պարթևների ազգային նկարագրի բաղադրիչ[5]: Վաղ հելլենիստական դարաշրջանի մասին պատմող աղբյուրներում դահերը հիշատակվում են որպես բարձրորակ հեծյալ նետաձիգներ (hippotoxotai/equites sagittarii)[6]: Մասնավորապես

---

[1] Fowler R., "Most Fortunate Roots: Tradicion and Legitimacy in Parthian Royal Ideology", in *Imaginary Kings: Royal Images in the Ancient Near East, Greece and Rome*, ed. by Oliver Hakster and Richard Fowler, München, Printservice Decker & Bokor, 2005, p. 152; Porada E., The Art of Ancient Iran; Pre-Islamic Culture, London, 1965, p. 183).

[2] Gariboldi A., "Royal Ideological Patterns between Seleucid and Parthian Coins. The Case of Theopatoor" in Commerce and Monetary Systems in the Ancient World. Means of Transmission and Cultural Interaction. Proceedings of the Fifth Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project. Ed. by R. Rollinger and Ch. Ulf, Stuttgart, 2004, p. 376.

[3] Sellwood D., An Introduction..., 27.12; 28.16; 28.18-20., 6. 1-2.

[4] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1986, I, 136:

[5] Justin., XLI, 5. «Ստրուկների երեխաների մասին պարթևները հոգում են այնպես, ինչպես որ իրենց հարազատների նկատմամբ, և մեծ ջանադրությամբ սովորեցնում են նրանց ձիավարություն և նետաձգություն»:

[6] Դահերի միության մաս կազմող պարները երևում են Ռաֆիայի (Ք.ա. 217թ.) և Մագնեսիայի (Ք.ա. 190թ.) ճակատամարտերում: Հնարավոր է, որ նրանք մասնակցել են նաև Իպսոսի (Ք.ա. 301թ.) ճակատամարտին, քանի որ համաձայն Դիոդորո-

հանրահայտ է Գավգամելայի ճակատամարտում նրանց դերակատարումը, որի տպավորությամբ էլ դահերի հեծելազորը Ալեքսանդրի կողմից Ք.ա. 327-325թ.թ. մասնակից դարձվեց Հնդկական արշավանքին:

Ալեքսանդրի դիադոքների պայքարին (Ք.ա. 323-281 թ.թ.) դահերի ու նրանց հարակից արևելաիրանական ցեղերի մասնակցությունը լուսաբանված է Ապպիանոսի ու Դիոդորոսի կողմից[1]: Սակայն պարթևական նետաձիգների կործանիչ զորությունն ամենադրամատիկը ներկայացրել է Պլուտարքոսը: Հեղինակն առանձնահատուկ ցավով է խոսում այն մեծ անակնկալի մասին, որը Խառանի ճակատամարտում նրանք մատուցեցին Կրասոսի լեգիոններին. «...Թեթևազենները նահանջեցին ծանրազեն հետևակի շարքերը և անկարգության ու խառնաշփոթի սկիզբը դրեցին զորքում, որը տեսնում էր, թե ինչ արագությամբ և ուժով են թռչում պարթևական նետերը՝ ջարդելով զենքերն ու միօրինակ ձևով թափանցելով բոլոր պաշտպանական ծածկերը /զրահները/՝ և՛ ամուր և՛ փափուկ: Իսկ պարթևները խտանալով, սկսեցին հեռվից բոլոր կողմերից նետեր արձակել՝ համարյա նշան չբռնելով... ուժգնորեն ձգելով իրենց մեծ, ձիգ աղեղները և այդպիսով՝ նետին տալով հսկայական հարվածային ուժ»[2]:

Այն, որ «պահունակի մեջ դրված աղեղ»-ը հունահելլենիստական պատկերագրության մեջ դարձել է պարների (դահերի) ընդհանրական խորհրդանշանը, երևում է նաև դրամագիտական նյութերից: Այս նշանակությամբ այն առաջինը երևան է գալիս Սելևկոս I Նիկատորի բրոնզե դրամների վրա[3], որոնք, ամենայն հավանականությամբ, թողարկվել են Մարաստանի, Պարթուենեի ու հարակից արևելաիրանական տարածքների հպատակեցումից[4] հետո: Ուշագրավ է, որ սրանց վրայի աղեղը ձևական ոչ մի ընդհանրություն չունենալով սելևկյան դրամների վրա՝ Ապոլլո-

սի, Սելևկոս I-ի բանակում կային 12.000 հեծյալներ՝ «ներառյալ հեծյալ նետաձիգները», որոնք ամբողջությամբ Իրանից ու Թուրքեստանից էին (Diod., XX, 113. 4.):

[1] Аппиан, XI, 55; Diod., XVIII. 7. 1-9; XIX. 26. 1; XXXII. 3; XIX. 29. 2-3; XIX. 39. 6; XLIV. 3; XX. 113. 4;

[2] Плутарх, Избранные жизнеописания, т. II, М., 1990, Красс, XXIV. Կ. Ֆարոխի հաշվումների համաձայն, պարթևները Խառանի ճակատամարտի ժամանակ հռոմեացիների վրա արձակել են 1,6-2 մլն նետ (Фаррох К., Персы: армия великих царей, М., 2009, с. 143):

[3] The Early Seleucids, their Gods and their Coins, Vol. 2, Submitted by Kyle Glenn Erickson, to the University of Exeter as a thesis for the degree of Doctor of Philosophy in Classics and Ancient History, December 2009, p. 261, Figure 29.

[4] Diod., XIX. 92. 1-5; Аппиан, XI, 55.

նի ձեռքի մակեդոնական աղեղի հետ, բավականին նմանվում է աքեմենյան պատկերաքանդակների վրա ներկայացված աղեղի ձևին: Հենց այս իրողությունն էլ առիթ է տալիս կարծելու, որ Սելևկոս I-ի դրամի վրա այն պատկերված է որպես հպատակեցված իրանական հանրության խորհրդանշան: Համենայն դեպս, անվիճարկելի է, որ խնդրո առարկա սիմվոլը հենց այդ նշանակությամբ է դրոշմվել Սելևկոս II-ի (Ք.ա. 246-225 թ.թ.)՝ Արշակի դեմ տարած հաղթանակի առթիվ էքբատանում հատած բրոնզե դրամների վրա[1]: Ընդ որում, ուշագրավ է, որ դրանց դարձերեսին քննարկվող խորհրդանիշի հարաբերությունը դրամի առանցքի նկատմամբ 90° է, այն դեպքում, երբ դրամի երեսին Սելևկոսի պատկերը ներկայացված է կանոնավոր (ուղղաձիգ) դիրքով (*պատկ. 3*): Առաջին հայացքից, հիշյալ անկանոնությունը կարելի էր որակել իբրև դրամահատական թերություն, ինչը հաճախակի է հանդիպում անտիկ դրամների վրա: Սակայն Սելևկոս II-ի մեկ այլ բրոնզե դրամի պատկերագրությունը մեզ դրդում է այլ մեկնաբանության: Այս երկրորդ դրամի երեսին 3/4 դիրքով պատկերված է Սելևկյան արքան, իսկ դարձերեսին՝ նույն ինքն է՝ ծառս եղած ձիու վրա՝ նիզակով գետնաթավալ հակառակորդին հարվածելիս[2]: Սելևկյան դրամահատության համար խիստ անսովոր այս կոմպոզիցիայի տեսանկյունից ենթադրելի է, որ «պահունակի մեջ դրված աղեղ»-ով դրամի պատկերագրական կոմպոզիցիայի ստեղծման ժամանակ էլ պատվիրատուն տուրք է տվել հաղթողի և պարտվածի հարաբերության արտահայտման հին առաջավորասիական պատկերագրական սկզբունքին, այն տարբերությամբ, որ նախ՝ հաղթող և պարտված կողմերին տեղորոշել է դրամի երեսին ու դարձերեսին և ապա, պարտված կողմին ներկայացնող մարդկային պատկերը փոխարինել է առարկայական խորհրդանշանով:

«Պահունակի մեջ դրված աղեղ»-ը նույն նշանակությամբ և կոմպոզիցիոն համանման սխեմայով է գործված նաև կայսերական շրջանի հռոմեական դրամների վրա, որտեղ սակայն, պարտության իմաստային շեշտը, որպես կանոն, դրված է «անկյալ» պարթևի պատկերի (պատկերների) վրա, իսկ խորհրդանշանը «Parthia capta» կամ «Parthia victa» լեգենդնե-

[1] Newell E.T., Coinage of the Eastern Seleucid Mints from Seleucus I to Antiochus III, with a Summary of Recent Scolarship, Additions and Corrections by Otto Mørkholm, New York, 1978, p. 202; Erickson K.G., op. cit., p. 297, Figure 137.

[2] Ibid., p. 294, Figure 128.

րի հետ ընդամենը լուսաբանում է, թե ով է պարտվածը[1]: (*պատկ. 4*)

Ինքնին հասկանալի է, որ եթե արտաքին աշխարհը պարներին/դահերին ընկալում էր իբրև «նետողաց ազգ», իրենք՝ պարները/դահերը, պետք է որ ավելի հստակ գիտակցեին իրենց ցեղային հանրության համար նետ-աղեղի խորհրդանշող դերը: Հետևաբար, Արշակի անդրանիկ դրամների վրա այս սիմվոլի առկայությունը պետք է բացատրել սելևկյան դրամների վրա ունեցած նշանակությանը տրամագծորեն հակառակ իմաստով՝ իբրև մակեդոնական տիրապետության դեմ պարների տարած հաղթանակների խորհրդանիշ[2]: Այս տրամաբանությամբ էլ կարծելի է, որ Դ. Սելվուդի «Տիպահամար»-ի երրորդ և չորրորդ (S_3 և S_4) տիպերի մեջ ներկայացված երկքաղքուսները թողարկվել են Անդրագորասի դեմ հավանաբար Ք.ա. 247թ. Արշակի տարած հաղթանակի առթիվ, իսկ երկրորդ (S_2) տիպին վերագրվողները՝ նրա կողմից Սելևկոս II-ին Ք.ա. 238թ. վճռական հակահարված հասցնելուց հետո՝ նախքան պաշտոնական թագադրությունը:

Թվում է՝ այսքանն իսկ բավարար է Արշակի դրամների վրա «պահունակի մեջ դրված աղեղ»-ի խորհրդանշանի առկայությունը իրանական ցեղառաջնորդի քաղաքական բարձրացման առաջին՝ «հերոսական» փուլի պատկերագրական արտահայտությունը համարելու համար: Այդուհանդերձ, մենք հակված ենք կարծելու, որ խնդրո առարկա խորհրդանշանն ունեցել է նաև ավելի ընդհանրական իմաստ: *Դահերի ռազմարվեստի ամենագործածական զինատեսաի պատկերը դրոշմելով ներքին շրջանառության համար նախատեսված պղնձե դրամների վրա՝ Արշակը գիտակցորեն թե ակամա դրանց գործադրության շառավղով գծագրել է դահերի կողմից նվաճման իրավունքով ձեռք բերված նոր հայրենիքի վարչա-քաղաքական սահմանները՝ պատկերագրական նախադեպ տալով Մ. Խորենացուն ասելու, թե՝ «...Սահմանք քաջաց, զէնն իւրեանց,*

[1] Dr. Busso Peus Nachf. Auction (այսուհետ Peus) 378 (28 Apr 2003), Lot 565; CNG 61 (Sep 2002), lot 1824. Հատկանշական է, որ Անտոնիոսի ու Օգոստոսի հատած որոշ շքադրամների վրա սրանց կողմից Հայաստանի նվաճման փաստը ներկայացված են դարձերեսներին արտաշեսյան տիարայի և նետ-աղեղի, այլ դեպքում՝ տիարայի, պահունակի մեջ դրված աղեղի ու նետերով լի կապարճի սիմվոլների միջով (Triton XI (7 Jan. 2008), lot 717): Մուշեղյան Խ.Ա., Դրամական շրջանառությունը Հայաստանում (Մ.թ.ա. V դ.-մ.թ. XIV դ.), Երևան, 1983, էջ 75 և հաջ.:

[2] Assar G.F., Geneology and Coinage of the Early Parthian Rulers. I, p. 78, apend. 69.

որքան հատանէ՝ այնքան ունի»[1]: Անտիկ բանահյուսության մեջ պետությունների կամ քաղաքակրթությունների խորհրդանշական սահմանագծումների նման օրինակները բազմաթիվ են[2]:

Պարների/դահերի անկախության գաղափարը պատկերագրական անհամեմատ բարձր մակարդակով է արտահայտված Արշակ I-ի արծաթե դրահիմաների վրա: Սակայն դրանց վրա Արշակի և, ընդհանրապես Պարթևական պետության քաղաքական կայացման դինամիկան պարզելու համար նախևառաջ անհրաժեշտ է անդրադառնալ ժամանակի մեջ դրանց բաշխվածության հարցին:

Մինչև անցյալ դարի կեսերը Արշակունիների արծաթե թողարկումների մասին պատկերացումները բավական ապրիորի բնույթ էին կրում: Վաղ պարթևական դրամահատության արտադրանքը համարելով այսպես կոչված «անմորուս դիմապատկերով» դրամները՝ ուսումնասիրողները նրանցից Արշակ I-ին էին վերագրում այն նմուշները, որոնք հատկանշվում էին ΑΡΣΑΚΟΥ, ΒΑΣΙΛΕΩΣ ΑΡΣΑΚΟΥ, ΒΑΣΙΛΕΩΣ ΘΕΟΥ ΑΡΣΑΚΟΥ տիտղոսներով[3]:

Պարթևական դրամահատության սկզբնավորման, դրա պատկերագրական համակարգի և վերջինիս արտահայտած գաղափարախոսության մասին պատկերացումները կտրուկ փոխվեցին 1965թ. Իրանի հյուսիսարևելյան շրջանում, Ատրակ գետի հովտում (ժամանակակից Հյուսիսային Խորասան նահանգի կենտրոնից արևմուտք) եզակի բովանդակությամբ գանձի (պարթևական և ոչ պարթևական շուրջ 3000 դրամներ) հայտանաբերումից հետո:

1968թ. վերջերին այս գտածոյի մասին առաջին պաշտոնական հայտարարությունն արեց Դ. Սելվուդը[4], որն ավելի ուշ՝ 1971թ., Մ. Աբգարյանցի հետ հրատարակած հոդվածում ներկայացրեց հիշյալ գանձի 123

---

[1] Մ. Խորենացի, I, Ը:

[2] Բավական է հիշել, որ Հոմերոսը հունական քաղաքակրթության սահմանները ներկայացնում էր Ոդիսևսի թափառումների եզրագծով: Ագաթանգեղոսը հեթանոս աշխարհի մեջ քրիստոնյա Հայաստանի սահմանները ուրվածում է Գիրգորի քարոզչության հետագծով (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբ. թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 468, § 842):

[3] Bikerman E., Notes on Seleucid and Parthian Chronology, pp. 82-83; Кошеленко Г.А., Некоторые вопросы..., с. 67-68.

[4] Sellwood D., "A Currently Emerging Parthian Hoard", *Numismatic Circular (այսուհետ՝ NCi)*, 76:12, p. 371.

դրամների զննության արդյունքները[1]: Հետագա ջանադիր ուսումնասիրությունների միջոցով Բուջնուրդի գանձի պարթևական մասը դասակարգվել է վեց առանձին տիպերի (S_{1-6}) մեջ[2] և վերագրվել բացառապես Արշակ I-ին (Ք. ա. 247-211 թ.թ.) ու նրա որդուն ու հաջորդին՝ Արշակ II-ին (Ք. ա. 211-185 թ.թ.)[3]:

Բուջնուրդի գանձի ընձեռած նյութերի և դրանց հիման վրա Պարթևական պետության պատմության վաղ շրջանի ուսումնասիրության ուղղությանբ վերջին տասնամյակներին հսկայական առաջընթաց է կատարվել: Այնուամենայնիվ, դեռևս բանավիճային մակարդակում են գտնվում Արշակունիների դրամահատության հետ կապված մի շարք հիմնախնդիրներ, ինչպիսիք են վաղ պարթևական դրամահատական կենտրոնների, դրամական պատկերագրության ծագումնաբանության, դրա արտահայտած պաշտոնական գաղափարախոսության և այլ հարցեր:

Դեռևս 1971թ. սեպտեմբերին Ե. Ձեյմալն առաջադրել էր կարծիք, ըստ որի՝ «ΑΡΣΑΚΟΥ ΑΥΤΟΚΡΑΤΟΡΟΣ - Ինքնակալ Արշակի» լեգենդով դրամները հանդիսացել են պարթևական դրամահատության անդրանիկ թողարկումները: Բուջնուրդի գանձի ուսումնասիրության հիման վրա նույնպիսի կարծիքի են հանգել նաև Մ. Տ. Աբգարյանցն ու Դ. Սելվուդը, Մ. Ալրամը և այլք: Ըստ այդմ՝ նախապես առաջարկվել էր Արշակ I-ի դրահմաների թողարկման հետևյալ հաջորդականությունը.

1. (S1-2) ΑΡΣΑΚΟΥ ΑΥΤΟΚΡΑΤΟΡΟΣ ,
2. (S3) ΑΡΣΑΚΟΥ ,
3. (S4) ΑΡΣΑΚΟΥ :

---

[1] Abgaryanc M.T., Sellwood D., op. cit., pp. 104-107.

[2] Բուջնուրդի գանձի արտաքին զննությունը ցույց է տվել, որ առաջին չորս տիպերին պատկանող դրամները բավականին մաշված են, մինչդեռ հինգերորդ տիպինը (S_5) անհամեմատ լավ է պահպանված, իսկ վերջինը (S_6), ինչպես ենթադրում են, նույնիսկ շրջանառված չէ: Այդ հիման վրա էլ ուսումնասիրողները եզրակացնում են, որ Սելևկյան արքա Անտիոքոս III Մեծը (Ք.ա. 222-187 թ.թ.), Հիրկանիայում Արշակ II-ի դեմ տարած հաղթանակից հետո վերջինիս հարկադրելով դաշնակցային հարաբերությունների մեջ մտնել իր հետ, այնուամենայնիվ, նրան զրկել է իր անունով դրամ հատելու իրավունքից, իսկ արդեն շրջանառության մեջ եղած դրամները հավաքելով խոտանել և թաղել է (Assar G.F., Bagloo M.Gh., An Early Parthian "Victory" coin, *Parthica* 8, 2008, p. 25):

[3] Assar G.F., Genealogy and Coinage of the Early Parthian Rulers. II, p. 35-36.

Ավելի ուշ, Դ. Սելվուդը և Գ. Ասսարը, հաշվի առնելով S_3 և S_4 տիպերի հետ S_5-ի դրահիմաների ոճական ակնհայտ ընդհանրությունները, առաջարկել են ΑΡΣΑΚΟΥ պարզ լեգենդով հատկանշվող այդ դրամները ևս վերագրել Արշակ I-ին և համարել այն Արշակունիների հարստության հիմնադրի վերջին թողարկումը[1]:

Իհարկե, արկածախնդրություն, ինչ-որ առումով էլ ապերախտություն կարող է թվալ գիտական անանց վաստակի տեր վերոնշյալ հետազոտողների կարծիքին մեր կողմից հակադրվելը՝ առավել ևս, որ մեր ձեռքի տակ ունենք սոսկ Արշակի դրամներների՝ նրանց իսկ հրատարակած լուսանկարները: Այնուամենայնիվ, որոշ իրողություններ հիմք են տալիս մեզ քննադատաբար վերանայելու ընդունված տեսակետը:

ΑΡΣΑΚΟΥ լեգենդով դրահիմաների պատկանելության վերաբերյալ կարծիքի փոփոխությանը մենք համաձայն ենք անվերապահորեն: Սակայն առաջարկված ժամանակագրումը, որը, ըստ էության, պատճառաբանված է միայն դրամների արտասովոր լավ պահպանվածությամբ և S_3 և S_4 տիպերի հետ նրանց ոճական ընդհանրությամբ, հարուցում է լուրջ հարցադրումներ: Նախ և առաջ, հարց է ծագում, թե որքանո՞վ է հիմնավոր S_5 տիպի դրամների համեմատաբար անմաշ վիճակը շրջանառությունից նրանց շուտ հանվելով պայմանավորելը: Անտիկ մատենագիրները վկայում են, որ ինչպես արդի պետություններում, նույնպես և հնում, շրջանառության մեջ էր դրվում հատված դրամի մի մասը, իսկ մյուսը թողնվում էր պահուստային ֆոնդում[2]: Բնականոն հարց է առաջանում, թե արդյո՞ք խնդրո առարկա S_5 տիպի դրամների անմաշ վիճակն էլ գանձարանում մնալու հանգամանքով պայմանավորված չի եղել: Դա մեզ հավա-

---

[1] Assar G.F., Genealogy and Coinage of the Early Parthian Rulers. I, p. 78.

[2] Համաձայն Պլուտարքոսի (Պլուտարքոս, Երկեր, Երևան, 1987, Ալեքսանդր, XXXVI), միայն Շոշի գանձարանից Ալեքսանդրի ձեռքն է ընկել 40.000 տաղանդ հատած արծաթ: Արիանոսը (Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, 16. 7) այդ գումարը նվազեցնում է մինչև 50 տաղանդ: Թեև Հերոդոտոսը (V, 49) վստահեցնում է, որ Իրանի արքաների հարստությունները պահվել են միայն Շոշում, գլխավոր գանձարանը, այնուամենայնիվ, գտնվել է Պերսեպոլիսում, որտեղից, համաձայն Դիոդորոսի (XVII, 7) և Կ. Ռուֆուսի (II, 16, 9), մակեդոնացիները զավթել են 120.000 տաղանդ ազնիվ մետաղներ, որը կազմում էր պարսիկների դեմ պատերազմում նրանց ձեռք բերած դրամական ավարի գրեթե կեսը: Արտաշեսյան Մեծ Հայքի արքունական գանձատների մասին տե՛ս Պլուտարքոս, Պոմպեոս, XXXIII: Դիոն Կասսիոս, Հռոմեական պատմություն, XXXVI, 53. 2-4, տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9, թագմ. Ս.Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 141:

նական է թվում, երբ նկատի ենք առնում, որ այսպես կոչված Բուջնուրդի գանձը հայտնաբերվել է Արշակունիների ժամանակաշրջանի կարևոր գավառական կենտրոնի միջնաբերդում (ներկայիս Քալ-էի Փարազ բնակավայր), որը, շնորհիվ իր ապահով տեղադրության, կարող էր լինել վաղ Արշակունիների գանձատներից մեկը:

Համոզիչ չէ նաև S_5 տիպի դրամների ոճական և կոմպոզիցիոն իրողությունները S_3 և S_4 տիպերից բխեցնելը: Իհարկե, առկա են շատ ընդհանրություններ դրանց թե՛ երեսի, թե՛ դարձերեսի պատկերագրության մեջ: Բայց ակնհայտ են նաև տարբերությունները: Դ. Սելվուդը, S_3 և S_4 տիպերը ենթադրաբար վերագրելով Միհրդատակերտի դրամահատարանին, իսկ S_5 տիպի դրահմաները համարելով Հեկատումպոլիսի դրամահատարանի արտադրանքը, եզրակացնում է, որ առկա տարբերությունները պայմանավորված են հենց այդ իրողությամբ: Դա, իհարկե, ռացիոնալիստական լուծում է: Սակայն պետք է նկատի ունենալ, որ պաշտոնական պորտրետը ձևավորվում էր ոչ թե առանձին դրամահատարանների շրջանակներում այլ միասնաբար. մի դրամահատարանի թողարկումից մինչև մյուսի թողարկումը այն կարող էր վերընթաց ապրել, բայց հետընթաց (եթե դա հարուցված չէր քաղաքական իրողություններով) ունենալ չէր կարող: Այս տեսանկյունից ինքնին հասկանալի է, որ S_5 տիպի դրահմաները, որոնք ոճակակատարողական և պատկերագրական առումներով ավելի արխաիկ են, քան S_3 և S_4 տիպերինը, կարող էին հանդիսանալ վերջիններիս ոչ թե շարունակությունը, այլ նախատիպը:

Նույն հայեցակետից արված մեր մյուս առարկությունը բխում է S_5 տիպի դրամական լեգենդից: Հուստինոսը, ընդհանրացնելով Արշակի գահակալության արդյունքները, վկայում է. «Արշակը ոչ միայն հասավ արքայական իշխանության, այլև հաստատեց իր թագավորությունը, ինչի շնորհիվ պարթևների համար դարձավ ոչ պակաս հիշարժան, քան Կյուրոսը պարսիկների, Ալեքսանդրը՝ մակեդոնացիների, Հռոմուլոսը՝ հռոմեացիների համար»[1]: Ապա, եզրափակելով Արշակ I-ի մասին իր պատումը, նա վկայում է. «Արշակը մահացավ խորին ծերության մեջ: Պարթևները նրա հիշատակը հարգում են այնպես, որ մինչ այժմ բոլոր պարթևական արքաները կոչվում են Արշակ անունով»[2]: Սրան ներդաշնակում է Ամմիանոսի հաղորդումը. «Բազմաթիվ փառավոր և խիզախ գործերից հետո, և այն

[1] Justin, XLI, 5.
[2] Ibid., XLI, 6.

բանից հետո, երբ հաղթեց Ալեքսանդրի հետևորդ Սելևկոս Նիկատորին (իմա՝ Սելևկոս II-ին)... և վտարեց մակեդոնական կայազորերին, նա իր կյանքն անցկացրեց հանդարտության և խաղաղության մեջ և մեղմ կառավարիչ ու դատավոր էր իր հպատակների համար: Վերջապես, երբ բոլոր հարևան երկրամասերը առնված էին իր իշխանության տակ՝ ուժի, արդարադատության նկատմամբ հարգանքի կամ սարսափի միջոցով, և նա համալրեց Պարսկաստանը (իմա՝ Իրանը) քաղաքներով, ամրացված ճամբարներով ու ամրոցներով, և բոլոր հարևան ժողովուրդների համար, որոնցից ինքը նախկինում զգուշանում էր, այն դարձրեց սարսափի մշտական պատճառ. նա վախճանվեց հանգիստ մահով՝ միջին տարիքում»[1]:

Ինչպես տեսնում ենք, երկու հեղինակներն էլ խոսում են Արշակի փառավոր գահակալության և անխռով վախճանի մասին՝ առանց Արշակի իշխանության վերջնամասում նրա հեղինակությունը ստվերած ներքին կամ արտաքին որևէ գործոնի մասին չնչին ակնարկի: Ուստի ծագում է ևս մի հարց. ի՞նչու պետք է Արշակ I-ն իր փառքի ու հզորության գագաթնակետին պատկերվեր առանց սուվերեն արքայական իշխանության խորհրդանիշի՝ ժապավենավոր դիադեմայի[2], իսկ դրամների դարձերեսներին էլ վերադառնար իր նախնական՝ գրեթե ոչին չասող ΑΡΣΑΚΟΥ լեգենդին: Իհարկե, այս հարցադրումն անելով, չենք կարող չանդրադառնալ Մ. Օլբրեյքթի 2011թ. առաջադրած կարծիքին, ըստ որի՝ «Այն, որ Արշակ I-ը, ապա և Արշակ II-ն իրենց դրամների վրա հարկ են համարել դրոշմել միայն իրենց անունները, ոչ թե նրանց քաղաքական ծրագրերի նվազեցման արտահայտություն էր, այլ այն բանի, որ ինքն անձնանունը դարձել էր նրանց համար յուրօրինակ տիտղոս»[3]: Սակայն պետք է նկատել, որ վերոնշյալ մեկնաբանությունը ճիշտ և հիմնավոր կարող է լինել Արշակ I-ին հաջորդած պարթևական արքաների վերաբերյալ, սկսած թերևս Արշակ II-ից[4]: Բայց և խիստ անհավանական, եթե չասենք անհնարին է, որ Արշակ

---

[1] Аммиан Марцеллин, Римская история, перев. с лат. Ю.А. Кулаковского и А. И. Сонин, М., 2005, XXIII, 6. 3.

[2] Ե. Պեքը պատկերագրական այս տարրը համարում է սատրապների կամ հպատակ արքաների կրած դիադեմայից ինքնիշխան արքայական դիադեմայի հիմնական տարբերանշանը (Peck E.H., Crown II. From the Seleucids to the Islamic Conquest, p. 408.): Տարբերակման այս ձևը հետագայում յուրացվեց Սասանյանների կողմից:

[3] Olbrycht M.J., Titulatura Pierwszych Arshakido'w..., p. 233.

[4] Ibid., XLI, 5. 5-7. «Արշակը վախճանվեց խորին ծերության ժամանակ: Նրա հիշատակը պարթևները հարգում են այնպես, որ այն ժամանակից ի վեր բոլոր պարթևական արքաները կոչվում են Արշակ անունով: Արշակի որդին ու հաջորդը՝

անձնանունը, որքան էլ որ այն ստուգաբանորեն աղերսվի Ավեստայի Kavi/Kauui Aršan, Biiaršan, Siāuuaršan հասկացություններին, տիտղոսի կամ պատվանվան նշանակություն ստացած լիներ դեռևս Արշակի օրոք[1]:

Այսպիսով, չհամաձայնելով Արշակ Ի-ի դրամների Դ. Սելվուդի առաջարկած դասակարգման հետ, մենք առավել հիմնավոր ենք համարում ժամանակի մեջ դրանց բաշխումը կատարել ըստ դրամական լեգենդի ու պատկերագրության՝ աչքի առաջ ունենալով այն պարզ ու անժխտելի իրողությունը, որ թե՛ մեկի, և թե՛ մյուսի զարգացումը կատարվել է Պարթևական պետության զորեղացմանն ու Արշակունիների իշխանության ամրապնդմանը համընթաց: Այս տեսանկյունից ակնհայտ է, որ առանց դիադեմայի պատկերով և ΑΡΣΑΚΟΥ լեգենդով հատկանշվող պարթևական դրահիմաները կարող էին լինել Արշակ Ի-ի ոչ թե վերջին, այլ վաղ թողարկումները (*պատկ. 5*), որոնցից հետո միայն կարող էին հանդես գալ նախ սատրապական դիադեմայով պսակված Արշակի պատկերով և «Արշակի» լեգենդով[2] (*պատկ. 6*) սատրապական դիադեմայով և արամեա-հունատառ «Կարեն Արշակի» լեգենդով[3] (*պատկ. 7*), և վերջապես, արքայական դիադեմայով ու «Ինքնակալ Արշակի»[4] լեգենդներով (պատկ. 8) հատկանշվող դրամները:

Այժմ անցնենք Արշակի արծաթե դրահիմաների պատկերագրության քննությանը: Ինչպես արդեն նշել ենք, վաղ թողարկման դրահիմաների երեսին նույնպես ներկայացված է Արշակի ձախ դարձած անմորուս դիմապատկերը՝ գլխի նույն հարդարանքով, ինչ որ պղինձների վրա է, այստեղ էլ հստակ երևում է Արշակի ձախ ականջի օղը, որը հին արևելյան արքայական հարդարանքի կարևոր բաղադրիչն էր հանդիսանում: Այս

նույնպես Արշակ անվամբ, զարմանալի քաջությամբ մարտնչեց ընդդեմ Սելևկոսի որդի Անտիոքոսի»: Ibid., XLI, 5. 8. «Պարթևական երրորդ արքան Հրապատիոսն էր, սակայն նա ևս կոչվում էր Արշակ»:

[1] Հուստինոսը, նշում է, թե «Պարթևները իրենց բոլոր արքաներին կոչում էին այդ (Արշակ) անունով, ինչպես որ հռոմեացիներն են [իրենց կայսրերին] կոչում Կեսարներ և Օգոստոսներ» (Justin., XLI, 5. 8): Սակայն, հարկ է նկատել, որ նշած զուգահեռն այդքան էլ հաջող չէ, քանզի հանրահայտ իրողություն է, որ «Կեսար»-ը Գայոս Հուլիոսին տրված մականունն (agnomen) էր, որին տիտղոսի նշանակություն տվեց Գայոս Օկտավիանոսը, մինչդեռ, «Օգոստոսը» Գայոս Օկտավիոսին դեռևս կենդանության օրոք շնորհված պատվանուն-տիտղոս էր (titulus), որը յուրացրին նաև նրա հաջորդները:

[2] Sellwood D., An Introduction..., 5. 1.

[3] Ibid., 3. 1-2

[4] Ibid., 1. 1; 2. 1

խմբի դրահմաների երեսին կատարված թերևս միակ փոփոխությունն այն է, որ դրանց մեծամասնության վրա կուրբասին համադրված է ծոծրակին արված հանգույցով վերջացող դիադեմայով[1]: Մինչդեռ, ամբողջապես փոխված է դրամների դարձերեսի կոմպոզիցիան: Պահունակի մեջ դրված աղեղի խորհրդանիշի փոխարեն ներկայացված է տաբատով, թիկնոցով (քանդիում) և կուրբասիով հանդերձավորված մարդկային պատկեր՝ քառոտ գահավորակին (դիֆրոս) բազմած՝ ձախ ձեռքով լարված աղեղն առաջ մեկնած:

Ու՞մ է կերպավորում Արշակի դրահմաների դարձերեսի աղեղնավոր պատկերը, և ի՞նչ ընդհանրական գաղափար է այն արտահայտում, որ Արշակունիների դարամահատության ավելի քան չորս դարերի ընթացքում կոմպոզիցիոն առումով գրեթե անփոփոխ գործածվել է նրանց դրահմաների, մասնակի փոփոխություններով՝ նաև տետրադրահմաների վրա:

Դեռևս Ի.Ի. էքելը գտնում էր, որ «պարթևական աղեղնավոր»-ը կերպավորում է կառավարող այն արքային, որի անունից թողարկվել է դրամը[2]: Վ. Ռոթը «պարթևական աղեղնավորին» անվանում է «ռազմիկ», որը, նրա կարծիքով, խորհրդանշել է Պարթևական միապետության ռազմական բնույթը[3]: Դ.Ս. Ռաևսկին պարթևական աղեղնավորի պատկերը կապում է Հերակլես-Տարգիտայոսի ու նրա երեք որդիների մասին Հերոդոտոսի ավանդած սկյութական առասպելի հետ[4] և այն համարում է տորևտիկայի ասպարեզում հիշյալ ավանդազրույցի կերպավորումը[5]: Համաձայն տիրապետող կարծիքի՝ «պարթևական աղեղնավոր»-ը պատկերում է Արշակունիների հարստության հիմնադիր Արշակին[6]:

---

[1] Ibid, 3. 1; 3. 2; 4. 1.

[2] Eckhel J., Doctrina numorum veterum. Vindobonae, 1798, t. 3, p. 545.

[3] Wrot W., A Catalogue of the Greek Coins in the British Museum. Catalogue of the coins of Parthia. London, 1903, pl. III, 8-13; XXIV, 2, 3

[4] Հերոդոտոս, IV, 5-10:

[5] Раевский Д.С., “К вопросу об обосновании царской власти в Парфии (“Парфянский лучник: и его семантика)” см в Средняя Азия в древности и средневековье (история и культура). М., 1977, с. 81-86; Его же, Очерки идеологии скифо-сакских племён, М., 1977, с. 125-128.

[6] Gardner P., The Parthian Coinage, *International numismata Orientalia*, London, 1877, p. p. 18; Newell E.T., "The Parthian Coinage," *A Survey of Persian Art, London-New York*, 1938, vol. I, p. 476; Кошеленко Г.А., Некоторые вопросы..., с. 58 и сл.; Alram M., "Arsacid Coinage", *Enciclopaedia Iranica*, vol. 2, 1986, p. 539; Colledge M.A.R., "The Parthian Period", *Iconography of Religions*, XIV, 3, Leiden, 1986, p. 16; Āyatollhi H., The

Պակաս խնդրահարույց չէ նաև «պարթևական աղեղնավոր»-ի պատկերածևի ծագումնաբանության հարցը. արդյո՞ք այն ձևավորվող պարթևական պաշտոնական արվեստի անկախ ծնունդն է, թե՞ փոխառություն, որը հարմարեցվել է նորանկախ պարների գաղափարական պահանջներին:

Առաջինի հնարավորության մասին, կարծում ենք, չարժե նույնիսկ մտածել, քանզի հին արևելյան մշակույթում դժվար է գտնել մի որևէ մոտիվ կամ պատկերածև, որը կարելի լինի վերագրել բացառապես այս կամ այն ազգային մշակույթին: Դա մասնավորապես վերաբերում է քննարկվող պատկերածևին, որը ոճական առումով չափազանց բարդ և գաղափարական առումով էլ բավականին հագեցած է՝ քոչվորական կացութածևից նոր-նոր նստակեցության անցնող պարների մշակույթի հարազատ ծնունդը լինելու համար: Ուստի, մենք հակված ենք կարծելու, որ «պարթևական աղեղնավոր»-ի պատկերածևը եղել է Արշակունիների պաշտոնական մշակույթի առաջին փոխառություններից մեկը: Այլ հարց է, թե որտեղի՞ց և ի՞նչ ձևով է այն ներմուծվել պարթևական արվեստ:

Պ. Գարդնըրի, Ե. Նյուըլի, Է. Փորադայի և այլոց կարծիքով՝ Արշակ I-ի դրամների աղեղնավորի պատկերածևը պատճենված է Սելևկյան դրամների դարձերեսի՝ ձախ ձեռքով աղեղն առաջ մեկնած Ապոլլոնի պատկերից[1], որն առաջին անգամ հանդես է գալիս Անտիոքոս I-ի (Ք.ա. 281-261 թ.թ.) և Անտիոքոս II-ի (Ք.ա. 261-246 թ.թ.) տետրադրահիմների վրա[2] (*պատկ. 9, 10*): Ավել կամ պակաս չափով այս տեսակետը պաշտպանել են նաև Ժ. դե Մորգանն ու Վ. Ռոթը, որոնց համոզմամբ՝ պարթևական դրամահատության մեջ ցանկացած նոր երևույթ կարող էր հանդես գալ միայն այն բանից հետո, երբ այն նախապես կդրսևորվեր Սելևկյանների կամ հունա-բակտրիական դրամահատության մեջ: Սակայն որքանո՞վ է հիմնավոր անվանի իրանագետների այս հետևությունը:

Իհարկե, անհեթեթություն կլինի Արշակունիների դրամահատության

Book of Iran: The History of Iranian Art, ed. by Z. Haghshenās, Tehran, 2003, p. 104; Fowler R., op. cit., p. 148.

[1] Gardner P., A Catalogue of the Greek Coins in the British Museum. The Seleucid Kings of Syria. London, 1878, p. 14; Newell E. T., The Parthian Coinage, p. 476; Porada E., The Art of Ancient Iran; Pre-Islamic Culture, New York, 1965, p. 186.

[2] Erickson K.G., op. cit., p. 262, Figure 33, p. 271, Figure 59; Erickson K., Wright N.L., "The "Royal Archer" and Apollo in the East: Greco-Persian Iconography in the Seleucid Empire," in Proceedings of the XIVth International Nimismatic Congres, ed. by N. Holmes, Glasgow, 2011, p. 165.

վրա Սելևկյանների ազդեցության ժխտումը: Սակայն կարծում ենք, որ կախումը սելևկյան նախօրինակից ավելի բարդ է, քան սովորաբար պատկերացնում են, և իրականում կարելի է խոսել ոչ թե կույր պատճենման, այլ պատկերային նախատիպի ստեղծագործական յուրացման մասին: Դրա պարզ վկայություններն են այն հսկայական փոփոխությունները, որ կրել է այդ ենթադրվող նախատիպը պարթևական դրամահատության մեջ: Անտիոքոսի դրամների վրա Ապոլլոնը ձախ է դարձած, մինչդեռ Արշակի դիրքը դրամների երեսին ու դարձերեսին անկանոն է: Ապոլոնը մերկ է, իսկ Արշակը՝ հանդերձանքով: Ապոլլոնը նստած է օմփոլոսի վրա, մինչդեռ Արշակը բազմած է քառաոտ անթիկնակ գահավորակ-դիֆրոսին: Սակայն ամենակարևոր տարբերությունը երկու կերպարների էության մեջ է. Սելևկյան դրամների վրա ներկայացված է այդ հարստության հովանավոր աստվածությունը, իսկ պարթևական դրամների վրա՝ հարստության հերոս հիմնադիրը: Այստեղ է, որ կտրականապես մերժվում է պարթևական դրամական պատկերագրության վերաբերյալ Ժ. դե Մորգանի, Վ. Ռոթի և Է. Փորադայի առաջարկած մեկնաբանությունը, քանզի ոչ Սելևկյանների, ոչ էլ հունա-բակտրիական դրամահատության մեջ գահին բազմած արքայի պատկերաձևեր հայտնի չեն: Այս հանգամանքը առիթ է տալիս Արշակի դրամների «աղեղնավորի» կերպարի մեջ փնտրելու ոճական և գաղափարական այլ ազդեցություններ ևս:

Ե. Վ. Զեյմալը «պարթևական աղեղնավոր»-ի նախատիպ է համարում Կիլիկիայի Աքեմենյան սատրապ Դատամեսի՝ Ք.ա. 378-372 թ.թ. Տարսոնում հատած դրամների դարձերեսի կոմպոզիցիան[1] (*պատկ. 11*): Դրանց վրա ներկայացված է գահին նստած Դատամեսը (դրամի արամեերեն լեգենդը նրան կոչում է *Trkmw*-Tarkumuwa)՝ Աքեմենյան սատրապներին բնորոշ հանդերձանքով՝ կարճ կապայով և անակսիրիդայով, թիկնոց-քանդիումով և սաղավարտաձև կուրբասիով՝ երկու ձեռքով նետ բռնած[2]: Նրա

[1] Зеймаль Е.В., " Парфянский лучник и его происхождение, *СГЭ*, вып. XLVII, Л., 1982, с. 47. Հեղինակը «պարթևական աղեղնավոր»-ի վրա Դատամեսի դրամի պատկերագրական ազդեցությունը հնարավոր է համարում՝ փաստարկելով «Ամուդարիայի գանձ»- ի մեջ խնդրո առարկա դրամների առկայությունը:

[2] Հին արևելյան պատկերագրության մեջ նետի պատկերը արքայական կամ աստվածային իշխանության խորհրդանիշ էր: Նորասորեստանյան արքաները հաղթահանդեսների և հարկահավաքության ժամանակ նետեր էին բռնում. աջ ձեռքում սլաքները դեպի վեր երկու նետ բռնելը խորհրդանշում էր խաղաղությունը, իսկ դեպի վար պահած նետերը՝ պատերազմի ու թշնամանքի

ոտքերի մոտ ուղղահայաց դիրքով պատկերված է լարված աղեղ, իսկ գահակալի պատկերից ձախ՝ Ահուրամազդայի թևազարդ խորհրդանիշը:

Անշուշտ, Դատամեսի պատկերի և «պարթևական աղեղնավոր»-ի կոմպոզիցիաների միջև առկա են նշանակալից տարբերություններ, որոնք լուրջ հարցականի տակ են դնում վերն առաջարկված կարծիքը: Այսպես, դրամների զգալի մասի վրա Դատամեսի պատկերը երեք քառորդ դիրքով է, մինչդեռ Արշակը բոլոր դրամների վրա ներկայացված է աջ կամ ձախ դարձած: Դատամեսի ոտքերը սեղմված, ասես գամված են իրար, մինչդեռ Արշակի ոտքերը ազատ դիրքով են՝ ավելի նման Սելևկյան դրամների Ապոլլոնի ոտքերի դիրքին: Դատամեսը պատկերված է մինչև ծնկները հասնող կապայով, իսկ Արշակը՝ տաբատով և թիկնոցով: Դատամեսը մորուքով է, իսկ Արշակը՝ վաղ հելլենիստական միապետների օրինակով՝ սափրված: Կիլիկիայի ինքնակոչ արքան երկու ձեռքով նետ է բռնած, իսկ աղեղը դրված է նրա ոտքերի մոտ, մինչդեռ Արշակը ձախ ձեռքով աղեղն է առաջ մեկնել, իսկ աջը մշտապես կախված է:

Ինչպես տեսնում ենք, տարբերությունները չափազանց շատ են, որպեսզի, համաձայնելով Ե. Զեյմալի հետ, համարենք, որ Դատամեսի դրամների կոմպոզիցիայի դետալները «պարթևական աղեղնավոր»-ի պատկերաձևում «վերարտադրված են չնչին շեղումներով»[1]:

Վերը նշված տարբերությունների հետ մեկտեղ, Արշակի դրամների ու նրա ենթադրվող նախատիպի պատկերագրական տարրերի բնագավառում առկա են նաև նկատելի ընդհանրություններ, ինչպիսիք են՝ պատկերների նստած դիրքը, նրանց գլխի հարդարանքը, աղեղների ձևը, դրամական լեգենդի տեղադրությունը: Սրանցից զատ՝ առկա են նաև խորքային (գաղափարական-քարոզչական) ընդհանրություններ:

Ուսումնասիրողներն առաջին կոմպոզիցիան զրադաշտական աստվածության հետ Կիլիկիայի ապստամբ սատրապի անմիջական հաղորդակցության պատճառով որակում են որպես «իրանական պատկերագրության տարրերի (աստվածային ինվեստիտուրա) միջոցով Աքեմենյան արքայից իր անկախությունը հրապարակելու և օրինականացնելու անթաքույց փորձ»[2]: Նմանապես Անտիոքոս I-ի դրամների վրա երեսին՝ արքա-

---

իրավիճակը (Hall J., Illustrated Dictionary of Symbols in Eastern and Western Art, Colorado, 1996, p. 55):

[1] Займаль Е.В., ук. соч., с. 47.

[2] Erickson K., Wright N.L., op. cit., p. 164.

յի, իսկ դարձերեսին՝ արքայատան հովանավոր աստվածության պատկերների համադրությունը դիտողին հասկանալի է դարձնում արքայի նկատմամբ աստծո հովանավորության գաղափարը: Իսկ եթե Ապոլլոնի առաջ մեկնած աղեղին խորհրդանշական իմաստ տանք և նրա հասցեատեր համարենք արքային, ապա այդ դեպքում դրամի պատկերագրական ողջ համակարգը հնարավոր է մեկնաբանել իբրև ուղղակի ինվեստիտուրա:

Առաջին հայացքից, ենթադրվող նախատիպերի համեմատ Արշակի պատկերաձևի արտահայտած գաղափարական-քաղաքական հայտարարություններն այդքան էլ միանշանակ չեն, քանի որ պարթևական դրամների վրա աստվածության անմիջական ներկայությունը փոխարինված է նրա հովանավորությունը հավաստող խորհրդանշաններով, որոնցից ուղղակի ինվեստիտուրայի պատկերացում կազմել հնարավոր չէ[1]: Սակայն պետք է նկատի ունենալ, որ տարբերությունն այստեղ միայն կոմպոզիցիոն է, այլ ոչ թե իմաստային. ինվեստիտուրան ներկայացնում էր աստվածության կողմից արքային իշխանությամբ և հովանավորությամբ օժտելը, իսկ պարթևական դրահմաների վրա Արշակը պատկերված է աստվածատուր արժանավորությամբ արդեն օժտված[2]:

Վերջապես՝ Դատամեսի ու Անտիոքոսի դրամների հետ Արշակի դրահմաների պատկերագրությունն ունի ևս մի կարևոր աղերս. դրանց վրա նույնպես հստակորեն արտահայտված է պարների տիրակալի իշխանության քաղաքական ու քաղաքակրթական ուղղվածությունը. ***Արշակի պատկերվելն Ալեքսանդրի և նրան հաջորդած հունա-հելլենիստական միապետների կողմից մերժված[3] իրանական տաբատով և քանդիումով Սելևկյաններին ու նրանց մարմնավորած հունականությանն ուղղված անթաքույց մարտահրավեր էր և, միաժամանակ, իրանական օրենքին ու մշակույթին վերադառնալու վճռականության արտահայտություն:***

Այսպիսով՝ «պարթևական աղեղնավոր»-ի պատկերաձևի համեմատությունը նրա ենթադրվող երկու՝ կիլիկյան և սելևկյան նախատիպերի

---

[1] Պարթևական դրամական պատկերագրության մեջ այսպիսի կոմպոզիցիաներ ի հայտ են գալիս միայն Արշակ II-ի օրոք (Assar G.F., Bagloo M.Gh., An Early Parthian "Victory" coin, p. 26), բայց առավել հաճախակի՝ Ք.ա. II դ. :

[2] Արքայի օրինականության և աստվածահաճոյության արտահայտման պատկերագրական այս ձևն ավելի ուշ տեսնում ենք հնդ-սկյութական դրամների, Հաթրայի արքաների սալաքանդակների, ինչպես նաև Տանգ-ի Սեվակի ու Կուի–ի Թինայի էլյումայիսյան բարձրաքանդակների վրա:

[3] Պլուտարքոս, Ալեքսանդր, XLV:

հետ ցույց է տալիս, որ սեփական պատկերաձևի ստեղծման գործում պարթևները ազդվել են թե՛ մեկից, թե՛ մյուսից: Սակայն, մյուս կողմից, դիտարկված տարբերություններն ակնհայտ են դարձնում, որ պարթևական պատկերաձևի ստեղծումը կատարվել է ոչ թե նշված նախատիպերի պարզ պատճենման միջոցով, այլ դրանց կոմպոզիցիաներն ու նրանց առանձին դետալները ստեղծագործաբար յուրացնելու և դրանք սեփական քաղաքական-քարոզչական նպատակներին հարմարեցնելու ճանապարհով:

Բացի վերը նշվածներից՝ «պարթևական աղեղնավոր»-ի ընդհանուր իրանական գունավորումը հնարավորություն է տալիս նրա ստեղծման գործում տեսնելու նաև Ք.ա. III դ. արևելաիրանական միջավայրում կենսունակ Աքեմենյան պատկերագրության և գաղափարախոսության ուղղակի ազդեցությունները: Մեր խորին համոզմամբ՝ հենց վերջիններիս մասին ունեցած պատկերացումների լույսի ներքո է, որ հնարավոր է վերծանել այս պատկերաձևի պարունակած քաղաքական-գաղափարական խորհուրդը:

Աքեմենյան պաշտոնական արվեստից (ուղղակիորեն կամ Դատամեսի դրամների պատկերագրության միջնորդությամբ) յուրացված ամենակենտրոնական տարրը դա գահին բազմած տիրակալի պատկերաձևն է:

Հնագույն առաջավորասիական արվեստի ստեղծագործություններում գահերը ներկայացված են իբրև բացառապես աստվածային իշխանության ատրիբուտներ[1]: Հին արևելյան արքաների առաջին աստվածարկումների հետ դրանք դարձան նաև արքայական իշխանության խորհրդանիշ[2] և այդպիսին մնացին նաև հետագայում, երբ աստված-արքայի ստերեոտիպից վերադարձ կատարվեց աստվածընտրյալ արքայի ստերեոտիպին:

Գահին բազմած արքայի պատկերագրական մոտիվը արտահայտչականության առանձնահատուկ բարձր մակարդակի հասավ Ք.ա. V-IV դ.դ. աքեմենյան պալատական արվեստում: Այն կոչված էր դիտորդին օրինականության, հաստատունության, ներքին ու արտաքին հավասարակշռու-

[1] Բնութագրական է, որ հին բաբելոնական արարչագործական «Երբ վերևում» էպոսում աստվածները Մարդուկին արքա ընտրելուց հետո նրան գավազանի հետ նաև գահ են հանձնում (Немировский Л.С., Ильинская Л.С., Мифы и легенды народов мира, т. 3, М., 2004, Месопотамиа, с. 240):

[2] Selz G.J., "The Divine Prototypes", see Religion and Power: Divine Kingship in the Ancient World and Beyond, ed. by N. Brisch, Oriental Institute Seminars N 4, Chicago-Illinois, 2008, p. 26, Figure 2.1.

թյան գաղափարներ ներշնչելուն:

Իհարկե, աքեմենյան նախատիպի համեմատ պարթևական պատկերածնը որոշակի ձևափոխություն է կրել. Արշակը բազմած է ոչ թե թիկնակավոր գահին, այլ գահավորակ-դիֆրոսին: Սակայն, կարծում ենք, որ դրանից գահի խորհրդանշական իմաստը ոչնչով չի նսեմացված և թիկնակավոր գահերի պես Արշակի գահավորակն էլ արտահայտում է իր կրողի հեղինակությունը, արդեն կայացած և ճանաչում ստացած իշխանությունը[1]: Այս առումով Դատամեսի ու Արշակի պատկերաձևերի քաղաքական գաղափարաբանությունը նույնն էր՝ պայմանավորված այն հանգամանքով, որ «Թե՛ Կիլիկիան, թե՛ Պարթևստանը եղել էին Աքեմենյան տերության մարզեր և ունեին արքայական իշխանության մասին համանման պատկերացումներ ու պատկերագրության միևնույն «կայսերական» լեզուն»[2]:

Պարթևական դրամական պատկերագրության մեջ գահերի խորհրդանշական իմաստի հարցում հակառակ կարծիքի են Կ. Էրիկսոնն ու Ն. Ռայթը, ովքեր, նկատի ունենալով Ք.ա. II դ. սկզբներին «պարթևական աղեղնավոր»-ի գահավորակ-դիֆրոսը օմփոլոսով, իսկ ավելի ուշ՝ Միհրդատ II-ի օրոք, օմփոլոսը թիկնակավոր գահով փոխարինելու փաստերը, գտնում են, թե «Պարթևական ժամանակաշրջանում կերպարի նստատեղը աննշան գործոն էր համարվում պատկերագրության մեջ և կարող էր փոխարինվել՝ առանց փոփոխելու կենտրոնական կերպարի նշանակությունը»[3]:

---

[1] Հայտնի է, որ Մ. Տրայանոսը Քթեսիփոնից զավթած այլևայլ ավարի հետ Հռոմ էր տարել նաև Արշակունիների գահը: Առաջին անգամ Խոսրով I-ը Հադրիանոսից (Scriptores Historiae Augustae, Hadr., 13, 8 http://www.thelatinlibrary.com/sha.html), իսկ ավելի ուշ՝ Վաղարշ II-ը Անտոնինոս Պիոսից (Ibid., Ant. Pios, 9, 7) խնդրեցին վերադարձնել գահը: Սակայն երկուսն էլ մերժվեցին: Կայսերաց կողմից այսպիսի վերաբերմունքը ցույց է տալիս, որ նրանք քաջ գիտակցել են, թե ինչ կարևորություն ունի գահի «ազատագրումը» Արշակունիների համար: Վերջիններիս տեսանկյունից դա ոչ թե սոսկ մի իր էր, այլ աստվածների կողմից Արշակունիներին շնորհված արքայական ֆառնի խորհրդանիշը, որի «գերությունը» գաղափարական պլանում փառազրկում էր նրանց իշխանությունը հպատակների ու հարևանների աչքում (Dąbrowa E., "The Parthian Kingship", in Concepts of Kingship in Antiquity. Proceedings of the European Science Foundation Exploratory Workshop (held in Padova, November 28th –December 1st, 2007), ed. by Giovanni B. Lanfranchi & Robert Rollinger, Padova, 2010, p. 128, app. 36):

[2] Зеймаль Е.В., ук. соч., с. 47.

[3] Erickson K., Wright N.L., op. cit., p. 165.

Վերոնշյալ մեկնաբանությունը հազիվ թե հնարավոր է հիմնավոր համարել: Իբրև առարկություն՝ նշենք միայն, որ առաջին անգամ Միհրդատ I-ի դրամի վրա դիֆրոսի փոխարեն օմփոլոսի ի հայտ գալը[1] բնավ էլ Արշակունիների էսթետիկական քմահաճույքի արտահայտություն չէր, այլ պայմանավորված էր մի կողմից՝ պարթևական հասարակության հելլենականացման, մյուս կողմից՝ պարթևական մեծապետականության ուղղությամբ կատարված վիթխարի առաջընթացով: Գ. Ասսարի դիպուկ գնահատմամբ՝ Արշակունիները ***«Իրենց արքայատան էպոնիմացված հիմնադրին հաղորդակցելով Դելփյան քարին՝ ցանկացել են ցույց տալ, որ երկրի կենտրոնը, որը հույները վերապահում էին Ապոլլոն աստծուն, այժմ զբաղեցված է նոր իշխանության կողմից»***[2]: Իսկ Միհրդատ II-ի օրոք օմփոլոսի փոխարինումը թիկնակավոր գահով պարզորոշ արտահայտում էր Արշակունիների գաղափարախոսության մեջ կատարված վճռական առաջընթացը՝ անթաքույց հավակնությունը Աքեմենյան ժառանգության նկատմամբ:

Դրամական պատկերագրության միջոցով Արշակի հրապարակած քաղաքական հռչակագրի իմաստը բացահայտելու առումով հավասարապես կարևոր է «պարթևական աղեղնավոր»-ի կոմպոզիցիոն մյուս տարրի՝ Արշակի առաջ մեկնած աղեղի խորհրդանշական իմաստի բացահայտումը: Առաջին հայացքից՝ բավական մեծ է գայթակղությունը պարթևական դրամի վրա աղեղի առկայությունը երկքաղքուսների օրինակով պարն ցեղի սպառազինության մեջ այս զինատեսակի կարևոր դերով բացատրելու համար, ինչպես որ անում են Ս. Վինկելմանն ու Է. Դաբրովան[3]: Սակայն, գահավորակին բազմած Արշակի ձեռքին այս սիմվոլի առկայությունը մենք, դարձյալ, հակված ենք մեկնաբանելու հին արևելյան արվեստում նրա ունեցած խորհրդանշական լայն գործածության համապատկերում:

Ք.ա. III-I հազարամյակների առաջավորասիական պատկերագրության մեջ աղեղը /նետ ու աղեղը/ կիրառվում էր որպես Ասորեստանի հովանավոր աստված Աշշուրի, պատերազմի աստված Նինուրտայի, սիրո և պատերազմի աստվածուհի Իշտարի ու նրա ասորափյունիկյան կրկնորդ Աշտարտեի պատկերների բնորոշիչ ատրիբուտ և նրանց «անհաղթ քա-

[1] Sellwood D., An Introduction..., 7. 1.
[2] Assar G.F., Bagloo M.Gh., An Early Parthian "Victory Coin", p. 26.
[3] Winkelmann S., "Waffen und Waffenträger auf parthischen Münzen", *Parthica* 8 (2006), pp. 131-152; Dąbrowa E., The Parthian Kingship, p. 128.

ջության խորհրդանիշ»[1]: Մ. Քոլլիջի համոզմամբ՝ վերոնշյալ «աստվածությունները սպառազեն են, ցույց տալու համար արքաների և մարդկության նկատմամբ իրենց պաշտպանական, հովանավորչական ընդունակությունները»[2]: Առաջինը Նարամսինն էր, որ իր նշանավոր հաղթական քարակոթողի վրա պատկերվել է աղեղով, ինչը պետք է պայմանավորել հպատակների աչքին իբրև աստված ներկայանալու նրա ձգտումով: Նրա օրինակը հետագայում յուրացվեց լուլուբյան և ասորեստանյան արքաների կողմից: Թեև վերջիններիս իշխանությունը աշխարհիկ բնույթ ուներ, բայց, պաշտոնական գաղափարախոսության համաձայն, այն ուներ աստվածներից ստացած հստակ սոցիալական գործառույթներ՝ իրենց հանրությունների պաշտպանությունն ու հովանավորությունը: Դրանով պայմանավորված՝ նախկին աստվածային սիմվոլները սահուն ձևով թափանցեցին պաշտոնական պատկերաքանդակի մեջ՝ դառնալով արքայի աստվածաշնորհ զորության և աստծո հովանավորությամբ տարած հաղթանակի խորհրդանիշեր: Պատահական չէ, որ նոր ասորեստանյան արքայական արձանագրություններում «աղեղ վերցնել» արտահայտությունը հաճախ գործածվում է «հաղթել» իմաստով[3]:

Մշակութային ժառանգորդության ճանապարհով աղեղի ծիսական և խորհրդանշական իմաստները յուրացվեց նաև իրանական ժողովուրդների, այդ թվում և հյուսիսային մերձսևծովյան տափաստանների սկյութների ու Արևելյան Իրանում ու Միջին Ասիայում բնակվող իրանալեզու քոչվորների կողմից: Պատահական չէ, որ Նախշ-ի Ռուստամի հին պարսկերեն արձանագրության մեջ Դարեհը հարկ է համարել ընդգծել. «...Որպես աղեղնավոր, ես լավ աղեղնավոր եմ՝ լինեմ հետիոտն թե հեծյալ...»[4]: Գաղափարախոսական այս դրույթը դրսևորվել է նաև ժայռաքանդակի ու դրամահատության ասպարեզներում: Ջ. Ուեստենհոլզի դիտարկմամբ՝ սրանց վրա «Դարեհը պատկերվել է որպես արքետիպալ նետաձիգ, որովհետև դա (աղեղը-Ա.Մ.) արքայական իշխանության և քաջության վերացական սիմվոլն էր»[5]: Այս տեսանկյունից էսքիլոսի կողմից Դարեհին

[1] Hall J., op. cit., p. 58.
[2] Colledge M.A.R., op. cit., p. 17.
[3] Westenholz J., op. cit., p. 117.
[4] Fowler R. , op. cit., p. 148.
[5] Westenholz J., op. cit., p. 123.

տված բնութագրումը, թե «Նա առաջին նետածիգն էր իր ժողովրդի մեջ»[1], հարկ է հասկանալ այլաբանորեն՝ «Պարսից մեջ Դարեհը արքայականության առաջին կրողն էր»: Այս տեսանկյունից միանգամայն հասկանալի է, որ աքեմենյան պատկերագրության մեջ արքայի նկատմամբ աստվածների հովանավորությունը ցույց տալու համար աղեղին վերապահվել է նույն խորհրդանշական դերը, ինչ որ գավազանին և ջրաշուշանի ծաղկին (Անահիդի հովանավորության նշանը), որոնք արքաները պահում են իրենց աջ և ձախ ձեռքերում[2]:

Առաջավորասիական պատկերագրության մեջ աղեղի՝ իբրև աստվածատուր իշխանության խորհրդանիշի կանոնական նշանակության ընդունումը թույլ է տալիս հավասարության նշան դնելու Աքեմենյան արվեստի «աղեղնավոր արքայի» և «պարթևական աղեղնավորի» պատկերաձևերի պարունակած գաղափարաբանության միջև: Իհարկե, անհնարին է չնկատել երկու պատկերաձևերի միջև առկա տարբերությունը. Աքեմենյան արքաները ներկայացված են կամ աղեղը գետնին հենած (Բեհիսթունի և Նախշ-ի Ռուստամի բարձրաքանդակներ), կամ էլ ձգած (դարիկների վրա): Մինչդեռ, Արշակը ներկայացված է աստվածատուր իշխանության խորհրդանիշն առաջ մեկնած: Սակայն պետք է հաշվի առնել, որ տարբերությունը վերաբերում է միայն դետալներին (պատկերների դիրք, աստվածային հովանավորության խորդանիշեր՝ աղեղ, ջրաշուշանի ծաղիկ, պսակ, օղակ), այլ ոչ թե կոմպոզիցիաների խորհրդանշական իմաստին, որը երկու դեպքում էլ նույնն է:

Այսպիսով՝ դեռևս պաշտոնապես չթագադրված ***Արշակի դրամների վրա արքայականության զույգ խորհրդանիշերի՝ գահի և աղեղի համադրությունը ունեցել է բացահայտ քարոզչական նշանակություն: Իբրև դետերմինատիվ (ցուցիչ) հավելվելով դրամների դարձերեսի հունարեն ΑΡΣΑΚΟΥ լեգենդին՝ դրանք դիտողին պարզորոշ էին դարձնում, որ խոսքը ոչ թե մակեդոնահպատակ, այլ աստվածների բարեհաճությունը վայելող և նրանց հովանավորությամբ ձեռք բերած հաղթանակի շնորհիվ կառավարող ինքնիշխան Արշակի մասին է:***

---

[1] Էսքիլոս, Ողբերգություններ, թարգմ., Ա. Թոփչյանի, Երևան, 1991, «Պարսիկներ», 1. 136:

[2] Abdi K., "The Passing of the Throne from Xerxes to Artaxerxes I, or How an Archaeological Observation Can Be a Potential Contribution to Achaemenid Historiography", see in " The World of Achaemenid Persia", ed. by J. Curtis and St J. Simpson, London-New York, 2005, p. 277.

Արշակի հետագա թողարկումների արծաթե դրահիմաների վրա պատկերագրական համակարգը հիմնականում մնում է անփոփոխ: Փոփոխություններ են նկատվում դրամների երեսին պատկերների դիրքի, իսկ դարձերեսին՝ գահավորակ-դիֆրոսի վրա նրանց նստելաձևի և, որ ամենից կարևորն է, Արշակի պատվանշանների ու դրամական լեգենդի ասպարեզում:

Դ. Սելվուդի «Տիպահամար»-ի երրորդ և չորրորդ տիպերում ներառված դրամների մի մասի երեսին Արշակը նախկինի պես ներկայացված է ձախ դարձած՝ առանց դիադեմայի կուբասիով[1]: Սակայն դրամների մյուս մասի վրա արքայի ծոծրակամասում արդեն հստակ զանազանվում է «սատրապական» դիադեմայի հանգույցը[2]:

Դարձերեսին գահավորակ-դիֆրոսին նստած Արշակի թիկունքում սովորական դարձած ΑΡΣΑΚΟΥ հունարեն բառն է, որն այժմ լրացված է Արշակի առաջ մեկնած աղեղից ներքև կորությամբ գրված « -*Krny*» (S $_3$) և « » (S $_4$) արամեերեն բառերով:

Դրամական նոր թողարկումների վրա արամեատառ տիտղոսների երևան գալը, ինչպես նաև նախկին անպաճույճ կուբասիի հետ «սատրապական դիադեմայի» համակցումը հերթական անգամ հավաստում են իրանական ավանդներին Արշակի հավատարմությունը: Սակայն այլ հարց է, թե Արշակի քաղաքական վերընթացի ի՞նչ իրողություններ են արտացոլում դրանք:

Վերոնշյալ տիտղոսներից վերջինը, ցավոք, տակավին մնում է չվերծանված: Ինչ վերաբերում է «*Krny*»-ին, ապա նրա հիմքում ընկած *Kāra*-ն նոր ասորեստանյան տեքստերում հաճախակի օգտագործված բառերից է, և նշանակում է ժողովուրդ (*aθuria kāra*-ասորեստանյան ժողովուրդ) իմաստով[3]: Ինչպես երևում է, փոխառվելով՝ հին պարսկերենի մեջ այն որոշ իմաստային փոփոխություն է կրել: Մինչև Կյուրոս Մեծի կողմից մշտական արհեստավարժ բանակի (հին պարսկ. spāda) ստեղծումը պարսկական զորքը, ըստ էության, աշխարհազորային բնույթ ուներ: Հա-

[1] Sellwood D., An Introduction..., 3.1; 4.1; Triton VII (12 Jan. 2004), lot 389.

[2] Sellwood D., An Introduction..., 3.2; Gorny and Mosch Auction 130, lot. 1342.

[3] Piras A., "Preliminary Remarks on Melammu Database. The Continuity of Mesopotamian Culture Showed by Iranological Evidences" in Ideologies as Intercultural Phenomena. Proceedings of the Third Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project. ed. by A. Panaino and G. Pettinato, Milan, 2002, p. 205.

վանաբար հենց այդ հանգամանքով պայմանավորված՝ *kāra* փոխառությունը «ժողովուրդ» իմաստի կողքին ստացել է նաև «ժողովրդական զորք», «աշխարհազոր» կամ «պատերազմ» իմաստները[1]:

Արշակի դրամների վրայի *krny* տիտղոսի ստուգաբանության գործում սովորաբար շեշտը դրվում է Աքեմենյան տերության խոշոր ռազմական միավորների կառավարիչների *kāranā* տիտղոսի հետ նրա հիմքային (*kāra* -զորք) ընդհանրության վրա[2]: Մ. Դյակոնովի, Դ. Սելվուդի և այլոց կարծիքով դեռևս Աքեմենյանների օրոք *Krny*-ն արդեն համարժեք էր դարձել հունական *στρατηός-զորավար, կառավարիչ* հասկացությանը[3]: Իսկ Մ. Օլբրեյքը, փաստարկելով Պարսքում Ք.ա. III դ. կեսերին կառավարած Վահբարզի նորահայտ (2008թ.) դրամների վրա այս տիտղոսի առկայությունը (*whwbrz krny*), նույնիսկ ենթադրում է, որ *kāranā -krny* տիտղոսը կիրառվել է ոչ միայն Արշակի, այլև հետաքեմենյան դարաշրջանի Իրանի տարածքում առաջացած այլ երկրամասերի տեղական կառավարիչների կողմից[4]:

Ցավոք, վաղ պարթևական հասարակության և նրա ռազմական կազմակերպության մասին մեր ունեցած տվյալները ոչ միայն սակավաթիվ են, այլև, մեծամասամբ, արտացոլում են համեմատաբար ուշ շրջանի իրողությունները: Ստրաբոնը, վկայելով, որ դահերի ցեղային միության մեջ մտել են երեք ցեղեր՝ պարները/ապարները, քսանթիները (խանդերը), պիզուրները[5], և սրանցից մակեդոնական տիրապետության դեմ ապստամբական շարժումը նախաձեռնել է Արշակի առաջնորդած պարների ցեղը, չի մանրամասնում, թե ինչ հարաբերություններ է ունեցել այն դահերի մյուս եղբայրական ցեղերի հետ: Իսկ պարների ապստամբության փաստից բոլորովին էլ չի բխում, որ նրանք դահերի միության մեջ գերիշխող կամ առաջնորդող դիրք են ունեցել, և Արշակի ռազմառաջնորդությունը հավասարապես տարածվել է նաև քսանթիների և պիզուրների վրա: Ընդհակառակը, անդրարալյան տափաստաններում դահերի տարաբնակեցման լայն արեալն ու սակա-սկյութական ցեղերի հետ նրանց շերտընդմեջ բնակությունը, որի մասին վկայում է հույն աշխարհագրագե-

---

[1] Фаррох К., ук. соч., с. 43.
[2] Olbrycht M.J., “Titulatura Pierwszych Arshakido'w ..., p. 230.
[3] Sellwood D., Parthian Coins, p. 280, app. 4.
[4] Olbrycht M.J., Titulatura Pierwszych Arsakidow..., p. 230
[5] Strabo., XI, 8. 2.

տը[1], բավարար առիթ է տալիս կարծելու, որ Դահերի միությունը ստեղծված է եղել իրավահավասարության սկզբունքով: Այս դեպքում բնական կլինի կարծել, որ մակեդոնական տիրապետության թոթափումից հետո Արշակի առաջին քայլը պետք է լիներ դահերի ռազմական ողջ ներուժի կենտրոնացումն ու համամիութենական ռազմառաջնորդի դերում ճանաչում գտնելը: Դա էր պահանջում նորանվաճ երկրամասում հիմնավորվելու և Սելևկոս II-ի ու Դիոդոտոս I-ի միջև կնքված հակադահական դաշինքին դիմակայելու կենսական անհրաժեշտությունը: Ինչպես երևում է, այս նպատակի իրագործմանն է ծառայել Արշակի ընդունած *Krny* տիտղոսը:

Ք.ա. 238 թ. Սելևկոս II Կալինիկոսը մի վճռական ռազմերթ կատարեց դեպի արևելք՝ հնազանդեցնելու պարթևներին: Սակայն Արշակը ապասիակների սկյութական ցեղի օժանդակությամբ կարողացավ հաջողությամբ դիմակայել նրան: Շուտով Փոքր Ասիայում առաջացած խնդիրները ստիպեցին Սելևկոսին հապշտապորեն վերադառնալ Արևմուտք, ինչը երիտասարդ Պարթևական պետության համար հավասարազոր էր մեծագույն հաղթանակի[2]: Համաձայն Հուստինոսի՝ «Այդ ժամանակից ի վեր պարթևները հանդիսավորապես տոնում են այդ օրը՝ որպես իրենց ազատության սկիզբ»[3]:

Սելևկոսի դեմ հաղթանակը, հիրավի, շրջադարձային նշանակություն ունեցավ ինչպես դահերի նորաստեղծ պետության, այնպես էլ նրանց ազգային ինքնագիտակցության ձևավորման գործում: Այն հաստատագրում էր պարների իրավունքը նոր հայրենիքի նկատմամբ, երկրի, որի անունն ընդունեցին նվաճողները՝ կոչվելով պարթևներ: Սակայն Արշակի համար հաղթանակը, գործնականից զատ, ուներ նաև կարևոր քարոզչական նշանակություն. բավարարելով հերոս-առաջնորդի աստվածահաճոյության գաղափարական պահանջը՝ այն բացում էր արքայական իշխանության դռները պարթևական առաջնորդի առջև: Պատահական չէ, որ Սելևկոսի նահանջի հանգամանքների մասին խոսելուց հետո Հուստինոսն անմիջա-

---

[1] Ibid., XI, 9. 2. Դահերի նախնական բնակեցման տարածքի մասին տես Пянков В., “К вопросу о путях проникновения ираноязычных племен в Переднюю Азию" см. *Переднеазиатский сборник*, III, Ì., 1979, с. 195, прим. 4. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Երևան, 2010, էջ 29-31.

[2] Justin., XLI, 5. 9 «Կարճ ժամանակ անց Արշակը մարտնչեց Սելևկոս արքայի դեմ, որը եկել էր պատժելու անջատվածներին [պարթևներին], և դարձավ հաղթող»:

[3] Ibid., XLI. 4. 10.

պես ավելացնում է. «Այսպիսով Արշակը հասավ ոչ միայն արքայական իշխանության, այլև հաստատեց իր թագավորությունը, որի շնորհիվ էլ պարթևների համար դարձավ ոչ պակաս հիշարժան, որքան Կյուրոսը պարսիկների, Ալեքսանդրը մակեդոնացիների և Հռոմուլոսը հռոմեացիների համար էին»[1]:

Իսիդորոս Քարակսցու վկայությամբ՝ Արշակի թագադրությունը տեղի է ունեցել Ասաակ քաղաքում, որտեղ և, ի նշանավորումն այդ իրադարձության, զետեղվել է հավերժական հուրը[2]:

Այդ փոփոխություններն իրենց անհապաղ արտահայտությունը գտան դրամական պատկեագրության մեջ: Դ. Սելվուդի «Տիպահամար»-ի I և II տիպերի դրամների երեսի պաշտոնական դիմապատկերի վրա Արշակն արդեն նեկայացված է աջ դարձած՝ գլուխը դիադեմայով զարդարված[3]: Բայց կուրբասիի հետ արդեն համադրված է ոչ թե հին՝ ծոծրակին արվող հանգույցով վերջացող սատրապական դիադեման, այլ նորը, որի ժապավենները կախված են հանգույցից ցած: Ակնհայտ է, որ այս նոր դիադեմայի պատկերմանը դրամահատները խիստ մեծ նշանակություն են տվել, քանի որ այն հստակ արտահայտված է նաև դրամների դարձերեսներին՝ «աղեղնավոր»-ի ծոծրակից դեպի մեջքն իջնող երկար ժապավենների տեսքով[4]:

---

[1] Ibid., XLI. 5. 5.

[2] Parthian Stations by Isidore of Charax an Account of the Overland Trade Route Between the Levant and Indian the First Century B.C. the Greek text with a Translation and Commentary by Wilfred H. Schoff, Transcribed from the Original, London, 1914 (այսուհետ՝ Isidor.) 11. «(Աստաուենայում) գոյություն ունի Ասաակ քաղաքը, որտեղ Արշակը առաջին անգամ թագադրվեց և այնտեղ է պահպանվում հավերժական հուրը»: Համաձայն Իսիդորոսի՝ Ասաակը գտնվել է Հիրկանիայի և Պարթևստանի միջև: Հիմնվելով Կ. Պտղոմեոսի (VI, 9) տվյալների վրա՝ Վ. Տարոն ու է. Բիկերմանը գտնում են, որ Աստաուենան մտել է Հիրկանիայի Սելևկյան սատրապության կազմի մեջ և, հետևաբար, Արշակի թագադրությունը տեղի է ունեցել ոչ թե պարների՝ Պարթևստան ներխուժելու կամ Անդրագորասին տապալելու ժամանակ, ինչպես գտնում է է. Դաբրովան (Dąbrowa E., "The Parthian Kingship", pp. 123-124), այլ նկատելիորեն ավելի ուշ՝ Սելևկոս II-ի հարձակումը ետ մղելուց և Հիրկանիան նվաճելուց հետո՝ 235թ. (Фаррох К., ók. соч., с. 128. Assar G.F., Bagloo M.G., "An Early Parthian "Victori" Coin", p. 30):

[3] Sellwood D., An Introduction..., 1. 1; Lanz 102, lot 301; Abgarians M.T., Sellwood D., op. cit., p. 104, pl. 20, 1/1; Peus 371 (2002), lot 233; Peus 384 (1 Nov 2005), lot 361; Peus 388 (1 Nov 2006), lot 277; Peus 323 (1-4 Nov 1988), lot 902.

[4] Արշակի դրամների դարձերեսին արքայական իշխանության այս խարհրդանիշի հավելման գործում նկատելի է տարօրինակ անհետևողականություն: Սպասելի

Սակայն, հակառակ սպասածին, «աղեղնավոր»-ի թիկունքում գրված ΑΡΣΑΚΟΥ անունը այժմ լրացված է ոչ թե դիադեմային ներդաշնակող «ΒΑΣΙΛΕΩΣ- արքայի», այլ աղեղի առջև կիսաշրջանաձև գրված «ΑΥΤΟΚΡΑΤΟΡΟΣ - ինքնակալ» տիտղոսով[1]: Այս իրողությունը լուրջ տարակուսանքի տեղիք է տալիս՝ նույնիսկ առիթ տալով կարծելու, որ Արշակ I-ը, թեև եղել է Արշակունիների արքայատան հիմնադիրն ու առաջին սուվերեն կառավարիչը, բայց բնավ էլ ոչ առաջին արքան (βασιλεύς)[2]:

Վերոնշյալ դիլեման, որպես կանոն, պատմաբանների ու դրամագետների ուշադրության առանձին առարկա չի դարձել: Որքան մեզ հայտնի է, խնդրին անդրադարձել է միայն Մ. Օլբրեյքը, որի համոզմամբ, «Արշակ I-ն ու նրա իշխանությունը հունամակեդոնական βασιλεύς տիտղոսի պահանջ չէին դնում: Առաջին Արշակունիների միապետական կոնցեպցիան հիմնված էր առավելապես իրանական ավանդությունների վրա, որոնք յուրացվել էին Կայենիդներից ու Աքեմենյաններից»[3]:

Իհարկե, անհնար է ժխտել Արշակունիների գաղափարախոսության մեջ Աքեմենյան-զրադաշտական ավանդների հիմնարար դերը. դրա ամենավառ ապացույցը, թերևս, Իսիդորոսի հիշատակած հավերժական հուրն է՝ ***airiianəm xvarənah***-ը, որը Ավեստայի 18-րդ Յաշտում՝ «Աստվածային փառքի ներբողում», հիշատակվում է որպես դիցածին մի զորություն, որն օգնում է իրանցիներին պաշտպանելու իրենց հայրենիքը օտարերկրացիներից ու չար ոգիներից: Նմանապես, չի կարելի անտեսել Արշակի դրահմաների դարձերեսի պատկերագրական համակարգի ուղղակի աղերսները թե՛ Աքեմենյան պատկերագրության, թե՛ Ավեստայի 19-րդ՝ «Օրհներգ աշխարհին» Յաշտում գովերգված Կայենիդների առասպելական հարստության ֆառնի հետ, որը փառք և բախտավորություն էր պարգևում

էր, որ այն Արշակի պորտրետին հավելվեր միայն պաշտոնական ինվեստիտուրայից հետո հատված դրամների վրա, ինչպես որ S_1 և S_2 տիպերի վրա է: Մինչդեռ այս պատվանշանն առկա է նաև պաշտոնական թագադրությունից առաջ հատված S $_{4.1}$ դրահմաների դարձերեսի «աղեղնավոր»-ի գլխին, թեև, այն բացակայում է նույն դրամների ավերսի պատկերի հարդարանքի մեջ (Sellwood D., An Introduction..., 4.1; Triton VII (12 Jan 2004), lot 389).

[1] Sellwood D. An Introduction..., 1. 1; Peus 388 (1 Nov 2006), lot 277; Peus 323 (1-4 Nov 1988), lot 902; Sammlung Gonnella: Münzen Der Arsakiden (2008), 1.

[2] Assar G.F., Geneology and Coinage of the Early Parthian Rulers. I, p. 71

[3] Olbrycht M.J., Titulatura Pierwszych Arsakidow..., p. 233-234.

արքաներին ու հերոսներին[1]: Վերջապես՝ Աքեմենյան շատ արքաների անուններում (ինչպես որ Արշակ անվան դեպքում) ակնհայտ է հղումը Կայենիդների հնամենի ավանդույթներին[2]:

Այդուհանդերձ, Աքեմենյան դարաշրջանից մեզ հասած էպիգրաֆիկական և պատկերագրական նյութերը պարզորոշ ցույց են տալիս, որ պարսից արքաները ոչ միայն հպարտությամբ են կրել արքայական տիտղոսը, առանձին դեպքերում, ինչպես օրինակ Բեհիսթունի արձանագրության վրա, անբնական շատ շեշտելով այն, այլև, պաշտոնական արվեստի միջոցներով փորձել են ի ցույց դնել իրենցից արքայական ֆառնի անբաժանությունը: Այդ է պատճառը, որ Արշակի դրամների վրա «արքա» տիտղոսի բացակայության վերաբերյալ Մ. Օլբրեյքի մեկնաբանությունը մեզ թվում է քիչ հավանական:

Արշակի դրամների վրա պաշտոնական պորտրետի ու տիտղոսի դանդաղ փոփոխությունների, մասնավորապես, պաշտոնական ինվեստիտուրայից հետո թողարկված դրահիմաների վրա նրա արքայական պատվանշանի և դրամական լեգենդի անհամապատասխանության պատճառը մենք հակված ենք համարելու արքայական իշխանության կայացման գործընթացի վրա դահերի միության քաղաքական կազմակերպությունից բխող ներքին գործոնների ազդեցությունը: Այդպիսիք կարող էին լինել պարների ցեղառաջնորդի բարձրացման նկատմամբ քսանթիների ու պիզուրների դժկամությունը և, հատկապես, ցեղային ինքնավարությանը և համամիութենական գործերի կոլեկտիվ կառավարման հնամենի ավանդույթներին դահական ավագանու կառչած լինելը, երևույթ, որն օրինաչափ էր անցումային այդ փուլն ապրած ցանկացած հասարակության համար:

Առաջին գործոնի մասին անտիկ մատենագիրները ուղղակիորեն ոչինչ չեն հաղորդում: Միայն Մ. Խորենացին է, որ իր «Հայոց պատմության» մեջ խոսելով պարթևական պահլավների և սրանց ղեկավարների «պատվավորագույն» (հուն.՝ τιμιώτατα) տիտղոսի առաջացման մասին՝ պատմում է. «Արդ՝ յետ հօրն (Արշավիրի-ծ.հ) վախճանելոյ, կամ եղև Արտաշիսի ազգաւ ի վերայ եղբարցն (Կարենի և Սուրենի-ծ.հ.) թագաւորել.

---

[1] Avesta: Yashts (Hyumns of Praise), in Zorastrian Archives, trans. J. Dermesteter, http://www.avesta.org/yasna/yasna.htm (accessed October 2008).

[2] Օրինակ՝ Դարեհ անունը (հին պարսկ. Dārayavahuš) բաղկացած է dārayat + vahuš մասնիկներից և բառացիորեն նշանակում է «[կենսական] բարիքներով օժտված»: Քսերքսես անունը (հին պարսկ. Xšayāršan) ստուգաբանվում է որպես xšaya + āršan՝ «կառավարիշների շարքում հերոս» (См. Фрай Р.Н., Наследие Ирана, М., 2002, с. 138):

զոր յանձն առեալ եղբարցն, ոչ առաւել ողոքական բանիւք և պատրողօք, քան թէ սաստիւ նուաճեալ նորա: Եւ Աբգարու պայման ուխտի և դաշինս ի միջի հաստատեալ-թագաւորել Արտաշիսի ծննդոք իւրովք. իսկ եթէ հատցին զարմք նորա՝ եղբարցն մատչել ի թագաւորութիւն ըստ կարգի աւագութեան: Եւ Արտաշիսի զայս ի նոցանէ գտեալ՝ գաւառս պարգևէ, ազգ զնոսա սերելով յանուն իւրաքանչիւր. և ի վերոյ քան զամենայն նախարարութիւն կարգէ, զնախնականն ի վերայ պահելով զանուն ազգին, զի կոչեսցին այսպէս. Կարենի Պահլաւ, Սուրենի Պահլաւ, և քոյրն՝ Ասպահապետի Պահլաւ, քանզի ի վերայ զօրաց էր այր նորա...»[1]:

Պատմագիտության մեջ բազում փորձեր են կատարվել Մ. Խորենացու հիշատակած Արշավիրին ու նրա անդրանիկ որդուն պարթևական այս կամ այն թագավորի հետ նույնացնելու ուղղությամբ[2]: Մինչդեռ պատումի ընդհանուր վիպական ոգուց իսկ ակնհայտ է, որ ինչպես Արշավիրը, նույնպես և պարթև արքայազները էպոնիմացված կերպարներ են, իսկ պատումն էլ կոչված է մի ինչ-որ եռամիասնության ծագումնաբանությունն ու գոյությունն ունեցող ներքին հարաբերությունը մեկնաբանելուն: Այս տեսանկյունից շատ հարմար է Արշավիրին դահերի նախահոր, իսկ որդիներին՝ այդ ֆրատրիական (եղբայրական) միության երեք առաջնորդների հետ նույնացնելը[3]:

Այսպիսով՝ մեր կողմից առաջարկվող մեկնաբանության համատեքստից հետևում է, որ նախ՝ Մ. Խորենացու «յետ հօրն վախճանելոյ» արտահայտությունը պետք է հասկանալ այլաբանորեն՝ «յետ ինքնագլխութեանն որդւոց», և ապա՝ Արտաշես-Արշակի (պարների) բարձրացումը տեղի է ունեցել հարազատ եղբայրներ Կարենի ու Սուրենի (քսանթիների ու պիզուրների) դիմադրության հաղթահարման ճանապարհով:

Ինչ վերաբերում է Արշակ I-ի իշխանության վրա պարթևական ավագանու ազդեցության հնարավորությանը, ապա դրա մասին աղբյուրների

---

[1] Մ. Խորենացի, II, ԿԸ:

[2] Տես Մուշեղյան Ա.Վ., Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 56-58:

[3] Ինչ վերաբերում է Արշավիր դուստր Կոշմին ու Ասպահապետի Պահլավի առաջացմանը, կարծում ենք, այն Մ. Խորենացու երկում ծնվել է հնդեվրոպական ժողովուրդների մոտ կենցաղվարած «երեք եղբոր և մի քրոջ» մասին վիպական մոտիվի ազդեցությամբ: Ասպահապետի Պահլավի մտացածին բնույթն ակնհայտ է և այն բանից, որ անտիկ աղբյուրները հաճախակի խոսելով Սուրենյան և Կարենյան տոհմերի նահապետների մասին, Պարթևական տերության մեջ ժառանգաբար սպարապետության պաշտոնը զբաղեցրած որևէ տեհմի մասին չեն հիշատակում:

հիշատակությունները ավելին քան շատ են: Անտիկ հեղինակները պարթևական պետական խորհուրդը հիշատակում են Ordo probulorum[1], Συνέσριὸν[2], կամ էլ Senatus Parthorum[3] անուններով: Ստրաբոնը, վկայակոչելով Պոսիդոնիոսին, հաղորդում է. «Պարթևների մոտ լինում են երկու տիպի ժողովներ, առաջինը՝ տոհմապետների, մյուսը՝ իմաստունների ու մոգերի. նրանք երկուսով էլ նշանակում են արքաներին»[4]: Սրանից կարելի է գալ միանշանակ հետևության. ինչպես ցեղային կացութաձևից վաղ պատական կացութաձևի անցած այլևայլ հասարակություններում, վաղ պարթևական հասարակության մեջ ևս դահական ավագանու խորհուրդը ներկայացել է իբրև ժողովրդական ներկայացուցչական բարձրագույն մարմին և որպես այդպիսին՝ պետական իշխանության բարձրագույն կրող: Թագավոր ընտրելու ավագանու իրավունքն ինքնաբերաբար հասկանալի է դարձնում նրա նաև հակադարձ՝ արդեն ընտրված արքային գահընկեց անելու իրավունքը: Աղբյուրագիտական և դրամագիտական բազմաթիվ իրողությունների հիման վրա Գ. Կոշելենկոյն, Գ. Ասսարը և այլք եզրակացնում են, որ պարթևական ավագանու վերոնշյալ իրավունքի առաջին զոհը դարձել է Արշակ I-ի հարազատ որդին ու հաջորդը՝ Արշակ II-ը[5]: Իսկ Յուստինոսը, խոսելով Միհրդատ III-ի (Ք.ա. 57-54 թ.թ.) մասին, փաստում է, որ սա «...իր դաժանության պատճառով վտարվեց երկրից պարթևական ավագների խորհրդի (Senatus Parthorum) կողմից»[6]: Ավելի ուշ շրջանում պարթևական ավագանու հակարքա և արքայաստեղծ գործունեության մասին աղբյուրների վկայությունները անհամեմատ շատ են: Սակայն, կարծում ենք, վերոնշյալ օրինակներն իսկ բավական են միանշանակ եզրահանգման գալու համար. եթե պետության կայացման անհամեմատ բարձր աստիճանին պարթևական սենատը շարունակել է մնալ իբրև պետական իշխանության գերագույն կրող, ապա ձևավորման ամենավաղ շրջանում նրա այդ դերը պետք է որ ավելի մեծ լիներ: Մեր այս հետևությունն լույս է սփռում Արշակ I-ի քաղաքական վարքագիծը և նրա դրամների վրա առկա պատկերագրական դիլեման հասկանալու

[1] Justin, XLI, 2. 2.
[2] Strabo, XI, 9. 3.
[3] Justin, XLII, 4. 1.
[4] Strabo., XI, 9. 3.
[5] Кошеленко Г.А., Генеология первых Аршакидов (еще раз о нисийском остраке N 1760), см. История и культура народов Средней Азии (древность и средние века), под ред. В.Г. Гафурова и В.А. Литвинский, М., 1976, с. 33-34. Assar G.F., Geneology and Coinage of the Early Parthian Rulers. I, p. 81, see also append. 79.
[6] Justin., XLII, 4, 1

համար: Միապետության կայացման ճանապարհին եղբայրական ցեղերի ենթադրվող դիմադրությունը և, հատկապես, դահական ավագանու հեղինակության հաղթահարումը Արշակից պահանջում էին մեծ ճկունություն և համբերություն, ինչն էլ, մեր կարծիքով, հանգեցրել է նրա պատվանշանների ու դրամական լեգենդների փոփոխության դանդաղությանն ու զգուշավորությանը: Այս տեսանկյունից պետք է մեկնաբանել նաև Արշակի պաշտոնական թագադրությունից հետո թողարկված դրահմաների վրա βασιλεύς-ի փոխարեն αυτοκρατορ-ինքնակալ տիտղոսի հրապարակումը, որով նախկինի պես շեշտվում էր նրա իշխանության ռազմական, ուժային բնույթը[1]: Սակայն, մեր համոզմամբ, Արշակի կողմից արքայական տիտղոսից հրաժարումը ոչ թե նրա քաղաքական հավակնությունների նահանջի նշան էր, այլ յուրօրինակ հարգանքի տուրք դահերի հին ցեղային անցյալին ու պարթևական ավագանու պատվախնդրությանը:

Հին ավանդական հարաբերությունների և պատմականորեն հասունացած նոր իրողությունների նմանատիպ ներքին պայքարի ականատեսն ենք դառնում նաև Ք.ա. Ի դ. երկրորդ կեսի Հռոմեական Հանրապետությունում: Ք.ա. 44թ. փաստացի մենիշխանության հասած Գայոս Հուլիոս Կեսարը, երկյուղելով տակավին հանրապետական կարգերին կառչած հռոմեական Սենատի ու պլեբսի զայրույթից, հրաժարվեց ընդունել Մ. Անտո-

[1] Որքան մեզ հայտնի է, ΑΥΤΟΚΡΑΤΟΡΟΣ տիտղոսի պիոները Դիոնիսոս Սիրակուզցին էր, որը Ք.ա. 405 թ. իրեն հռչակեց ստրատեգոս ինքնակալ (στρατηγος αυτοκρατορ) (Иосиф Флавий, Иудейские древности, XIII, 219): Այն կրել են Մակեդոնիայի արքաներ Ֆիլիպ II-ն ու Ալեքսանդր III-ը: Սելևկյանների համար խիստ անբնական այս տիտղոսը կրել է միայն Դիոդոտոս Տրիփոնը (Ք.ա. 142/1-139/8 թ.թ.), որը գահին հաստատվել էր ռազմական հեղաշրջման միջոցով (Бикерман Э., Государство Селевкидов, с. 12): Է. Բիկերմանի կարծիքով՝ Տրիփոնի կրած ΒΑΣΙΛΕΩΣ / ΤΡΥΦΩΝΟΣ – ΑΥΤΟΚΡΑΤΟΡΟΣ տիտղոսը պայմանավորված է եղել նրա հեղաշրջման մաքուր ռազմական բնույթով: Այս իրողությունն արտացոլված է Տրիփոնի հատած բրոնզե դրամների դարձերեսի՝ դափնիներով ու արքայական դիադեմայով զարդարված զինվորական սաղավարտի միջոցով (A. Houghton, Coins of the Seleucid Empire from the Collection of Arthur Houghton, New York, 1983, p. 16, 79, 82, pls. 15.245–263, 47.800, 48. 816–817): Ք.ա. II-I դ.դ. հռոմեական իրականության մեջ στρατηγος αυτοκρατορ տիտղոսը իր նշանակությամբ և իրավասություններով հավասար էր հռոմեական դիկտատորին (Полибий, 3. 86. 7; 6. 15. 2): Իսկ արդեն Կայսրության դարաշրջանում αυτοκρατορ տիտղոսը համահունչ է դառնում հռոմեական imperator տիտղոսին (Olbrycht M.J., Titulatura Pierwszych Arshakido'w..., p. 230, app. 4): Այս ամենը առիթ է տալիս կարծելու, որ ինչպես հունամակեդոնական և հռոմեական իրականության մեջ, նույնպես և Արշակ I-ի պարագայում «ինքնակալ» տիտղոսն արտահայտել է այն կրողի իշխանության ռազմական, ուժային բնույթը:

նիոսի մատուցած արքայական խույրը[1]: Դա բարոյական հենք ապահովեց նրա հետմահու մեծարման համար: Մի փոքր ավելի ուշ՝ նրա հոգեորդին՝ Գայոս Օկտավիանոսը, նույնպես ձեռնպահ մնաց հանրապետական ավանդույթներին խորթ Rex տիտղոսից: Դրա դիմաց Սենատը անլուր պատիվների արժանացրեց նրան, իսկ սենատորական պատմագրությունը սերունդներին ավանդեց իդեալական կառավարչի մի կերպար, որի պրիզմայով էին գնահատվում հետագայի բոլոր հռոմեական կայսրերը:

Ակնհայտ է, որ Արշակը ևս իդեալականացված է ներկայացված Հուստինոսի ու Ամմիանոսի երկերում: Մ. Օլբրեյքթը, Ե. Դաբրովան և այլք, դրա պատճառը համարում են Պարթևական պետության ստեղծման գործում Արշակի ունեցած անանց վաստակը: Սակայն կասկածից վեր է, որ Արշակը պարթևական ավագանու միջավայրում այդչափ չէր փառավորվի և հետագա սեունդներին էլ (այդ թվում և հունահռոմեական պատմագրությանը) նրա կերպարն այդչափ մեծ լուսապսակով չէր ներկայանա, եթե նա դահերի համար խիստ վճռական անցումային ժամանակաշրջանում համադրած չլիներ իր միապետական ձգտումները դահերի ցեղային անցյալից եկող և տակավին զորեղ ավանդույթների հետ: Հենց առերևույթ պահպանողականության շնորհիվ էր, որ Արշակը շահեց դահերի սերն ու նվիրվածությունը, գործոններ, որոնք խիստ կարևոր էին մի անձի շուրջ ողջ հասարակության համախմբման և պետության կայացման համար:

Վերը նշվածով հանդերձ, կարևոր է նաև նկատել, որ իրականում Արշակի կողմից պարթևական ավագանու ավանդապաշտությանը կատարված զիջումը խիստ պայմանական, նույնիսկ ձևական բնույթ ուներ, քանի որ դրամների երեսին ու դարձերեսին նրա սուվերեն արքայական իշխանությունը պատկերագրորեն (արքայական դիադեմայի, գահի և աղեղի համադրությամբ) լուսաբանված էր այն աստիճան, որ ինքնաբերաբար վերանում էր «արքա» տիտղոսի անհրաժեշտությունը: Այսպիսի մեկնաբանության օգտին է խոսում Պարսքի դրամահատության մեջ առկա պատկերագրական զուգահեռը. այսպես կոչված «Անհայտ արքա II»-ի դրամների երեսին (պատկ. 12) ներկայացված է դիադեմակապ արքայի անդրին, իսկ դարձերեսին՝ կանոնավորապես հանգուցված և կլորավուն տեսքի բերված դիադեմա[2]: Արքայական իշխանության խորհրդանիշի առկայության դեպքում «արքա» տիտղոսի բացակայությունն այդ տիրակալի բարձրագույն իշխանություն ունենալ-չունենալու հարց այլևս չի հարուցում:

---

[1] Սվետոնիոս Գ., 12 կեսարների կյանքը, Երևան, 1986, 79. 2.
[2] Peus, 320 (3-4 Nov 1987), lot 1269, 1270, 1271.

ՀԱՎԵԼՎԱԾ

1. Արշակ Ի-ի պղնե երկքաղքուսը, 2. Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե դրահիմաև, 3. Սելևկոս Ի-ի բրոնզե դրամը, 4. Տրայանոս կայսեր ոսկե դրամը՝ հատված Պարթևստանի դեմ տարած հաղթանակի առթիվ, 5. Արշակ Ի-ի դրահիմաև՝ առանց դիադեմայի պատկերով և «Արշակի» լեգենդով, 6. Արշակ Ի-ի դրահիմաև՝ «սատրապական դիադեմայով» պատկերով և «Արշակի» լեգենդով, 7. Արշակ Ի-ի դրահիմաև՝ «սատրապական դիադեմայով» պատկերով և «Կարեն Արշակի» լեգենդով, 8. Արշակ Ի-ի դրահիմաև՝ «արքայական» դիադեմայով պատկերով և «ինքնակալ Արշակի» լեգենդով, 9 Սելևկյան Անտիոքոս Ի-ի տետրադրահիմաև, 10. Սելևկյան Անտիոքոս ԻԻ-ի տետրադրահիմաև, 11. Կիլիկիայի ապստամբ սատրապ Դատամեսի արծաթե դրամը, 12. Պարսքի «Անհայտ արքա ԻԻ»-ի դրահիմաև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի, և Ս. Կանայանցի, աշխարհաբ. թարգմանութ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983:
2. Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը,- «Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987:
3. Դիոն Կասսիոս, Հռոմեական պատմություն, - Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 9, թագմ. Ս.Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976:
4. Էսքիլոս, Ողբերգություններ, թարգմ., Ա. Թոփչյանի, Երևան, 1991:
5. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Երևան, 2010:
6. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1986:
7. Մովսիսի Խորենացիոյ Պատմութիւն Հայոց, քննակ. բնագ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխ. թարգմ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1981:
8. Մուշեղյան Ա.Վ., Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007:
9. Մուշեղյան Խ.Ա., Դրամական շրջանառությունը Հայաստանում (Մ.թ.ա. V դ.-մ.թ. XIV դ.), Երևան, 1983:
10. Պլուտարքոս, Երկեր, Երևան, 1987:
11. Ռուֆուս Կ., Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը,-«Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987:
12. Սվետոնիոս Գ., 12 կեսարների կյանքը, Երևան, 1986:
13. Аммиан Марцеллин, Римская история, перев. с лат. Ю.А. Кулаковского и А. И. Сонин, М., 2005.
14. Аппиан, Римская история, под ред. Е. С. Голубцова, М., 1998.
15. Бикерман Э., Государство Селевкидов, М., 1985.
16. Зеймаль Е.В., Парфянский лучник и его происхождение, СГЭ, Вып. XLVII, Л., 1982, с. 46-49.
17. Иосиф Флавий, Иудейские древност в 2-х томах, перев. с греч. Г. Генкеля, М., 1996.
18. Кошеленко Г.А., “Некоторые вопросы истории ранней Парфии”, *ВДИ,* 1968, но1, с.53-71.
19. Кошеленко Г.А., “Царская власть и ее обоснование в ранней Парфии”, см. История иранского государства и культуры: к 2500-летию Иранского государства, под ред. Б.Г. Гафурова и др., 1971, с. 212-216.
20. Кошеленко Г.А., "Генеология первых Аршакидов (еще раз о нисийском остраке N 1760)", см. История и культура народов Средней Азии (древность и средние века), под ред. В.Г. Гафурова и В.А. Литвинский, М., 1976, с. 31- 37.
21. Ланно-Данилевский А., и Мальберг В., Древности Южной России. Курган Карагодеуашх, Спб.: Изд. Императорской Археологической комиссии (Типография Императорской Академии Наук, Вос. Остр., 9, лин. N 12), 1894, с. 139-153.

22. Луконин В.Г., Древний и раннесредневековый Иран: Очерки истории культуры, М., 1987.
23. Марков А.К., Неизданные арсакидские монеты, СПб, 1892.
24. Массон М.Е., Находка на городище Старая Ниса датированной парфянской тетрадрахмы Митридата I, *ВДИ*, 1963, N 2, с. 152-155.
25. Массон В.М., Ромодин В.А., История Афганистана, т. 1, М., 1964.
26. Мифы и легенды народов мира, т. 3, Древний Египет, Месопотамиа, М., 2004.
27. Полибий, Всеобщая история, в 2 томах, перев. с древнегр. Ф. Мищенко, М., 2004.
28. Пянков В., "К вопросы о путях проникновения ираноязычных племен в Переднюю Азию" см. Переднеазиатский сборник, III, М., 1979.
29. Раевский Д.С., К вопросы об обосновании царской власти в Парфии (“Парфянский лучник” и его семантика). В кн. Средняя Азия в древности и средневековье (история и культура), М., 1977, с. 81-86.
30. Раевский Д.С., Очерки идеологии скифо-сакских племён, М., 1977.
31. Фаррох К., Персы: армия великих царей, М., 2009.
32. Фрай Р.Н., Наследие Ирана, М., 2002.
33. Abdi K., "The Passing of the Throne from Xerxes to Artaxerxes I, or How an Archaeological Observation Can Be a Potential Contribution to Achaemenid Historiography", see " The World of Achaemenid Persia", ed. by J. Curtis and St J. Simpson, London-New York, 2005, pp. 275-284.
34. Abgaryanc M.T., Sellwood D., A Hoard of Early Parthian Drachms, *NC*, 1971, pp. 103-119.
35. Alram M., "The Arsacids. III, “Arsacid Coinage", *Enciclopaedia Iranica*, vol. 2, 1986, pp. 536-540.
36. Assar G.F., Genealogy and Coinage of the Early Parthian Rulers. I., *Parthica*, 6, 2004, pp. 69-93.
37. Assar G.F., Genealogy and Coinage of the Early Parthian Rulers. II. A Revised Stemma, *Parthica*, 7, 2005, pp. 29-63.
38. Assar G.F., Bagloo M.Gh., An Early Parthian "Victory" coin, *Parthica* 8, Pisa-Roma, 2008, pp. 25-36
39. Avesta: Yashts (Hyumns of Praise), see Zorastrian Archives, trans. J. Dermesteter, http://www.avesta.org/yasna/yasna.htm (accessed October 2008).
40. Āyatollhi H., The Book of Iran: The History of Iranian Art, transl. by Sh. Haghshenās, ed. by Z. Haghshenās, Tehran, 2003.
41. Bikerman E., Notes on Seleucid and Parthian Chronology, *Berytus*, Vol. VIII, 1944, N 2, pp. 73-83.
42. Colledge M.A.R., Iconography of Religions, XIV, 3, The Parthian Period, Leiden, 1986.
43. Dąbrova E., Mithrdates I and the Beginning of the Ruler-cult in Parthia, *Electrum*, 15 (2009), pp. 41-51.
44. Dąbrowa E., "The Parthian Kingship", see Concepts of Kingship in Antiquity.

Proceedings of the European Science Foundation Exploratory Workshop (held in Padova, November 28th –December 1st, 2007), ed. by Giovanni B. Lanfranchi & Robert Rollinger, Padova, 2010, pp.123-134.

45. Diodorus of Sicily, The Library of History in twelve volumes with an English translation by C. H. Oldfather, London, MOMLXVII (1967).
46. Eckhel J., Doctrina numorum veterum, t. 3, Vindobonae, 1798.
47. Erickson K., Wright N.L., "The "Royal Archer" and Apollo in the East: Greco-Persian Iconography in the Seleucid Empire," see Proceedings of the XIVth International Nimismatic Congres, Glasgow, 2009, ed. by N. Holmes, Glasgow, 2011, pp. 163-168.
48. Fowler R., ,"Most Fortunate Roots: Tradicion and Legitimacy in Parthian Royal Ideology", see Imaginary Kings: Royal Images in the Ancient Near East, Greece and Rome, ed. by Oliver Hakster and Richard Fowler, München, 2005, pp. 125-156.
49. Frye R.N., "The Charisma of Kingship in Ancient Iran" ***Iranica Antiqua***, 4 (1964), pp. 36-54.
50. Gardner P., The Parthian Coinage, International numismata Orientalia, London, 1877.
51. Gardner P., A Catalogue of the Greek Coins in the British Museum. The Seleucid Kings of Syria. London, 1878.
52. Galle S., "Une Drachme inconnue d'Arsace Ier et la problème des monogrammes," *Iranica Antiqua*, vol. 17 (1982), pp. 175-180.
53. Gariboldi A., "Royal Ideological Patterns between Seleucid and Parthian Coins. The Case of Theopatoor" in Commerce and Monetary Systems in the Ancient World. Means of Transmission and Cultural Interaction. Proceedings of the Fifth Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project. Ed. by R. Rollinger and Ch. Ulf, Stuttgart, 2004, pp. 366-384.
54. Gaslain J., "Le bachlik d'Arsace Ier ou la representation du nomade-roi", *Bulletin of Parthian and Mixed Oriental Studies*, I, (2005), pp. 9-30.
55. Gaslain J., "A propos d' Arsace Ier", *Electrum*, 15 (2009), pp. 27-39.
56. Gaslain J., "Arsaces I, the First Arsacid King? Some Remarks on the Nature of Early Parthian Power", see *Central Asia from the Achaemenids to the Timurids. Archaeology, History, Ethnology, Culture*. Materials of an International Scientic Conference dedicated to the Centenary of A. M. Belentitsky, St. Petersburg, November 2-5, 2004, St. Petersburg, 2005, pp. 221-224.
57. Hall J., Illustrated Dictionary of Symbols in Eastern and Western Art, Colorado, 1996.
58. Herzfeld E., Iran in the Ancient East, London-New York, 1941.
59. Hinz W., Altiranische Funde und Forschungen, Berlin, 1969.
60. Houghton A., Coins of the Seleucid Empire from the Collection of Arthur Houghton, New York 1983.
61. Invernizzi A., "Thoughts on Parthian Nisa", *Parthica* 6 (2004), pp. 133-143.
62. Kawami T.S., Monumental Art of the Parthian Period in Iran, *Acta Iranica*, 26

(Textes et Mémoires, XIII) Leiden, 1987.
63. Marcus Junianus Justinus Epitome of the Philippic History of Pompeius Trogus. Trsnsl. with notes, by the Rev. J. S. Watson. London, 1853.
64. Melikian-Chirvani A. S., “Rostam and Herakles, a Family Resemblance”, *Bulletin of the Asia Institute* 12, 1998, pp. 171–199.
65. Narain A.K., The Indo-Greeks, Oxford, 1962.
66. Newell E. T., "The Coinage of the Parthian", *Survey of Persian Art*, I, London-New York, 1938.
67. Newell E.T., Coinage of the Eastern Seleucid Mints from Seleucus I to Antiochus III, with a Summary of Recent Scolarship, Additions and Corrections by Otto Mørkholm, New York, 1978.
68. Olbryucht M.J., On Coin Portraits of Alexander the Great and his Iranian Regalia: Some Remarks Ocassioned by the Book by F. Smith: L 'immaginedi Alessandro il Grande sulle monete del regno (336-323), Notae Numismaticae, VI, Kraków, 2011, pp. 13-27.
69. Olbrycht M.J., “Titulatura Pierwszych Arshakido’w i Jej Polityczno-Religijne Knotacje” in Gniezno European Studies Monograph Series, Vol. IV. The World of Antiquity, its Polish Researchers and the Cult of the Ruler, pod redakcją Leszka Mrozewicza i Katarzyny Balbuzy, Poznań 2011, **s.** 229-241.
70. Parthian Stations by Isidore of Charax an Account of the Overland Trade Route Between the Levant and Indian the First Century B.C. the Greek text with a Translation and Commentary by Wilfred H. Schoff, Transcribed from the Original, London, 1914 http://www.parthia.com/doc/parthian_stations.htm
71. Peck E.H., Crown II. From the Seleucids to the Islamic Conquest, *Enciclopaedia Iranica*, 1993, Vol. VI, Fasc. 4, pp. 408-418.
72. Piras A., "Preliminary Remarks on Melammu Database. The Continuity of Mesopotamian Culture Showed by Iranological Evidences" see *Ideologies as Intercultural Phenomena. Proceedings of the Third Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project.* ed. by A. Panaino and G. Pettinato, Milan, 2002, pp. 205-214.
73. Porada E., The Art of Ancient Iran; Pre-Islamic Culture, New York, 1965.
74. Scriptores Historiae Augustae, http://www.thelatinlibrary.com/sha.html
75. Sellwood D., "A Currently Emerging Parthian Hoard", *Numismatic Circular*, 1968, 76:12.
76. Sellwood D., Parthian Coins, *CHIr,* Vol. 3 (1), ed. by E. Yarshater, 6th printing, New York, 2006, pp. 279-288.
77. Sellwood D., An Introduction to the Coinage of Parthia, 2-nd edition, London, 1980.
78. Selz G.J., "The Divine Prototypes", see Religion and Power: Divine Kingship in the Ancient World and Beyond, ed. by N. Brisch, Oriental Institute Seminars N 4, Chicago-Illinois, 2008, pp. 13-31.
79. The Early Seleucids, their Gods and their Coins, Vol. 2, Submitted by Kyle Glenn Erickson, to the University of Exeter as a thesis for the degree of Doctor of

Philosophy in Classics and Ancient History, December 2009.
80. The Geography of Strabo (with an English translation by H. L. Jones), in Eight Volumes, London, 1969.
81. The Karnamak-e Ardeshir-e Papakan.Transl. by Charles F. Horne, in "The Sacred Books and Early Literature of the East", New York, 1917.
82. Westenholz J., "The King, The Emperor, and the Empire. Continuity and Discontinuity of Royal Representation in Text and Image" in *The Neo-Assyrian Text Corpus*, ed. Sanno Aro and R. M. Whiting, Helsinki, 2000, pp. 99-125.
83. Winkelmann S., "Waffen und Waffentrāger auf parthischen Münzen", *Parthica* 8 (2006), pp. 131-152.
84. Wrot W., A Catalogue of the Greek Coins in the British Museum. Catalogue of the coins of Parthia. London, 1903.
85. CNG 58 (18 May, 2011), http://www.parthia.com/pdc_cng58.htm
86. CNG 61 (Sep 2002), http://www.parthia.com/pdc_cng61.htm
87. Gorny and Mosch Auction 130, http://www.parthia.com/pdc_gm130.htm
88. Forum Ancient Coins, http://www.forumancientcoins.com/catalog/roman-and-greekcoins.asp?param=82968q00.jpg&vpar=552&zpg=49944&fld=http://www.forumancientcoins.com/Coins2//
89. Jacquier, *Numismatique Antique*, List 16, (Autumn 1994).
90. Numismatic Lanz München, Auction 102, (28 May 2001). http://www.parthia.com/pdc_lanz102.htm
91. Peus, 320 (3-4 Nov 1987), http://www.parthia.com/pdc_peus320.htm
92. Peus 323 (1-4 Nov 1988),http://www.parthia.com/pdc_peus 323.htm
93. Peus 371 (2002), http://www.parthia.com/pdc_peus371.htm
94. Peus 378 (28 Apr 2003), http://www.parthia.com/pdc_peus378.htm
95. Peus 384 (1 Nov 2005), http://www.parthia.com/pdc_peus384.htm
96. Peus 388 (1 Nov 2006), http://www.parthia.com/pdc_peus388.htm
97. Sammlung Gonnella: Münzen Der Arsakiden (2008).
98. Triton VII (12 Jan. 2004), http://www.parthia.com/pdc_triton7.htm
99. Triton XI (7 Jan. 2008), http://www.parthia.com/pdc_triton9.htm

ИКОНОГРАФИЯ ИДЕИ НЕЗАВИСИМОСТИ НА МОНЕТАХ АРШАКА I

Артур Меликян
кандидат исторических наук, доцент

РЕЗЮМЕ

Чеканка парфянских монет сформировалась на самом раннем этапе государства Аршакидов и уж при Аршаке I стала самым распространенным средством пропаганды официальной идеологии. Динамика трансформации регалий власти на официальных портретах монет Аршака I выявляет сильное влияние древних ирано-

переднеазиатских идеологических представлений о поэтапном становлении царей на формирование власти племенного вождя парнов.

На медных монетах Аршака I представлено самое популярное оружие воинского искуства парнов – лук, положенный в налучник, что представляет собой отличительный этнокультурный знак парнов/дахов и выражает завоевание и право господства над Парфией.

Изобразителная система, предназначенная, в основном, для внешнего обращения серебряных монет, сформировалась в результате соотношения древних ирано-переднеазиатских, позднеахеменидских сатрапской, кочевнической и греко-эллинистической идеологических мотивов и изобразительных форм. Созданная подобным образом изобразительная форма „Парфянский лучник", которая вбирает в себе канонические символы (трон, лук, курбаси, диадема), выражает суверенный характер Парфянского государства и богом данную власть вождя дахов. При этом изображение Аршака I с луком, восседающего на троне, как геральдический символ царской власти, соответствовало идеологии парфян в такой степени, что с некоторыми изменениями (с тиарой и царским титулом, а позднее – с дополнительным изображением жертвенника, находящимся впереди лука, который направляет царь) осталось в употреблении вплоть до конца династии Аршакидов.

THE ICONOGRAPHY OF INDENPENDENCE IDEA ON THE CURRENCY OF ARSACES I

Arthur Melikyan
Candidate of Historical Sciences, Associate Professor

SUMMARY

The Parthian coinage arose in the early period of the Arsacid State and so became one of the most practical preaching means of the official ideology in the time of Arsaces I. Honour-signs change dynamics on Arsaces currency official portait reveals the Iranian, Near Easternal ideological notions' mighty influence on the Parn tribe leader's power formulations. The most domestic weapon of the Parn military art, ie. bow pictured on Arsaces coupper currency is presented as a badge of rank of the Parn/Dah ethnoculture and expresses their supremacy mastery right towards the Parthians.

The silver currency iconographic system was mainly anticipated for the outer circulation and was formulated via comparison of the ancient Iranian, late Akemenian, nomadic and hellenistic ideological and iconographical forms. The so-called "Parthian Archer" portray expresses the divine essence of the Dah leader's power as well as the Parthian State sovereign nature. Herewith, the picture of Archer Arsaces on the throne was so conformable to the Parthian ideological demands that later together with the altar pictire supplement remained applicable up till the end of the Arsacids power.

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հովհաննես Խորիկյան
պատմական գիտությունների թեկնածու

Ատրպատականի պատմությունը միշտ էլ գտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, հատկապես, եթե նկատի ունենանք Մեծ Հայքի և Ատրպատականի պատմական սերտ հարաբերությունները: Այդ հարաբերությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում մ. թ. ա. I-մ. թ. I դարերը, որոնք համեմատաբար լավ են լուսաբանված հին հեղինակների կողմից: Վերջիններիս մեջ առավել կարևոր է ամասիացի մեծ աշխարհագետ Ստրաբոնը, որի հաղորդումները բացառիկ նշանակություն ունեն Ատրպատականի քաղաքական և հատկապես պատմական աշխարհագրության ու էթնիկական կազմի ուսումնասիրության համար: Այսպես, Ստրաբոնի տեղեկություններից մեկը Մարաստանի մասին վերաբերում է հին ժամանակներին, երբ Ատրպատականի պետությունը դեռևս չէր կազմավորվել. «Առավել լայնության Մարաստանը, ըստ երևույթին, հասնում է Զագրոսի լեռնանցքից (որը կոչվում է Մարական դռներ) Սիգրիանեի միջով մինչև Կասպիական դռները, այն կազմում է 4100 ստադիոն»[1]: Ինչպես կարելի է եզրակացնել այս տեղեկությունից, Սիգրիանեն մտել է Մարաստանի մեջ: Մենք հակված ենք կարծելու, որ Մարական դռները համապատասխանում են ներկայիս Շինակի լեռնանցքին, որն էլ իր հերթին նույնացնում ենք 298 թ. Մծբինի պայմանագրում հիշատակված Զինքա ամրոցին, որը Հայաստանի հարավային եզրն էր Մարաստանի սահմանին[2]: Կասպիական դռները գտնվել են Ռագայի (ներկայիս Ռեյը) մոտ, ուրեմն, ըստ Ստրաբոնի, Շինակի լեռնանցքը նույնպես մտել է Սիգրիանեի մեջ[3]:

---

[1] Страбон, География в 17 книгах (այսուհետև՝ Страбон), перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, с. 495.

[2] Petrus Patricius, Fragm. 14 (տե՛ս Müller C., Fragmenta historicorum graecorum, v. IV, Parisiis, 1868, p. 189). Զինքա անունը փռյուգերեն բացատրվել է «դարպաս, մուտք, անցք» նշանակությամբ (տե՛ս Պետրոսյան Ս. Գ., Հին Մարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին,-«Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1979, թիվ 4, էջ 53):

[3] Սիգրիանե-Շիրականի մասին տե՛ս Խորիկյան Հ., Քուստի Խորուարանի Նոտարտա և Շիրական երկրների տեղադրության շուրջ,-«Հանդէս ամսօրեայ» (այսուհետև՝ ՀԱ), Վիեննա-Երևան, 2011, թիվ 1-12, էջ 272:

Ստրաբոնի մեկ այլ վկայությունը մասնագիտական գրականության մեջ հակասական բացատրություններ է ստացել: Հույն հեղինակը գրում է. «Ատրոպատենեն ունի երկու զորավոր հարևան. սրանք են հայերն ու պարթևները, որոնք շատ անգամ խլել են նրա հողերը: Այնուամենայնիվ նա դիմադրում է նրանց և ետ առնում գրաված հողերը, ինչպես խլեց Սիմբակեն՝ հռովմաեցոց հպատակած հայերից, և դիմելով Կեսարի բարեկամության, պարթևների հետ էլ միաժամանակ հաշտ ապրեցին»[1]: Ս. Երեմյանի կողմից Ստրաբոնի հիշատակած Սիմբակեի սրբագրումը Սիգրիակե կասկածելի է[2]: Սիմբակե անունը հիշեցնում է Սիմբատ կամ Սմբատ անունը: Ստրաբոնի այս տեղեկության համեմատությունը Պտղոմեոսի մի տեղեկության հետ կարծում ենք թույլ է տալիս հստակեցնել ոչ միայն Սիմբակեի տեղադրությունը, այլև Ատրպատականի հյուսիսային սահմանագիծը Հայաստանի հետ:

Աշխարհագրագետի մոտ Մարտիանե կոչվող Ուրմիո լիճը տեղադրվում է Կադուսիայում[3], այն դեպքում, երբ, ըստ Ստրաբոնի, կադուսիները սահմանակցում էին մարերին և մատիաններին Պարաքոաթրես լեռան ստորոտին: Պտղոմեոսը գրում է. «Մեդիայի՝ Հայաստանին մոտ արևմտյան մասը զբաղեցնում են կասպերը, որոնցից ներքև գտնվում է Մարգիանա՝ Ասորեստանի ողջ կողքի երկայնքով, իսկ ծովամերձ մարզերը՝ կադուսիները, գելերը և դրիբիկները, որոնցից հետո մինչև երկրի խորքերը տարածվում են ամարիակների և մարդերի հողերը: Կադուսիների շրջանին հարևան հողերը զբաղեցնում են կարդուխները և մարունդները՝ մինչև Մարտիանե լիճը: Գելերից ներքև մարգասներն են, որոնցից հետո Ապատենե-Տրոպատենեն, որը տարածվում է մինչև ամարիակները»[4]: Մար-

---

[1] Ստրաբոն, Քաղեց և թարգմ. Հ. Աճառյան, Եր., 1940 (այսուհետև՝ Ստրաբոն), էջ 47:

[2] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 67: Յ. Մարկվարտը ուղղում է Աղբակ (տե՛ս Marquart J., Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901, S. 109): Ն. Ադոնցը ասսուրական աղբյուրների Սանգիբուտու-Սուբի-Սումբի անունները կապում է Սիմբակեի հետ (տե՛ս Ադոնց Ն., Հայաստանի պատմություն,-Երկեր, հ. Դ, Եր., 2009, էջ 133, ծնթ. 2), սակայն այս նույնացումներն անընդունելի են, քանի որ ասսուրական աղբյուրներում նշված երկրները ունեցել են տարբեր տեղադրություններ (տե՛ս Արտյունյան Հ., Топонимика Урарту, Ер., 1985, с. 165-166, 170, 172-173):

[3] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I-III, Lipsiae, 1843-1845, VI, 2, 2.

[4] Латышев В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе (այսուհետև՝ ИДПСК),-«Вестник древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1948, № 3, с. 255; Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, VI, 5, 5; Humbach H.,

գիանան պետք է սրբագրել Մարտիանա-Մատիանա: Հակառակ դեպքում, այն կնույնանա միջինասիական Մարգիանա երկրամասին, իսկ կասպերն էլ կհամապատասխանեն Մարգիանայից արևմուտք ընկած վրկաններին[1]: Սակայն, քանի որ Մարգիանան ընկած է Ասորեստանի հարևանությամբ, ապա այն հենց Մարտիանա-Մատիանան է: Մարաստանի պտղոմեոսյան նկարագրությունն անհամեմատ հին է, քան հեղինակի ապրած ժամանակաշրջանը, քանի որ մ. թ. II դարում Մարաստանն արդեն որպես ինքնուրույն պետություն գոյություն չուներ, իսկ եթե գոյություն էլ ունենար, ապա նրա կազմում չէր գտնվի Կասպքը, որը, բոլոր սկզբնաղբյուրների համաձայն, Արտաշես Ա-ից (մ. թ. ա. 189 – 160 թթ.) սկսած Մեծ Հայքի թագավորության մասն էր[2]: Մ. թ. II դարում Ուրմիո լճի ավազանը ոչ մի կերպ չէր կարող պատկանել Մեդիա-Մարաստանին, քանի որ հայ Արշակունիները տիրում էին Ատրպատականի ձեռական իշխանության երկրին[3], իսկ կարդուքները Մարաստանի մեջ կարող էին մտնել Անտոնիոսի՝ Արևելքում գտնվելու տարիներին, ուստի և Պտղոմեոսը օգտագործել է Մարաստանի մի հին նկարագրություն, որը նա փորձել է հարմարեցնել այլ երկրների նկարագրությանը և մուծել է աշխատության մեջ[4]: Հենց այս ժամանակ էլ Սիմբակե-Սիմբատենեն, որը համապատասխանում է Ջլմարի և Սրինգի միջև[5] ընկած Սմբատաբերդին, հռոմեացիների կողմից կարճ ժամանակով

Ziegler S., Ptolemy Geography, book 6, Text and English/German Translations, Wiesbaden, 1998, pp. 41-43.

[1]Կասպ–վրկանների մասին տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ,-«Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, թիվ 1, էջ 147-157:

[2] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ,-«ՀԱ», Վիեննա, 1999, թիվ 1-12, էջ 62:

[3] Տե՛ս Հարությունյան Բ., Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը,-«ՊԲՀ», 1988, թիվ 3; 4: Ըստ ուսումնասիրողի՝ հայ-պարսկական սահմանագիծը, սկսվելով Թավրիզի արևմտակողմում, գնում էր մինչև Սոհունդ լեռը և այնտեղից Գանձակ-ռոտ գետով հասնում մինչև Վարարատ-Ջաղաթու: Հատելով վերջինս սահմանը՝ այնուհետև անցնում էր, ամենայն հավանականությամբ, Մահաբադ քաղաքի հյուսիսակողմով և հասնում մինչև Կոտուր-Ջագրոշի լեռնաշղթա՝ ընդգրկելով նաև Փոքր Զաբի վերին հոսանքի շրջանը (տե՛ս Հարությունյան Բ., Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը,-«ՊԲՀ», 1988, թիվ 4, էջ 46):

[4] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 63:

[5] Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս) Երևան, 2004, էջ 65: Սմբատաբերդը հիշատակում է Թովմա Արծրունին (տե՛ս Թովմա Արծրունի և

միացվում է Ատրպատականին:

Պտղոմեոսի վերոհիշյալ տեղեկության մեջ աշխարհագրության տեսանկյունից բավականաչափ խառնաշփոթություն կա: Օրինակ, դրիբիկները, որոնք մյուս հեղինակների դերբիկներն են, Պտղոմեոսի մոտ հիշատակվում են գելերից հետո, այն դեպքում, երբ, համաձայն աղբյուրների մեծ մասի, դերբիկները գտնվել են Կասպից ծովի հարավարևելյան ափին, իսկ մարդերը (կամ ամարդները) և ամարիակները (= անարիակները), որոնք հիշատակված են դերբիկներից հետո, իրականում գտնվել են վերջիններիցս արևմուտք: Մարդերը զբաղեցրել են ներկայիս Սեֆիդ-ռուդ գետի (պատմական Ամարդոսի) միջին և ստորին հոսանքի շրջանները մինչև գետաբերան, իսկ անարիակները կոնկրետ ցեղի անվանում չէ և նշանակում է Կասպից ծովի հարավային ափերին բնակվող ցեղերին: Կասպերի տակ Պտղոմեոսը նկատի ունի Փայտակարան-Կասպիանեի բնակչությանը, որոնցից ներքև, այսինքն՝ դեպի հեղինակը (արևմուտք), գտնվել է Մարտիանան՝ Ասորեստանի ողջ կողքի երկայնքով: Ուրեմն, Պտղոմեոսի Մարտիանեն համապատասխանում է Հերոդոտոսի Մատիենե երկրին[1]՝ Ուրմիո լճից հարավ: Ինչ վերաբերում է մարունդներին, որոնք հասնում էին մինչև Մարտիանե լիճը, ապա սրանք, թերևս, Պտղոմեոսի այն մարդերն են[2], որոնք տեղադրվում են Վասպուրականի արևելյան մասում՝ Մարդպետականում[3]: Մարունդների հետ կապված է նաև Պտղոմեոսի Մորունդա բնակավայրը[4], որը գուցե Որմիո լճից հյուսիս գտնվող Մարանդն է: Հնարավոր է նաև, որ մարունդները հիշատակվում են Մովսես Խորենացու տեղեկության մեջ: Պատմիչը գրում է, որ Արիստոն Փեղղացին «հանդիպի Արտաշիսի ի Մարս, ի Սոհունդ անուանեալ տեղւոջ»[5]: Տեղեկությունից երևում է, որ խոսքը վերաբերում է ոչ թե Մա-

---

Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխատասիրությամբ Վ. Մ. Վարդանյանի, Եր., 1985, էջ 228):

[1] Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ,-«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXVI, Երևան, 2007, էջ 25-27:

[2] Claudii Ptolemaei Geographia, V, 12, 9.

[3] Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 2001, էջ 369:

[4] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 46-47.

[5] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի; լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Եր., 1990, էջ 190: Ստ. Մալխասյանցը տվյալ հատվածում նախընտրել է «(Արիստոնը) Արտաշեսին հան-

ռաստանին, այլ կոնկրետ տեղանվան, տվյալ դեպքում գավառի՝ «ի Մարս», որը գտնվել է Ուրմիո լճի և Սոհունդ լեռան միջև ընկած տարածքում, որը համապատասխանում է Պտղոմեոսի կողմից մարունդներին մինչև Մարտիանե-Ուրմիո լիճ ընկած շրջանում տեղադրելուն: Գելերից ներքև՝ հարավ, հիշատակված մարգասներն էլ մարդերն են, որոնցից հետո նշված Տրոպատենեն կարող է լինել Ատրպատականը, որը տարածվել է մինչև անարիակները: Մարգասների նույնացումը միջինասիական մարգիանացիների հետ անընդունելի է (այդ դեպքում Ապատենե-Տրոպատենեն էլ կնույնանար հին աղբյուրներում հիշատակվող Պարթևստանի Ապավորտենե-Ապավարկտիկենե երկրին[1]):

Մ. թ. ա. II դարի պատմիչ Պոլիբիոսը գրում է. «Մեդիայի դեպի հյուսիս նայող մասերը, որ շրջապատում են ելյումայները, անիարակները (իմա՛ անարիակներ–Խ. Հ.) ու նաև կադուսիները և մատիանները՝ գտնվում են Պոնտոսի այն մասերի վերևում, որոնք սահմանակից են Մայոտիսին (իմա՛ Ազովի ծովը–Խ. Հ.)»[2]: Իսկ Պլինիոս Ավագը նշում է. «...մարոտիաններ, աորսներ, գելեր, որոնց հույներն անվանում էին կադուսիներ, մատիաններ...»[3]: Բ. Հարությունյանը կարծում է, որ մարոտիանները մատիեններին կամ մարտիեններին ազգակից ցեղ է, որը զբաղեցրել է Պարաքոաթրես (Խորենացու Պատիժահար լեռը) լեռան մերձակայքը՝ դառնալով հույն հեղինակների հակասական ընկալումների պատճառ[4]: Մեր կարծիքով, մարոտիաններն ընդհանրապես ոչ մի կապ չունեն մատիենների հետ և, հնարավոր է, որ նույնիսկ նման ցեղ չի էլ եղել: Մարոտիանների մյուս տարընթերցումն է Nasotiani[5], որն այս դեպքում կհամեմատեինք հայտնի Նիսեական դաշտի հետ: Կամ էլ Հերոդոտոսի մոտ

դիպեց Մարսքում, Սոհունդ կոչված տեղում» թարգմանությունը (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Եր., 1997, էջ 173): Ճիշտ թարգմանությունն է Մարք:

[1] Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները»,-«ՊԲՀ», 1971, թիվ 4, էջ 174; Müller C., Geographi Graeci Minores, v. I, Parisiis, 1855, p. 252; Pliny, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, VI, XVIII, 46.

[2] ИДПСК,-«ВДИ», 1947, № 3, с. 301.

[3] Անդ,-«ВДИ», 1949, № 2, с. 304-305.

[4] Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 65:

[5] ИДПСК,-«ВДИ», 1949, № 2, с. 304, прим. 21.

լիգիացիներ, մատիեններ, մարիանդիներ, սիրիացիներ շարքը[1] կարող էր ծնել մարիանդիններ–մարոտիաններ նմանությունը: Սակայն սա քիչ հավանական է, քանի որ մարոտիանների առաջինը հիշատակվելը թույլ չի տալիս տարածքային առումով նույնիսկ նրանց փնտրել մատիեններ հարևանությամբ: Իսկ մարոտիանների տեղադրությունը Պարաքոաթրես լեռան մերձակայքում ոչ մի դեպքում հիմնավորված չէ: Ընդհանրապես մարոտիաններին (գուցե մարունդե՞ր) փնտրել Ատրպատականի սահմաններում կասկածելի է, քանի որ, օրինակ, նրանցից հետո հիշատակված աորսներին Ստրաբոնը տեղադրում է Ազովի և Կասպից ծովերի միջև[2]: Պարաքոաթրես լեռների (Գեղմանց լեռներ) շրջանում տեղադրելու դեպքում՝ մարոտիանները ավելի շատ կնույնացվեն մարդերի հետ:

Ատրպատականի կամ Փոքր Մարաստանի՝ Հայաստանի հետ հյուսիսային սահմանանիծը հստակեցնելու համար կարևոր են Պտղոմեոսի հետևյալ տեղեկությունները: Հույն աշխարհագրագետը, նկարագրելով Մարաստանի և Մեծ Հայքի սահմանը, նշում է, որ սահմանն անցնում էր Կասպիոն և Խոաթրաս լեռներով[3]: Ելնելով այս լեռների հիշատակությունից՝ կարող ենք եզրակացնել, որ Մարաստանը հյուսիս-արևմուտքում Մեծ Հայքի թագավորությունից բաժանված էր Հայկական լեռներ կոչվող լեռներով, հենց նույն Կասպիական լեռներով և Խոաթրաս-Գեղմանց լեռների ծայր հյուսիսային փոքր հատվածով: Մեծ Հայքի հարավարևելյան սահմանի նկարագրությունից պարզ երևում է, որ Կասպք-Փայտակարանը թագավորության անբաժանելի մասն էր, որը Մարաստանից բաժանված էր Կասպիոս լեռով[4], այսինքն՝ Կասպիական լեռներով: Անշուշտ, պետք է նկատի ունենալ, որ Պտղոմեոսի կոորդինատները կազմվել են զանազան ուղեցույցների տվյալների հիման վրա, և դրանք հիմնականում պայմանական են կամ ուղղակի սխալ, քանի որ աշխարհագրագետը փորձել է հարմարեցնել տարբեր դարաշրջանների նյութերը: Օրինակ, Մարաստանի նկարագրությունը գրեթե չի վերաբերում Պտղոմեոսի ապրած ժամանակաշրջանին և գալիս է Ատրպատականի մարական թագա-

---

[1] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Եր., 1986, VII, 72:

[2] Страбон, с. 480.

[3] Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, pp. 38-39. Մարաստանի նկարագրության մեջ Կասպքը միաժամանակ Պտղոմեոսը սխալմամբ համարում է մարական երկրամաս (անդ, էջ 40-41):

[4] Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, VI, 13, 3.

վորության գոյության ժամանակներից ու Պտղոմեոսի տեղեկություններն էլ ապացուցում են, որ Ատրպատականի ձեռական իշխանության երկիրը II դարում սոսկ ձևականորեն պետք է համարվեր Պարթևական թագավորության մաս, քանի որ վաղուց անկապտելի մասն էր կազմում Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության[1]:

Ատրպատականի հյուսիսային սահմանի պարզաբանման համար կարևոր տեղեկություններ է հաղորդում Պոլիբիոսը: Պատմիչը, խոսելով մ. թ. ա. III դարի վերջին քառորդի դեպքերի մասին, գրում է, որ Ատրպատականի առաջնորդ Արտաբազանեսի երկիրը ընկած էր Մարաստանի հարևանությամբ, որից բաժանված էր լեռնաշղթաներով: Շարունակելով նկարագրությունը՝ պատմիչը ավելացնում է, որ «այն (Ատրպատականը- Խ. Հ.) ձգվում է դեպի Պոնտոսի այն մասերը, որոնք գտնվում են Փասիս գետից վերև ու մոտենում է նաև շատ մոտ Հյուրկանից ծովին»[2]: Բերված տեղեկության մեջ հարցն այն է, որ որոշ ուսումնասիրողներ Փասիս գետը փորձել են նույնացնել ներկայիս Ռիոն գետի հետ, հետևաբար տեղեկությունն էլ կապել են աքեմենյան կամ էլ նույնիսկ մարական դարաշրջանների հետ[3]: Ատրպատականի սահմանը հյուսիսում երբեք էլ չի հասել մինչև Սև ծովի հարավարևելյան ափերը, քանի որ տվյալ հաղորդումը պետք է հասկանալ այն իմաստով, որ Ատրպատականի հյուսիսային մասերը ձգվել, տարածվել, երկարել են Պոնտոսի ուղղությամբ, այսինքն՝ Ատրպատականը հյուսիսում նայել է դեպի Սև ծով: Հաղորդումը վերագրել մարական տերության, առավել ևս աքեմենյան ժամանակներին միանգամայն անընդունելի է: Պոլիբիոսը հստակ ներկայացնում է մ. թ. ա. III դարի վերջին քառորդի դեպքերը, ըստ այդմ էլ սույն տեղեկության մեջ Փասիս գետը նույնանում է հայկական Երասխ-Արաքս գետին, իսկ հին աղբյուրներում Արաքսի նույնացումը և՛ Փասիս-Ռիոնի գետի, և՛ ուրիշ գետերի հետ բազմիցս է հանդիպում[4], հետևաբար Ատրպատականը հյուսիսում,

---

[1] Տե՛ս Հարությունյան Բ., Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը,-«ՊԲՀ», 1988, թիվ 4, էջ 46-47:

[2] The General History of Polybius, v. II, by Mr. J. Hampton, London, 1809, pp. 236-237; ИДПСК,-«ВДИ», 1947, № 3, с. 301(…[Область Артобазана] лежит рядом с Мидией, отделяясь от нее промежуточною горною цепью; некоторые части ее возвышаются над Понтом в местах выше Фасиса, а с другой стороны она доходит до Гирканского моря):

[3] Տե՛ս, օրինակ, Алиев И., Очерк истории Атропатены, Баку, 1989, с. 53, 69.

[4] Օրինակ, Քսենոփոնի մոտ Երասխը անվանված է Փասիս, ինչը կապված է հայկական Բասեան գավառի հետ, որի բնակչությանը հույն պատմիչը անվանում է

բացի Հայաստանից, սահմանակցել է Երասխի ստորին հոսանքից հյուսիս ընկած Աղվանքին, ինչը նշանակում է, որ Երասխից հյուսիս ընկած հետագա Աղվանքի տարածքը չի մտել Ատրպատականի մեջ: Ատրպատականի՝ Երասխ գետի աջափնյակին ընկած երկրներն էլ՝ Կասպիանե-Փայտակարանը, Փավնիտիս-Մարդպետականը, նաև Բասորոպեդա-Պարսկահայքը, ընդամենը երեք տասնամյակ անց միացվում են Մեծ Հայքի թագավորությանը[1]: Այս պարզաբանումների համատեքստում Պոլիբիոսի տեղեկությունները միանգամայն հասկանալի են և արժանահավատ:

Դամավանդից արևմուտք ընկած առափնյա հողերը, որոնք օղակում են Կասպից ծովը հարավ-արևմուտքից, պետք է կազմեին Մեդիա-Մարաստանի մասը[2]: Արիանոսը գրում է, որ Նիսայական դաշտում Ալեքսանդրը հանդիպում է Ատրոպատոսի հետ, որն իր հետ բերել էր «հարյուրի չափ կանանց. դրանք, ըստ նրա, եղել են ամազոնուհիներ»[3]: Ամազոնուհիների մասին հիշատակությունը կասկածելի է, և հարկ չկա դրանց տակ տվյալ տեղեկության մեջ ինչ-որ սկյութական ցեղ տեսնել և կապել Ատրպատականի տարածքի հետ[4], հատկապես, որ Ալեքսանդրը հրամայում է հաղորդել ամազոնուհիների թագուհուն, որ ինքը կգնա նրա մոտ, քանի որ ուզում է թագուհուց երեխաներ ունենալ[5]: Վերջին տեղեկությունը ցույց է տալիս, որ Ալեքսանդրը ամազոնուհիներին չի համարում Ատրոպատոսի ենթակայության տակ գտնվող ցեղ, այլ պարզապես հիշատակում է Ատրոպատոսի հետ՝ նկատի ունենալով Ալեքսանդրի տերության հյուսիսում Ատրոպատոսի սատրապության գտնվելը, այսինքն՝ անուղղակիորեն ամազոնուհիների բնակության շրջանը դնելով Մարաստանից էլ ավելի հյուսիս, ինչը կապվում է արդեն Կովկասի հետ: Նշենք, որ ամազոնուհի-

---

փասիաններ (տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 99, 129): Արաքսի նույնացումների մասին մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ,-«ՊԲՀ», 2008, թիվ 1, էջ 222-231:

[1] Տե՛ս Ստրաբոն, էջ 57:

[2] Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր,-«Վէմ», 2011, թիվ 2, էջ 51:

[3] Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը,-«Ալեքսանդր Մակեդոնացի», Եր., 1987, էջ 256:

[4] Алиев И., Очерк истории Атропатены, с. 57.

[5] Արիանոս, էջ 256:

ների մասին տեղեկությանը չի վստահում հենց Արիանոսը[1], իսկ Ռուփոսը ամազոնուհիների թագուհուն անվանում է Թալեստրիս, որն իշխում էր Կովկասի ու Փասիս գետի միջև ընկած տարածության ողջ բնակչության վրա[2]: Արիանոսի տեղեկությունը կարևոր է նրանով, որ Նիսայական դաշտը կարծես թե չի համարվում Ատրոպատոսի սատրապության մասը, չնայած Ատրոպատոսը Մարաստանի սատրապն էր[3]: Ամենայն հավանականությամբ Ալեքսանդրը նախկին մարական սատրապությունից առանձնացրել էր մի քանի նոր սատրապություններ: Օրինակ, Մարաստանում գտնվող պարետակների մարզը վերածվել էր առանձին սատրապության, իսկ էկբատանը, դատելով Արիանոսի տեղեկություններից, հանդիսանում էր մակեդոնացիների հենակետը և չէր մտնում գոնե ուղղակիորեն Մարաստանի սատրապության մեջ[4]: Ալեքսանդրի մահից հետո Մարաստանի սատրապությունը, այսինքն՝ Մեծ Մարաստանը՝ էկբատանա կենտրոնով,

---

[1] Ամազոնուհիների գոյությանը չի վստահում նաև Պլուտարքոսը, որը հայտնում է, թե սկյութերի թագավորը Ալեքսանդրին կնության է տվել դստերը (տե՛ս Плутарх, Александр,-Избранные жизнеописания, т. II, Москва, 1987, с. 407-408):

[2] Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը,-«Ալեքսանդր Մակեդոնացի», Եր., 1987, էջ 419: Պատմիչի կողմից Վրկանի հարևանությամբ ամազոնուհիների տեղադրությունը թույլ է տալիս Վրկանը նույնացնել Վիրքի հետ, իսկ Փասիս գետը նույնացվել է Իռիսին, Դոնին, Ռիոնիին և այլն (տե՛ս Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ, էջ 229-230): Թալլեստրիսին, որը թագավորում էր Փասիս և Թերմոդոնտ գետերի միջև ընկած երկրում, հիշատակում է նաև Դիոդորոս Սիկիլիացին: Ալեքսանդրը ամզոնուհիների թագուհուն հանդիպում է Հյուրկանիայում (տե՛ս Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Եր., 1985, էջ 108), այսինքն՝ ամազոնուհիների երկիրը Վրկանից հյուսիս էր, հետևաբար ամազոնուհիները սկյութներ էին: Մեր կարծիքով, Թալլեստրիսի մասին պատմությունը հորինվել է այն պատճառով, որ Ալեքսանդրը կանանց «նվաճում էր իր փառքով և խիզախությամբ», այն դեպքում, երբ Կյուրոսը սպանվեց մասսագետների թագուհի Տոմյուրիսի կողմից (տե՛ս Հերոդոտոս, I, 214):

[3] Ալեքսանդրը Մարաստանի սատրապ սկզբում նշանակում է պարսիկ Օքսիդատին, հետո՝ Ատրոպատոսին (տե՛ս Արիանոս, էջ 114, 153, 238, 244; Ռուփոս, էջ 409): Ի. Ալիևը կարծում է, որ Ատրոպատոսը մինչև Օքսիդատը Մարաստանի սատրապն էր և երկրորդ անգամ սատրապ նշանակվում է Օքսիդատին հեռացնելուց հետո (տե՛ս Алиев И., Очерк истории Атропатены, с. 54):

[4] Այս քաղաքականությունը պայմանավորված էր քաղաքական նկատառումներով, քանի որ Մարաստանը հանդիսանում էր պետականության և անկախության վերականգնման օջախ: Օրինակ, պատահական չէ, որ Ատրոպատոսը ճնշում է մարաստանցի ոմն Բարիաքսի ապստամբությունը, որն իրեն հռչակել էր պարսիկների և մարերի թագավոր (տե՛ս Արիանոս, էջ 238):

տրվում է Պիթոնեսին, իսկ Ատրոպատեսին՝ Փոքր Մարաստանը[1]:

Այսպիսով, սկզբնաղբյուրների վերոբերյալ տեղեկությունները ցույց են տալիս, որ մ. թ. ա. Ի-մ. թ. Ի դարերում Ատրպատականի տարածական ընդգրկումները պայմանավորված են եղել քաղաքական դրդապատճառներով, և Ատրպատականի թագավորության սահմանը հյուսիսում երբեք չի անցել Երասխ-Արաքս գետը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Ն., Հայաստանի պատմություն,-Երկեր, հ. Դ, Եր., 2009:
2. Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը,-«Ալեքսանդր Մակեդոնացի», Եր., 1987:
3. Դանիելյան Է., Իսիդոր Քարակացու «Պարթևական կայանները»,-«Պատմաբանասիրական հանդես», 1971, թիվ 4:
4. Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Եր., 1985:
5. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963:
6. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխատասիրությամբ Վ. Մ. Վարդանյանի, Եր., 1985:
7. Խորիկյան Հ., Քուստի Խորուարանի Նոտարտա և Շիրական երկրների տեղադրության շուրջ,-«Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2011, թիվ 1-12:
8. Խորիկյան Հ., Ապոլոդորոսի մի տեղեկության շուրջ,-«Պատմաբանասիրական հանդես», 2008, թիվ 1:
9. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ,-«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXVI, Երևան, 2007:
10. Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ,-«Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, թիվ 1:
11. Հարությունյան Բ., Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր,-«Վէմ», 2011, թիվ 2:
12. Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս) Երևան, 2004:

[1] Արիանոս, էջ 113, 122, 257, 596; Դիոդորոս Սիկիլիացի, էջ 110-111:

13. Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 2001:
14. Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ,-«Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1999, թիվ 1-12:
15. Հարությունյան Բ., Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջը,-«Պատմաբանասիրական հանդես», 1988, թիվ 3; 4:
16. Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Եր., 1986:
17. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Եր., 1997:
18. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի; լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Եր., 1990:
19. Պետրոսյան Ս. Գ., Հին Մարաստանի տարածքի երրորդ էքնիկական տարրի մասին,-«Պատմաբանասիրական հանդես», 1979, թիվ 4:
20. Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը,-«Ալեքսանդր Մակեդոնացի», Եր., 1987:
21. Ստրաբոն, Քաղեց և թարգմ. Հ. Աճառյան, Եր., 1940:
22. Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970:
23. Алиев И., Очерк истории Атропатены, Баку, 1989.
24. Арутюнян Н., Топонимика Урарту, Ер., 1985.
25. Латышев В., Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе,-«Вестник древней истории», 1947, № 3; 1948, № 3; 1949, № 2.
26. Плутарх, Избранные жизнеописания, т. II, Москва, 1987.
27. Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964.
28. Claudii Ptolemaei Geographia, edidit C. F. A. Noebbe, t. I-III, Lipsiae, 1843-1845.
29. Humbach H., Ziegler S., Ptolemy Geography, book 6, Text and English/German Translations, Wiesbaden, 1998.
30. Marquart J., Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901.
31. Müller C., Fragmenta historicorum graecorum, v. IV, Parisiis, 1868.
32. Müller C., Geographi Graeci Minores, v. I, Parisiis, 1855.
33. Pliny, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library.
34. The General History of Polybius, v. II, by Mr. J. Hampton, London, 1809.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИЧЕСКОЙ ГЕОГРАФИИ АТРОПАТЕНЫ

Оганнес Хорикян
кандидат исторических наук

РЕЗЮМЕ

В статье исследуются множество сложных и важных вопросов, касающихся исторической географии Атропатены, прояснение которых важно и для изучения истории Армении и Мидии (Марастан). Особое значение имеет обращение к проблемам, формировавшимся в I в. до н. э.-I в. н. э., в период, богатый политическими событиями, достаточно хорошо освещенными античными авторами.

Данные первоисточников показывают, что в этот период территориальное распространение Атропатены обусловлено политическими поводами, а граница царства на севере никогда не переходила за линию реки Ерасх-Аракс. При этом после Арташеса I область (гавар) Мардпетакан (современный Карадаг) находилась в составе Великой Армении.

SOME ISSUES ON HISTORICAL GEOGRAPHY OF ATROPATENE

Hovhannes Khorikyan
Candidate of Historical Sciences

SUMMARY

History of Atropatene has always been a target for researchers, especially when taking into account close historical relationships between Greater Armenia and Atropatene. In the relations special phase is considered to be from I B. C. to I A. D. centuries, that are relatively well elucidated by ancient authors. Data sources illustrate that during I B. C. to I A. D. centuries the enlargement of Atropatene's territory was conditioned by political reasons and the boundary of kingdom of Atropatene had never crossed over the River Yeraskh-Araxes in the north. Note that after Artashes I the Mardpetakan (modern Karadagh) district was part of Greater Armenia. Many important and wrinkled issues on the historical geography of Atropatene were examined in the article, the elucidation of which has an important meaning for studying the history of Armenia and Media.

МЕСТО И РОЛЬ АРМЕНИИ ВО ВЗАИМООТНОШЕНИЯХ РИМСКОЙ ИМПЕРИИ И САСАНИДСКОГО ИРАНА В IV В.

Владимир Дмитриев
кандидат исторических наук, доцент

Территория Армянского нагорья с глубокой древности являлась регионом, привлекавшим к себе внимание со стороны могущественных соседей. Уже во второй половине II тыс. до н.э. правители Ассирийской державы (Салманасар I (1274 – 1244), Тукульти-Нинурта I (1244 – 1207), Тиглатпаласар I (1115 – 1076) и др.) совершали неоднократные походы на территорию Армянского нагорья, где в ту эпоху начиналось формирование государства Урарту[1]. Затем, на протяжении более чем тысячелетия, названия «Урарту» и (с VI в. до н.э.) «Армения» регулярно появляются в источниках при описании бесконечных войн и походов, которыми в указанный период (как, впрочем, и позже) изобиловала история Ближнего Востока.

Резкое усиление геополитической роли Армении произошло в I в. до н.э., когда вплотную к ее границам приблизились владения двух ведущих держав Средиземноморско-переднеазиатского региона того времени – Рима и Парфии. В ходе продолжавшихся на протяжении трех последующих столетий римско-парфянских войн обе стороны систематически предпринимали попытки установить над Арменией свой контроль, и армянские правители были вынуждены проявлять чудеса дипломатии, чтобы обезопасить свою страну и свой народ от чужеземной опасности, грозившей как с запада, так и с востока.

Притягательность Армении для обеих империй обусловливалась целым комплексом факторов. Прежде всего, сюда следует отнести чрезвычайно выгодное географическое положение страны, которая в этом смысле являлась связующим мостом между Ираном – с одной стороны, и Передней Азией, где находились римские владения, – с другой. С этим была связана значимость и военно-стратегического положения Армении, т.к. через ее территорию проходили важные и удобные для перемещения больших масс людей коммуникации,

[1] Пиотровский Б.Б. Ванское царство. М.: Восточная литература, 1959. С. 43 – 45.

используя которые обе стороны могли совершать военные вторжения на территорию противника. Так, именно через Армению вторглись на территорию парфянской Месопотамии римские войска императора Траяна (98 – 117) во время его победоносной войны с Парфией (114 – 117)[1]. В то же время печальный опыт Марка Лициния Красса, не прислушавшегося к мудрым советам армянского царя Артавазда II (56 – 34) и двинувшего в 53 г. до н.э. римскую армию против Парфии из Сирии не в обход – через Армянское нагорье, а напрямую – через Сирийскую пустыню[2], показывает, насколько нецелесообразной и даже опасной была переброска войск с использованием других маршрутов.

Кроме того, значимость Армении в отношениях Рима и Парфии была продиктована и чисто военным фактором, заключавшимся в стремлении как римлян, так и парфян использовать в своих интересах армянские войска и особенно армянскую конницу, считавшуюся одной из лучших кавалерий своего времени[3].

Наконец, нельзя забывать и о том, что на территории Армении с древнейших времен располагались богатые города и процветающие сельские поселения. Еще в составленной ассирийским царем Тиглатпаласаром I на рубеже XII – XI вв. до н.э. надписи о его успешных вторжениях в Урарту сообщается о захваченных в качестве добычи огромных стадах домашнего скота[4]. Данные ассирийской эпиграфики согласуются с более поздними сведениями античных авторов; так, в V в. до н.э. Геродот писал, что армяне «также богаты скотом»[5], а Ксенофонт (V – IV вв. до н.э.) в своем «Анабасисе» называет Армению «страной обширной и богатой»[6]. Таким образом, еще одним мотивом борьбы парфян и римлян за контроль над

---

[1] Dio Cass. LXVIII. 17. 1 – 20. 4. Аврелий Виктор, сообщая о событиях более поздних (конца III в.), прямо говорит о том, что через Армению лежал «единственный и более легкий путь к победе» над персами (Aur. Vict. *De Caes.* XXXIX. 34).

[2] Plut. *Crass.* 19 – 22.

[3] Всемирная история. В 10 тт. Т. 2 / Гл. ред. С.Л. Утченко, Д.П. Каллистова, А.И. Павловской, В.В. Струве. М.: Политиздат, 1956. С. 767.

[4] Дьяконов И.М. Ассиро-вавилонские источники по истории Урарту // Вестник древней истории. 1951. № 2. С. 273.

[5] Herod. V. 49.

[6] Xen. *Anab.* V. 5. 25 – 34.

Армением являлось их стремление к овладению природными и экономическими богатствами этой страны.

С приходом к власти в Иране в начале III в.[1] новой – персидской – династии Сасанидов, с первых же лет своего существования развившей активную экспансию в западном направлении, международное положение Армении, и до того весьма непростое, стало еще более сложным. Отмеченные выше факторы, обусловившие интерес к Армении со стороны Рима и Парфии, в сасанидскую эпоху не только сохранялись, но и усугублялись тем обстоятельством, что в самом начале IV в. (ок. 301 г.) Армения приняла христианство в качестве государственной религии, и антиармянская направленность внешней политики исповедовавшего зороастризм сасанидского Ирана, государственно-религиозная система которого всегда отличалась крайней нетерпимостью к представителям иных конфессий[2], стала еще более заметной. С победой же христианства и в Римской империи (313 г.) Армянское царство вообще стало восприниматься персидскими «царями царей» как союзник Рима, что не могло не повлечь за собой очередной эскалации напряженности вокруг Армении.

Кроме того, заметную роль в изменении геополитического положения Армении одновременно с приходом на смену Парфянскому царству Сасанидской державы сыграл и династический фактор. Дело в том, что на армянском престоле, начиная с I в., находились члены одной из ветвей рода Аршакидов – того же, представители которого правили и в Парфии. В связи с этим взаимоотношения Парфянского и Армянского царств были если не исключительно добрососедскими, то, по крайней мере, не однозначно антагонистическими. Утвердившаяся же в Иране в начале III в. персидская династия Сасанидов крайне враждебно относилась к своим предшественникам, и эта враждебность отчасти была перенесена и на родственников свергнутых

[1] Здесь и далее все даты – н.э.

[2] Эта черта еще более усилилась на рубеже III – IV вв., в период деятельности верховного жреца (мобедан мобеда) сасанидского Ирана Картира (см.: The Cambridge History of Iran. Vol. 3 (2). The Seleucid, Parthian and Sasanian Periods / Ed. by E. Yarshater. Cambridge: Cambridge University Press, 1983. P. 878 – 885; Фрай Р. Наследие Ирана. М.: Восточная литература, 2002. С. 299 – 303).

персами парфянских царей – армянских Аршакидов (Аршакуни)[1].

Представляется, что именно с этими причинами – крайне экспансионистским характером внешней политики сасанидского Ирана и армяно-персидскими противоречиями в конфессиональной и династической сферах – была связана специфика положения Армении в системе римско-иранских отношений в IV в. по сравнению с предшествующим периодом. Однако к этим объективным обстоятельствам в рассматриваемый период примешивался и важный субъективный фактор. IV столетие было ознаменовано правлением в Персидском царстве шаханшаха Шапура II (309 – 379), при котором наблюдалась явная активизация борьбы Ирана против Римской империи за гегемонию в Передней Азии, и «армянский фактор», безусловно, не мог не играть в этой борьбе одну из важнейших ролей. Кроме того, IV в. – это последний период существования независимого Древнеармянского государства, которое, придя в упадок из-за нескончаемых войн, терзавших его территорию, в 387 г. подверглось разделу между Римской империей и сасанидским Ираном, о чем с нескрываемой горечью писал армянский историк Фавст Бузанд: «И после того армянское царство разделилось, распалось, уменьшилось и потеряло свое прежнее величие»[2].

В истории взаимоотношений Рима и Персии в IV в. весьма четко прослеживается два этапа. Первый из них охватывает период с 338 по 363 гг., второй – с 363 по 387 гг. Начало нового витка римско-персидского противостояния в 338 г. было обусловлено тем, что именно в это время заканчивался срок действия 40-летнего Нисибисского мирного договора, заключенного между Римской империей и сасанидским Ираном в 298 г. И хотя, судя по всему, еще до истечения Нисибисского мира между Римом и Ираном случались вооруженные инциденты, поскольку обе стороны готовились к продолжению борьбы, характера полномасштабного военно-политического противостояния эти события вплоть до 338 г. не приобретали.

Однако с завершением срока действия Нисибисского договора

---

[1] См.: Тревер К.В. Очерки по истории и культуре Кавказской Албании. М. – Л.: АН СССР, 1959. С. 173.

[2] Фавст Бузанд. История Армении. VI. 1.

римско-персидские войны тут же возобновились и практически непрерывно продолжались до 363 г., когда в результате крайне неудачного для Римской империи Персидского похода Юлиана Отступника (361 – 363) между Римом и Ираном был заключен новый, также Нисибисский, договор, согласно которому империя уступала Сасанидам ряд важных территорий в Верхней Месопотамии, а также фактически отказывалась от поддержки своего главного союзника в Передней Азии – Армянского царства.

После этого в истории римско-персидских отношений наступил новый этап, в течение которого обе державы основное внимание уделили борьбе за Армению, и все основные военно-политические события были связаны с ней и происходили на ее территории. Завершением противоборства Римской империи и сасанидского Ирана в IV в. стал произошедший, как было отмечено выше, в 387 г. раздел Армении между Римом и Персией, который знаменовал собой фактическую ликвидацию армянской государственности и начало нового периода во взаимоотношениях двух держав.

Не углубляясь в детали происходивших в геополитическом треугольнике «Римская империя – Армения – сасанидский Иран» военно-политических событий 330-х – 380-х гг., которые достаточно подробно изложены в целом ряде специальных исследований и обобщающих трудов[1], рассмотрим *основные события и тенденции*, характеризующие место и роль Армянского государства во взаимоотношениях Римской империи и сасанидского Ирана на протяжении указанных этапов.

Как было отмечено выше, еще в период действия Нисибисского договора 298 г. обе стороны вели подготовку к предстоящему столкновению, и при этом одна из ключевых ролей отводилась

[1] Установление феодального общественного строя и падение Древнеармянского государства // История армянского народа. URL: http://armenia.h1.ru/history/05.htm (дата обращения: 09.07.2012); Всемирная история. Т. 2. С. 754 – 769; Пигулевская Н.В. и др. История Ирана с древнейших времен до конца XVIII века. Л.: Изд-во Ленинградского университета, 1958. С. 43 – 45; История Древнего мира. Кн. 3. Упадок древних обществ / Под ред. И.М. Дьяконова и др. М.: Наука, 1982. С. 201 – 220; Дмитриев В.А. «Всадники в сверкающей броне»: Военное дело сасанидского Ирана и история римско-персидских войн. СПб.: Петербургское Востоковедение, 2008. С. 188 – 209.

Армении. Так, из сообщения Моисея Хоренского становится известно, что еще до окончательной победы Константина Великого над его соправителем и конкурентом Лицинием (т.е. до 324 г.) имели место боевые действия между римлянами и персами, причем совместно с римским действовало армянское войско во главе с царем Трдатом III Великим (287 – 330)[1]. Примерно тогда же между Константином Великим и Трдатом III был подписан договор о военном союзе и помощи Армении со стороны Римской империи[2]. В 337 г., за год до истечения срока действия Нисибисского мира, в Армению вторглись персидские войска, поддержанные рядом знатных армянских родов, недовольных усилением центральной власти при царях Трдате Великом и Хосрове III (330 – 338); и хотя при помощи римлян персы были вытеснены с армянской территории, эти события положили начало длительному периоду политической нестабильности в Армении, сопровождавшейся, с одной стороны, борьбой царской власти с непокорными нахарарами, а с другой – постоянным вмешательством в армянские дела Сасанидов, пытавшихся установить над Арменией свой контроль и сделать ее плацдармом для вторжений в переднеазиатские провинции Рима[3].

Начальный период римско-персидской войны 338 – 363 гг. пришелся на годы правления в Армении царя Тирана (338 – 350). По сообщениям древнеармянских историков, Тирану удавалось прово-

---

[1] Моисей Хоренский. История Армении. II. 87; см. также: Моисей Каланкатуйский. История Албании. I. XII.

[2] Агафангел. Обращение Армении. 877. Заключение такого договора уже само по себе ясно указывает на опасность для Армении, исходившую от сасанидского Ирана.

[3] Всемирная история. Т. 2. С. 767. Интересный пассаж об этих событиях содержится в одной из речей императора Юлиана Отступника. Он сообщает о том, что в 337 г. (дата устанавливается довольно точно, поскольку, говоря об армянских делах, Юлиан отмечает, что одновременно с этим происходил съезд сыновей Константина Великого в Паннонии, датируемый летом – осенью 337 г. (см.: The Roman Eastern Frontier and the Persian Wars (AD 226 – 363). A Documentary History / Comp. and ed. by Michael H. Dodgeon and Samuel N.C. Lieu. L. – N.Y.: Routledge, 1994. P. 327. N. 3) и посвященный решению вопроса о разделе Римской империи) в Армении произошло восстание знати, «немалая часть которой переметнулась к персам» (Iul. Or. I. 18D – 19A). Судя по словам Юлиана, вскоре с помощью римских войск восстание было подавлено, и император Констанций II проявил великодушие, позволив виновникам событий (армянским аристократам) беспрепятственно вернуться на родину (Iul. Or. I. 20D – 21A).

дить взвешенную внешнеполитическую линию и сохранять дружественные отношения как с Римской империей, так и с сасанидским Ираном[1]. Этот факт заслуживает особого внимания еще и потому, что в конце 330-х – начале 350-х гг. на территории Верхней Месопотамии между Римом и Персией шли весьма активные боевые действия (из наиболее заметных событий следует выделить три осады Нисибиса (338, 346 и 350 гг.), а также сражения под Сингарой 344 и 348 гг.), и привлечение на свою сторону Армянского царства было бы крайне полезным для каждой из великих держав, чего, однако, благодаря дипломатическому искусству Тирана не произошло.

В то же время, как показали дальнейшие события, Сасанидов не устраивал слишком независимый правитель Армении: по указанию Шапура II персидским наместником Атурпатакана Варазом против Тирана была организована политическая интрига, в результате которой армянский царь обманным путем был захвачен в плен, подвергнут жестокой пытке[2] и смещен с армянского престола[3].

Вступление на армянский престол сына и преемника Тирана – Аршака II (350 – 368) – происходило в неблагоприятной для Рима обстановке. Правитель восточной части империи Констанций II (337 – 361) в это время был занят борьбой с узурпатором Магненцием[4],

---

[1] Фавст Бузанд. История Армении. III. 20; Моисей Хоренский. История Армении. III. 11 – 12; Моисей Каланкатуйский. История Албании. I. XIII.

[2] Как отмечают армянские авторы, по приказу персидского царя Тиран был ослеплен (см.: Фавст Бузанд. История Армении. III. 20; Моисей Хоренский. История Армении. III. 17; Моисей Каланкатуйский. История Албании. I. XIII).

[3] Возможно, смещение Тирана с престола не обошлось без вмешательства армянской духовной и светской знати, недовольной сильной центральной властью; так, Фавст Бузанд указывает на то, что «Бог, разгневавшись, покарал нечестивого Тирана в отместку за невинную смерть и кровь двух великих священников и пастырей [католикоса Иусика и епископа Даниила. – В.Д.]» (Фавст Бузанд. История Армении. III. 20); из других его сообщений следует, что Тиран проводил жесткую (и даже жестокую) политику в отношении неугодных ему нахараров; Моисей Хоренский, повествуя о роковой для Тирана поездке к персидскому царю, отмечает, что «преступление влекло его [Тирана. – В.Д.] к месту расплаты» (Моисей Хоренский. История Армении. III. 17), а Моисей Каланкатуйский пишет, что «злой Тиран» был ослеплен Шапуром «из-за нрава своего» (Моисей Каланкатуйский. История Албании. I. XIII). Представляется, что в сочинениях процитированных авторов отразилось отношение к Тирану со стороны определенной части армянских нахараров.

[4] Подробнее см.: Enßlin. Magnentius // Pauly's Real-Encyclopädie der classischen Altertumswissenschaft. Neue Bearbeitung, begonnen von G. Wissowa. Stuttgart: Alfred

поднявшим в январе 350 г. восстание в Галлии и провозгласившим себя императором. В связи с этим активно влиять на ситуацию вокруг Армении Констанций не мог, чем, судя по всему, и воспользовались персы: новый армянский правитель был возведен на трон по инициативе Шапура II, и, как следует из сочинений древнеармянских авторов, на протяжении первой части своего царствования Аршак II был верным союзником Сасанидов. Наши главные в данном случае источники – Фавст Бузанд и Моисей Хоренский – единодушно указывают на то, что в этот период Армения не только придерживалась проперсидской внешнеполитической линии, но и активно выступала на стороне сасанидского Ирана во время боевых действий между римлянами и персами[1]. Отголоски древнеармянской исторической традиции мы находим и у ранневизантийского историка Прокопия Кесарийского: согласно его версии, однажды Аршак оказал помощь Шапуру II в борьбе с северокавказскими кочевыми племенами[2].

Однако впоследствии внешнеполитическая ориентация Аршака полярно изменилась: с определенного момента он начинает фигурировать в источниках как верный союзник Римской империи. Учитывая специфику древнеармянских исторических произведений (прежде всего, их в значительной степени эпический характер и связанную с этим искаженную хронологию описываемых событий), трудно сколько-нибудь определенно датировать время перехода Аршака на сторону Рима, однако очевидно, что с 353 г., которым начинается повествование в сохранившихся книгах «Деяний» Аммиана Марцеллина[3], Армянское царство однозначно выступает союзником Римской империи и противником сасанидского Ирана.

Druckenmüller Verlag, 1928. Sp. 445 – 452; Fl. Magnus Magnentius // Jones A.H.M., Martindale J.R., Morris J. The Prosopography of the Late Roman Empire. Vol. 1. AD 395 – 527. Cambridge: Cambridge University Press, 1980. P. 532.

[1] Фавст Бузанд. История Армении. IV. 20; Моисей Хоренский. История Армении. III. 19.

[2] Прокопий Кесарийский. Война с персами. I. 5. 12.

[3] Ammiani Marcellini Rerum gestarum libri qui supersunt / Rec. F. Eyssenhardt. Berolini: F. Vahlen, 1871. Рус. пер.: Аммиан Марцеллин. История / Пер. с лат. Ю. А. Кулаковского и А. И. Сонни. Вып. 1 – 3. Киев, 1906 – 1908. Показательно, что в своем произведении Аммиан Марцеллин ни разу (!) не говорит о том, чтобы Армения при Аршаке II в какой бы то ни было форме занимала враждебную в отношении Рима позицию.

Насколько активно Аршак поддерживал Рим в борьбе с Персидским царством, можно судить хотя бы по тому, что приблизительно половина четвертой книги «Истории Армении» Фавста Бузанда, в которой повествуется о правлении Аршака, посвящена описанию сражений между персидской и армянской армиями[1]. В эти годы Шапур II не расставался с мыслью вернуть Армению под свой контроль: римский историк Аммиан Марцеллин неоднократно сообщает о попытках персов силой или подкупом добиться этой цели[2].

Кульминацией и одновременно развязкой первого этапа истории римско-персидского противостояния в IV в. стал Персидский поход императора Юлиана Отступника 363 г. Об исключительной важности роли Армении в персидской кампании 363 г. и, шире, во внешнеполитических планах Юлиана, говорит тот факт, что Аршак был единственным из союзных Риму правителей, который с подконтрольными ему вооруженными силами был задействован в организации римского вторжения в Персию. Согласно Аммиану Марцеллину, Аршак, по договоренности с Юлианом, должен был подготовить «большую армию и ожидать приказаний, куда ему направиться»[3]. В перспективе планировалось соединить силы Аршака с 30-тысячным римским резервом под командованием Прокопия и Себастиана[4], а затем объединенная римско-армянская группировка должна была «пройти через Кордуэну и Моксоэну, опустошить в быстром походе Хилиоком, плодородную местность Мидии, и другие области» и соединиться с основными силами римлян[5]. Этим планам не суждено было сбыться, и Юлиан так и не смог дождаться подкрепления, на которое рассчитывал. В конечном счете, это стало одной из причин провала всего похода и, как следствие, вынужденного заключения преемником

[1] Фавст Бузанд. История Армении. IV. 21 – 43, 45 – 50.

[2] Amm. Marc. XV. 13. 4; XVII. 5. 6, 14. 11; XX. 6. 7, 11. 2.

[3] Amm. Marc. XXIII. 2. 1.

[4] Другие источники сообщают о меньшей численности корпуса Прокопия и Себастиана: Малала говорит о 16 тыс. (Mal. XIII. P. 329), Зосим – о 18 тыс. (Zos. III. 12), Либаний и Созомен – о 20 тыс. (Liban. Or. XVIII. 214; Soz. VI. 1. 2) воинов.

[5] Amm. Marc. XXIII. 3. 5. Подробнее о роли корпуса под командованием Прокопия и Себастиана в Персидском походе Юлиана см.: Ибатуллин Р.У. Из истории персидской кампании Юлиана (рейд Себастиана и Прокопия) // ANTIQVITAS AETERNA. Поволжский антиковедческий журнал. 2007. Вып. 2: Война, армия и военное дело в античном мире. С. 182 – 185.

погибшего Юлиана императором Иовианом (363 – 364) Нисибисского мирного договора 363 г., перекроившего в пользу Ирана политическую карту Передней Азии и подведшего промежуточный итог римско-персидскому соперничеству в первой половине – середине IV в. При этом одно из условий договора имело самое прямое отношение к Армянскому царству: по словам Аммиана Марцеллина, Рим брал на себя обязательство «не оказывать помощи против персов нашему всегдашнему верному другу Арсаку, если он будет о ней просить»[1]. Таким образом, в результате неудачно завершившейся Персидской экспедиции императора Юлиана Армения лишилась возможности получать какую-либо серьезную поддержку со стороны Римской империи и, фактически, была брошена римлянами на произвол судьбы перед лицом могущественного восточного соседа.

Результат не замедлил себя долго ждать. Уже через год после подписания Нисибисского договора персы начинают вмешиваться в дела Армении, прилагая все усилия к тому, чтобы подорвать здесь римское влияние. Достаточным основанием для своих действий Шапур считал смерть в 364 г. Иовиана – императора, с которым был заключен договор о мире; это, по мысли царя, освобождало его от необходимости соблюдения условий мирного соглашения. Персидские войска совершали нападения на приграничные районы Армении, захватывая в плен не только рядовых местных жителей, но также представителей гражданской и военной администрации[2]. Судя по всему, и эти действия не принесли персам желаемого результата, что побудило Шапура пойти на крайние меры: в 368 г. он пригласил к себе под благовидным предлогом царя Армении Аршака, арестовал его и заключил в «Башню забвения» в Хузистане[3].

Стремясь развить свой успех, весной 368 г. персы осадили и взяли крепость Артогерассу (Артагерс), где после пленения Аршака находилась его жена – царица Парандзем – и вся царская казна. В результате всех этих событий Артогерасса после длительной осады

---

[1] Amm. Marc. XXV. 7. 12.

[2] Amm. Marc. XXVI. 4. 6; XXVII. 12. 1 – 2.

[3] Прокопий Кесарийский. Война с персами. I. 5. 29; Amm. Marc. XXVII. 12. 3; Фавст Бузанд. История Армении. IV. 54; Моисей Хоренский. История Армении. III. 35.

была взята войсками Шапура II[1].

После захвата Артогерассы Армения подверглась страшному разорению. Римляне, опасаясь полной утраты своего контроля над Арменией и вопреки условиям Нисибисского мирного договора 363 г., направили туда крупный отряд во главе с комитом Аринфеем. Между Римом и Персией назревал первый после событий 363 г. кризис, готовый перерасти в новую войну; однако Шапур, по всей видимости, не желал вступать в открытое столкновение с империей, рассчитывая, как это уже не раз бывало, достичь своих целей дипломатическим путем. Царь направил к римскому императору Валенту (364 – 378) послов с требованием соблюдать условия договора 363 г., т. е. отказаться от планов по оказанию помощи Армении. Однако римское войско уже находилось на территории Иберии, и, с одобрения Валента, это пограничное с Арменией государство было поделено между царями Савромаком и Аспакуром, придерживавшимися, соответственно, проримской и проперсидской внешнеполитической линии[2]. Персы расценили это как основание для обвинений Рима в нарушении мира, запрещавшего оказывать Армении какую-либо помощь; персидские послы были отозваны, и Шапур стал готовиться к войне, старясь, как обычно, заручиться при этом поддержкой ряда соседних народов[3].

Боевые действия развернулись весной 371 г. в местности под названием Вагабанта (Багаван). Шапур направил против римской армии объединенное войско, состоявшее из персов и их союзников (в первую очередь, албанцев во главе с царем Урнайром). Оба войска действовали нерешительно; персы попытались с помощью конницы рассеять римлян, но те выстояли, и других попыток разгромить римскую армию персы не предпринимали. Войска простояли друг против друга до самой осени, ограничиваясь мелкими стычками; в результате Шапур вернулся в Ктесифон, а римляне ушли в Антиохию[4].

---

[1] Фавст Бузанд. История Армении. IV. 55; Моисей Хоренский. История Армении. III. 35; Amm. Marc. XXVII. 12. 5 – 12.

[2] В разделе Иберии на римскую и персидскую сферы влияния во главе с вассальными царями из местной правящей династии можно видеть прообраз будущей судьбы Армении, постигшей ее в 387 г.

[3] Amm. Marc. XXVII. 12. 18.

[4] Amm. Marc. XXIX. 1. 3 – 4. Армянские источники, однако, дают несколько иную картину этих событий. В их трактовке победа в сражении однозначно досталась объединенному римско-армянскому войску, а их противники потерпели сокруши-

В ближайшее время открытых враждебных акций, носивших вооруженный характер, ни римляне, ни персы в отношении друг друга не осуществляли, однако вскоре произошли события, оказавшие в перспективе прямое влияние на политику Шапура II в отношении Рима: сын погибшего в персидском плену армянского царя Аршака Папа (ок. 369 – ок. 374) вступил в контакт с Шапуром, и тот попытался вовлечь Папу в союз, направленный против Рима. В итоге с целью недопущения возможного армяно-персидского альянса римскими властями было организовано убийство Папы[1].

Опасаясь ослабления своих позиций, вскоре после гибели Папы Шапур инициировал переговоры, в которых требовал у Валента отказа от претензий на Армению либо передачи под персидское покровительство всей Иберии, к тому времени, как было отмечено выше, уже поделенной между Римом и Персией. Римское посольство, направленное к Шапуру II, доставило ответ императора, заключавшийся в отказе выполнить условия Шапура и встречном требовании вывести персидские войска из Иберии. В то же время римские послы дали принципиальное согласие на предложение Шапура разделить Армению между Римской империей и Персией – причем сделали это, по всей видимости, самовольно, без санкции императора[2]. Когда же посол Шапура прибыл к Валенту для окончательного решения вопроса о разделе Армении, то получил отказ и уведомление о начале подготовки римлян к войне, что вызвало недовольство царя и привело к новому обострению отношений Рима и Ирана. Таким образом, окончательное решение «армянского вопроса» было на некоторое время отсрочено, однако первый серьезный шаг в указанном направлении был сделан.

В 378 г. ввиду крайней опасности из-за восстания переселившихся на территорию империи вестготов император Валент был вынужден

тельное поражение (см.: Фавст Бузанд. История Армении. V. 4; Моисей Хоренский. История Армении. III. 37; Моисей Каланкатуйский. История Албании. I. XIII).

[1] Amm. Marc. XXX. 1. 1 – 21. Даже Аммиан Марцеллин, которого никак нельзя обвинить в необъективности или, тем более, в антиримских настроениях, называет убийство Папы «нечестивым поступком» (*figmentum nefarium*) и «небывалым и постыдным злодеянием» (*inusitatum facinus et pudendum*) (Amm. Marc. XXX. 1. 22 – 23).

[2] Как пишет Аммиан Марцеллин, римское посольство «погрешило тем, что согласилось на принятие предложенных ему небольших округов в той самой Армении, не имея на то официального разрешения» (Amm. Marc. XXX. 2. 5).

все же дать согласие на заключение с Шапуром II соглашения о разделе Армении[1]. Так был сделан второй шаг в роковом для Армении направлении, и расчленение ее территории Римом и Ираном теперь было лишь делом времени.

После смерти Шапура II в Иране вновь наступает время политической нестабильности. С 379 по 399 гг. здесь сменилось три шаха: брат Шапура II Арташир II (379 – 383), сын Шапура II Шапур III (383 – 388) и сын Шапура III Бахрам IV (388 – 399). В эти же годы обострилась борьба между царской властью и светской и духовной знатью Ирана, стремившейся к максимально возможной автономии и получившей (после долгого и самовластного правления Шапура II) возможность вновь открыто заявить о своих претензиях на самостоятельность и независимость от царской администрации и самого царя[2]. Очевидно, что в этих условиях у Персии не было возможности активно влиять на международную ситуацию, в том числе – и на западном направлении.

Римская империя тоже переживала не лучшие времена: после разгрома армии Валента под Адрианополем на территорию империи хлынули полчища варваров, и главной задачей нового императора – Феодосия I (379 – 395) – стала оборона собственно римских владений от вторжений германских и других племен на рейнско-дунайской границе; об осуществлении внешней экспансии в этой ситуации не могло быть и речи.

Таким образом, обе стороны были заинтересованы в решении хотя бы части своих внешнеполитических проблем для сохранения влияния на международной арене. В связи с этим неслучайно, что именно на 380-е гг. приходится официальное оформление договоренности о разделе Армении, достигнутой еще в 378 г. Соглашение было заключено, по всей видимости, в 387 г.[3] По этому договору Армянское

---

[1] Amm. Marc. XXXI. 7. 1.

[2] The Cambridge History of Iran. Vol. 3 (1). The Seleucid, Parthian and Sasanian periods / Ed. by E. Yarshater. Cambridge: Cambridge University Press, 1983. P. 140 – 143.

[3] Эта дата разделяется большинством исследователей, однако существуют и другие датировки раздела Армении между Римской империей и сасанидским Ираном, диапазон которых охватывает период с 384 по 390 гг. (см.: Крымский А.Е. История Сасанидов и завоевание Ирана арабами. С указанием главных моментов литературной истории христиан-сириян и политической истории вассальных Ирану арабов и с приложением отдела о Парфянском царстве и аршакидах. М., 1905. С. 47; Еремян С.Т.

царство делилось на две сферы влияния – римскую и персидскую[1], причем окраинные области Армении (около половины ее площади) были прямо включены в состав двух великих держав; центральная часть Армении (так называемая «Срединная страна») была передана под управление представителей династии армянских Аршакидов, однако с самого начала все шло к тому, чтобы ликвидировать последние, пусть даже и чисто формальные, признаки суверенитета Армянского государства. В результате уже в 390 (или 391) г. в римской части Армении царская власть была упразднена, и земли армянских Аршакидов были поделены между императором, местной знатью (нахарарами) и армянской церковью. В восточной части Армении, находившейся под контролем персов, институт царской власти просуществовал до 428 (или 429) г., когда последний армянский Аршакид – Арташес (тронное имя – Арташир)[2] – был отстранен от власти, а его владения перешли к Сасанидам и армянским нахарарам. С этого времени управление Персидской Арменией осуществлялось сасанидской администрацией во главе с царским наместником – марзпаном[3].

После раздела между Римом и Ираном территориальная целостность исторической Армении так и не была восстановлена; как известно, и на сегодняшний день значительные некогда армянские территории принадлежат целому ряду государств и лежат за пределами Республики Армении.

Таким образом, на протяжении IV в., как и в течение ряда предшествующих столетий, Армянское государство играло одну из основ-

---

Введение. Характеристика эпохи // Культура раннефеодальной Армении (IV – VII вв.). Ереван: АН АрмССР, 1980. С. 7 – 22; Даниелян Э.Л. Год раздела Армении. 387 или 385? // Историко-филологический журнал АН Армянской ССР. 1980. № 1. С. 203 – 214; Nöldeke Th. Aufsätze zur persischen Geschichte. Leipzig: Weigel, 1887. S. 103; Baynes N.H. Rome and Armenia in the fourth century // English Historical Review. 1910. № 25. P. 625 – 643; Chaumont M.L. Armenia and Iran. II. The pre-Islamic period // Encyclopaedia Iranica. Vol. 2. L. – N.Y: Center for Iranian Studies, 1987. P. 428).

[1] При этом под контролем Сасанидов оказалось более 80 % территории Армении. Хороший обзор административно-территориального аспекта раздела Армении содержится в недавнем монографическом исследовании А.К. Шагиняна (см.: Шагинян А.К. Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти. СПб.: Алетейя, 2011. С. 44 – 46).

[2] Моисей Хоренский. История Армении. III. 58.

[3] Всемирная история. Т. 2. С. 769.

ных ролей во взаимоотношениях держав, боровшихся за преобладание в Передней Азии, которыми на тот момент являлись Римская империя и сасанидский Ирана. Однако если до конца IV в. армянским царям удавалось сохранить независимость Армении, то к этому времени дальнейшее существование суверенного Армянского царства стало невозможным в силу как внешних (прежде всего, стремления Рима и Персии к устранению независимого Армянского государства, усложнявшего систему международных отношений на Ближнем Востоке и, образно выражаясь, «мешавшего» великим державам проводить нужную им политику), так и внутренних (главным образом, желания усилившихся армянских нахараров покончить с сильной центральной властью с целью расширения своих прав и привилегий) причин. При этом своеобразный исторический парадокс заключается в том, что, несмотря на ликвидацию армянской государственности, Армения продолжала оставаться одним из ключевых участников международных отношений в Переднеазиатском регионе на протяжении всей дальнейшей истории, а армянский народ, в течение многих веков вынужденный бороться с этническим, культурным, религиозным гнетом со стороны могущественных соседей, сумел сохранить свою национальную идентичность, великую и самобытную культуру.

ЛИТЕРАТУРА

1. Агатангелос. История Армении / Пер. с древнеарм. К.С. Тер-Давтян и С.С. Аревшатяна. Ереван: Наири, 2004. 336 с.
2. Всемирная история. В 10 т. Т. 2 / Гл. ред. С.Л. Утченко, Д.П. Каллистова, А.И. Павловской, В.В. Струве. М.: Политиздат, 1956. 899 с.
3. Даниелян Э.Л. Год раздела Армении. 387 или 385? // Историко-филологический журнал АН Армянской ССР. 1980. № 1. С. 203 – 214.
4. Дмитриев В.А. «Всадники в сверкающей броне»: Военное дело сасанидского Ирана и история римско-персидских войн. СПб.: Петербургское Востоковедение, 2008. 368 с.
5. Дьяконов И.М. Ассиро-вавилонские источники по истории Урарту. Раздел I. Предыстория Урарту: период племенных союзов (XIV – IX вв.) // Вестник древней истории. 1951. № 2. С. 257 – 294.
6. Еремян С.Т., Введение. Характеристика эпохи // Культура раннефеодальной Армении (IV – VII вв.). Ереван: АН АрмССР, 1980. С. 5- 14.
7. Ибатуллин Р.У. Из истории персидской кампании Юлиана (рейд Себастиана и Прокопия) // ANTIQVITAS AETERNA. Поволжский антиковедческий журнал. 2007. Вып. 2. Война, армия и военное дело в

античном мире. С. 182 – 185.
8. История Древнего мира. Кн. 3. Упадок древних обществ / Под ред. И.М. Дьяконова и др. М.: Наука, 1982. 303 с.Крымский А.Е. История Сасанидов и завоевание Ирана арабами. С указанием главных моментов литературной истории христиан-сириян и политической истории вассальных Ирану арабов и с приложением отдела о Парфянском царстве и аршакидах. М., 1905. 416 с.
9. Мовсес Каланкатуаци. История страны Алуанк / Пер. с древнеарм. Ш.В. Смбатяна. Ереван: Матенадаран, 1984. 383 с.
10. Моисей Хоренский. История Армении / Пер. с древнеарм. Н.О. Эмина. М.: Гацтук, 1893. 323 с.
11. Пигулевская Н.В. и др. История Ирана с древнейших времен до конца XVIII века. Л.: Изд-во Ленинградского университета, 1958. 390 с.
12. Пиотровский Б.Б. Ванское царство. М.: Восточная литература, 1959. С. 43 – 45.
13. Тревер К.В. Очерки по истории и культуре Кавказской Албании. М.–Л.: АН СССР, 1959. 391 с.
14. Установление феодального общественного строя и падение Древнеармянского государства // История армянского народа. URL: http://armenia.h1.ru/history/05.htm (дата обращения: 09.07.2012)
15. Фавст Бузанд. История Армении Фавстоса Бузанда / Пер. с древнеарм. М.А. Геворгяна. Ереван: АН АрмССР, 1953. 239 с.
16. Фрай Р. Наследие Ирана. М.: Восточная литература, 2002. 463 с.
17. Шагинян А.К. Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти. СПб.: Алетейя, 2011. 512 с.
18. Ammiani Marcellini Rerum gestarum libri qui supersunt / Rec. F. Eyssenhardt. Berolini: F. Vahlen, 1871. 599 p. – Аммиан Марцеллин. История / Пер. с лат. Ю.А. Кулаковского и А.И. Сонни. М.: Ладомир, 2005. 631 с.
19. Baynes N.H. Rome and Armenia in the fourth century // English Historical Review. 1910. № 25. P. 625 – 643.
20. The Cambridge History of Iran. Vol. 3 (1). The Seleucid, Parthian and Sasanian periods / Ed. by E. Yarshater. Cambridge: Cambridge University Press, 1983. 624 p.
21. The Cambridge History of Iran. Vol. 3 (2). The Seleucid, Parthian and Sasanian Periods / Ed. by E. Yarshater. Cambridge: Cambridge University Press, 1983. P. 625 – 1488.
22. Chaumont M.L. Armenia and Iran. II. The pre-Islamic period // Encyclopaedia Iranica. Vol. 2. L.–N.Y: Center for Iranian Studies, 1987. P. 418 – 438.
23. Corpus Scriptorum Historiae Byzantinae. Pars 2. Procopius. Vol. 1 / Rec. G. Dindorfius. Bonnae: Weber, 1833. 534 p. – Прокопий Кесарийский. Война с персами. Война с вандалами. Тайная история / Пер. с древнегр. А.А. Чекаловой. М: Наука, 1993. 573 с.
24. Dionis Cassii Cocceiani Historia Romana. Vol. 4 / Cum annotationibus L. Dindorfii. Lipsiae: Teubner, 1864. 362 p.
25. Enßlin. Magnentius // Pauly's Real-Encyclopädie der classischen Altertumswissenschaft. Neue Bearbeitung, begonnen von G. Wissowa. Stuttgart: Alfred Druckenmüller Verlag, 1928. Sp. 445 – 452.

26. Fl. Magnus Magnentius // Jones A.H.M., Martindale J.R., Morris J. The Prosopography of the Late Roman Empire. Vol. 1. AD 395 – 527. Cambridge: Cambridge University Press, 1980. P. 532.
27. Herodoti Historiarum libri IX. Vol. 2 / Cur. H.R. Dietsch. Lipsiae: Teubner, 1870. 371 p. – Геродот. История / Пер. с древнегр. Г.А. Стратановского. Л.: Наука, 1972. 600 с.
28. Ioannis Malalae Chronographia / Rec. L. Dindorfius. Bonnae: Weber, 1831. 799 p.
29. Libanii opera. Vol. 2 / Rec. K. Foerster. Lipsiae: Teubner, 1904. 572 p.
30. Nöldeke Th. Aufsätze zur persischen Geschichte. Leipzig: Weigel, 1887. 158 S.
31. Plutarchi Vitae parallelae. Vol. 3 / Rec. C. Sintenis. Lipsiae: Teubner, 1869. 432 p. – Плутарх. Сравнительные жизнеописания. В 2 т. Т. 1. М.: Наука, 1994. 672 с.
32. The Roman Eastern Frontier and the Persian Wars (AD 226 – 363). A Documentary History / Comp. and ed. by Michael H. Dodgeon and Samuel N.C. Lieu. L.–N.Y.: Routledge, 1994. 376 p.
33. Sexti Aurelii Victoris Liber de Caesaribus. Praecedunt Origo gentis Romanae et Liber de viris illustribus urbis Romae. Subsequentur Epitoma de Caesaribus / Rec. F. Pichlmayr. Lipsiae: Teubner, 1961. 219 p. – Аврелий Виктор Секст. История Рима / Пер. с лат. В.С. Соколова // Вестник древней истории. 1963. № 4. С. 214 – 257; 1964. № 1. С. 227 – 252; № 2. С. 197 – 240.
34. Sozomeni Ecclesiastica historia. T. 2 / Ed. R. Hussey. Oxonii: E typographeo academico, 1860. 1002 p. – Церковная история Эрмия Созомена Саламинского. СПб.: Тип. Фишера, 1851. 636 с.
35. The Works of the Emperor Julian. Vol. 1 / Ed. by T.E. Page, M.A. and W.H.D. Rouse. Cambridge: R. Clay & Sons, 1913. P. 4 – 127.Xenophontis Expeditio Ciri / Rec. G. Gemoll. Lipsiae: Teubner, 1890. 305 p. – Ксенофонт. Анабасис / Пер. с древнегр. М.И. Максимовой. М.: АН СССР, 1951. 299 с.
36. Zosimi comiti et exadvocati Historia Nova / Ed. L. Mendelssohn. Lipsiae: Teubner, 1887. 306 p.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆԻ IV ԴԱՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վլադիմիր Դմիտրիև
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայկական լեռնաշխարհի տարածքը հնագույն ժամանակներից ի վեր եղել է Մերձավոր Արևելքի ռազմավարական կարևոր շրջանը: Այդ պատճառով էլ հին Մերձավոր Արևելքի բոլոր խոշոր տերությունները (Ասորեստան, Պարթևական տերություն, Հռոմեական կայսրություն, Սասանյան Իրան) ձգտել են Հայաստանի նկատմամբ հաստատել իրենց վերահսկողությունը: Հայաստանի և Հռոմեական

կայսրության քրիստոնեացումից հետո (IV դ. սկզբներ) քրիստոնեա Հռոմի և զրադաշտական Իրանի հակամարտությունը առանձնապես սուր բնույթ ընդունեց:

IV դ. Առաջավոր Ասիայում գերիշխանության և Հայաստանի նկատմամբ վերահսկողության համար մղվող պարսկա-հռոմեական հակամարտության պատմության մեջ կարելի է առանձնացնել երկու փուլ. 1. 338-363 թ.թ., 2. 363-387 թ.թ.: Սրանց միջև սահմանաբաժանը է համարվում Հուլիանոս Ուրացողի անհաջող պարսկական արշավանքն ու Մծբինի /Տիգբոնի/ խաղաղության պայմանագիրը, որի արդյունքում Հռոմն ու Իրանը իրենց ուշադրությունը կենտրոնացրին Հայաստանի նկատմամբ իրենց տիրապետության հաստատման վրա: Երկու տերությունների IV դ. պայքարի արդյունքը եղավ 387 թ. Հայկական թագավորության բաժանումը: Միևնույն ժամանակ, հայկական պետականության վերացումը պայմանավորված էր նաև ներքին գործոններով, հատկապես՝ կենտրոնական իշխանության վերացման և քաղաքական անկախության հասնելու հայկական ազնվականության (նախարարների) ձգտումով:

THE ROLE OF ARMENIA IN THE RELATIONS OF ROMAN EMPIRE AND SASANIAN IRAN IN THE IV CENTURY

Vladimir Dmitriev
Candidate of Historical Sciences, Associate Professor

SUMMARY

The territory of Armenian highlands since ancient times was the strategically important region of Near East. For this reason all great powers of Western Asia (Assyria, Parthian kingdom, Roman State, Sasanian Iran) sought to establish control over Armenia. After the Christianization of Armenia and the Roman Empire in the beginning of IV A.D. the confrontation of Christian Rome and Zoroastrian Iran became particularly acute.

The history of Roman-Persian struggle for hegemony and control over Western Asia and Armenia in IV A.D. can be divided into two stages: 1) 338 – 363 A.D.; 2) 363 – 387 A.D. The border between these periods was unsuccessful Persian expedition of Julian the Apostate and conclusion of Nisibis peace treaty (363 A.D.). In consequence of last one Rome and Iran focused their attention on the establishing their domination over Armenia. As a result of Roman-Persian rivalry in IV A.D. Armenian kingdom was partitioned by Roman Empire and Sasanian Iran in 387 A.D. At the same time the elimination of Armenian statehood was determined by inner reasons, namely by Armenian nobility's (nakharars) desire of political sovereignty and of abolition of central (i.e. king's) power.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԹԵ ՄԱՍՈՆԱԿԱՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ֆելիքս Մովսիսյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

1789-1799թթ. ֆրանսիական հեղափոխությունը համաշխարհային պատմության ամենաուշագրավ իրադարձություններից մեկն է, որի նկատմամբ հետաքրքրությունը չի թուլացել առայսօր: Հեղափոխության վերաբերյալ լույս են տեսել հարյուրավոր ուսումնասիրություններ, որոնք դարակազմիկ այդ իրադարձությունը շարադրում, մեկնաբանում և գնահատում են տարբեր տեսանկյուններից: Ֆրանսիական հեղափոխությունը համաշխարհային բոլոր իրադարձություններից առանձնանում է ոչ միայն իր բնույթով, տևողությամբ, մասշտաբով, մարդկային վիթխարի կորուստներով, պատմական խաղացած դերով, այլև նրանով, որ ամենից շատ է առնչվում մասոնության հետ:

Այս կապակցությամբ ֆրանսիացի պատմաբան Լ. դե Պոնսեն «Հեղափոխության գաղտնի ուժերը» ուսումնասիրությունում գրում է. «1789թ. հեղափոխությունը ոչ հին կարգերի բռնության դեմ ինքնաբուխ շարժում էր և ոչ էլ ազատության, հավասարության և եղբայրության նոր գաղափարների նկատմամբ ազնիվ պոռտկում, ինչպես մեզ ցանկանում են ստիպել հավատալ դրան: Մասոնությունը հանդիսանում էր գաղտնի ոգեշնչողն ու հայտնի չափով շարժման ղեկավարը: Նա մշակել էր 1789թ. սկզբունքները, տարածել դրանք զանգվածների շրջանում և ակտիվորեն նպաստել դրանց իրականացմանը»:[1]

Ֆրանսիական հեղափոխության բռնկման «դասական» գնահատականը ժխտում էր անգլիական քաղաքական խոշոր գործիչ, Անգլիայի վարչապետ Բենջամին Դիզրայելին, ով մասոն էր և քաջատեղյակ մասոնական գաղտնագործությանը: Նա գրում էր. «Չկա ավելի անմիտ սխալ, քան այն պատկերացումը, թե իբր հեղափոխությունները բռնկվում են տնտեսական պատճառներով»[2]:

Մասոնական օրդենի դերը հեղափոխության նախապատրաստման և

[1] Цит. по: Иванов В. Ф., От Петра I до наших дней. Русская интеллигенция и масонство. Харбин, 1934. www.bibliotekar.ru/masony/16.htm
[2] www.aphorizm.ru/author/a .shtml

զարգացման գործում պատմագրությունում մինչև վերջ բացահայտված չէ: Այդ մասին բանավեճերը շարունակվում են նաև մեր օրերում: Հեղափոխությունը դիտարկվում է մասոնական օթյակների դավադրության հետևանք, որոնք ձգտում էին հասնել միապետության կործանմանը և կաթոլիկության հիմքերի խարխլմանը: Առաջին անգամ այս վարկածը առաջ քաշվեց դեռևս հեղափոխական իրադարձություններից յոթ տարի առաջ, երբ աբբա Ժ.Ֆ. Լեֆրանկը գիրք հրատարակեց «գաղտնի հեղափոխության» նախապատրաստման և կաթոլիկության դեմ ֆրանկմասոնության դավադրության մասին:[1]

1788թ. հրապարակախոս և մասոն Նիկոլա Բոնվիլը հանդես եկավ «Մասոնության շարքերից վտարված ճիզվիթները և մասոնների կողմից կոտրված նրանց դաշույնը» երկհատորյակով:[2] Հեղինակը փորձում էր մասոնությանը հեռու պահել հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների քննադատությունից: Նա պնդում էր, որ շոտլանդական արարողակարգի մասոնությունը չի հանդիսանում XIVդ. ոչնչացված տամպլիերների օրդենի ժառանգորդը, այլ գաղտնի կապեր ունի ճիզվիտների հետ, որոնք մասոնական օրդեն են թափանցել XVIIդ. անգլիական հեղափոխության տարիներին:[3] Ն. Բոնվիլը ձգտում էր մասոնական օթյակները մաքրել ալքիմիայով, մոգությամբ և առեղծվածաբանությամբ հրապուրված անդամներից և մասոնությունը ուղղորդել դեպի լուսավորյալ իրատեսականության ճանապարհը:[4]

Ֆրանսիական հեղափոխության նախօրյակին մասոնական օթյակները փորձում էին ժխտել իրենց ներկայցվող բոլոր մեղադրանքները՝ կապված նախապատրաստվող դավադրության, անհավատության և անվայել վարքագծի հետ:

Աբբա Ժ.Ֆ. Լեֆրանկը, զարգացնելով իր գրքում առաջ քաշած գաղափարը, հեղափոխության օրերին՝ 1791թ., հրատարակեց «Հետաքրքրասերների համար բարձրացած վարագույրը, կամ հեղափոխության գաղտ-

---

[1] Տես՝ Lefranc J.F. Le Secret des révolutions révélé a l'aide de la franc-maçonnerie et la conjuration contre la religion catholique. Paris, 1782.

[2] Տես՝ Bonneville N., Les jésuites chassés de la maçonnerie et leur poignard brisé par les maçons. pt.1-2. Paris, 1788.

[3] Bonneville N., Op. cit., pt. 2, pp. 1, 17-20.

[4] Chevallier P. Historie de la franc- maçonnerie. Vol. 1, p. 319.

նիքը՝ բացված ֆրանկմասոնության օգնությամբ»[1] աշխատանքը: Նա պնդում էր, որ Ֆրանսիայում տեղի ունեցած իրադարձությունները մասոնական օթյակների նենգ խարդավանքների և տևական ժամանակ նախապատրաստված նպատակային գործողության հետևանք է: Նա գրում էր. «Ֆրանսիական պատմության տարեգրությունները սերունդներին հասցրել են տեղեկություններ անօրինակ ջանքերի մասին, որոնք ամենուրեք ձեռնարկում են մասոնները, որպեսզի Ֆրանսիայի բնակիչներին դրդեն միանալ իրենց, որպեսզի վերացնեն հին կարգերը հիշեցնող ամեն ինչ և փոխարինեն այնպիսի կարգերով, որն ընդունված է իրենց ընկերությունում և որը, ինչպես պնդում են նրանք, նպատակ է հետապնդում մարդկանց վերադարձնել նախնական ազատությունը և հավասարությունը, որոնց համար էլ ծնվում է մարդը»:[2]

Ֆրանսիական հեղափոխությունը որպես մասոնական դավադրություն ներկայացնելիս Ժ. Ֆ. Լեֆրանկը չի հիշատակում կոնկրետ փաստեր: Նա սահմանափակվում է միմյանց հետ համեմատելով մասոնական փիլիսոփայության և արարողակարգային որոշ սկզբունքները սահմանադիր ժողովի գործունեության առանձին դրվագների հետ և հավաստում է դրանց նմանությունը: Նրա կարծիքով Սահմանադիր ժողովը վերացրեց ազնվականական տիտղոսներն ու արտոնությունները կրկնելով մասոնական օթյակներում հաստատված կարգը, որտեղ արգելված էր կրել սոցիալական ծագումը ցույց տվող ցանկացած տարբերանշան:[3]

Ժողովի աշխատակարգը, ըստ Ժ. Ֆ. Լեֆրանկի, չափազանց նման էր մասոնական օթյակներում ընդունված «ձայն խնդրելու, հրաժարական պահանջելու, ամբիոնից հանդես գալու, բողոք հայտնելու, կարգապահությանը աջակցելու կարգին»: Ահա թե ինչու ազնվականությունն ու երրորդ դասը ներկայացնող պատգամավորները, որոնց թվում շատերը մասոն էին, հեշտությամբ համակերպվեցին ժողովի աշխատակարգին: Մինչդեռ հոգևորականությունը, որը համեմատաբար քիչ էր ներկայացված մասոնական օթյակներում, միայն ժամանակի ընթացքում կարողացան հարմարվել սահմանված աշխատակարգին:[4]

Պնդելով, թե մասոնական օթյակները լուրջ դերակատարում ունեին

[1] Տես՝ Lefranc J.F. abbe. La voile levée pour les curieux ou le Secret de la Révolution revélé de la Franc- Maçonnerie. [Sans Lieu], 1791.
[2] Lefranc J.F. Op. cit., p. 57.
[3] Ibid., p. 63-64.
[4] Ibid., p. 62-63,66.

Սահմանադիր ժողովում, Ժ. Ֆ. Լեֆրանկը դավադրության ղեկավարների ու կազմակերպիչների թվում նշում էր դուքս Լուի Ֆիլիպ Օռլեանցուն (1747-1793) և նշանավոր մաթեմատիկոս, փիլիսոփա, մարքիզ Ժան Անտուան Կոնդորսեին (1743-1794), որին համարում էր «մասոնական կոդեքսի» հեղինակ և արմատական ուղղության քաղաքական ակումբների գաղտնի ղեկավար:[1] Մեկ տարի անց հրատարակած նոր, առավել ընդարձակ աշխատանքում[2], դարձյալ պնդելով այն միտքը, թե հեղափոխությունը ղեկավարում են մասոնները, նրանց առաջնորդների թվում նշում էր նաև հայտնի աստղագետ Ժոզեֆ Ժերոմ Լալանդին (1732-1807): Նա գրում է. «Եթե այսօր մասոնական օթյակները հանդիսանում են հակակրոնական բոլոր գաղափարների բուծարան, որոնցով վարակված է ամբողջ Ֆրանսիան, ապա դրանում հարկավոր է մեղադրել միայն նշված փիլիսոփաներին, քանի որ նրանք են մշակել օթյակներում գոյություն ունեցող կարգ ու կանոնը և շարունակում են ղեկավարել նրանց գործունեությունը»:[3]

Ժ. Լեֆրանկն իրավացի էր. Լուի Ֆիլիպ Օռլեանցին սկսած 1771թ. ղեկավարում էր Ֆրանսիայի Մեծ Օթյակը, իսկ 1773թ.՝ Ֆրանսիայի Մեծ Արևելք Օթյակը: Ժերոմ Լալանդը 1763թ. ղեկավարում էր իր ստեղծած «Ինը մուսաներ» օթյակը, որի անդամներից էին Ժ. Կոնդորսեն, Մ. Վոլտերը, Բ. Ֆրանկլինը և անվանի շատ այլ գիտնականներ ու գործիչներ:[4] Նա մասոնական քարոզիչներ էր անվանում Սահմանադիր ժողովի պատգամավորներ, գրականագետ և հրապարակախոս Նիկոլա Բոնվիլին (1760-1828) և աբբա Կլոդ Ֆոշեին (1744-1793), որոնց ներկայացնում է որպես «եղբայրության գլխավոր հռետորներ, որոնք լիազորված էին հրապարակավ քարոզել այն հայեցակետը, որը մինչ այդ մասոնները կատարում էին գաղտնի»:[5]

Ն. Բոնվիլը և Կ. Ֆոշեն հրապարակում էին «Բուշ դե Ֆեր» («Երկաթե շուրթեր») թերթը և մասոնական օթյակի անդամ էին դարձել մինչ հեղա-

---

[1] Ibid, p. 42, 90.

[2] Տես՝ Lefranc J.F., abbe. Conjuration contre la religion catholique et les souverains, dont le projet conçu en France doit s'execuler dans I'Univers entier. Paris, 1792.

[3] Lefranc J.F., Op. cit., p. 116.

[4] Большая энциклопедия. Масоны. М., 2007. Васютинский А. Французское масонство в XVIII веке. В сб: Масонство в его прошлом и настоящем. Под ред. С. П. Мельгунова и Н. П. Сидорова.Том I, М., 1914, стр. 63, 74; Ридли Дж. Фримасоны. Люди, творящие мировую историю. М., 2007, стр. 114, 138-139; Карпачев С. П. Масоны. Словарь. М., 2008, стр. 432.

[5] Lefranc J.F., Op. cit., p. 64.

փոխությունը, իսկ 1790թ. ստեղծել էին մասոնական Սոցիալական ակումբը:[1] Ն. Բոնվիլը հեղինակ էր մի շարք ստեղծագործությունների, որոնցում փորձում էր մասոնական փիլիսոփայությունը կապել հակակղերական հեղափոխական գաղափարախոսության հետ: Օրենսդիր ժողովի աչքի ընկնող պատգամավորների թվում Ժ. Ֆ. Լեֆրանկը առանձնացնում էր մասոններ Անդրի Ինարին (1758-1825), Քլոդ Բազիրին (1764-1794), Ժան Պիեր Բրիսսոյին (1754-1793), Անրի Գրեգուարին (1750-1831) և Մաքսիմիլիան Ռոբեսպիերին (1758-1793):[2]

Ժ. Ֆ. Լեֆրանկը թեպետ իր աշխատություններում չկարողացավ հիմնավոր և անառարկելի փաստերով հաստատել ֆրանսիական հեղափոխության դավադրական բնույթը, այնուամենայնիվ պիտի արժանին մատուցել այս հեղինակին ամենից առաջ այն բանի համար, որ նա առաջինը առաջ քաշեց հեղափոխությունում մասոնների մասնակցության հարցը և բացահայտեց քաղաքական ակտիվ գործիչների շրջանում երևելի մասոններին: Եթե նա կարողանար շարունակել իր ուսումնասիրությունը, հավանաբար, առավել հիմնարար կդարձներ իր վարկածը, բայց ձեռբակալվեց հեղափոխական կառավարության կողմից և 1792թ. սեպտեմբերի 2-ին զոհ գնաց Փարիզի Կոնսյերժերի բանտում իրականացված կոտորածին:[3]

Նրա անունն այսօր հայտնի է միայն մասոնագետներին և պատմաբաններին, մինչդեռ մասոնական դավադրության բացահայտողի համաշխարհային փառքը հանգամանքների բերումով բաժին հասավ ֆրանսիացի մեկ այլ հոգևորականի՝ աբբա Օգյուստեն Բարրյուելին: Նա Գլխավոր շտատների պատգամավոր էր հոգևորականությունից և նախկին մասոն: Երբ սկսվեց հեղափոխությունը, նա վտարվեց Անգլիա, որտեղ 1797-1798թթ. հրատարակեց «Հուշներ ի նպաստ յակոբինիզմի պատմության» քառահատոր աշխատությունը: Նա պնդում էր, որ ֆրանսիական հեղափոխության պատճառը «եռակի դավադրությունն էր», որը նպատակ էր հետապնդում ոչնչացնել եկեղեցական զոհասեղանը, թագավորական գահը և քաղաքացիական հասարակությունը:[4]

Դավադիրների առաջին խմբին Օ. Բարրյուելը դասում էր

---

[1] Տես՝ Dictionnaire de la Franc-Maconnerie. Sous dir. de D. Liqou. Paris. 1991, P. 153, 452.

[2] Lefranc J.F. abbe. Conjuration contre la religion catholique et les souverains dont le projet conçu en France doit s'execuler dans I'Univers entier. Paris, 1792. p. 65.

[3] Dictionnaire de la Franc-Maconnerie. p. 550.

[4] Տես՝ Barruel A. Mémoires pour servir a՝ l'histoire du jacobinisme. Vol. 1-5, Londres, 1797-1798. Vol.1. p. XV.

քրիստոնեության հակառակորդներին, որպիսիք համարում էր բոլոր փիլիսոփա-լուսավորիչներին: Երկրորդ խումբը նա համարում էր մասոններին, իսկ երրորդ խումբը՝ «անարխիայի սոֆիստներին» կամ բավարական իլլյումինատներին: Օ. Բարրյուելի համոզմամբ՝ ֆրանսիական հեղափոխության ժամանակ այս երեք «դավադիր» խմբերը համախմբվեցին և հանդես եկան «յակոբինականներ» անվան տակ: Իր միտքը հիմնավորելու համար նա օգտագործում էր Ժ. Ֆ. Լեֆրանկի առաջ քաշած փաստարկները: Նա ընդգծում էր, որ լուսավորիչների, մասոնների և իլլյումինատների գաղափարները նման են հեղափոխական օրենսդրության սկզբունքներին: Օ. Բարրյուելը ուշադրություն էր հրավիրում Ազգային ժողովի 1789թ. օգոստոսի 29-ի «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» վրա: Նրանում հռչակվում էր, որ Մարդիկ ծնվում և մնում են ազատ և հավասար իրենց իրավունքներում, օրենքը պիտի հավասար լինի բոլորի համար, մարդիկ իրավունք ունեն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակից դառնալ կառավարմանը, ոչ ոք չի կարող հալածվել իր համոզմունքների համար և այլն:

Օ. Բարրյուելն իրավացիորեն պնդում էր, որ հռչակագրի ընդունումից կես դար առաջ այս նույն մտքերը իրենց աշխատություններում առաջ էին քաշում լուսավորիչներ Շ. Մոնթեսքյոն, Ժ. դ'Արժանսոն, Ժ.Ժ. Ռուսոն և Ֆ. Վոլտերը: Լուսավորիչների նման բոլոր սոֆիստները իրենց լիցեյներում, ֆրանկմասոնության բոլոր ադեպտները իրենց օթյակներում, բոլոր իլլյումինատները իրենց որջերում հպարտության և խռովության այդ սկզբունքները դարձրին իրենց գաղտնի գործունեության և մտահղացումների հիմքը: Այսպիսով, եզրակացնում էր Օ. Բարրյուելը, այդ բոլոր կործանարար գաղափարները նրանց դպրոցներից, բացահայտ և գաղտնի ընկերություններից տեղափոխվում էին հեղափոխական օրենքների ժողովածուների առաջին էջերը:[1]

Հենվելով բավական հարուստ աղբյուրների վրա՝ Օ. Բարրյուելը բացահայտեց հեղափոխության մեծ թվով գործիչների, ովքեր մասոնական անցյալ ունեին, կամ հեղափոխության օրերին հանդիսանում էին օթյակների անդամներ: Այս ամենը նրան հիմք էր տալիս պնդել, թե ֆրանսիական հեղափոխությունը մասոնական նախապես ծրագրված և հետևողականորեն իրականացված դավադրության հետևանք է: Նա գրում էր, որ ֆրանսիական հեղափոխությունը մտահղացել են երեք նշանավոր մա-

[1] Barruel A. Op. cit., V. 4, p. 553.

սոններ՝ ֆրանսիացի լուսավորիչներ Ֆրանսուա Մարի Վոլտերը, Ժան Լերոն դ'Ալամբերը և Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ II-ը:

Ֆ. Վոլտերը մասոն էր ձեռնադրվել 1778թ. ապրիլի 7-ին՝ անդամագրվելով հանրահայտ «Ինը մուսաներ» օթյակի շարքերը: Նա մասոն ձեռնադրվեց նշանավոր փիլիսոփա Քլոդ Ադրիան Հելվեցիուսի գոգնոցով: Մասոն դառնալ նրան համոզեց ամերիկյան ականավոր պետական գործիչ, գիտնական, ամերիկյան պետության «հիմնադիր հայրերից» մեկը՝ մասոն Բենջամին Ֆրանկլինը, ով 1779-1781թթ. «Ինը մուսաներ» օթյակի Մեծ Վարպետն էր:[1]

Ժան Լերոն դ'Ալամբերը մասոն էր դարձել ավելի վաղ: Նա վայելում էր Ֆրիդրիխ II-ի ֆինանսական աջակցությունն ու հովանավորությունը, որի հետ ջերմ հարաբերություններ պահպանեց մինչև նրա կյանքի վերջը ու փառաբանում էր նրան իր ստեղծագործություններում: Նա մասոն Դենի Դիդրոյի հետ միասին խմբագրում էր ֆրանսիական նշանավոր «Հանրագիտարանը», հանդիսանում էր ֆրանսիական ակադեմիայի պատվավոր քարտուղարը:[2]

Ֆրիդրիխ II-ը մասոն էր ձեռնադրվել 1738թ., իսկ երկու տարի անց Բեռլինում ստեղծել էր «Դեպի երեք գլոբուսները» օթյակը, ստանձնել նրա Մեծ Վարպետի պաշտոնը և փաստացի դարձել պրուսական մասոնության ղեկավարը:[3] Սկսած 1774թ. մինչև մահը նա հովանավորում էր պրուսական մասոններին, թեպետ տարիքի ու զբաղվածության պատճառով առաջվա պես չէր կարողանում լրջորեն զբաղվել նրանցով:[4] Ֆրիդրիխ II-ը մտերիմ հարաբերություններ ուներ Ֆ.Մ. Վոլտերի հետ, որը երկու տարի գտնվում էր թագավորի Սան-Սուսի պալատում և հանդիսանում էր նրա պալատական պատմաբանը: Երկու մասոնները հաճախ էին միմ-

---

[1] Борзаковский Д. Франк-масонство и тайные общества древнего и нового мира. М., 1900, стр. 87. Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 74, 246-248; Ридли Дж. Указ. соч., стр. 546; Карпачев С. П. Указ. соч., стр. 112; Морамарко М. Масонство в прошлом и настоящем. М., 1990, стр. 108, 263-264; Блэк Дж. Тайная история мира.М. 2008, стр. 546.

[2] См: Литвинова Е. Ф. Д'Аламбер. Его жизнь и научная деятельность. СПБ, 1891; Добровольский В.А. Д'Аламбер. М., 1968.

[3] Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 88; Соловев О. Ф. Масонтво далекое и близкое. Новая и новейшая история, 1992, N 4, стр. 59; Замойский Л. За фасадом масонского храма. М., 1990, стр. 128; Платонов О.Тайная история масонства. Изд. 2-е. М., 1996, стр. 42.

[4] Борзаковский Д. Указ. соч., стр. 88-89, 154.

յանց հետ հաղորդակցվում մասոններին բնութագրական գաղտնագրերի, մասնավորապես՝ կրիպտոգրամայի օգնությամբ:[1]

1775թ. օգոստոսի 3-ին Ֆ. Մ. Վոլտերը Ֆրանսիայի գահը ստանձնած 19-ամյա թագավոր Լուի XVI-ին շրջապատող մարդկանց մասին Ֆրիդրիխ II-ին գրում էր. «Ես չգիտեմ՝ կգնա արդյոք երիտասարդ թագավորը նրանց հետևից: Բայց ես գիտեմ այն, որ նա իր նախարարներին ընտրել է միայն փիլիսոփաներից»:[2] Ֆրիդրիխ II-ը, թեպետ, լուսավորյալ միապետ էր և «փիլիսոփայի» համբավ ուներ, այնուամենայնիվ, անվստահությամբ էր նայում ֆրանսիական թագավորի շրջապատին: Նա իր մտավախության մասին Ֆ. Մ. Վոլտերին գրում էր. «Ես Լուի XVI-ին պատկերացնում եմ որպես ամլիկ գառ՝ շրջապատված ծեր գայլերով: Նա շատ երջանիկ կլինի, եթե կարողանա նրանցից փրկվել»:[3]

Ֆրանսիական լուսավորիչները իրենց պատմական, փիլիսոփայական և գրական ստեղծագործություններում քննադատում էին բացարձակ միապետությունները և առաջ քաշում այն միտքը, որ Եվրոպայում միապետությունները կործանող հեղափոխությունները անխուսափելի են և վաղ թե ուշ տեղի կունենան: Դեռևս 1760թ. Ժան Ժակ Ռուսոն գրում էր. «Իմ կարծիքով հնարավոր չէ, որ մեծ միապետությունները երկար գոյատևեն: Մենք մոտենում ենք ճգնաժամին, հեղափոխության դարին»:[4]

Ֆ. Մ. Վոլտերը նույնպես կանխատեսում էր ֆրանսիական հեղափոխության անխուսափելիությունը: 1762թ. նա մարքիզ Շեվալենին մարգարեաբար գրում էր. «Այն ամենը, ինչ ես տեսնում եմ, ցրիվ է տալիս հեղափոխության սերմերը, որն անխուսափելիորեն կկայանա, բայց դրա վկան լինելու հաճույքը ես չեմ ունենա: Լույսն այն աստիճան է տարածվել, որ նույնիսկ նվազագույն պատահարից կարող է պայթյուն տեղի ունենալ... և փառավոր խառնաշփոթ կլինի»:[5]

Հին կարգերի կործանման կողմնակից Ֆ.Մ. Վոլտերը և իր ժամանակի մյուս լուսավորիչները անողոք քննադատում էին բացարձակապետու-

---

[1] Ридли Дж. Указ. соч., стр. 77-79, 138-139.

[2] Башилов Б. История русского масонства. Том IV. Տես՝ www.rus-sky.com/history/library/ekatern.htm N XVIII.

[3] Там же.

[4] Цит. по: Иванов В.Ф.Тайны масонства. Гл. 15. www.magister.msk.ru/library/history/mason/ivanovv1.htm

[5] См: Философов А. Д. Разоблачение великой тайны франк-масонства, стр. 100-101; История Франции. Том 1, М., 1972, стр. 305.

թյունը, կղերականությանն ու կաթոլիկ եկեղեցուն: Նրանք գտնում էին, որ կրոնական հալածանքների վատագույն օրերը անցել են, իսկ XVI-XVIIդդ. դաժան պատիժները այլևս չեն կրկնվելու: Սրամիտ գրքերի ժամանակն անցել է, հասել է կաթոլիկ եկեղեցու վրա խաչակրած արշավանք կատարելու ժամանակը: Այդ պատճառով էլ նա ասում էր. «Ecrasez l'infame»՝ այսինքն՝ «ճզմիր նողկանքը»:[1] Ֆ. Մ. Վոլտերը մշտապես պարզաբանում էր, որ «infame»-ն դա ոչ քրիստոնեությունն է, ոչ կաթոլիկությունը և ոչ էլ կաթոլիկ եկեղեցին, դա «փթող և արտոնյալ օրթոդոքսությունն է»: XVIII դարում այդ «փթող և արտոնյալ օրթոդոքսությունը» իշխում էր համայն Եվրոպայում: Հետևաբար, «infame» ասելով, Ֆ.Մ. Վոլտերը իրականում նկատի ուներ բացարձակ միապետությունը, որն անհրաժեշտ էր վերացնել և հաստատել նոր կարգ՝ տվյալ դեպքում սահմանադրական միապետություն:

Ֆ.Մ. Վոլտերի հետ համամիտ էր նաև նշանավոր փիլիսոփա և մասոն Շ. Մոնթեսքյոն[2], որը «Պարսկական նամակներում» հանդես գալով միապետության քննադատությամբ և հանրապետության օգտին, գրում էր. «Միապետության ոգին պատերազմն է ու նվաճումը, իսկ հանրապետության ոգին՝ խաղաղությունը և չափավորությունը»:[3] Ավելի ուշ, «Օրենքների ոգու մասին» աշխատությունում նա գտնելով, որ գործնականում հնարավոր չէ հանրապետական կարգ հաստատել, հանդես եկավ սահմանադրական միապետության օգտին:

Ֆ. Մ. Վոլտերից և Շ. Մոնթեսքյոյից զատ, բացարձակ միապետության վերացման և հանրապետության կամ սահմանադրական միապետության հաստատման օգտին հանդես էին գալիս նաև ժամանակի մեծագույն գիտնականներ ու լուսավորիչներ Դենի Դիդրոն (1713-1784), Ժան Լերոն դ'Ալամբերը (1717-1783), Ժան Ժակ Ռուսոն (1712-1778), Ռոբեր Ժակ Թյուրգոն (1727-1780), Ֆրանսուա Քլոդ Ադրիան Հելվեցիուսը (1715-1771), Էթյեն Բոննո Կոնդիլյակը (1715-1780), Գիյոմ Թոմաս Ֆրանսուա Ռեյնալը (1713-1796), Ժան Անտուան Նիկոլա Կոնդորսեն (1743-1794), Անրի Սեն Սիմոնը (1760-1825), որոնք մասոններ էին[4]:

Մասոնական օթյակների անդամներ էին նաև հայտնի գիտնականներ

---

[1] Ридли Дж. Указ. соч., стр. 85.
[2] Տես՝ Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 51.
[3] Монтескье Ш. Л. Персидские письма, М., 1936, стр. 218.
[4] Большая энциклопедия. Масоны, М., 2007, стр.74-77.

Անտուան Լավուազեն (1743-1794), Գասպար Մոնժը (1746-1818), դրամատուրգ Պիեր Բոմարշեն (1732-1799), գեղանկարիչներ Ժան Բատիստ Գրյոզը (1725-1805), ժակ Լուի Դավիդը (1748-1825), քանդակագործ Ժան Անտուան Հուդոն (1741-1828), օդապարիկի գյուտարարներ Ժոզեֆ (1740-1810) և էթյեն (1745-1799) Մոնգոլֆիե եղբայրները և շատ ուրիշներ, ովքեր հեղափոխության ականատեսերը չէին:[1]

Բայց մասոնությունը սոսկ ֆրանսիական լուսավորիչների ու գիտնականների «մենաշնորհը» չէր: մասոնական օթյակների անդամներ էին ոչ միայն նրանք, այլև հազարավոր ազնվականներ, այդ թվում՝ բարձրատոհմիկմասնավորապես մասոններ էին արքայազներ Հեսսեն, Նասսաուն, դուքս Շուազելը, մարքիզներ Լաֆայետը, Սպինոլան, Սեն-Ժերմենը և շատ ուրիշներ:[2]

Ֆրանսիացի պատմաբաններ Գ. Բորի, Օ. Կոշենի և Ա. Օլարի տվյալներով մասոնական օթյակի անդամներ էին նաև Լուի XVI թագավորն ու նրա երկու եղբայրները՝ Պրովանսի դուքսը և դուքս դ'Արտուան՝ Ֆրանսիայի ապագա թագավորներ Լուի XVIII-ը և Շարլ X-ը:[3] Ավելին, սկսած 1773թ. Ֆրանսիայի Մեծ Արևելք օթյակը գլխավորում էր թագավորի զարմիկը՝ դուքս Լուի Ֆիլիպ Օռլեանցին: Այս օթյակի հովանու տակ գործում էին մասոնական մյուս օթյակները:[4]

Թվում է, թե աբբա Օ. Բարրյուելի վարկածը անհեթեթություն է, քանզի այս իրողության պայմաններում մասոնները չպիտի հանդես գային Լուի XVI-ի դեմ: Բանն այն է, որ մասոնությունը, այդ թվում նաև՝ ֆրանսիականը, իր սոցիալական կազմով և նրա անդամների գաղափարախոսությամբ միատարր չէր: Մասոնական օթյակներում, ազնվականության շրջանում կային թե' միապետականներ, թե' հեղափոխական վերափոխումների կողմնակիցներ: Ազնվականության մի մասի համար մասոնությունը մոդայիկ շարժում էր, իսկ օթյակը՝ հաճելի ու օգտակար զրույցների, շփման, ժամանակ անցկացնելու և մասոնական խնջույքներին մաս-

[1] Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 74, 77. Иванов В.Ф. Указ. соч.

[2] Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 65.

[3] Տես՝ Bord G. La Franc- Maçonnerie en France des origines à 1815. T. 1, Paris, 1908, p. XVIII: Cochin A. La Révolution et la libree pensée. Paris, 1924, p. XXXIX; Aulard A. La Révolution et la libre pensée, par M. Augustin Cochin-Revolution française. Paris, 1924, t. 77. p. 363-364.

[4] Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 63-64; Ридли Дж. Указ. соч., стр. 137-138, 203; Карпачев С. П. Указ. соч., стр. 432.

նակցելու վայր: Մասոն այս ազնվականները հույսեր էին կապում թագավորի հետ, թե նա վերափոխումներ կիրականացնի: Երիտասարդ թագավորը նրանց հուսախաբ չարեց: Նրա օրոք երկրի տնտեսական վիճակը բարելավվեց:

Թագավորը ուսյալ մարդ էր և համակրում էր լուսավորիչների որոշ գաղափարներին: Գահ բարձրանալով Լուի XVI-ը հրաժարվեց գահակալման կապակցությամբ իրեն հասանալիք 24 մլն. լիվրից: Նա պաշտոնանկ արեց ու Փարիզից արտաքսեց համընդհանուր ատելություն վայելող կանցլեր Ռենե Մոպուին և ֆինանսների գլխավոր հսկիչ աբբա Ժոզեֆ Տերրեին: Հեղափոխության նախօրյակին նա կրկնապատկեց երրորդ դասի ներկայացուցիչների թիվը Գլխավոր շտատներում: Բայց դա թագավորին չփրկեց: Մասոնները ֆինանսների գլխավոր հսկիչ մասոն Ժակ Նեկկերի պաշտոնանկության հաջորդ օրը՝ հուլիսի 12-ին բազմահազար ցույց արեցին: Մասոն լրագրող Քամիլ Դեմուլենը, ելույթ ունենալով Պալե Ռուայալ այգում հավաքված հազարավոր փարիզցիների առաջ, ժողովրդին զինվելու կոչ արեց: Հուլիսի 13-ին Պրի-Սեն Անտուան եկեղեցում հավաքված մասոնները Դյուֆուրի և Վիլնևի գլխավորությամբ քննարկեցին իրենց առաջիկա անելիքները Բաստիլը գրավելու կապակցությամբ: Հաջորդ օրը առավոտյան մասոնների պատվիրակությունը էթիս դե Քոսնի, դե Վեթլոյի և դե Բիլֆորդի գլխավորությամբ Բաստիլի պարետ դե Լոնեին առաջարկեցին բացել բերդի դարպասները: Մերժում ստանալով՝ մասոնները Փարիզի խառնամբոխի հետ միասին գրոհեցին Բաստիլի վրա և մասոններ Մորեթոն դե Շաբրիլյանի, Պիեր Յուլենի, մարի Մայարի գլխավորությամբ գրավեցին այն[1]: Օրեր անց փարիզցիները մասոն քաղաքագլուխ Ժան Բայիի գլխավորությամբ թագավորին ողջունեցին «կեցցե ազգը» բացականչություններով, նրան հեղափոխական եռագույն կոկարդ հանձնեցին և ի նշան ազատության՝ թագավորի կիսանդրին զարդարեցին դափնեպսակով:[2]

Լուի XVI-ը պատրաստ էր վավերացնել 1789թ. օգոստոսի 4-11-ի Ազգային ժողովի դեկրետները ազնվականության արտոնությունների և ավատատիրական իրավունքների վերացման մասին, որի համար ժողովը թա-

[1] Карлейл Т. Французская революция . История. Пер. с англ. М., 1991. стр. 1128-130; Кропоткин П. Великая французская революция 1789-1793. М., 1979, стр. 63-70; Иванов В.Ф. Указ. соч. www.magister.msk.ru/library/history/mason/ivanovv1.htm

[2] Карлейл Т. Указ. соч., стр. 132.

գավորին հռչակեց «Ֆրանսիացիների ազատությունը վերականգնող»:[1] 1791թ. սեպտեմբերին Լուի XVI-ը սահմանդրությանը հավատարիմ մնալու երդում տվեց: 1792թ. հունիսի 20-ին նա Թյուիլրի պալատում հեղափոխականների հորդորով գլխին դրեց ազատության խորհրդանիշ դարձած փռյուգական կարմիր գլխարկը և կարմիր գինով խմեց ազգի կենացը:[2]

Թվում էր, թե հեղափոխականներին արված զիջումների գնով Լուի XVI-ը կպահպանի իր գահը և չի կիսի Անգլիայի թագավոր Չարլզ I-ի ճակատագիրը, ով հեղափոխականների ձեռքով կառափնարանի արժանացավ: Բայց արված վերափոխումներն ու կատարված զիջումները Լուի XVI-ին չփրկեցին կործանումից: Նա դատապարտվեց ոչ թե այն բանի համար, որ վատ միապետ էր, այլ որ միապետ էր: Նրա ճակատագիրը կանխորոշված էր, նրան մահվան էին դատապարտել հեղափոխական մասոնները, որին միապետական մասոնները փրկել չկարողացան: Լուի XVI-ը կանխազգում էր իր կործանումը, որի մասին իր դատապաշտպաններին ասաց. «Ես համոզված եմ, որ նրանք ինձ կկործանեն... բայց այս դատավարությունը ես կշահեմ, որովհետև այն հիշողությունը, որը ես կթողնեմ իմ մասին, կլինի անթերի»:[3] Կառափնարանում մահվանից առաջ դիմելով հրապարակում հավաքված հազարավոր մարդկանց՝ Լուի XVI-ը բացականչեց. «Ֆրանսիացիներ, ես մահանում եմ անմեղ: Ես ներում եմ իմ թշնամիներին: Տա Աստված, որ իմ արյունը թափվի Ֆրանսիայի օգտին»[4]:

Ըստ Օ. Բարրյուելի, մասոն էին նաև ֆրանսիական հեղափոխության շատ առաջնորդներ և անվանի գործիչներ, մասնավորապես՝ «1789թ. ընկերության» նախագահ աբբա Էմմանուել Ժոզեֆ Սիեյեսը (1748-1836), Ֆելյանների քաղաքական ակումբի ղեկավարներ կոմս Օնորե Գաբրիել Միրաբոն (1749-1791), ԱՄՆ-ի անկախության պատերազմի հերոս, մասոն, Ջորջ Վաշինգտոնի համհարզ, ֆրանսիական ազգային դիվիզիայի հրամանատար մարքիզ Մարի Ժան Պոլ Լաֆայետը (1757-1834) և Փարիզի քաղաքագլուխ, հայտնի աստղագետ Ժան Բային (1736-1793), Օ. Միրաբոյի մահից հետո ակումբը գլխավորած եռապետերը՝ Անտուան Բարնավը (1761-1793), Ադրիան Դյուպորը (1759-1793), Ալեքսանդր Լամե-

---

[1] Конституции и законодательные акты буржуазных государств XVII-XVIIIвв. Под ред. П. Н. Галанзы. М., 1957, стр.232.

[2] Карлейл Т. Указ. соч., стр. 337.

[3] Башилов Б. Указ соч., www.rus-sky.com/history/ library/ekatern.htm N XVIII.

[4] Карлейл Т. Указ. соч., стр. 429; Иванов В.Ф. Указ. соч. www.magister.msk.ru/library/history/mason/ivanovv1.htm

տը (1760-1829), ժիրոնդիստների հոսանքի պարագլուխ Ժան Պիեր Բրիսսոն (1754-1793) և նրանց կառավարության ղեկավար Ժան Մարի Ռոլանը (1734-1794), Կորդելյերների քաղաքական ակումբի ղեկավարներ Ժորժ Ժակ Դանտոնը (1759-1794) և Քամիլ Դեմուլենը (1760-1794), Փարիզի կոմունայի դատախազ Պիեր Գասպար Շոմետը (1763-1794) և նրա տեղակալ Ժան Ռենե Էբերը (1757-1794), «Ժողովրդի բարեկամ» թերթի խմբագիր Ժան Պոլ Մարատը (1743-1793), Մոնթանյարների պարագլուխներ Մաքսիմիլիան Ռոբեսպիերը (1758-1794), Ժորժ Կուտոնը (1755-1794), ինչպես նաև Սահմանադիր ժողովի պատգամավորներ Ժան Ժոզեֆ Մունյեն (1758-1806), Ժոզեֆ Գիլյոտենը (1738-1814), Կոնվենտի անդամ Ժան Պիեր Ամարը (1755-1816), «Կատաղիների» առաջնորդ Ժակ Ռուն (1752-1794), Բաստիլը գրաված Մարի Մայարը (1763-1794), հեղափոխական օրացույցի հեղինակներ մաթեմատիկոս Ժիլբեր Ռոմմը (1750-1795) և դրամատուրգ Ֆաբր դե Էգլանտինը (1750-1794), հեղափոխության մարտական երգի՝ «Մարսելյոզի», հեղինակ Ռուժե դե Լիլլը (1760-1836) և շատ ուրիշներ:[1] Հատկանշական է, որ այս մասոններից Օ. Միրաբոն, Ժ. Դանտոնը, Մ. Ռոբեսպիերը, Ժ.-Պ. Մարատը, Ք. Դեմուլենը, Ժ. Գիլյոտենը և «հավանաբար հեղափոխության շատ այլ գործիչներ» միաժամանակ բավարական իլլյումինատների օրդենի անդամ էին:[2]

Նախահեղափոխական Ֆրանսիայում մասոնները բավականին լայն տարածում ունեին: Պատմական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների տվյալներով 1789թ. Ֆրանսիայում գործում էին 300-800 օթյակներ՝ 20-80 հազար անդամներով: Օթյակներ կային ֆրանսիական գրեթե բոլոր քաղաքներում: Միայն Փարիզում գործում էին 125 մասոնական օթյակներ, չհաշված բազմաթիվ ընկերությունները, ակումբները, միությունները: Հեղափոխության նախօրյակին՝ 1789թ. մայիսին, հրավիրված Գլխավոր շտատների 1165 պատգամավորներից մոտ 200-ը մասոնական օթյակների անդամներ էին, մոտ 100 պատգամավորներ մշտապես հանդես էին գալիս հեղափոխական բարեփոխումներ անցկացնելու օգտին, մոտավորապես 60 պատգամավոր չափավոր դիրքորոշում ունեին և

[1] Baruell A. Memories...V. 2. P.XXV-XXX; Кропоткин П. Указ. соч., стр. 418; Ридли Дж., Указ. соч., стр. 60, 155-162, 173. Морамарко М. Указ. соч., стр. 108. Замойский Л. Указ. соч., стр. 138.

[2] Блэк Дж. Указ. соч., стр. 559; Кропоткин П. Указ. соч., 418.

միայն մոտ 40 մարդ էր հանդես գալիս հին կարգերի պաշտպանությամբ:[1]

Օրենսդիր ժողովի անդամների թվում առաջին դասը ներկայացնող հոգևորականության պատգամավորների 6 տոկոսը, երկրորդ դաս համարվող ազնվականության պատգամավորների 28 տոկոսը և երկրորդ դասի պատգամավորների 17 տոկոսը մասոններ էին:[2] Ստացվում է, որ պատգամավորների 51 տոկոսը կամ յուրաքանչյուր երկրորդը մասոն էր:[3] Մասոնական օթյակների տարածվածությունը և բազմամարդությունը Լուի Ֆիլիպ Օռլեանցուն հույսեր էին ներշնչում Ֆրանսիայի Մեծ Արևելքի Օթյակի գլխավորությամբ իրականացնել պետական հեղաշրջում և երկրում հաստատել սահմանադրական միապետություն՝ իր գլխավորությամբ: Այդ նպատակին հասնելու համար նա դիմում էր բազմաթիվ խարդավանքների:

Օ. Բարրյուելը դավադրություն իրականացրած երեք խմբերից ամենավտանգավորը համարում էր բավարական իլլյումինատներին: Մասոնական այս գաղտնի ընկերությունը ստեղծվել է 1776թ. մայիսի 1-ին՝ Բավարիայում: Նրա հիմնադիրը հանդիսանում է ճիզվիթների օրդենում դաստիարակված, կաթոլիկություն ընդունած հրեա, 1777թ. մասոն ձեռնադրված Ադամ Վայսհաուպտը (1748-1830), որը Ինգոլդշտադտի համալսարանի կանոնական իրավունքի պրոֆեսոր էր: Կարճ ժամանակամիջոցում նրա հիմնադրած օրդենը հավաքագրեց մոտ երկու հազար մարդ, այդ թվում՝ մասոնների, բարձրատոհմիկ ազնվականության և մտավորականության ներկայացուցիչների և անգամ միապետերի: 1779թ. տվյալներով՝ օրդենի անդամ էին մասոններ մարքիզ դե Կոնստանցոն, դուքս էրնստ II Սակսեն-Գոթացին և նրա եղբայր Ավգուստը, Ի. Գյոթեի հանրահայտ ընկեր դուքս Կարլ Ավգուստ Վայմարացին, դուքս Ֆերդինանդ Բրաունշվեյգացին, կոմս Պապենհայմը, բարոն Ալֆրեդ Կնիգգեն, պրոֆեսորներ Կոպպեն, Ֆեդերը, Մերտենսը, Հերդերը, Յակոբին, Պեստալոցցին, Իոհան Գեորգ Շլոսերը, նշանավոր բանաստեղծ և մտածող Իոհան Վոլֆգանգ Գյոթեն և ուրիշներ:[4]

Ա. Վայսհաուպտը իլլյումինանտների գաղափարախոսությանը ծանոթացրեց Օ. Միրաբոյին և հանձնարարեց նրան դուքս Ֆ. Օռլեանցուն

---

[1] Соловьев О. Ф., Указ. соч., стр. 69.

[2] Большаков В. Парижские тайны: Русский след. М., 2007, стр. 384.

[3] Տես՝ Martin G. la Franc- Maçonnerie française et la Rèvolution. Paris, 1926.

[4] Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 150. Гогалицин Ю., Тайные общества в истории человечества, или Кто правит миром. М., 2010, стр. 130.

համոզել ստեղծել «Մեծ Արևելք» օթյակը: Օ. Միրաբոն դուքս Ֆ. Օռլեանցուն և Շարլ Մորիս Թալեյրանին ծանոթացրեց Ա. Վայսհաուպտի հետ, որը 1773թ. նրանց ձեռնադրեց իր օրդենում:[1] Շատ շուտով օրդենը տարածվեց ոչ միայն Գերմանիայում, այլև Ֆրանսիայում, Հոլանդիայում և Բելգիայում: Բավարական իլլյումինատների օրդենում առկա էր ընդգծված ձախ, ծայրահեղական հոսանք Ա. Վայսհաուպտի գլխավորությամբ, որը իր գործընկերների շրջանում հայտնի էր «Սպարտակ» կեղծանունով՝ ի պատիվ Հին Հռոմի ստրուկների նշանավոր առաջնորդ Սպարտակի: Օրդենի հեռահար պլանը նախատեսում էր վերացնել Եվրոպական բացարձակ միապետությունները, մասնավոր սեփականությունը, ժառանգության իրավունքը, ընտանիքները, հայրենասիրության զգացումը, քրիստոնեական կրոնը, որից հետո նաև մյուս կրոնները և այլն:[2]

«Մեր ուժերի մեծ մասը,– գրում էր Ա. Վայսհաուպտը,- կայանում է գաղտնիության մեջ, այդ պատճառով մենք պետք է թաքնվենք այլ ընկերության ցուցանակի տակ: Մասոնական օթյակները ամենահարմար քողարկումն են մեր բարձր նպատակների համար»: Ըստ Ա. Վայսհաուպտի, գաղտնի ընկերություն ղեկավարելը «նշանակում է կառավարել առանց արտաքին ճնշման ոչ միայն սովորական մարդկանց վրա, այլև բոլոր ռասաների, ազգերի և կրոնների լավագույն ներկայացուցիչների վրա: Մեր ընկերության վերջնական նպատակն է իշխանության և հարստության նվաճումը..., համաշխարհային տիրապետության նվաճումը»:[3]

Նա խնդիր էր դնում իլլյումինանտների առաջ «լինել նախաձեռնող, ճարպիկ, շողոքորթ..., փնտրել ամենից առաջ երևելիների, հզորների ու հարուստների» և օրդենը համալրել նրանցով:[4] 1782թ. հուլիսի 9-ին գերմանական Վիլհելմսբադ քաղաքում բավարական իլլյումինանտները դուքս Ֆերդինանդ Բրաունշվեգացու նախաձեռնությամբ հրավիրեցին մասոնական համագումար, որի 33 պատգամավորների թվում էին նաև ֆրանսիացի մասոնները: Ընդունված կանոնադրությունում, մասնավորապես, ասվում էր, որ եթե «պետության հայրերը սխալվում են, ապա նրանք

[1] Боголюбов Н. Тайные общества XX века. М., 1995, стр. 23.

[2] Ридли Дж. Указ. соч., стр. 142-144. Гогалицин Ю. Указ. соч., стр. 132; Ланин П. Тайные пружины истории. Масонство в его прошлом и настоящем. Молодая гвардия. 1991. N 7, стр. 202-203; Замойский Л. Указ. соч., стр. 144; Боголюбов Н. Указ. соч., стр. 20-22.

[3] Блэк Джонатан. Тайная история мира. М., 2009, стр. 558-559.

[4] Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 114-115, 121-122.

պիտի պատասխան տան Թագավորների Դատավորի առաջ»:[1]

Համագումարը քննարկեց բավարական իլլյումինատների պլանը և որոշեց այն առաջինը իրականացնել Ֆրանսիայում:[2] 1785թ. Ֆրանկֆուրտում կայացած համագումարը վերահաստատեց իր որոշումը Ֆրանսիայում հեղափոխություն սկսելու և Լուի XVI-ին մահվան դատապարտելու մասին: Դրան ձեռնամուխ եղան ֆրանսիական հարյուրավոր օթյակները՝ իրենց տասնյակ հազարավոր անդամներով: Նրանց համար մասոնական գաղափարները կյանքի կոչելը ոչ միայն առաջնային խնդիր էր, այլև կենսական անհրաժեշտություն, Ֆրանսիայի Մեծ Արևելք օթյակի գործունեության տվյալ ժամանակների հիմնական նպատակը:

Ֆրանսիական հեղափոխությունը նրա մասնակիցների և, հատկապես, մասոնների կողմից ընկալվում էր որպես ազատության հաղթանակի համար պայքար: Մ. Ռոբեսպիերի հանրահայտ արտահայտությունը՝ «հեղափոխությունը դա ազատության պատերազմն է ընդդեմ նրա թշնամիների», սոսկ նրա անձնական կարծիքը չէր, այլ յուրաքանչյուր հեղափոխականի, առավել ևս յուրաքանչյուր մասոնի համոզմունքը: Դրա վառ վկայությունը ֆրանսիական հեղափոխականների մարտական երգն էր, որը ֆրանսիացիներին կոչ էր անում զենք վերցնել, պայքարել եվրոպական միապետերի դեմ և կործանել նրանց բռնապետական իշխանությունը:

Բոհեմիայի և Հունգարիայի թագավորին պատերազմ հայտարարելուց հինգ օր անց՝ 1792թ. ապրիլի 25-ին, հեղափոխական բանակի կապիտան, հեղափոխության պատմությունում «մեկ գիշերվա հանճար» բնութագիրն ստացած մասոն Ռուժե դե Լիլլի գրած «Հռենոսյան բանակի մարտական երգը» շատ արագ դարձավ մարտակոչ ընդդեմ բռնապետության: «Մարսելյոզ» անվանումը ստացած այդ երգը 1793թ. նոյեմբերի 24-ին Կոնվենտը ճանաչեց որպես Ֆրանսիայի պետական օրհներգ: Ֆրանսիացիների մոտ միապետությունը կործանելու և ազատություն ձեռք բերելու համոզմունքը ձևավորվել էր դեռևս նախահեղափոխական տարիներին՝ շղթայելով մարդկանց մտքերն ու սրտերը այն հավատով, որ ազատությունը մեծագույն բարիք է: Դեռևս հեղափոխությունը չսկսված, 1789թ. փետրվարին, Ժան Պոլ Մարատը իր հայրենակիցներին կոչ էր անում.

---

[1] См: Море, 1907, N 6, стр. 769-780.

[2] Блэк Дж. Указ. соч., стр. 558; Башилов Б. Указ. соч., www.rus-sky.com/history/library/ekatern.htm N XVIII; Ланин П. Указ. соч., стр. 203.

«Ճանաչեք ազատության գինը, ճանաչեք ակնթարթի գինը»:[1]

1789թ. օգոստոսի 26-ին մասոն պատգամավորների նախաձեռնությամբ Ազգային ժողովն ընդունեց Մարդու և քաղաքացու իրավունքների մասին հռչակագիր, որը բոլոր մարդկանց հայտարարում էր «ազատ և հավասար իրենց իրավունքներում», հռչակում էր խոսքի, մտքի, տպագրության, կրոնական դավանանքի ազատություն:

1790թ. հունվարին Պերիգոր գավառում սկիզբ առավ «ազատության ծառեր» տնկելու ժողովրդական տոնը, որը տարածվեց ամբողջ Ֆրանսիայով մեկ: Միայն 1792թ. մայիսին երկրով մեկ տնկվեցին մոտ 60 հազար «ազատության ծառեր»: Հանրաճանաչ դարձան «ազատություն» բառի գործածումով շատ կարգախոսներ: Հեղափոխության սկզբում գրեթե բոլոր փաստաթղթերում, նկարներում, անգամ ամանեղենի վրա գրում էին. «Ապրել ազատ կամ մահանալ»: Այս բառերը որպես երդում իրենց տեղը գտան 1791թ. ֆրանսիական առաջին սահանադրությունում: Շատ հանրաճանաչ դարձան «Ազատություն, Հավասարություն, Անվտանգություն» և «Ազատություն, Հավասարություն, Սեփականություն» կարգախոսները:

Ազատության գաղափարը ամրագրվեց նաև 1793թ. հունիսի 24-ին յակոբինյան Կոնվենտի ընդունած սահմանադրությունում: Նրա մշակումը և ընդունումը անքակտելիորեն կապված է մասոնների հետ: Սահմանադրությունը մշակող սահմանադրական կոնվենտի անդամներ Ժոզեֆ Սիեյեսը, Թոմաս Փեյնը, Ժան Բրիսսոն, Ժերոմ Պետիոնը, Պիեր Վերնյոն, Արման Ժանսոնեն, Բերտրան Բարերը և Ժորժ Դանտոնը մասոն էին: Կոնվենտի նախագահը և սահմանդրության հիմնական հեղինակը մասոն Ժան Կոնդորսեն էր:

Սահմանադրության ընդունումը հունիսի 24-ին հազիվ թե պատահականություն լիներ: Ժամանակակից մասոնության սկզբնավորումը տեղի է ունեցել 1717թ. հունիսի 24-ին՝ Հովհաննես Մկրտչի տոնի օրը: Այդ օրվանից սկսած, Հովհաննես Մկրտիչը համարվում է մասոնների հովանավորը, իսկ հունիսի 24-ը՝ մասոնների գլխավոր տոնը: Ավանդաբար հունիսի 24-ի կեսօրին տեղի են ունենում մասոնների տարեկան հաշվետվությունները, գլխավոր արարողություններն ու միջոցառումները:[2]

Սահմանադրությունը հենվում էր Ժան-Ժակ Ռուսսոյի քաղաքական

---

[1] Vovelle M. La mentalité révolutionnaire: Sociètè et mentalités sous la Révolution françqise. Paris. 1985. p.25.

[2] Борзаковский Д. Указ. соч., стр. 70; Карпачев С. П. Указ. соч., стр. 182.

հայացքների՝ ազատության, հավասարության և ժողովուրդների ինքնավարության սկզբունքների վրա, որոնք համառոտ ձևակերպված էին Մ. Ռոբեսպիերի Մարդու և քաղաքացու իրավունքների նոր հռչակագրում: Այս փաստաթուղթը «համընդհանուր երջանկությունը» և «հասարակության նպատակը» համարում էր մասոնական գաղափարախոսության ոգուն համապատասխան: Սահմանադրությունը մարդու «բնական իրավունքները» հայտարարում էր ազատությունը, հավասարությունը, անվտանգությունը և սեփականությունը: Հռչակված էին անձի, կրոնական դավանանքի, օրենսդրական նախաձեռնության, խոսքի, մամուլի, հանրագրեր ներկայացնելու և այլ ազատություններ:

Եվ վերջապես, հեղափոխական Կոնվենտը, թեպետ, հաստատեց սահմանադրության նախագիծը, բայց առաջնորդվեց մասոնական օթյակներում ընդունված կարգով, այն է՝ որոշում կայացնել քվեարկության ճանապարհով: Ուստի Կոնվենտի որոշմամբ սահմանադրությունը դրվեց հանրաքվեի:

Պատմագրությունում շատ տարածված կարծիքի համաձայն ֆրանսիական հեղափոխությունը ընթացավ «Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն» նշանավոր կարգախոսի ներքո, որն առաջին անգամ հնչել է 1790թ. հուլիսի 14-ին՝ Բաստիլի գրավման մեկամյակի տոնակատարության օրը: Ֆրանսիացի հայտնի պատմաբան Ա. Օլարի տվյալներով՝ այդ կարգախոսն առաջին անգամ հնչել է 1791թ. մայիսին՝ կորդելյերների ակումբում, ազգային բանակի ստեղծման մասին հարցի քննարկման ժամանակ: Կորդելյերները որոշեցին, որ զինվորականները պիտի կրեն կրծքանշան «Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն» բառերով:[1]

Կորդելյերների ակումբի անդամները մասոն էին, իսկ նրանց ակումբի խորհրդանիշը մասոնական չնիրհող աչքն էր: Մասոնական գլխավոր խորհրդանիշներից մեկի՝ եռանկյան կենտրոնում պատկերված աչքը, երբեմն ճառագայթներից կազմված պսակի մեջ, մասոնների համար խորհրդանշում էր Տիեզերքի Մեծ Ճարտարապետին, ինչպես նաև արևը, լույսը, կյանքը: Այս նշանը դրվում էր օթյակի Արժանապատիվ Վարպետի աթոռի տակ և ծառայում էր որպես հիշեցում՝ իմաստության բոլոր

[1] Aulard A. Etudes et leçons sur la Rèvolution française. 6-e`me sèrie. La devise §Libertè, ègalitè, fraternitè. Paris, 1910, p. 10-16.

գաղտնիքների և Արարչի ուժի մասին:[1]

Առհասարակ մասոնական շատ խորհրդանիշներ լայնորեն օգտագործվում էին ֆրանսիական հեղափոխականների կողմից: Մասոն մարքիզ Մ. Լաֆայետը Բաստիլի բանալիները, որպես ֆրանսիացիների ազատության խորհրդանիշ 1790թ. մայիսի 1-ին մասոն Թոմս Փեյնի միջոցով ուղարկեց նորաստեղծ ամերիկյան պետության «հիմնադիր հայրերից» մեծ մասոն Ջորջ Վաշինգտոնին[2]: Մ. Լաֆայետը համարվում է նաև հեղափոխականների եռագույն կոկարդի հեղինակը:[3] Ֆրանսիական հեղափոխության եռագույնը, որը ի հայտ եկավ Բաստիլի գրավումից հետո, իրենից ներկայացնում է Բուրբոնների արքայատոհմի սպիտակ և Փարիզի կոմունայի կապույտ և կարմիր դրոշների միավորումը:

Հատկանշական է, որ այս գույները նաև մասոնական իմաստ ունեն: Մասոնական աստիճանակարգում առաջին երեք գույները համարվում են կապույտ, 4-18 աստիճանները՝ կարմիր, և 31-33 աստիճանները՝ սպիտակ մասոններ: Հասկանալի է, որ սա զուտ պատահական համընկնում է և ոչ թե պատմական ճշմարտություն, քանի որ 1789թ. սպիտակ մասոնության աստիճանները դեռևս վերջնականապես որոշված չէին:

Այնուամենայնիվ, որոշ խորհուրդ կա այն բանում, որ ֆրանսիական մասոնների ստեղծած եռագույնը՝ կապույտ, սպիտակ, կարմիր, ներկայումս էլ հանդիսանում է Ֆրանսիայի Հանրապետության դրոշը:

Հեղափոխության գործիչները, անկախ այն բանից, թե քաղաքական որ ճամբարին էին պատկանում, ջանում էին հավաստել իրենց նվիրվածությունը ազատության գործին: Քաղաքական հայցքներով սահմանադրական միապետական Օ. Միրաբոն,երևելի ժիրոնդիստ Ժ. Բրիսսոն, կորդելյերների պարագլուխ Ժ. Դանտոնը, Պ. Ժ. Կամբոն և շատ ուրիշներ առիթը բաց չէին թողնում օրենսդիր մարմնում հայտարարել իրենց՝ ազատության զինվոր, պաշտպան ու ջատագով:[4] Կոնվենտի անդամ աբբա Ա. Գրեգուարի առաջարկությամբ ստեղծվեց ազատության խորհրդանիշ: Կոնվենտի անդամները կրում էին ազատության խորհրդանիշով տարբերանշան:

1792թ. սեպտեմբերի 21-ին՝ հանրապետության հռչակումից հետո,

---

[1] Карпачев С. П. Указ. соч., стр. 117.
[2] Гольдберг Н.М. Томас Пейн. М., 1969, стр. 33.
[3] См: Морамарко М. Указ. соч., стр. 109.
[4] Տես՝ Олар А. Ораторы Революции. Том 1, М., 1907, стр. 105.Том 2, М., 1908, стр. 151. Дантон Ж. Избр. речи, Харьков. 1924, стр. 9.

մասոն հեղափոխականները Ազատության խորհրդանիշով մետաղադրամ թողարկեցին: Փարիզում Լուի XIV-ի և Լուի XV-ի արձանները փոխարինեցին Ազատության արձաններով: Շուտով նման արձաններ տեղադրվեցին դեպարտամենտների կենտրոն Նանտում, Մոնպելյեում, Էկսում, Լիոնում, Թրուայում, իսկ գյուղերում տնկվեցին հազարավոր «մայիսյան ազատության ծառեր»: Ազատության արձաններ ու կիսանդրիներ տեղադրվեցին պետական տարբեր հաստատություններում, ակումբներում, ընկերություններում:

Ազատության պաշտամունքն իր արտահայտությունը գտավ հեղափոխական նոր օրացույցում և ապաքրիստոնեացման շարժման մեջ, Մ. Ժ. Շենյեի «Ազատության հիմնում», նոր անվանումներում և մարդկանց նոր անուններում: 1793թ. դավադրության զոհ դարձած յակոբինականներ Մ. Լեպելետյեն, Ժ. Պ. Մարատը և Մ. Ժ. Շալյեն հայտարարվեցին «ազատության զոհեր»:

Ազատության գաղափարի խաղացած հսկայական դերի մասին ֆրանսիական հեղափոխության լավագույն գիտակներից Ժ. Լեֆեվրը գրում էր. «Ազատությունն ու հավասարությունն անհերքելի ազդեցություն ունեցան երևակայության վրա: Ֆրանսիական ժողովուրդը հավատում էր այն բանին, որ շուտով նրա կյանքը լավը կդառնա, որ ծայրահեղ դեպքում նրա երեխաները երջանիկ կապրեն: Նա հույս ուներ, որ մյուս ժողովուրդները նույնպես երջանիկ կլինեն և ազատ ու հավասար, նրանք վերջապես կխաղաղվեն: Եվ այդ ժամանակ խաղաղություն կհաստատվի աշխարհում, ազատ շահագործումից և աղքատությունից»:[1]

Օ. Բարրյուելի «Հուշերից» անկախ և նրա հետ միաժամանակ 1797թ. Անգլիայում լույս տեսավ Էդինբուրգի համալսարանի պրոֆեսոր մասոն Ջոն Ռոբինսոնի «Բոլոր կրոնների և Եվրոպայի կառավարությունների դեմ ֆրանկմասոնների, իլլյումինատների գաղտնի հանդիպումներում և ընթերցանության ընկերություններում իրականացվող դավադրության ապացույցներ» աշխատությունը:[2] Նա գրեթե կրկնում էր Օ. Բարրյուելի առաջ քաշած գաղափարները մասոնական դավադրության մասին և նրա նման պնդում, որ անգլիական մասոնները ոչ մի մասնակցություն չունեն

[1] Lefèvre G. La Rèvolution francaise. Paris. 1968, p. 168.

[2] î»ë` Robinson J. Proofs of a Conspiracy against all the Religon and Goverments of Europe carried on in the secret meetings of Free Masons, Illuminati and Reading Societies.Edinburgh and London. 1797.

ֆրանսիական հեղափոխականների պլաններին: Բայց նա գտնում էր, որ հեղափոխական մասոնները իրենց գործակալներն ունեն Անգլիայում, որոնք հեղափոխություն են նախապատրաստում ոչ թե անգլիական մասոնական օթյանկներում, այլ բոլորովին այլ կազմակերպություններում:[1]

Այս հարցում Ջ. Ռոբինսոնի հետ համամիտ էր Անգլիայի վարչապետ Ուիլյամ Փիթթ Կրտսերի կաբինետը, որն անհանգստացած էր ոչ թե անգլիական, այլ իռլանդական մասոնների գործունեությունից:[2] Ու. Փիթթը չէր թաքցնում, որ «ֆրանսիական հեղափոխության համար» իր կաբինետը ծախսել է 24 մլն. ֆունթ սթերլինգ: Լորդ Մանսֆիլդը, ելույթ ունենալով խորհրդարանում, հայտարարեց, որ «Ֆրանսիայում հեղափոխության բորբոքման նպատակով ծախսված գումարները կապիտալի լավագույն կիրառում էր»:[3]

Ֆրանսիական հեղափոխությունը մասոնական դավադրության արդյունք էր համարում նաև եվրոպական բազմաթիվ արքունիքներում մեծ ընդունելության արժանացած, մոգի և ալքիմիկոսի համբավ ունեցող Ալեսսանդրիո Կալիոստրոն (1743-1795): Նա իր ժամանակի ամենահանրաճանաչ մարդկանցից մեկն էր, դարձել էր մասոն, ստեղծել եգիպտական արարողակարգի նոր օթյակ: Շնորհիվ անձնական մեծ հմայքի, փայլուն գիտելիքների և աներևակայելի արկածախնդրության, նա չափազանց երևելի, ամենուրեք պահանջված, մեծ կապեր ունեցող և մասոնական օթյակների գործունեությանը իրազեկ անձնավորություն էր: Նրան բարձր էին գնահատում մասոն «եղբայրներ» Իոհան Գյոթեն, Ֆրիդրիխ Կլիգերը, Ֆրիդրիխ Շիլլերը և ուրիշներ:[4] Պապական իշխանությունները, նրան համարելով խիստ վտանգավոր, 1790թ. հունվարին ձերբակալեցին: Ինկվիզիցիայի բարձրագույն խորհուրդը նրան մեղադրում էր այն բանում, որ նա հանդիսանում է «մասոնական աղանդի քարոզիչ և բանսարկու», իլլյումինատների օթյակի անդամ, որի նպատակը կայանում էր «միապետությունների և կաթոլիկ եկեղեցու լիակատար կործանումը»:

Ա. Կալիոստրոն խոստովանեց, որ ինքը մասոն և իլլյումինատ է և հանդիսանում է «Եգիպտական մասոնության» Մեծ Վարպետը, կամ, ինչպես ինքն իրեն անվանում էր, «Մեծ Ղպտին»: Նա միաժամանակ տեղե-

---

[1] Robinson J. Op. cit., p. 538-540.
[2] Ридли Дж. Указ. соч., стр. 176.
[3] Ланин П. Указ. соч., стр. 203.
[4] Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 124.

կացրեց, որ մասոնները դավադրություն են նախապատրաստել եվրոպական միապետությունների դեմ: Դրա վկայությունը համարելով Ֆրանսիայում բռկված հեղափոխությունը, նա հայտնեց, որ Ֆրանսիայում գործում են 20 հազար մասոնական օթյակներ՝ 180 հազար անդամներով, և հսկայական գումարներ ունեն Ամստերդամի, Ռոտտերդամի, Լոնդոնի ու Ջենովայի բանկերում: Այդ գումարներով մասոնները լրտեսներ են վարձել եվրոպական բոլոր արքունիքներում և պատրաստվում են հարձակվել միապետերի վրա: Ինքը՝ Կալիոստրոն, մեծ գումարներ է ստացել 1782թ. Վիլհելմսբադի և 1785թ. Ֆրանկֆուրտի մասոնական համագումարներում, որտեղ որոշում է կայացվել Ֆրանսիայի թագավոր Լուի XVI-ին և Շվեդիայի թագավոր Գուստավ III-ին մահվան դատապարտելու մասին:[1]

Ֆրանսիական հեղափոխությունը մասոնական դավադրության հետևանք ներկայացնելու գաղափար առաջացավ նաև ինկվիզիցիայի մոտ: Հունվարի 6-ին Հռոմում Ֆրանսիայի դեսպան կարդինալ դե Բերնին հայտնում էր. «Պապական իշխանությունները փորձում են բացահայտել՝ չի հանդիսանում արդյոք Ա. Կալիոստրոն դավադրության ղեկավար, որը նպատակ է հետապնդում կազմակերպել գաղտնի մասոնական օթյակներ և ամենուրեք տարածել վրդովության և խռովության ոգի ընդդեմ կառավարման հին կարգի»: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ա. Մ. Մոնմորենը նրան սառնասրտորեն պատասխանեց. «Ֆրանսիայում մասոնների առաջացման գաղտնածիսությունը, ինչպես երևում է, հանգեցրել է մի քանի հիմարացածների սնանկացմանը»:[2]

Հեղափոխության հետագա խորացման և զարգացման հետ մեկտեղ առողջ բանականությունը, սառնասրտությունն ու սթափ մտածելակերպը իրենց դիրքերը զիջեցին ոչ միայն մասոնական դավադրության, այլև «տամպլիերների վրեժխնդրության» գաղափարին: Այս գաղափարի հեղինակը նախկին մասոն Քադե դե Գասսիքուրն է: Նա հեղափոխության տարիներին հրատարակած «Ժակ դե Մոլեի վրեժը» գրքում պնդում էր, որ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV Գեղեցիկի կողմից ձերբակալված տամպլիերների գաղտնի օրդենի մեծ Մագիստրոս Ժակ դե Մոլեն գտնվելով բանտում մահապատժից առաջ 1314թ. ստեղծեց չորս օթյակներ, որոնց հանձ-

[1] Ридли Дж. Указ. соч., стр. 55; Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 68, 124; Блэк Дж. Указ. соч., стр. 540-542.

[2] Baldensperger F. Le mouvement des idèes dans l'èmigration française (1789-1815). Vol 2. Paris. 1924, p. 13.

նարարեց վրեժխնդիր լինել իր մահվան և օրդենի ջախջախման համար:

Նրա մահապատժից հետո շեվալյե դ'Օմոնը և մասոնական հանդերձանք կրող յոթ տամպլիերներ հավաքեցին այրված տամպլիերների մոխիրը, իսկ օթյակները երդվեցին ոչնչացնել Կապետինգների արքայատոհմը, պապական իշխանությունը, քարոզել ժողովրդների ազատությունը և համաշխարհային հանրապետությունը:[1] Տամպլիեր մասոնների օթյակները հիմնեցին ճիզվիթների օրդեն, որը կաթոլիկ մոլեռանդ Ֆրանսուա Ռավալյակի ձեռքով 1610թ. մայիսի 14-ին իրականացրեց Հենրի IV (1594-1610) թագավորի սպանությունը,[2] իսկ 1757թ. Դամյենը մահափորձ կատարեց Լուի XV-ի դեմ: Օրդենը 1647թ. սատարեց Նեապոլիտանական ապստամբության ղեկավար Թոմազո Անյելլոյին (Մազանելլոյին)՝ ընդդեմ իսպանական տիրապետության[3] և XVIIդ. անգլիական հեղափոխության առաջնորդ Օլիվեր Կրոմվելին, որը մասոն էր:[4]

Մասոնական օրդենի «անտեսանելի ձեռքով» 1791թ. ապրիլի 2-ին թունավորումից մահացավ Օ. Միրաբոն: Մասոնները նրանից վրեժխնդիր եղան այն բանի համար, որ նա դավաճանել էր հեղափոխությանը, ծախվել թագավորին և խոստացել նրան դադարեցնել հեղափոխությունը: 1792թ. մարտի 1-ին Ավստրիայի կայսր Լեոպոլդ II-ը պարահանդեսի ժամանակ շոկոլադից թունավորվեց և նույն օրը մահացավ: Մասոնները Լեոպոլդ II-ին պատժեցին այն բանի համար, որ նա 1791թ. օգոստոսի 27-ին Պիլնից պալատում համաձայնագիր էր ստորագրել Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ II-ի հետ՝ ի պաշտպանություն ֆրանսիական «միապետական կառավարման ձևի»:[5] Ֆրանսիական հեղափոխության դեմ հանդես գալու համար նույն թվականի մարտի 16-ին՝ Ստոկհոլմում, դիմակահանդեսի ժամանակ, մասոն դուքս Անկաստրյոմի ատրճանակից արձակած գնդակի

---

[1] Տես՝ Cade de Gassicourt Ch. L. Le tombeau de Jacques Molai. Paris. 1797. pp. 19-22, 83-85, 100,114, 124-125.

[2] Ридли Дж. Указ. соч., стр. 23; История Франции. Отв. ред. А.З. Манфред. Том 1, М., 1972, стр. 236.

[3] См: История Италии. Под. ред. С. Д. Сказкина. Том 1. М., 1970, стр. 494.

[4] См: Блэк Джереми. История Британских островов. Пер. с англ. СПБ, 2008,стр. 221-222. Найт Кристофер, Ломас Роберт. Ключ Хирама. Фараоны, масоны и открытие тайных свитков Иисуса. стр. 98-99. Fragmente. Fur und wieder die Freymautrery. Berlin. 1782, s. 150.

[5] Ланин П. Указ. соч., стр. 203.

զոհը դարձավ Շվեդիայի թագավոր Գուստավ III-ը (1771-1792):[1]

Ըստ Ք. դե Գասսիքուրի, ճիզվիթների քոլեջներում էին սովորում ֆրանսիական հեղափոխության ապագա շատ գործիչներ, որոնք մասսոն էին, իսկ նրանց առաջնորդը Ֆրանսիայի Մեծ Արևելք օթյակի Մեծ Վարպետ դուքս Լուի Ֆիլիպ Ժոզեֆ Օռլեանցին էր: Նրա գլխավորությամբ մասոնները դավադրություն կազմակերպեցին Լուի XVI թագավորի դեմ, որը 1793թ. հունվարի 21-ին գլխատվեց Փարիզի Հանրապետության հրապարակում: Երբ դահիճը թագավորի գլուխը ցույց տվեց հրապարակում հավաքված բազմահազար ամբոխին, մի մարդ բարձրացավ կառափնարան և բարձրաձայն հայտարարեց. «Ժակ դե Մոլե, քո վրեժը լուծվեց»: [2] Նույն թվականի հոկտեմբերի 16-ին թագավորի ճակատագիրը կառափնարանում կիսեց թագուհին՝ Մարի Անտուանետտը:

Մասոնները վրեժխնդիր եղան նաև Լուի Ֆիլիպ Օռլեանցուց, որը 1792թ. դեկտեմբերին հրաժարվեց մասոնությունից և Մեծ Վարպետի պաշտոնից:[3] 1793թ. նոյեմբերի 6-ին նա կառափնարանի արժանացավ: Ըստ Ք. դե Գասսիքուրի՝ դրանում արտառոց ոչինչ չկար, քանի որ նա նույնպես Բուրբոնների արքայատոհմից էր և գլխատված թագավորի զարմիկն էր և հրաժարվել էր մասոնությունից: Բացի այդ, յակոբինականների ահաբեկչությունը և սանկյուլոտների շարժումը նույնպես հանդիսանում էին մասոնների համընդհանուր գաղտնագործության պլանի անբաժան մասը:

Ժ. Լեֆրանկի, Օ. Բարրյուելի, Ք. դե Գասսիքուրի վարկածը ֆրանսիական հեղափոխության մասոնական դավադրություն լինելու մասին միանշանակ չընդունվեց հասարակական մտքի պատմությունում: 1801թ. Օ. Բարրյուելի աշխատության քննադատությամբ հանդես եկավ հեղափոխության առաջին շրջանի հայտնի քաղաքական գործիչ, Սահմանադրական ժողովի անդամ Ժան Ժոզեֆ Մունյեն (1758-1806): Իր աշխատությունում[4] նա խուսափում էր քննարկել մասոնական գաղափարների նմանությունը հեղափոխական սկզբունքների հետ: Գտնվելով վտարանդիության

---

[1] См: Ридли Дж. Указ. соч., стр. 163. История Швеции. Отв. ред. А. С. Кан. М. 1974, стр. 310-318. Цареубийства: Гибель земных богов. Сост. Н. В. Попов. М., 1998, стр. 315-332; Ланин П. Указ. соч., стр. 203.

[2] Блэк Дж. Указ. соч., стр. 560.

[3] Масонство в его прошлом и настоящем. Том I, стр. 78.

[4] Տես՝ Mounier J.-J. De l'influence attribuèe aux philosophes, aux Franc-Maçons et aux illuminès, sous la rèvolution en France. Tubingen. 1801.

մեջ և չտիրապետելով Օ. Բարրյուելի հսկայական տեղեկատվության ծավալին, Ժ. Մունյեն գրում էր, որ Ֆրանսիայում մասոնական օթյակները հեղափոխության ընթացքում իրենց հիմնական նպատակը մոռացել էին և վերածվել համախոհ մարդկանց բարեկամական ընկերությունների: Նրա կարծիքով, անգամ եթե մասոնները դավանում էին ազատություն և հավասարություն, միևնույնն է, այդ սկզբունքները չտեղափոխվեցին քաղաքական և սոցիալական բնագավառ:

Նա գրում էր, որ մասոնները միայն հեղափոխականների բարիկադներում չէին, այլ նրանց հակառակորդների, իսկ հիմա նրանք ավելի շատ են վտարանդիների շրջանում, քան հեղափոխության կողմնակիցների: Ժ. Մունյեն ժխտում էր մասոնական դավադրության գոյությունը և մասոնների կապը հեղափոխական գործունեության հետ: Նա անհեթեթություն էր համարում հեղափոխությունը վերագրել ֆրանկմասոններին, քանի որ մասոնական ընկերությունները և լուսավորիչների ստեղծագործությունները տարածված էին ամբողջ Եվրոպայով մեկ, բայց քաղաքական վերափոխումները տեղի ունեցան միայն Ֆրանսիայում և այն երկրներում, որտեղ ոտք դրեցին հեղափոխական զինվորները:[1]

Ժ. Մունյեի համոզմամբ՝ «Եթե նույնիսկ աշխարհում մեկ մասոն անգամ չմնա, բայց ունևորների իշխանությունը սկսի քայքայել պետական ֆինանսները, բորբոքի սեփական բանակին, թույլ տա անկարգություններ կառավարման բնագավառում, իսկ հետո մի տեղում հավաքի ժողովրդի բազմաթիվ ներկայացուցիչների, որպեսզի նրանցից օգնություն խնդրի, հեղափոխությունները անխուսափելի կլինեն[2]:

Ժ. Մունյեի աշխատությունը ժամանակակից ֆրանսիացի պատմաբան Մ. Ռիքեի բնութագրմամբ՝ ամբողջ XIX դ. ընթացքում և անգամ XXդ. շարունակեց ոգևորել հակահեղափոխականների առաջատար գաղափարախոսներին: Դրա հետևանքով Օ. Բարրյուելի «Հուշերի» նկատմամբ ձևավորվեց բացասական մոտեցում: Մասոնական դավադրության մասին ժխտողական դիրքորոշումը հանրագումարի բերեց ռուսական լիբերալ պատմագրության նահապետ Նիկոլայ Կարեևը: Նա գրում էր. «Հեղափոխության հետ մասոնության կապը հորինել են ճիզվիթները, և հազվադեպ է որևէ մեկի կողմից սատարվում, պատմաբանների մեծամասնությունը

[1] Ibid. p. 170-177, 180-181.
[2] Ibid. p. 181.

այդ կապը չի ճանչում»:[1]

XIX դ. ընթացքում Օ. Բարրյուելի աշխատությանը ժամանակ առ ժամանակ անդրադառնում էին հիմնականում այն հեղինակները, որոնք անմիջականորեն կապված էին մասոնների հետ: Ֆրանսիացի հայտնի սոցիալիստ և պատմաբան, բարձրաստիճան մասոն Լուի Բլանը (1811-1882)[2] «Ֆրանսիական հեղափոխության պատմությունը» աշխատության երկրորդ հատորում, չբաժանելով Օ. Բարրյուելի վարկածը մասոնական դավադրության մասին, միաժամանակ կարևորում է մասոնական օթյակների դերը հեղափոխությունում: Նա գրում է, որ մասոնությունը օբյեկտիվորեն թշնամաբար էր տրամադրված միապետական կարգերի և եկեղեցու նկատմամբ և ամենուրեք հանդես էր գալիս «այնպիսի օրինակելի հասարակության օգտին, որը հիմնված է այն սկզբունքների վրա, որոնք հակառակ էին նրանց, որոնց վրա նիրհում էր պետական կարգը»:[3] Հենվելով Օ. Բարրյուելի բերած փաստերի վրա՝ նա պնդում էր, որ ֆրանսիական հեղափոխության շատ գործիչներ մասոնական օթյակների անդամներ էին:[4]

Նիկոլայ Կարեևի կարծիքով՝ «Լուրջ պատմաբաններից ոչ մեկը հետագայում չաջակցեց Լուի Բլանին այդ թեմայի մշակման հարցում»:[5] Անկախ դրանից, ֆրանսիական հեղափոխության նախապատրաստման գործում մասոնների ունեցած առանձնահատուկ արժանիքների մասին Լ.Բլանի միտքը լայն արձագանք գտավ մասոնական գաղափարախոսության ավանդույթներում, և ոչ միայն մասոնական: Ամբողջ XIXդ. ընթացքում մասոնական գաղափարախոսները, չժխտելով իրենց վճռական դերը հեղափոխությունում, հենվում էին բացառապես Օ. Բարրյուելի փաստերի վրա՝ «անկեղծորեն խոստովանելով» իրենց մասնակցությունը:

Մասոնական դավադրության վերաբերյալ պատմաբանների և մասոնագետների վերաբերմունքը չփոխվեց նաև XXդ. սկզբում: Գերմանական մասոնների և իլլյումինատների պատմության լավագույն գիտակներից Ռ. Լե Ֆորեսթյեն գրում էր, որ Օ. Բարրյուելի բարեխղճորեն ուսումնասիրած հսկայական քանակությամբ գրականությունը և մանրակրկիտ վերլուծությունը հնարավորություն է տվել նրան ստեղծել կուռ, ամբողջական և լավ

[1] Кареев Н. И., Историки французской революции. Том I. Французские историки первой половины XIX века. Л., 1924, стр. 242, прим 1.

[2] Տես՝ Dictionnaire de la Franc-Maçonnerie, P. 143; Карпачев С. П., Указ. соч., стр. 66.

[3] Блан Л. История французской революции. Т. 2, СБП, 1907, стр. 60.

[4] Там же, стр. 67.

[5] Кареев Н. И. Указ. соч., стр. 242.

հիմնավորված, ոչ գաղափարամետ աշխատություն:[1]

Այս կարծիքը չէին կիսում մասոնության քաղաքական և գաղափարական հակառակորդները, ովքեր վճռականորեն մերժում էին մասոնական դավադրության գաղափարը՝ անվանելով այն ճիզվիթների հորինվածքը: Ուշագրավն այն է, որ բանավիճող երկու կողմերը իրենց օգտին փաստարկները փոխառնում էին միմյանցից, իսկ նրանց ուսումնասիրության առարկան շարունակում էր մնալ Օ. Բարրյուելի «Հուշերը»:

XVIIIդ. ֆրանսիական մասոնության լավագույն գիտակներից Գ. Բորը այս կապակցությամբ գրում էր. «Որքան շատ էին այդ սյուժեի մասին գրում, այնքան ավելի շատ էր այն մութ թվում»:[2] Գ. Բորը մասոնության համակիր չէր և իր հակակրանքը մասոնական փիլիսոփայության նկատմամբ արտահայտում էր բացահայտ, քանի որ հանդիսանում էր ավանդական միապետության և կաթոլիկ եկեղեցու արժեքների համակիր: Բայց նա մերժում էր մասոնության թեման կամայականորեն մեկնաբանելու ցանկացած միտում: Եթե մասոն պատմաբանների աշխատությունները, գրում էր նա, հաճախ բովանդակում են կարևոր տվյալներ Լուսավորության դարաշրջանում մասոնական օրդենի կոնկրետ գործունեության մասին, ապա նրանց հակառակորդների պնդումները չեն հիմնվում անառարկելի ապացույցների վրա: Նա պահպանողական պատմաբանների նման գտնում էր, որ ֆրանսիական միապետության կործանման համար չկային օբյեկտիվ սոցիալ-տնտեսական պատճառներ, ուստի «Մասոնները և ֆրանսիական հեղափոխությունը» թեմայի ուսումնասիրության համար առաջարկում էր հեղափոխության ակունքները փնտրել ամենից առաջ գաղափարախոսության բնագավառում: Նա հեղափոխության բռնկման հիմնական նախադրյալները համարում էր ոչ այնքան մասոնական օթյակների տարածված լինելը, որքան «մասոնության ոգին»: Գ. Բորի համոզմամբ՝ մասոնական գաղափարախոսությունը օբյեկտիվորեն քայքայում էր կաթոլիկության հիմքերը և նպատակ էր հետապնդում «մարդկանց բերել կատարելության վիճակի կյանքի բոլոր բնագավառներում՝ հավասարություն հաստատելու ճանապարհով»:

Մասոնության հավասարության գաղափարը, նշում էր Գ. Բորը, արտաքուստ չի հակասում քրիստոնեական արժեքներին, բայց իր էությամբ

[1] Տես՝ La Forestier R. Les Illuminès de Bavière et la Franc-Maçonnerie allemande. Geneve, 1974.(repr. de l'èdition de Paris, 1914).

[2] Bord G. La Franc-Maçonnerie en France des origines a՝ 1815. t. 1. Paris, 1908, p. X.

նախատեսում է «հնազանդության հավասարությունը» փոխարինել «հպարտության հավասարությամբ», որի ժամանակ հասարակության տականքները սկսում են իրենց հավասար համարել մարդկության լավագույն մտածողների հետ: Այդ պատճառով նրան վրդովեցնում էր մասոնական «հավասարության հայեցակետը, որը ի վերջո հանգեցնում է ցանկացած իշխանության աստիճանակարգության վերացման և անխուսափելիորեն վերադարձնում մեզ դեպի սոցիալիզմ»[1]:

Մասոնական օթյակների հսկայական արխիվների բազմաթիվ փաստաթղթերի վերլուծության հիման վրա Գ. Բորը եկավ այն եզրակացության, որ մասոնությունը հսկայական դեր է խաղացել հեղափոխության գաղափարական նախապատրաստության հարցում, բայց չի հանդիսացել միակ ուժը: Մասոնությունը, նրա համոզմամբ Լուսավորության դարաշրջանի գաղափարական լայն շարժման ուժերից մեկն էր, որը վերջնական արդյունքում հանգեցրեց Հին կարգերի կործանմանը: Մասոնությունն ընդհանուր առմամբ չէր ձգտում հեղափոխության, բայց նրա քարոզած հավասարության գաղափարը հասարակական գիտակցությունը նախապատրաստեց սոցիալական հեղաշրջման:[2] Ըստ Գ. Բորի, այդ հեղաշրջման զոհերից մեկն էլ մասոնությունն էր: Ճշմարտությունն ու արդարությունը պահանջում են ասել, գրում էր նա, որ մասոնների շրջանում զոհերն ավելի շատ էին, քան դահիճները:[3] Նա պնդում էր, որ XVIII դարում միայն մասոնները չէին դավանում դեիզմի և էգալիտարիզմի սկզբունքները: Մասնավորապես, այդ սկզբունքները ժամանակին մշակել էին ֆրանսիացի լուսավորիչները, որոնք դրանով հանդես էին գալիս մինչ հեղափոխությունը: XVIII դարի ֆրանսիական մասոնների բազմաթիվ փաստաթղթերի և հատկապես Մեծ Արևելք օթյակի արխիվների ուսումնասիրության վրա նա հանգեց այն եզրակացության, որ մասոնությունը հանդիսացել է հեղափոխության նախապատրաստման առաջատար դերակատարը:

Ֆրանսիացի պահպանողական պատմաբան Օգյուստ Կոշենը նույնպես մասոններին առաջատար դեր էր հատկացնում հեղափոխության նախապատրաստման գործում, բայց վճռականորեն մերժում էր Օ. Բարրյուելի «դավադրության» տեսությունը: Նա մասոնական դավադրության թեմային նոր մոտեցում ցուցաբերեց: Օ. Կոշենը նշում էր, որ ֆրանսիա-

[1] Ibid. p. 181.
[2] Ibid. p. XXIII-XXIV.
[3] Ibid. p. XVI.

կան հեղափոխությունը մասոնական դավադրություն չէր, բայց նաև ամբողջ ազգի գործը չէր: Հին կարգի կործանումը կապված էր ոչ այնքան մասոնական սկզբունքների տարածմամբ, կամ ավելի լայն ընդգրկմամբ, լուսավորական գաղափարախոսությամբ, որքան նոր տիպի կոլեկտիվ գիտակցությունների ծագմամբ: Նրա կարծիքով՝ այդպիսի գիտակցության նոր տիպ ձևավորվել էր հեղափոխությանը նախորդած երեսուն տարիների ընթացքում:

Օ. Կոշենը դա անվանում էր «մտքի ընկերություններ», որոնց թվին դասում էր ոչ միայն մասոնական օթյակները, այլև ակադեմիաները, գրական, փիլիսոփայական, գյուղատնտեսական և այլ ընկերությունները, թանգարանները, լիցեյները և հասարակական մյուս միավորումները, որոնց թիվը XVIIIդ. Ֆրանսիայում բավականին շատ էր: Այդ ընկերությունները ծագեցին նպատակ ունենալով բացահայտել ճշմարտությունն ու ստեղծել նոր, ընդհանուր գաղափարախոսություն:

«Մտքի ընկերությունների» բնութագրական գիծը լիակատար հրաժարումն էր «իրական գործունեությունից», որոնք բոլոր «պոզիտիվ հասկացությունները», ամենից առաջ՝ հավատը, հեղինակությունը, ավանդույթները, իշխանության հանդեպ հարգանքը, հայտարարել էին «նախապաշարումներ»:

«Սոցիալական մտածողության» տարածումը հանգեցրել էր «լուսավորության առաջընթացի», որը խոր փոփոխություններ էր առաջացրել հասարակական գիտակցությունում: Դրա արդյունքում խաթարվել էին գոյություն ունեցող սոցիալական կապերը, որը հանգեցրել էր «անհատականությունների խռովության ընդդեմ բոլոր հիմքերի»:

Օ. Կոշենի պնդմամբ՝ «Մտքի ընկերությունները» XVIII դարի վերջին Ֆրանսիայում պետության մեջ ստեղծել էին ինքնատիպ «գրական պետություն»: Այն ոչ մի կերպ կապված չէր իրական կյանքի հետ և իրենից ներկայացնում էր «աշխարհ ամպերում», որի մուտքը բաց էր միայն լուսավորյալների համար: Այդ աշխարհի մայրաքաղաքը Ֆրանսիայի Մեծ Արևելք մասոնական օթյակն էր, օրենսդիրները՝ հանրագիտակները, իսկ խորհրդարանները՝ աշխարհիկ սալոնները: Յուրաքանչյուր քաղաքում գրական ընկերություններն ու ակադեմիաները իրենցից ներկայացնում էին «մտածողների կայազորներ», որոնք պատրաստ էին կենտրոնի հրահանգի դեպքում հանդես գալ ընդդեմ հոգևորականության, արքունիքի

կամ գրական ընդդիմախոսների[1]: Օ. Կոշենը արխիվային նյութերի ուսումնասիրության հիման վրա բացահայտեց բրետոնյան 39 մասոնական օթյակների և նրանց 850 անդամների գոյությունն ու մասնակցությունը երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաև մասոնական օթյակներում քննարկված հարցերի շրջանակը: Դա նրան հնարավորություն տվեց մասոնական օթյակները դասել «մտքի ընկերությունների» շարքը և նրանց համարել միապետության դեմ պայքարի կազմակերպման օրրանը: Ընդ որում՝ նա օթյակների դերը չէր գերագնահատում, այլ թվարկում էր հասարակական մյուս ընկերությունների հետ միևնույն շարքում:

Օ. Կոշենը գտնում էր, որ «գրական հանրապետության» մոդելի հիմքում ընկած էր Ժան Ժակ Ռուսսոյի «հասարակական պայմանագրի» տեսությունը: Նրա կրծիքով՝ Ժ.Ժ. Ռուսսոյի քաղաքական տեսլականի գլխավոր գծերը՝ կարծիքների բացարձակ ազատությունը, բոլոր քաղաքացիների հավասարությունը, քվեարկության ճանապարհով որոշումներ ընդունելը վաղուց իրականություն էին դարձել «փիլիսոփայական ընկերություններում»:

Ազատության և հավասարության մասոնական սկզբունքները իրենցից ներկայացնում էին սոսկ մտահայեցական կատարելատիպ, վերացական բան, որը կիրառելի էր միայն հորինովի՝ «ամպերում աշխարհի» համար, բայց ոչ իրական կյանքի: Իրականության հետ բախումը անխուսափելիորեն պետք է բերեր տվյալ համակարգի կործանմանը: Ֆրանսիական հեղափոխությունը ճիշտ այդպիսի բախում էր, երբ «ամպերում աշխարհը» փորձում էր տիրել իրական աշխարհին:[2] Դրա արդյունքում ձևավորվեց մարդկանց մի խումբ, որն իրեն ենթարկեց ընկերությունների ողջ գործունեությունը: «Խռովության կորիզը» հանդիսանում էին մասոնական ընկերությունները, իսկ ժողովուրդը որպես կույր գործիք հետևում էր նրան:[3]

Մասոն պատմաբան Գաստոն Մարտենը «Ֆրանսիական մասոնությունը և հեղափոխության նախապատրաստումը» աշխատությունում, զարգացնելով Ֆրանսիայի Մեծ Արևելք օթյակի պաշտոնական դիրքորոշումը, հիմնավորում էր, որ ազատ քարտաշների ընկերությունը հանդի-

[1] Cochin A . Les sociétée de pensée la démocratie. Etude d' histoire révolution naire. Paris, 1921, p. 92.
[2] Cochin A., La Révolution et la libre-pensée. Paris. 1924, p. 23-24, 57-61, 118, XXX.
[3] Ibid. p. 189.

սանում էր Ֆրանսիայում Լուսավորության սկզբունքների տարածման կարևորագույն աղբյուրը և հակամիապետական շարժման հիմնական կենտրոնը: Նա պնդում էր, որ Սահմանադրական ժողովի պատգամավորների երկու երրորդը մասոններ էին:[1]

Մասոնության դերի մասին բավական ինքնատիպ վարկածի հեղինակ Բ. Ֆեյի կարծիքով՝ 1688թ. անգլիական «փառավոր հեղափոխությունից» ծնված մասոնությունը իր առջև խնդիր էր դրել տարածել օրդենի գաղափարներն ու փորձը եվրոպական մյուս երկրներում: Դրանով մասոնությունը նպատակ էր հետապնդում Անգլիայի հասարակական-քաղաքական կարգերը հաստատել նաև մյուս երկրներում: Նա համոզված էր, որ հատկապես մասոնությունն է ձևավորել վերահաս ֆրանսիական հեղափոխության գաղափարախոսությունը վերափոխումներ անցկացնելու նպատակով և դրան հասնելու համար իր օթյակներում կադրեր է պատրաստել:[2]

Օ. Կոշենի, Ֆ. Ֆեյի և Գ. Մարտենի աշխատությունների քննադատությամբ հանդես եկան ֆրանսիական լիբերալ պատմաբանները: Նրանցից Ալֆոնս Օլարը գրում էր, որ Օ. Կոշենը վերակենդանացրել է աբբա Օ. Բարրյուելի վաղեմի գաղափարը, ըստ որի, հեղափոխությունը ծնվել է մասոնական օթյակներում: Նրա կարծիքով՝ Օ. Կոշենի «Մտքերի ընկերությունը և հեղափոխությունը Բրետանում (1788-1789)» երկհատորյակը «այնքան բարդ է ընկալման համար, որ նույնիսկ ինքը ոչ միայն չի կարողացել այն հաղթահարել, այլև հասկանալ հեղինակի մտահղացումը: Անհրաժեշտ է համբերություն, որպեսզի կարողանաս օգտագործել նյութերով չափազանց հագեցած այդ երկու հատորը»:[3]

Ֆրանսիական սոցիալիստական պատմագրության ճանաչված պատմաբան Ալբեր Մաթյեզի համոզմամբ՝ Օ. Կոշենը բավական փորփրել է արխիվներում, բացահայտել բազմաթիվ մանրամասնություններ, բայց ոչինչ չի հայտնաբերել վաղօրոք նախապատրաստած իր վարկածը հիմնավորելու համար: Նա փորձել է «երիտասարդացնել» աբբա Օ. Բարրյուելի մեկնաբանությունները, թե իբր մասոնները սկիզբ են դրել հեղա-

[1] Տես՝ Martin G. La Franc-Maçonnerie française et la préparation de la Révolution. Paris, 1926.

[2] Fay B. Le Franc-Maçonnerie et la révolution intellectuelle du XVIIIe siècle. Paris. 1935, p. 261.

[3] Aulard A., Les sociétes de pensée et la Rèvolution en Bretagne (1788-1789), par M. Augustin Cochin. La Révolution française. 1926. t. 79. p. 248.

փոխությանը: Օ. Կոշենը, հավանաբար, չի կռահել, գրում է նա, որ «մինչև 1789թ. մասոնական օթյակները հեռու էին այն բանից, որպեսզի դառնային «մտքի ընկերություններ», նրանք հանդիսանում էին հարբեցողության և խրախճանքների ընկերություններ: Նրանք միմյանց հետ ընդհանուր ոչինչ չունեին, բացի այն բանից, որ միանման համալրում էին իրենց շարքերը հարուստ դասերից: Նրանք վտարանդիության ուղարկեցին իրենց անդամների մեծ մասին: Նրանց քաղաքական դերը աննշան էր»: Բացի այդ, ընկերություններն ընդգծված իրենց հեռու էին պահում քաղաքականությունից, իրենց բնույթով չափազանց տարբեր էին, միմյանց հետ կապ չէին պահպանում, որպեսզի նրանց անդամները տարբեր ճանապարհներով գնային քաղաքականություն:[1]

Ա. Մաթյեզը ընդգծում էր, որ մասոնական օրդենի ղեկավարները արգելում և դատապարտում էին օթյակների անդամների մասնակցությունը քաղաքականությանը, հետևաբար մասոնները չէին կարող հանդես գալ լուսավորական գաղափարների քարոզչությամբ:

Այս հարցում նրա հետ համամիտ էր Դ. Մորնեն, ըստ որի, միապետության տարիներին ազնվականությունը ամենևին էլ չէր գտնում, որ մասոնական օթյակները խարխլում են դասային արտոնությունների հիմքերը, իսկ հոգևորականությունը մասոններին չէր համարում կրոնի թշնամի: Դրա վկայությունը հանդիսանում է այն փաստը, որ մասոնական օթյակների անդամները նախահեղափոխական տարիներին հանդիսանում էին ազնվականներն ու հոգևորականները: Նրանք իրենց ընկերություններում զբաղված էին միայն զվարճանքներով, գինարբուքներով, հարգանքով էին լցված դեպի եկեղեցին և գործող պետական կարգերը: Թեպետ, մասոնական օթյակներում ընդգրկված էին Լուսավորության դարաշրջանի երևելի մի շարք փիլիսոփաներ, իսկ արխիվներում կարելի է հանդիպել ծագումով մասոնական և բնույթով լուսավորական բազմաթիվ փաստաթղթերի, ապա դա ամենևին չի նշանակում, որ նրանք ընդդիմադիր տրամադրություններ ունեին: Հետևաբար, եզրակացնում է Դ. Մորնեն, անհիմն են Գ. Մարտենի պնդումները և աբբա Օ. Բարրյուելի առաջ քաշած մասոնական դավադրության «լեգենդը», որոնք սոսկ «ճշմարտության երևութականություն» են ստեղծում: Խոստովանելով, որ Օ.Կոշենը «արտակարգ ջանասիրությամբ» փորփրել է բրետոնյան մասոնների արխիվները

[1] Martien A. Cochin A. La Révolution et la libre-pensee. Annales historique de la Révolution française.1925, N 8, p. 80-81, 179.

ու դրանց հիման վրա շարադրել իր աշխատությունը, Դ. Մորնեն, այնուամենայնիվ, չէր բաժանում նրա այն միտքը, ըստ որի, հասարակական ընկերությունները, այդ թվում՝ մասոնական օթյակները, ակտիվ դեր են խաղացել նախահեղափոխական Ֆրանսիայում ընդդիմադիր շարժում ձևավորելու գործում:[1]

Ա. Լանթուանը «Ֆրանսիական մասոնության պատմությունը» աշխատությունում մասոնական օթյակների գործունեությունը դիտարկում էր ոստիկանության զեկուցագրերի պրիզմայով: Նա նույնպես ժխտում էր մասոնական դավադրության գաղափարը և օրդենի նպատակային գործունեությունը միապետական կարգը տապալելու ուղղությամբ: Նա միաժամանակ ընդունում էր, որ Օ.Կոշենի եզրակացությունները սկզբունքորեն կեղծ չեն, քանի որ «մասոնությունը իր գոյությամբ նպաստում էր հասարակության հիմքերի քայքայմանը: Մարդիկ, երբ հավաքվում են, անգամ անմեղ գործունեությունում, փոխում են իրենց հայացքները: Ահա թե ինչու չի կարելի պնդել, որ մասոնությունը ոչ մի առնչություն չունի ուղեղների շարժման հարցում, որը 1789թ. ժողովրդական ապստամբություն առաջացրեց: Նրա ակամա մեղքը ամենևին էլ շատ չէր, քան աշխարհիկ ընկերությունների, սալոնների ու ընթերցարանների դերը»:[2]

Երկրորդ աշխարհամարտից հետո ֆրանսիական մասոնության պատմության ուսումնասիրության գործում իսկական եռուզեռ սկսվեց: Ֆրանսիայի Ազգային գրադարանում ստեղծվեց մասոնության հատուկ ֆոնդ: Արդյունքում, սկսած 1960-ական թթ. լույս տեսան տասնյակ նոր ուսումնասիրություններ և հարյուրավոր հոդվածներ մասոնության պատմության, այդ թվում՝ մասոնական դավադրության վարկածի մասին: «Մասոնները և հեղափոխությունը» հիմնախնդրի լուսաբանմանը ձեռնամուխ եղան ֆրանսիական «դասական» պատմագրության ներկայացուցիչները:

Ժորժ Լեֆեվրի մահից հետո այս ուղղության պատմագրության ղեկավարությունը ստանձնած Ա. Սոբուլի նախագահությամբ Մասոնական հետազոտությունների ինստիտուտը 1969թ. կազմակերպեց կոլլոքվիում՝ XVIIIդ. մասոնության պատմության վերաբերյալ և 1973թ.՝ Ֆրանսիայի Մեծ Արևելք օթյակի ստեղծման 200-ամյակին նվիրված գիտաժողով: Դրանց նյութերը տպագրվեցին Ա. Մաթյեզի հիմնադրած Ռոբեսպիերա-

[1] î»ë՝ Mornet D. Les Origines intellectuells de la Révolution francaise (1715-1787). Paris, 1933. p. 364-366, 368-373.

[2] Lantonine A. Histoire de la Franc-Maçonnerie française. Paris, 1935, p. 178-179.

կան հետազոտությունների ընկերության ամսագրում:

Ա. Սոբուլի կարծիքով՝ մասոնության վերաբերյալ գիտական գրականությունում ձևավորվել են երեք հիմնական ուղղություններ ֆրանսիական հեղափոխությունում մասոնական օրդենի ունեցած դերակատարման մասին: Առաջին երկու ուղղությունները նա համարում էր ծայրահեղ, իսկ երրորդը՝ միջին: Առաջին կամ տրիումֆալ ուղղության ներկայացուցիչներ Ա. Սոբուլը անվանում էր Գաստոն Մարտենին ու նրա համախոհներին, ովքեր 1789-1791թ. հեղափոխական իրադարձություններում ընդգծում էին մասոնական օրդենի առաջատար դերը: Երկրորդ ուղղությունը նա անվանում է հակահեղափոխական, որի ներկայացուցիչներ Ժ. Լեֆրանկը, Օ. Բարրյուելը, Բ. Ֆեյը և Օ. Կոշենը պաշտպանում էին հեղափոխության մասոնական դավադրության վարկածը: Եվ երրորդ, այսպես կոչված, միջին ուղղությունը ներկայացնում էին Ա. Մաթյեզը և Ժ. Լեֆեվրը:

Ա. Սոբուլը մասոնության պատմության ուսումնասիրության արդյունքում հանգել էր հետևյալ եզրակացության.

Առաջին. մասոնությունը որոշակի դեր է խաղացել Լուսավորության տարածման գործում, բայց ամենևին չի հանդիսացել այդ գործընթացի շարժիչ ուժը: **Երկրորդ.** մասոնական օրդենը իր շարքերում համախմբում էր հոգևորականության, ազնվականության և բուրժուազիայի ներկայացուցիչներին, հետևաբար չէր կարող պայքարել ավանդական սոցիալական պաշտոնակարգության դեմ իր օթյակները չենթարկելով կործանման վտանգի:

Երրորդ. հեղափոխության խորացմանը զուգահեռ բուրժուա մասոնները խոր հակակրանք էին տածում դեմոկրատների և հանրապետականների, առավել ևս սանկյուլոտների նկատմամբ:

Ըստ Ա. Սոբուլի, անհրաժեշտ էր մի կողմ դնել ծայրահեղ տեսակետերը և շարունակել ուսումնասիրել մասոնության դերակատարումը հեղափոխության մեջ առանց ավելորդ բանավեճի:[1] Նա Օ. Կոշենին դասելով մասոնական դավադրության տեսության կողմնակիցների շարքը, հայտարարում էր, որ գիտականորեն հնարավոր չէ հիմնավորել, առավել ևս ապացուցել նրա առաջադրած դրույթները, որոնք այլևս ոչ ոքի չեն հետաքրքրում, բացի պատմաբաններից:

Գրեթե ամբողջովին կրկնելով Ա. Մաթյեզի եզրակացությունները, Ա. Սոբուլը իրականում շատ քիչ բան էր հերքում Օ. Կոշենի փաստարկներից:

[1] Soboul A. Le Franc-Maçonnerie et la révolution française. AHRF, 1974, N 215, p. 76.

Նա ընդունում էր, որ հեղափոխության նախօրյակին մասոնական օթյակները հանդիսանում էին քաղաքական մշակույթի ձևավորման ինքնատիպ դպրոցներ: Այստեղ լուսավորյալ բուրժուազիան և լիբերալ ազնվականությունը մշակում էր հրապարակային ելույթների, բանավեճերի, ընտրությունների կարողություններ, որոնք հետագայում անհրաժեշտ եղան Սահմանադիր ժողովի գործունեության ժամանակ: Օթյակներում առկա «իսկական հավասարության» գաղափարը հետագայում իր արտահայտությունը գտավ հեղափոխականների լիբերալ թևի ծրագրում, իսկ քաղաքական ակումբների ձևավորման գործում կարևոր դեր խաղացին մասոնական օթյակներն ու նրանց կապերը:[1] Ա. Սոբուլի հետ համակարծիք էին Ժ. Բրյուան, Ա. Քորնուն, Ա. Լադրեն և ուրիշներ:

1984թ. «դասական» պատմագրության նոր առաջնորդ Մ. Վովելը հանդես գալով Մասոնական հետազոտությունների ինստիտուտի նոր կոլլոքվիումում ընդգծեց, որ ուսումնասիրելով «Մասոնությունն ու Լուսավորությունը հեղափոխության նախօրյակին» թեման, դրանով իսկ մենք արծարծում ենք հիմնախնդիրների մի ամբողջ շարք, որոնք ամբողջովին վերաբերում են հեղափոխության բնույթին, դեմոկրատիայի ակունքներին և նրա զարգացման ուղիներին:

«Դասական» պատմագրության ներկայացուցիչները արհեստականորեն շեղվում են մասոնության դերի մասին առաջադրված բանավեճից և երկրորդ պլան մղելով այդ չափազանց բարդ ու համակողմանի խնդիրը, գործը հասցնում են պարզ երկընտրանքի. կար արդյո՞ք դավադրություն, թե՝ ոչ: Վճռականորեն ընտրելով երկրորդ տարբերակը՝ նրանք առհասարակ մերժում են մասոնության ցանկացած դերակատարում հեղափոխության նախապատրաստման և իրականացման գործում: Բայց բացահայտ ժխտողական այդ դիրքորոշումը ամենևին համոզիչ չէ: Բանն այն է, որ մասոնական օթյակները եղել են բազմամարդ, իսկ նրանց անդամները ամենավճռական դեր են խաղացել հեղափոխական բազմաթիվ իրադարձություններում: Ուշագրավն այն է, որ այս իրողությունն իրենց աշխատություններում ակամա խոստովանում են նաև այս ուղղության ներկայացուցիչները:

«Դասական» պատմագրությանը հակադրվող այն ուսումնասիրողները, ովքեր ամենայն պատասխանատվությամբ և հանգամանորեն ստուգում են Օ. Բարրյուելի վկայակոչած աղբյուրները, բերած փաստարկնե-

[1] Ibid. p. 78-79, 82-83.

ը, ամենևին կատեգորիկ չեն իրենց եզրակացություններում: Նրանք այն կարծիքին են, որ բազմաթիվ հարցադրումներ իրապես գիտական հիմնախնդիրներ են և կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրության:

XXդ. վերջին ֆրանսիական հեղափոխության պատմագրությունում գաղափարախոսական հակամարտության թուլացումը հնարավորություն տվեց հրատարակել մի շարք աշխատություններ, որոնց հեղինակները փորձում էին անաչառորեն վերլուծել աբբա Օ. Բարրյուելի աշխատությունը: 1978թ. լույս տեսավ հեղափոխության ռևիզիոնիստական պատմագրության առաջնորդ Ֆ. Ֆյուրեի «Մտորումներ ֆրանսիական հեղափոխության մասին» աշխատությունը, որի մի ամբողջ գլուխը նվիրված էր Օ. Կոշենի աշխատությունների վերլուծությանը: Նա, բարձր գնահատելով թեմայի լուսաբանման գործում Օ. Կոշենի նորարարական մոտեցումը, ընդգծում էր, որ նա օգտագործել է պատմական սոցիոլոգիայի մեթոդները միապետության տարիներին քաղաքական մշակույթի նոր ձևերի ծագման ու զարգացման գործընթացի ուսումնասիրության նպատակով: Նա գտնում էր, որ մասոնական դավադրության տեսության թե կողմնակիցները թե հակառակորդները դուրս չեն եկել նկարագրողական պատմագրության շրջանակներից, քանի որ փորձել են մեկնաբանել իրադարձությունները՝ ելնելով նրա մասնակիցների սուբյեկտիվ մտադրություններից:

Ֆ. Ֆյուրեն այս իմաստով Օ. Կոշենի աշխատությունը համարում էր քննադատական պատմագրության լավագույն օրինակ, քանի որ նա կեցությունը տարանջատում էր կեցության քննադատությունից և հետազոտելով քաղաքական ու մշակութային զարգացման դինամիկան դեմոկրատական միությունները՝ «մտքի ընկերությունները», ներկայացնում էր որպես օբյեկտիվ գործընթաց, որը կախված չէ նրա մասնակից անհատների սուբյեկտիվ կարծիքներից: Նրա համոզմամբ Ա. Օլարն ու Ա. Մաթյեզը մերժում են Օ. Կոշենի աշխատությունները նրա քաղաքական հայացքների համար և ոչ թե գիտական հարցադրումների:[1]

Ֆ. Ֆյուրեի աշակերտ Ռ. Ալեվին 1984թ. հրատարակած աշխատությունում անդրադառնում էր XVIII դարում Ֆրանսիայում մասոնական օթյակների տարածման դինամիկային: Նա ընդգծում էր մասոնության պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունը սոցիոմշակութային պատմության ենթատեքստում՝ որպես «Լուսավորության սոցիալիզացման» գործընթացի բաղկացուցիչ մաս: Ռ. Ալեվին ցույց էր տալիս, որ այս-

[1] Furet F. Penser la Révolution française. Paris. 1978. p. 213-221.

պիսի մոտեցում մասոնության պատմությանը երկրորդ աշխարհամարտից հետո ցույց էին տալիս երեք հեղինակներ՝ Գ. Բորը, Դ. Մորնեն և հատկապես Օ.Կոշենը: Նա նշում էր, որ Ա. Մաթյեզը անարդարացի է քննադատել Օ. Կոշենի հայեցակետը: Նրա կարծիքով քննադատելով սոցիոլոգիական մոտեցումը և մնալով պոզիտիվիստական պատմագրության դիրքերում, Ա. Մաթյեզը փորձել է մասոնական շարժման պատմությունը մեկնաբանել նրա մասնակիցների պատկերացումներից ելնելով: Նա չի կարողացել դուրս գալ մասոնական դավադրության տեսության շրջաններից և, քանի որ Լուսավորության դարաշրջանում դավադրությունը բացակայում էր, ուստի Ա. Մաթյեզին մասոնության դերը թվում էր աննշան:

Ռ. Ալեվին մասոնական օրդենին առանձնահատուկ տեղ էր հատկացնում «մտքի ընկերությունների» շարքում, որը լինելով գաղտնի կազմակերպություն, ուներ ինքնատիպ գաղափարախոսություն և գործունեություն ծավալելու համար պետությունից թույլտվության կարիք չուներ: Մասոնության գաղափարախոսության հիմքում ընկած հավասարության սկզբունքն ամբողջովին հակասում էր Հին կարգի ավանդական արժեքների համակարգին և վերջին հաշվով դարձավ նրա գերեզմանափորը: Նրա համոզմամբ՝ յուրաքանչյուր կամավոր ընկերություն կամ միություն «իր մեջ պարունակում է կոնֆլիկտի սաղմեր, որոնք կապված են քաղաքական իշխանության և քաղաքացիական ազատության, պետության և քաղաքացիների միջև գործողությունների բաշխման հետ»[1]: Մասոնական արխիվների ուսումնասիրությունների հիման վրա նա բացահայտում էր ֆրանսիական մասոնական օթյակների գործունեության հիմնական ուղղությունները, նրանց զարգացման դինամիկան, օրինաչափությունները, վերելքի ու անկման փուլերը, կապը սոցիո-մշակութային գործոնների հետ: Նա հեռուն գնացող եզրակացություններ չէր անում, բայց ընդգծում էր Օ. Կոշենի «մտքի ընկերություն» գաղափարի զարգացման անհրաժեշտությունը: «Այդ մշուշապատ գաղափարախոսության» նշանակությունը Ռ. Ալեվիի բնութագրմամբ որոշվում է ոչ այնքան բովանդակային, որքան սոցիալական դերով:

Անհրաժեշտ է առանձնացնել գաղափարախոսություն և սոցիալականություն հասկացությունները, որպեսզի հստակ որոշվի նրանց խորքային փոխադարձ կապը: Դա վերաբերում է նաև մասոնական շարժմանը և յա-

[1] Halevi R., Les Loges maconniques dans la France d'Ancien Régime: Aux origines de la sociabilité démocratique. Paris, 1984, p. 13.

կոբինականության տարիմաստությանը[1]:

Ֆրանսիական հեղափոխության 200-ամյակի տարում Փարիզում լույս տեսած գրեթե նույն վերնագրով երեք գրքերը ավելի շատ հանրամատչելի բնույթ ունեին, քան գիտական: Նրանցից մեկի հեղինակ Ս.Յուքենը, որը խմբագրության կողմից բնութագրվում էր որպես գաղտնի ընկերությունների պատմության վերաբերյալ «ամենահանրաճանաչ և առավել շատ ընթերցվող մասնագետը», իր գրքում առաջարկում էր մասոնական դավադրության տեսության մասոնամետ և հակամասոնական մեկնաբանության յուրատեսակ սինթեզ: Գրեթե նույն մոտեցումը իր գրքում ցուցաբերում էր Ֆ. Գ. Ուրթուլը՝ հենվելով այլ հետազոտողների նյութերի վրա: Մերժելով մասոնական դավադրության տեսությունը՝ նա այնուհանդերձ գտնում էր, որ մասոնական օթյակները կարևոր ավանդ ունեն հեղափոխության գաղափարական նախապատրաստման, ինչպես նաև Ազատության, Հավասարության և Եղբայրության գաղափարների տարածման գործում: Նա հիմնավորում էր, որ հեղափոխության տարիներին մասոնական օթյակները կարևոր դեր են խաղացել Գլխավոր շտատների և Սահմանադիր ժողովի գործունեության ժամանակ[2]: Երրորդ գրքի հեղինակ և մասոնության պատմության գիտակ, մասոն պատմաբան Դանիել Լիգուն «Մասոնները և ֆրանսիական հեղափոխությունը» աշխատությունում նույնպես քննադատում էր աբբա Օ. Բարրյուելի մասոնական դավադրության մասին վարկածը: Բայց նա միաժամանակ փաստում էր, որ նրա ուսումնասիրությունը բավարական իլլյումինատների մասին գիտական արժեք է ներկայացնում: Դ. Լիգուի կարծիքով աջ հոսանքի պատմաբանների մեծամասնությունը իրենց աշխատություններում պարզապես վերաշարադրել են Օ. Բարրյուելին: Բացառություն է կազմում միայն Օգյուստեն Կոշենը, որն առաջարկել է եթե ոչ նոր, ապա, ծայրահեղ դեպքում, հետաքրքիր ճանապարհ հիմնախնդրի բացահայտման ուղղությամբ: Ըստ Դ. Լիգուի՝ այն վարկածը, թե ֆրանսիական հեղափոխության ոգեշնչողը հանդիսացել է մասոնությունը, գործնականում պատմագրությունից անհետացել է 1940թ. հետո, իսկ ներկայումս մեղմացրած ձևով պաշտպանում են միայն Ֆ.Ֆյուրեն և Ռ.Ալեվին:

«Դասական» պատմագրության դիրքերից գրված աշխատությունում Դ. Լիգուն, կրկնելով Ա. Սոբուլին, մասոնության դերը հեղափոխությունում

[1] Ibid, p. 18-19.
[2] Տե՛ս՝ Hourtoulle F. G. Fanc-Maçonnerie et Révolution. Paris, 1989.

անվանում է «չափազանց համեստ... և աննշան», կատարյալ «հեքիաթ», որը աբբա Օ. Բարրյուելի շնորհիվ դարձել է լեգենդ: Ընդգծելով մասոնության համեստ դերի, նրա լեգենդ դառնալու խիստ հակադրությունը և կոչ անելով մեկընդմիշտ վերջ տալ «դավադրության մասին լեգենդին», Դ. Լիգուն միաժամանակ խոստովանում է. «Ոչ մի խոսք չի կարող լինել այն մասին, որպեսզի մերժվի առանձին մասոնների ազդեցությունը իրադարձությունների վրա, նույնիսկ եթե մասոնությունը դրանցում անմիջական դեր չի խաղացել»:[1]

Օ. Բարրյուելի ժամանակակից կենսագիրներից Մ. Ռիքեն ընդունում է, որ մասոնական դավադրության վարկածը պատմագրությունում այդպես էլ չի հիմնավորվում, և հիմքեր չկան պնդելու, թե մասոնները նպատակասլաց ու երկարատև գործողություններ են իրականացրել միապետական կարգը վերացնելու ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ նա ընդգծում է, որ մասոնական օթյակների անդամների ակտիվությունը հեղափոխական իրադարձությունների ժամանակ արժանի է լուրջ ուսումնասիրության և հետազոտության: Նրա համոզմամբ՝ մասոնական օթյակների հազարավոր փաստաթղթերի և արխիվային նյութերի ուսումնասիրությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ «Եթե ոչ բոլոր մասոնները դարձան յակոբինականներ, ապա յակոբինականների մեծամասնությունը համենայն դեպս մասոններ էին»:[2] Նա գտնում է, որ չի կարելի ժխտել մասոնական առանձին օթյակների և քաղաքական ակումբների կապը հեղափոխության տարիներին:

Փաստորեն Մ. Ռիքեն նոր բան չի ասում, քանի որ այս միտքը կարմիր թելի պես անցնում է Օ. Բարրյուելի աշխատությունում: Ըստ նրա, Օ. Բարրյուելն իրավացի էր, պնդելով, թե մասոնական օթյակների հովանու տակ քաղաքական ակումբների ապագա ակտիվիստներն ու գործիչները քննարկում էին բազմաբնույթ հարցեր, որոնք հետագայում փորձում էին իրականություն դարձնել: Մ.Ռիքեն ընդունում է, որ քաղաքական բանավեճերը միայն մասոնական օթյակներում չէին ընթանում, այլև կամավոր հասարակական ընկերությունների, ակադեմիաների, ակումբների ժողովներում:

Եվ, վերջապես, Մ. Ռիքեն հաստատում է Օ. Բարրյուելի վկայակոչած

[1] Ligou D. Francs-Maçonnerie et Révolution française. Paris. 1989, p. 20-21, 25.

[2] Riquet M. Augustin de Barruel. Un jésuite face aux Jacobins francmacons. 1741-1820.Paris, 1989. p. 90.

այն փաստը, որ բավարական իլլյումինատների և ֆրանսիական մասոնների միջև առկա էր սերտ համագործակցություն, որը կարևոր դեր խաղաց հեղափոխությունում: Բավարական իշխանությունների ձեռքն ընկած Ա. Վայսհաուպտի ֆրանսիական համախոհների ցուցակում նշված էին դուքս Լուի Ֆիլիպ Օռլեանցու, Լուի XVI-ի ֆինանսների նախարար Ժակ Նեկկեի, մարքիզ Մարի Լաֆայետի, Անտուան Բարնավի, Ժան Բրիսսոյի, Օնորե Միրաբոյի, Կլոդ Ֆոշեի, Ժորժ Դանտոնի, Մաքսիմիլիան Ռոբեսպիերի, Քամիլ Դեմուլենի, Ժոզեֆ Գիլյոտենի և այլոց անունները:

Թեպետ բավարար հիմքեր չկան պնդելու, որ բավարական իլլյումինատնեն են կազմել ֆրանսիական միապետության տապալման պլանը, այնուամենայնիվ նրանց գաղափարական ազդեցությունը ֆրանսիական հեղափոխականների մեծ մասի վրա իսկապես առկա է եղել:[1]

XVIII դ. եվրոպական գրականության մեր օրերի հայտնի հետազոտող Ս. Ալբերթան-Քոփփոլան գտնում է, որ գիտականորեն ճիշտ չէ, առանց ամբողջությամբ և մանրակրկիտ ուսումնասիրելու Օ. Բարրյուելի վկայակոչած փաստերը, նրան հանդիմանել Լուսավորության փիլիսոփայության դեմ մեղադրանք ներկայացնելու համար: Նրա կարծիքով Օ.Բարրյուելի «Հուշեր ի նպաստ յակոբինիզմի պատմության» աշխատությունը, շնոհիվ ինքնատիպ շարադրանքի և վերլուծության, լույս է սփռում Լուսավորության գրականության չափազանց հետաքրքիր տեսանկյան վրա, որը դարձել էր հեղափոխական սկզբունքների աղբյուր: Ուստի, եզրակացնում էր նա, հեղափոխության գաղափարական ակունքների ուսումնասիրության հարցում հարկավոր է լինել անաչառ, չափազանց զգույշ օգտագործել այդ նյութերը և դրանք հախուռն չմերժել:[2]

XVIII դարի մասոնության պատմության մասին առհասարակ և ֆրանսիական մասոնների դերակատարման կապակցությամբ՝ մասնավորապես, անշուշտ, կարևոր է նաև մասոնական օթյակների և, հատկապես, Ֆրանսիայի Մեծ Արևելք օթյակի դիրքորոշումը հեղափոխության մասին: Թեպետ այս հարցում նույնպես կան մասնակի տարաձայնություններ, բայց և այնպես մասոնները չեն ժխտում, որ հանդիսանում են ֆրանսիական հեղափոխության հիմնական նախաձեռնողները և իրականացնողնե-

[1] Ibid. p. 110-111, 146.

[2] Տես՝ Albertan-Coppola S. Les philosophes des Lumierès au tribunal de l'abbé Barruel. Transactions of the Eight International congress of the Enliqhtenment. V. 1.Oxford. 1992. p. 225.

ը: Դեռևս 1883թ. ապրիլի 23-ին Նանտում կայացած Արևմտյան Ֆրանսիայի մասոնների համագումարի բանաձևում հռչակվում էր. «Սկսած 1772թ. մինչև 1789թ. մասոնությունը պատրաստում էր մեծ հեղափոխություն, որը պիտի վերափոխեր աշխարհի պատկերը: Դրանով ֆրանկմասոնները կյանքի կոչեցին այն գաղափարները, որոնք ընդունվել էին օթյակներում»:[1]

1884թ. Ֆրանսիայի Մեծ Արևելք Օթյակը իր կանոնակարգի առաջին կետում արձանագրեց, որ օթյակի կարգախոսն է՝ «Ազատություն, Հավասարություն, Եղբայրություն»:[2] Ֆրանսիական հեղափոխության 100-ամյակի նախօրյակին Ֆրանսիայի Մեծ Արևելք Օթյակի Մեծ Խորհուրդը շրջաբերական ուղարկեց բոլոր օթյակներին, որում, մասնավորապես, ասվում էր. «Մասոնությունը, նախապատրաստելով 1789թ. հեղափոխությունը, պիտի շարունակի իր աշխատանքը»:

1889թ. Փարիզում հեղափոխության 100-ամյակին նվիրված տոնակատարությունների օրերին տեղի ունեցավ մասոնների միջազգային վեհաժողով: Նրանում XVIIIդ. ֆրանսիական մասոնության պատմության մասին հուլիսի 16-ին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ հայտնի պատմաբան մասոն Լ. Ամիալը: Նա, մասնավորապես, հայտարարեց. «XVIII դ. ֆրանսիական ֆրանկմասոնները իրականացրեցին հեղափոխություն: Նրանց ազդեցությունը որոշեց նրա մարդասիրական բնույթը: Նրանք նախապես մշակել էին նրա (հեղափոխության՝ Ֆ. Մ.) հայեցակետը, որն ամենևին հանպատրաստի ստեղծագործում չէր: Եվ, երբ ազգը իր հերթին վերջ տվեց միանձնյա իշխանությանը, նա փոխ առավ նրանցից (մասոններից՝ Ֆ. Մ.) երեք հասկացություններ, որոնք դարձան հանրապետության նշանաբանը և որոնցով, իմ եղբայրներ, ես ողջունում եմ ձեզ որպես մասոն և քաղաքացի. Ազատություն,Հավասարություն, Եղբայրություն»:[3]

Վեհաժողովում Լ. Ամիալի և XIXդ. մասոնությանը նվիրված Ֆ. Կոլֆավրյուի զեկուցումները փաստացի դարձան Ֆրանսիայի Մեծ Արևելք Օթյակի պաշտոնական պատմական հայեցակարգի շարադրանքը: Այդ զեկուցումները վեհաժողովի օրերին լույս տեսան երկու անգամ, վերահրատարակվեցին նաև տարեվերջին և մեկ անգամ էլ՝ 1926թ.:

Վեհաժողովում Լ. Ամիալը բացահայտ հայտարարեց, որ «աշխարհա-

[1] Цит. по Курбатов В. И. Тайное общество масонов. М., 2007, стр. 313.
[2] Там же, стр. 58.
[3] Там же.

քաղաքացիությունը՝ դա իրենց միությունում ամենագլխավորն է», և որ «համաշխարհային դեմոկրատական հանրապետությունը՝ ֆրանկմասոնության իդեալն է»: Վեհաժողովին մասնակցած ամերիկացի հայտնի քաղաքական գործիչ, ամերիկյան պետության «հիմնադիր-հայրերից» Բենջամին Ֆրանկլինը, որը հայտնի մասոն էր և 1779-1781թթ. ղեկավարել էր ֆրանսիական հայտնի «Ինը մուսաներ» օթյակը[1], մասոնության վերջնական նպատակը ձևակերպեց այսպես. «Կգա մի օր, երբ ժողովուրդները, որոնք չունեցան ոչ XVIIIդ. և ոչ էլ 1789թ., կթոթափեն միապետության և եկեղեցու կապանքները: Այդ օրն այնքան էլ հեռու չէ, այդ օրը, որին մենք սպասում ենք, այդ օրը կբերի ժողովուրդների ու պետությունների համընդհանուր մասոնական եղբայրության: Դա ապագայի կատարելատիպ է: Մեր խնդիրն է արագացնել այդ համընդհանուր համաշխարհայի եղբայրության արշալույսը»: [2]

Այս նպատակին մասոնները հավատարիմ են նաև մեր օրերում և համոզված, որ «Մասոնությունը, որին պատմությունը պարտական է ազգային հեղափոխությունների համար, կկարողանա իրականացնել նաև ամենախոշոր, այսինքն՝ ինտերնացիոնալ հեղափոխություն»:[3]

Ժամանակ առ ժամանակ, երբ առանձին պատմաբաններ փորձում են մասոնական դավադրության թեման դուրս բերել «դասական» պատմագրության շրջանակներից և նրա միաչափ տարածությունից, անմիջապես հայտնվում են նրա ներկայացուցիչների վճռական և եռանդուն հակահարվածին: «Դասական» պատմագրության կողմնակիցները, առաջնորդվելով «ովքեր մեզ հետ չեն, դեմ են մեզ» սկզբունքով, այդ պատմաբանների յուրաքանչյուր փորձը ներկայացնում են որպես «բարրյուելիզմի» դրսևորում: Պատճառն այն է, որ Ֆրանսիայում խիստ գաղափարականացված է հեղափոխության պատմությունն ընդհանրապես և մասոնության թեման մասնավորապես:

«Դասական» պատմագրության ներկայացուցիչները, սերտորեն կապված լինելով ձախ կողմնորոշման քաղաքական ուժերի հետ, ավանդաբար իրենց բանավեճը սկզբում՝ պահպանողական, իսկ այնուհետև նաև ռևիզիստական ուղղությունների պատմաբանների հետ, դիտարկում

[1] Масонство в его прошлом и настоящем. Том 1, стр. 246; Ридли Дж. Указ. соч., стр. 114-115, 139; Блэк Дж. Указ. соч., стр.525; Карпачев С.П. Указ. соч., стр. 435-436; Морамарко М. Указ. соч. стр. 264-265. Замойский Л. Указ. соч., стр. 138.

[2] Цит. по: Башилов Б. История русского масовнства, М., 1995. Том IV.

[3] Курбатов В. И. Указ. соч., стр. 72.

են որպես գաղափարախոսական համընդհանուր պայքարի բաղկացուցիչ մաս: Այդ իսկ պատճառով նրանց հետ, զուտ գաղափարական նկատառումներից ելնելով, չափազանց դժվար է ճանաչել իրենց ընդդիմախոսների մեթեդոլոգիական որոնումների կարևորությունը:

Այնպես որ, ֆրանսիական հեղափոխությունում մասոնների դերի մասին երկու հարյուր տարուց ավելի ընթացող բանավեճը ամենևին էլ ավարտված չէ, որը պահանջում է ոչ միայն ժամանակ և բոլոր ուսումնասիրողների ջանքերի համախմբում, այլև թեմայի գաղափարախոսական «սառեցում»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Башилов Б. История русского масонства. М., 2006, Том IV. www.russky.com/history/ library/ekatern.htm N XVIII
2. Блан Л. История французской революции. Т. 2, СБП, 1907.
3. Блэк Дж. Тайная история мира.М. 2008.
4. Блэк Джереми. История Британских остравов. Пер. с англ. СПБ, 2008.
5. Блэк Джонатан. Тайная история мира. М. 2009.
6. Боголюбов Н. Тайные общества XX века. М., 1995.
7. Большаков В. Парижские тайны: Русский след. М., 2007.
8. Большая энциклопедия. Масоны. М., 2007.
9. Борзаковский Д. Франк-масонство и тайные общества древнего и нового мира. М., 1900.
10. Васютинский А. Французское масонство в XVIII веке. В сб: Масонство в его прошлом и настоящем. Под ред. С. П. Мельгунова и Н. П. Сидорова.Том I, М., 1914.
11. Гогалицин Ю., Тайные общества в истории человечества, или Кто правит миром. М., 2010, стр. 130.
12. Гольдберг Н.М. Томас Пейн. М., 1969, стр. 33.
13. Добровольский В.А. Д'Аламбер. М., 1968.
14. Дантон Ж. Избр. речи, Харьков. 1924, стр. 9.
15. Замойский Л. За фасадом масонского храма. М., 1990, стр. 128;
16. Иванов В. Ф., От Петра I до наших дней. Русская интеллигенция и масонство. Харбин, 1934. www.bibliotekar.ru/masony/16.htm
17. Иванов В.Ф.Тайны масонства. Гл. 15. www.magister.msk.ru/library/history/mason/ivanovv1.htm
18. История Италии. Под. ред. С. Д. Сказкина. Том 1. М., 1970, стр. 494.
19. История Франции. Отв. ред. А.З. Манфред. Том 1, М., 1972, стр. 236.
20. История Швеции. Отв. ред. А. С. Кан. М. 1974, стр. 310-318.
21. Кареев Н. И. Историки французской революции. Том I. Французские историки первой половины XIX века. Л., 1924, стр. 242, прим 1.

22. Карлейл Т. Французская революция . История. Пер. с англ. М., 1991. стр. 1128-130;
23. Карпачев С. П. Масоны. Словарь. М., 2008.
24. Конституции и законодательные акты буржуазных государств XVII-XVIIIвв. Под ред. П. Н. Галанзы. М., 1957, стр.232.
25. Кропоткин П. Великая францизская революция 1789-1793. М., 1979, стр. 63-70.
26. Курбатов В. И. Тайное общество масонов. М., 2007, стр. 313.
27. Ланин П. Тайные пружины истории. Молодая гвардия. 1991. N 7.
28. Литвинова Е. Ф. Д'Аламбер. Его жизнь и научная деятельность. СПБ, 1891.
29. Масонство в его прошлом и настоящем. Том I, СПБ, 1914.
30. Монтескье Ш. Л. Персидские письма, М., 1936, стр. 218.
31. Морамарко М. Масонство в прошлом и настоящем. М., 1990.
32. Море, 1907, N 6.
33. Найт Кристофер, Ломас Роберт. Ключ Хирама. Фараоны, масоны и открытие тайных свитков Иисуса. стр. 98-99.
34. Олар А. Ораторы Революции. Том 1, М., 1907, стр. 105.Том 2, М., 1908, стр. 151.
35. Платонов О.Тайная история масонства. Изд. 2-е. М., 1996, стр. 42.
36. Ридли Дж. Фримасоны. Люди, творящие мировую историю. М., 2007

ВЕЛИКАЯ ФРАНЦУЗСКАЯ РЕВОЛЮЦИЯ ИЛИ МАСОНСКИЙ ЗАГОВОР?

Феликс Мовсисян
доктор исторических наук, професор

РЕЗЮМЕ

Из всех крупных и значительных событий всемирной истории Великая французская революция 1789-1799гг. выделяется не только своим характером, продолжительностью, масштабом, колоссальными человеческими потерями и исторической ролью, но и тем, что больше всех соприкасается с масонством. Роль масонского ордена в подготовке и углублении революции до сих пор окончательно не установлена. Версию о масонском характере революции впервые выдвинул за семь лет до революции аббат Ж.Ф. Лефранк, который опубликовал книгу о подготовке к ,,тайной революции" и масонском заговоре против католичества. Накануне революции, в 1788г., с работой, оправергающей эту версию, выступил известный публицист и масон Николя Банвиль. В годы революции сперва Ж.Ф.Лефранк, затем бывший масон аббат Огюстен Баррюэль в своих работах снова выдвинули версию о масонском заговоре. О.Баррюэль охарактеризовл революцию как ,,тройной заговор", идеологами которой являлись французские философы-просветители: Ф.М. Вольтер, Ж. д' Аламбер и король Прусии Фридрих II Великий, а организаторами-французские масоны и баварские иллюминаты. Опираясь на довольно внушительные источники, О.Баррюэль выявил тех просветителей /Ф.М. Вольтер, Ш.Монтескье, Ж.Ж. Руссо, Д.Дидро, Ж. д'Аламбер, Р. Тюрго, К. Гельвеций, Ж. Кондорсе и др./ и революционных деятелей /Э. Сиейс, Ф.Эгалите, О.Мирабо, М. Лафайет, Ж Байи, А. Барнав, Ж.Бриссо, Ж.Ролан, Ж.Дантон, К.Демулен, П.Шомет, Ж. Эбер, Б.Марат, , М. Робеспьер, Ж.Кутон и многие другие/, которие имели масонское прошлое или в годы

революции являлись членами масонских лож. Все это давало ему основание утверждать, что французская революция - результат заранее спланированного и последовательно осуществляемого масонского заговора.

Часть выше упомянутых масонов одновременно являлись членами ордена баварских иллюминатов. В перспективном плане ордена предусматривалось уничтожение абсолютных монархий, частной собственности, права наследования, семьи, патриотических чувств, христианской религии, а после нее - и всех остальных религий.

9 июля 1782 г. на сúезде в Вильгельмсбаде баварские иллюминаты решили первым осуществить свой план во Франции. Этому стали содействовать сотни масонских лож с десятками тысяч своих челенов. Для французского масонства ,,революция – это война свободы против ее врагов”, которая прошла под масонским девизом ,,Свобода, Равенство, Братство”.

Позже версия о масонском заговоре франжузской революции поддержали также Каде де Гассикур, Б.Фей и другие историки, что не было однознчно принято в истории общественной мысли.

Версию масонского заговора в своих трудах опровергли Ж. Мунье, Л. Блан, Н. Кареев, Г.Бор, О. Кошен, Г.Мартен, а также известные историки французской ,,классической” историографии: А. Олар, А. Матьез, Ж. Лефевр, А.Собуль. Вместе с тем они отмечали, что исползованные О. Баррюэлем источники и множество поставленных вопросов действительно представляют собой научную проблему и нуждаются в тшательном исследовании.

В современной французской историографии укоренилось мнение, что между баварскими иллюминатами и французскими масонами существовали тесные взаймоотношения и, хотя нет достаточных оснований для утверждения мысли о масонском заговоре революции, тем не менее, масонство сьиграло серьезную роль в осуществлении революции. Что касается масонов, то они вовсе не отрицают, что являются основными инициаторами и исполнителями французской революции. Таким образом, можно констатировать, что научная дискуссия о масонском характере французской революции все еще далеко от своего завершения.

THE GREAT FRENCH REVOLUTION OR MASONIC CONSPIRACY

Felix Movsisyan
Doctor of Historical Sciences, Professor

SUMMARY

The 1789-1799 French Revolution stands out form all the great and significant events of world history not only by its nature, duration, scale, heavy casualties and historical role, but also by its strong connections with Freemasonry.

The role of the Masonic Order in the cause of preparing and deepening the revolution has not been finally revealed so far.

The theory about the Masonic nature of the revolution was first brought forward 7 years before the revolution.When Abbot J. F. Lefrank published a book about the

preparation of the “secret revolution” and united conspiracy against Catholism.

In 1788, on the eve of the revolution the famous publicist and Freemason Nicola Bonnville came out with a work, rejecting this theory.

During the years of the revolution, first J. F. Lefrank, then former Freemason Abbot Augustine Barruel suggested the theory of Masonic conspiracy in their works again.

Augustine Barruel characterized the revolution as a “triple conspiracy”, whose ideologists were the French enlighteners F. Voltaire, J. D. Alamber and the Prussian Kind Fridrich II the Great and whose organizers were the French Freemasons and Bavarian Illuminati.

On the basis of quite rich sources Barruel revealed some enlighteners (Voltaine, Ch. Montesquieu, J. J. Rousseau, D. Diderot, J. Alamber, R. Turgo, C. Helvetius, J. Condorcet and others) and a large number of revolutionary figures (E. Sieys, F. Egalite, O. Mirubou, M. LaFayette, J. Bay, A. Barner, J. Brisso, J, Roland, J. Danton, C. Desmoulins, P. Chaumet, J. Eber, J. Marat, M. Robersperre, J. Couton and many others) who had a Masonic past or were members of the Lodges during the years of the Revolution. All this gave him the grounds to assent that the French Revolution was the consequence of a conspiracy which was planned earlier and executed consistly. Some of the Freemasons were also members of the Order of Bavariam Illuminati. Olden’s long-range plan anticipated liquidating the European absolute monarchies, private property, the right of inheritance, families, the sense of patriotism, the Christian religion, followed by the other religions. On July 9, 1782, at the Congress in Vilhelmsbad the Bavarian Illuminati decided to execute their plan first in France. Hundreds of Masonic lodges with dozens of thousands of their members undertook to do it. For the French Freemasons “revolution” was ”a war of freedom against its enemies”, which passed on the slogan “Freedom, Equality, Brotherhood”.

Later the theory of the French Revolution being a Masonic Conspiracy was backed up by Cade de Gassiquin, B. Fay and other historians, which was not accepted unequivocally in the history of public thinking.

The theory of Masonic Conspiracy was rejected in their works by J. Muniye, L. Blanc, N. Caben, G. Bor, O. Koshen, G. Martin, as well as well-known historians of the French classical historiography A. Olar, A Mateus, J. Leferre, A. Sobuyn.They also mentioned that the sources cited by O. Borruel and his numerous questions were truly scientific problems and needed thorough research. The opinion that there existed close cooperation between Bavarian Illuminati and French Freemasons has been stated in Modern French historiography and though there aren’t enough proofs to insist on the united conspirational character of the revolution, Freemasonry played a serious part in the execution of the revolution.

As far as Freemasons are concerned they do not deny being the main initiators and executers of the French Revolution. This scientific debate about the Masonic character of the Revolution still continues.

«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻՆ» ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Արման Բերնեցյան

19-րդ դարի եվրոպական ազգային ազատագրական շարժումների պատմության մեջ ուրույն տեղ է զբաղեցնում Դանուբյան իշխանությունների ծավալված ազգային պայքարը, որը ժամանակին լայն արձագանք գտավ հայ հասարակական մտքում:

Մոլդովան և Վալախիան դեռևս 16-րդ դարից գտնվում էին Օսմանյան տիրապետության տակ, բայց մշտապես ձգտում էին թոթափել օտարի տիրապետությունը՝ ձեռք բերելով ազատություն և անախություն: Իշխանությունները 1821թ. Վալախիայում Թուդոր Վլադիմիրեսկուի գլխավորությամբ ապստամբություն բարձրացրեցին, որը, թեև, դաժանորեն ճնշվեց օսմանյան զորքերի կողմից, սակայն ամենևին չկասեցրեց ազատագրական պայքարի հետագա ընթացքը:

1848թ. սկզբին Եվրոպայում բռնկված հեղափոխական, ազգային-ազատագրական պայքարը կամ ինչպես ընդունված է ասել արևմտյան պատմագրությունում՝ «ժողովուրդների գարունը» չշրջանցեց նաև Դանուբյան իշխանությունները: Մոլդովայում և Վալախիայում բռնկված ժողովրդական պայքարը ազատագրական խնդրից զատ, հեռահար նպատակ էր հետապնդում՝ միավորելու իշխանությունները և հասնել Ռումինական միասնական պետության կազմավորմանը: Թեպետ, Օսմանյան և Ռուսական կայսրությունները փոխհամաձայնեցված ռազմական միջամտությամբ ճնշեցին իշխանությունների ազգային պայքարը, այնուամենայնիվ, ձևավորված գաղափարը պահպանեց իր կենսունակությունը և նոր ուժով ի հայտ եկավ հաջորդ տասնամյակում:

1850- ական թթ..կեսերից, օգտվելով Արևելյան (Ղրիմի) պատերազմի հետևանքով ընձեռնված նպաստավոր միջազգային իրադրությունից, Դանուբյան Ազգային վերածնության շարժումը թևակոխեց վճռական փուլ՝ որն ընդունված է անվանել պայքար հանուն Փոքր միավորման: Այս փուլում նախատեսվում էր միայն Մոլդովայի և Վալախիայի միավորումը՝ առանց Տրանսիլվանիայի Բուկովինայի, որոնց միացումը տեղի ունեցավ ավելի ուշ:

XIX դարի երկրորդ կեսին Դանուբյան իշխանություններում և նրա

շուրջ ծավալվող իրադարձություններին անմիջականորեն անդրադարձավ հայ պարբերական մամուլը: Մոտ երկու տասնյակ պարբերականներ իրենց էջերում մշտապես լուսաբանեցին իշխանություններում պայքարի սկզբնավորումն ու ընթացքը:

Դանուբյան իշխանությունների ազատագրական պայքարը լրջորեն հետաքրքրել է նախ՝ Փարիզում (1855-1858), ապա Թեոդոսիայում (1860-1865) հրատարակվող «Մասյաց աղավնի» ամսագրին, որի խմբագիրը հայ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող եկեղեցական և հասարակական նշանավոր գործիչ Գաբրիել Այվազովսկին էր:[1]

Փարիզում լույս տեսած տարիներին՝ «Մասյաց աղավնին» թեև չանդրադարձավ Դանուբյան իշխանություններում ընթացող բուն քաղաքական գործընթացներին, սակայն այդ տարիների հրապարակումներում բազմիցս շոշափում էր ռումինական թեմաներ՝ չանտեսելով ռումինահայերի ազգային և ընկերային վիճակին վերաբերող հիմնախնդիրները:[2]

1856թ. փետրվարին Փարիզում հրավիրվեց մեծ տերությունների վեհաժողով, որը պետք է ամփոփեր Արևելյան պատերազմի արդյունքները: Նիստերից մեկում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար կոմս Ա. Վալևսկին բարձրացրեց Դանուբյան իշխանությունների միավորման խնդիրը, որով ռումինական հարցը դարձավ միջազգային քննարկման առարկա:[3]

«Մասյաց աղավնին», ֆրանսիական պաշտոնական մամուլից բավականաչափ տեղեկացված լինելով վեհաժողովի ընթացքին ու նրանում քննարկվող հարցերին, իրավացիորեն նկատում է, որ Մոլդովան և Վալախիան փոքր երկրներ լինելով՝ «եւրոպացուոց մտադրութիւնը կրցան իրենց վրայ դարձնել»: Այնուհետև պարբերականը կանխատեսում է, որ այդ իշխանությունները «քաղաքական նոր կեանք մը պիտի ունենան»:[4]

Ա. Վալևսկու Դանուբյան իշխանությունների միավորման վերաբերյալ առաջարկը միանշանակ չընդունվեց և տարակարծություններ առաջ

---

[1] Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը 1794-1894թթ., Ալեքսանդրապոլ, 1895թ., էջ 176, Կարինյան Ա.Բ., Հայ պարբերական մամուլի պատմությունից, Ե., 1963, էջ 29

[2] Տես՝ «Մասյաց աղավնի», 1856,N3, էջ 55-59, 1857, N 5, էջ 97-103, N 12, էջ 271-274, 1858, N 5, էջ 107-108, N 8, էջ 179-180

[3] Краткая история Румынии. С древнейших времен до наших дней. Отв.Ред. В.Н. Виноградов, М., 1987, с.186, История Румынии 1848-1917. Ред.Колл. В.Н. Виноградов и др., М.1971, с. 102, История внешней политики России.Первая половина XIX века. Ред.Колл. О.В. Орлик и др., М.1999, с. 415

[4] «Մասյաց աղավնի», 1860, N1, էջ 19

բերեց վեհաժողովի մասնակիցների շրջանում: Դրան դեմ արտահայտվեցին օսմանյան և ավստրիական պատվիրակությունները:

Թուրքիան հստակ ըմբռնում էր, որ մոլդովացիների և վալախների միավորման պահանջը անխուսափելիորեն հանգեցնելու է անկախական ձգտումների, որը վարակիչ օրինակ կարող է դառնալ նաև կայսրության մյուս ժողովուրդների համար: Ինչ վերաբերում է Ավստրիային, ապա վերջինս ցանկանում էր ձախողել «Մեծ Ռումինիայի» ստեղծումը առաջին հերթին իր տիրապետության տակ գտնվող շուրջ մեկ միլիոն ռումիններով բնակեցված Տրանսիլվանիան, Բուկովինան և Բանատը չկորցնելու մտահոգությունից ելնելով: Բուն իշխանություններում Վիեննան ձգտում էր հաստատել ռազմա-քաղաքական լիակատար վերահսկողություն և իրականացնել Կլուժ-Բրեիլ երկաթգծի շինարարությունը, որը ֆինանսավորելու էր հանրահայտ Ռոտշիլդը: Անգլիան, որը իշխանությունների միավորման հարցին սկզբում մոտենում էր խիստ զգուշավորությամբ, ի վերջո դեմ արտահայտվեց, քանի որ նրա արտաքին քաղաքական առաջնահերթություններից էր Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումը: Ֆրանսիական առաջարկը պաշտպանեց միայն ռուսական պատվիրակությունը: Ռուսաստանը Ղրիմի պատերազմում կրած ծանր պարտությունից հետո հարկադրված էր վերստին հանդես գալ բալկանյան ժողովուրդների ազատության «պաշտպանի» դիրքերից:[1]

Տևական քննարկումներից հետո վեհաժողովի մասնակիցները եկան փոխզիջման, որն արտահայտվեց մարտի 30-ին ստորագրված պայմանագրում: Այստեղ, թեև, երկու իշխանությունների միավորման մասին որևէ հիշատակում չեղավ, սակայն որոշվեց Մոլդովայի և Վալախիայի ապագա պետական կառուցվածքը հստակեցնել տվյալ երկրամասերի բնակչության կամարտահայտության միջոցով: Այդ նպատակով երկու իշխանություններում հրավիրվելու էին ժամանակավոր արտակարգ ժողովներ, որով ռումինները դարձան գործընթացի փաստացի մասնակից:[2]

«Մասյաց աղավնին», հրատապ արձագանքելով այս իրադարձություններին, համառոտ ներկայացնում է փարիզյան պայմանագրի բովանդակությունը՝ չշրջանցելով նաև Դանուբյան իշխանություններին վերաբերող 22 և 23 հոդվածները, որոնց վերաբերյալ տալիս է հետևալ մեկնաբա-

[1] Проблеми внутри- и внешнеполитической истории Румынии нового и новейшего времени, Ред. Колл. С.А. Медиевски и др., Кишинев,1988, с. 123

[2] И.-А. Поп, И. Болован, Историа Румынии, М. 2005, с. 462

նությունը. «Իշխանութեանցն Վլահաց եւ Մոլտաւիոյ ազատութիւնս բազումս ընել ընդ պաշտպանութեամբ եւրոպական տերութեանց»: [1]

1857թ. գարնանը, ի կատարումն Փարիզի պայմանագրի պահանջների, Մոլդովայում և Վալախիայում մեկնարկեց Արտակարգ ժողովների ձևավորման ընտրական գործընթացը: Եռանդուն պայքար ծավալվեց **ունիոնականների** (իշխանությունների միավորման կողմնակիցների) և նրանց հակառակորդների միջև: Վերջիններիս դիրքերը շահեկան էին, հատկապես, Մոլդովայում, ինչն արդեն բավական էր միավորումը ձախողելու համար: Տեղի հակաունիոնականներին գլխավորում էր ազգությամբ հույն կայմակամ Ն. Կ.-Վոգորիդեն, որն աչքի էր ընկնում իր անթաքույց թուրքամետությամբ: Օգտվելով Ավստրիայի և Օսմանյան իշխանությունների լայն աջակցությունից՝ Վոգորիդեն ընտրական ցուցակներից տարբեր պատրվակներով հանում էր միավորման կողմնակից ընտրողներին՝ փորձելով նրանց մասնակցությունը ընտրություններին հասցնել նվազագույնի:[2]

Բազմաթիվ կեղծիքներով կայացած ընտրությունները չճանաչեցին Ֆրանսիան և Ռուսաստանը, որոնց ճնշման արդյունքում տեղի ունեցած վերընտրություններում հաղթանակ տարան երկու իշխանությունների միավորման կողմնակիցները: Կրկնակի ընտրությունները հնարավոր դարձան Ֆրանսիայի և Անգլիայի միջև Օսբորնում կայացած փոխզիջումային համաձայնության արդյունքում, որը տեղի ունեցավ անձամբ Նապոլեոն III-ի և Վիկտորյա թագուհու միջև:

Ինչպես և սպասվում էր՝ Յասսիում (Մոլդովա) ու Բուխարեստում (Վալախիա) հրավիրված Արտակարգ ժամանակավոր ժողովները որոշումներ կայացրեցին հօգուտ Դանուբյան իշխանությունների միավորման:

1858թ. մայիսի 10-ին Փարիզում իշխանությունների միավորման խնդրով եվրոպական երկրների համաժողով հրավիրվեց, որի առաջին նիստում Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ա. Վալևսկին հայտարարեց, որ իր կառավարությունը սկզբունքորեն պաշտպանում է Մոլդովայի և Վալախիայի միավորման գաղափարը: Ռուսաստանը չհապաղեց արտահայտել իր համաձայնությունը ֆրանսիական առաջարկին:

---

[1] «Մասյաց աղավնի», 1856, N 12, էջ 326

[2] И.-А. Поп, И. Болован, Указ.соч., с. 462, Краткая история Румынии., с.188-189, История Румынии 1848-1917, с. 109-110, V. Georgescu, The Romanian A History, Ohio State University, 1991, p.136

Սակայն, հանդիպելով Թուրքիայի, Ավստրիայի և Անգլիայի համերաշխ դիմադրությանը, Վալևսկին արդեն հաջորդ նիստում տրամագծորեն այլ նախագիծ ներկայացրեց, որը երկու իշխանությունների անջատ գոյություն էր նախատեսում:[1]

Երկարատև քննարկումներից հետո եվրոպական պետությունների համաժողովը Դանուբյան իշխանությունների վերաբերյալ որոշում կայացրեց, որին Թեոդոսիայից արձագանքելով՝ «Մասյաց աղավնին» գրում է. «Ժողովոյն ըրած որոշմանը համեմատ, Մոլտաւացւոց եւ Վլահներուն սահմանադրութիւն մը տրուեցաւ, որով Դանուբեան իշխանութիւնները այժմ Միացեալ իշխանութիւնք կկոչուին»:[2]

Պարբերականի տեղեկությունը հավաստի է, քանզի օգոստոսի 19-ին հրապարակված որոշումը թեև «Կոնվենցիա» անունն էր կրում, սակայն, ըստ էության, դա մի նոր սահմանադրություն էր, որը փոխարինելու էր Օրգանական ռեգլամենտներին: Այս փաստաթուղթը իբրև Ռումինիայի սահմանադրություն գործեց մինչև 1866թ.:[3] «Մասյաց աղավնին» ճիշտ է ընկալել նաև կայացված համաձայնագրի բարդ ու խճճված էությունը, որը, փաստորեն, չէր արտացոլում ռումինների փափագած Միացյալ պետության իրողությունը:[4] Ինչպես նկատում է պարբերականը, թեև երկու իշխանությունները անվանապես «Միացյալ» անվանումը ստացան, սակայն նրանցից յուրաքանչյուրը «իւր համար առանձին … իշխանութիւն ունի, որոյ գլուխն է Յօսփոտարը կամ իշխանը եւ … ազգային օրենսդրական ժողովը»:[5] Ինչ վերաբերում է երկու իշխանությունների համար ընդհանուր հաստատություններին, ապա այն «գլխաւորապես անոր վրայ է, որ իրաւունք ունին մեկ կեդրոնական կառաւարութիւն մը հաստատելու, որոյ տեղը Ֆոքշան քաղաքին մեջ պիտի ըլլայ (երկու իշխանությունների սահմանագծի վրա - Ա.Բ.), եւ այն կառավարութիւնը երկու իշխանութեանց գործերը պիտի քննէ եւ օրենսդրական խնդիրները պիտի լուծէ»:[6]

Այստեղ պարբերականի խմբագիրը փոքր անճշտություն է թույլ տա-

---

[1] История Румынии 1848-1917., с. 114-115. Проблеми внутри- и внешнеполитической истории Румынии нового и новейшего времени, с. 124-125

[2] «Մասյաց աղավնի», 1860, N1, էջ 19

[3] И.-А. Поп, И. Болован, Указ.соч., с. 464.Краткая история Румынии., с. 192

[4] История Румынии 1848-1917, с. 115.

[5] «Մասյաց աղավնի», 1860, N1, էջ 19, Հմմտ. V. Georgescu, The Romanian A History, p.148, Проблеми внутри- и внешнеполитической истории Румынии нового и новейшего времени, с. 124-125

[6] «Մասյաց աղավնի», 1860, N1, էջ 19.

լիս, քանզի իր նշած հաստատությունը ոչ թե «կառաւարութիւն» էր, այլ որոշակի գործառույթներով լիազորված կենտրոնական հանձնաժողով, որն իսկապես պետք է մշակեր երկու իշխանությունների համար միասնական օրենսդրություն:[1]

Փարիզյան համաժողովի կայացրած այս երկակի որոշումը սպասելի դժգոհություններ առաջ բերեց Մոլդովայի և Վալախիայի միավորման կողմնակիցների շրջանում:

Հիասթափվելով մեծ տերությունների վարած մեծապետական քաղաքականությունից՝ ռումինները հրաժարվեցին «երրոդ ուժին» ապավինելու անպտուղ գործելակերպից և ձեռնամուխ եղան խնդիրը ինքնուրույն լուծելու ավելի ողջամիտ քաղաքականությանը: Փարիզյան համաձայնագրով Մոլդովայում և Վալախիայում տեղի էր ունենալու հոսպոդարների ընտրություն: Միավորման կողմնակիցների մոտ հղացավ երկու իշխանություններում նույն մարդուն ընտրելու հնարամիտ գաղափարը, սակայն դրա համար անհրաժեշտ էր երկու խորհրդարաններում ունենալ գոնե հարաբերական մեծամասնություն: Մոլդովայում իրավիճակը նպաստավոր էր ունիոնականների համար, քանզի նրանց հակառակորդները դեռ ուշքի չէին եկել ժամանակավոր արտակարգ ժողովի ընտրություններում Վոգորիդեի պատճառով կրած պարտությունից: Վերջինս, Փարիզի համաժողովի կայացրած որոշման համաձայն, հեռացվեց կայմակամի պաշտոնից: Փոխարենը ձևավորվեց երեք հոգուց բաղկացած գործադիր խորհուրդ, որոնցից երկուսը՝ Վ. Ստուրձան և Ա. Պանուն հաստատակամ ունիոնականներ էին և կարողացան չեզոքացնել սուլթանի էմիսար Ավիֆ բեյին և միավորման հակառակորդ երրորդ պաշտոնյային: Ամրապնդելով իրենց դիրքերը՝ ունիոնականները կարողացան համոզիչ հաղթանակ տանել Մոլդովայի օրենսդիր մարմնի ընտրություններում: 1858թ. հունվարի 5-ին երկար վեճերից ու քննարկումներից հետո նորընտիր խորհրդարանը Մոլդովայի հոսպոդար ընտրեց գնդապետ Ալեքսանդրու Կուզային, որը սկզբունքային ունիոնականի համբավ ուներ: Նա 1848թ. ազգային-ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներից էր, իսկ 1857թ. ցուցադրաբար հրաժարվել էր Գալացի կառավարչի պաշտոնից՝ ի նշան կայմակամ Վոգորիդեի վարած ապօրինությունների:[2]

---

[1] Տես՝ История Румынии 1848-1917, с. 113, Новичев А.Д., История Турции. Новое время, ч.3-я (1853-1857), Л.1978, с. 207.

[2] История Румынии 1848-1917,с. 117-118.

Անդրադառնալով այս դեպքերին՝ «Մասյաց աղավնին» գրում է. «Երբոր խորհրդարանները ձեւացան, անոնց առաջին գործը եղավ իշխանի ընտրութիւնը», այնուհետև, շարունակելով անկողմնակալ դիրքերից լուսաբանել իրադարձությունները, տեղեկացնում է Ա. Կուզայի ընտրության մասին՝ նրան ներկայացնելով «իշխանութեանց միութեան փափագողներեն» մեկը:[1]

Պարբերականը հատկապես կարևորում է այն հանգամանքը, որ թեև «Տաճկաստան եւ Աւստրիա այս ընտրութեանը չհաւնեցան», բայց մոլդովացիները «ըստ ազգային ընտրութեան զորութեան» անտեսեցին այն և Կուզային հռչակեցին «Իշխան Աղեքսանդր Յովհաննես Ա»:[2] Սրանով Գ. Այվազովսկին մեկ անգամ ևս փաստում է այն իրողությունը, որ ռումիններն որդեգրել էին ազատ ինքնորոշման ճանապարհը:

Բոլորովին այլ իրավիճակ էր Վալախիայում: Բուխարեստում կայմակամին փոխարինած կառավարող եռյակը լիակատար համերաշխությամբ ցանկանում էր խափանել իշխանությունների միավորումը: Նրանց հաջողվեց ընտրական այնպիսի օրենք ընդունել, որով ընտրական իրավունքից զրկվեցին ոչ միայն գյուղացիներն ու արհեստավորները, այլև միջին բուրժուազիան ու մանր կալվածատերերը կամ, այլ կերպ ասած, Մոլդովայի հետ միավորմանը հակված ընտրազանգվածի գերակշիռ մասը: Նման պայմաններում կայացած ընտրություններում «հաղթանակ» տարան միավորման հակառակորդները:[3]

Հոսպոդարի ընտրության ժամանակ պահպանողական մեծամասնությունը պառակտվեց: Դա փաստում է նաև «Մասյաց աղավնին», ըստ որի. «շատ կային այն իշխանական աթոռին ետեւէ ընկնողներ»:[4]

Այսպիսով, առաջացած ներքին տարաձայնությունների պատճառով հակաունիոնիստները չկարողացան որևէ համաձայնության հասնել և ստեղծված պատեհությունից օգտվեցին նրանց հակառակորդները, որոնք հոսպոդարի իրենց թեկնածու առաջադրեցին Մոլդովայի հոսպոդար Ա. Կուզային: Ինչպես իրավացիորեն գրում է «Մասյաց աղավնին». «… այլ պատգամավորները միաբերան նոյն Մոլտաւիոյ իշխանը Աղեք-

[1] «Մասյաց աղավնի», 1860, N1, էջ 19
[2] Նույն տեղում
[3] История Румынии 1848-1917, с.119
[4] «Մասյաց աղավնի», 1860, N1, էջ 19

սանդր Քուցան Վլահի իշխան ընտրեցին»:[1] Պարբերականը, սակայն, չի մանրամասնում այն կարևոր հանգամանքը, որ հիշյալ ընտրության վրա մեծ ազդեցություն ունեցավ ժողովրդի ճնշումը, որի բազմահազար ներկայացուցիչները հունվարի 24-ի նիստի ողջ ընթացքում պաշարված էին պահում խորհրդարանի շենքը՝ հրապարակելով «Կորչեն բռնապետերը», «Կեցցե ազատությունը» և նմանօրինակ այլ քաղաքական կոչեր:[2]

Փաստորեն ռումիններին հաջողվեց երկու իշխանություններում ղեկավար ընտրել նույն մարդուն՝ մի բան, որը օգոստոսի 19-ի «Կոնվենցիան» չէր արգելում: Եվրոպական տերությունները, հատկապես Անգլիան, բավականին տպավորվել էին ռումինացիների քաղաքական հնարամտությամբ:[3]

Դանուբյան իշխանություններին այս քայլով հաջողվեց լուրջ նախադրյալներ ստեղծել միավորումն ի կատար ածելու համար: Դա նկատում է նաև Գ. Այվազովսկին, որն իրավացիորեն գրում է. «Դանուբեան իշխանութեան միութիւնը իրօք կատարուեցաւ»:[4]

Ալեքսանդրու Կուզայի կրկնակի իշխան ընտրվելը կամ, այլ կերպ ասած, Մոլդովայի և Վալախիայի փաստացի միավորումը տերություններին կանգնեցրեց նրա ճանաչման փաստի առջև: Այդ առնչությամբ «Մասյաց աղավնին» գրում է. «Բայց որովհետեւ այս դիպուածը 1858-ին եղած խորհրդին մեջ գուշակուած չէր, ուստի խնդիր ծագեցաւ թէ օրինաւո՞ր է արդեօք այն ընտրութիւնը, թէ՞ ոչ»:[5]

Վերլուծելով ստեղծված քաղաքական իրադրությունը՝ Գ. Այվազովսկին նշում է, թե Օսմանյան կայսրությունը և Ավստրիան ոչ մի կերպ չեն ցանկականում ճանաչել Դանուբյան իշխանությունների միավորումը, մինչդեռ «Ռուսաստանը, ինչպես նաև Գաղղիան եւ Անգղիան, որ միշտ իշխանութեանց միաւորութիւնը կցանկային … Քուցային իշխան ընտրուիլը ամենեւին հակառակ չտեսան վերոյիշեալ խորհրդի իմաստին, այլ մանաւանդ անոր հոգւոյն համաձայն»:[6]

Գ. Այվազովսկին ճիշտ է նկատում Ռուսաստանի շահագրգռվածությունը Դանուբյան իշխանությունների հարցում, բայց ռուսամետ դիրքե-

---

[1] Նույն տեղում
[2] Краткая аистория Румынии. С древнейших времен до наших дней, с. 194
[3] Տես՝И.-А. Поп, И. Болован, Указ. Соч., с. 468-469
[4] «Մասյաց աղավնի», 1860, N1, էջ 19
[5] Նույն տեղում
[6] Նույն տեղում

րից անդրադառնալով՝ գերագնահատում է այդ տերության դերակատարումը խնդրի կարգավորման գործում: Ռուսաստանը Արևելյան պատերազմում կրած պարտությունից հետո կորցրել էր 1848-1849թթ. հունգարական ազգային-ազատագրական պայքարի ճնշումից հետո ձեռք բերած «Եվրոպայի ժանդարմի» դիրքը: XIX դարի հիսունականների վերջին Ռուսաստանը արտաքին գործերի նախարար Ա.Գորչակովի բնորոշմամբ ուղղակի «կենտրոնանում էր», քանզի վերջինիս կողմից մշակված արտաքին քաղաքական նոր հայեցակարգը ենթադրում էր բոլոր տեսակի միջազգային հակամարտություններից հրաժարում և հնարավոր դաշնակիցների ակտիվ որոնում:[1]

Ռումինական հիմնախնդրում Անգլիայի իբրև թե դրական դիրքորոշման հարցում «Մասյաց աղավնին» ակնհայտ սխալվում է, երբ պնդում է, թե այդ երկիրը «իշխանութեանց միաւորութիւնը» միշտ ցանկացել է, ընդհակառակը՝ վերևում մենք տեսանք «Մառախլապատ Ալբիոնի» օսմանամետ վարքագիծը Դանուբյան հարցով հրավիրված բոլոր համաժողովներում: Այլ բան է, որ վերջին զարգացումների առնչությամբ ֆորին օֆիսի բազմափորձ դիվանագետները բացահայտ առճակատման գնալու փոխարեն, նախընտրեցին սպասողական դիրք բռնել, նույնը խորհուրդ տալով պաշտոնական Ստամբուլին և Վիեննային: Անգլիացիների այս դիրքորոշումը խարսխված էր այն հաշվարկի վրա, որ վաղ թե ուշ Մոլդովայի և Վալախիայի իշխանական շրջանակների միջև ծագելու են «անխուսափելի» երկպառակություններ, ինչն ինքնին կխոչընդոտի Դանուբյան իշխանությունների միավորումը:[2]

1859թ. ապրիլին իշխանությունների հարցով Փարիզում նոր համաժողով հրավիրվեց, որտեղ Ֆրանսիայի, Ռուսաստանի, Պրուսիայի և Սարդինիայի կառավարությունները որոշակիացրին իրենց դիրքորոշումը Կուզայի կրկնակի ընտրության ճանաչման վերաբերյալ:

Այս մասին տեղեկություններ է հաղորդում նաև «Մասյաց աղավնին», համաձայն որի՝ համաժողովի կայացրած վճիռը «Դանուբեան իշխանութեանց փափագին յարմար եղաւ», ապա ավելացնում, որ օսմանյան և ավստրիական տերությունները «հարկադրուեցան» Ա. Կուզային ճանաչել

[1] Տես՝ История внешней политики России. Вторая половина XIX века. Ред. Колл. А.В. Игнатьев и др., М.1999, с. 49-54)
[2] История Румынии 1848-1917., с.119

իբրև երկու իշխանությունների միացյալ հոսպոդար:[1] Սակայն, ինչպես իրավացիորեն գրում է ամսագիրը, «այն թոյլտուութիւնը ապագային Քուցա իշխանին ժառանգացը համար ամենեւին ոյժ պիտի չունենայ»:[2] Փաստորեն փարիզյան համաժողովի սեպտեմբերին կայացրած որոշումը միացյալ հոսպոդարի օրինակարգությունը (լեգիտիմությունը) վավեր էր համարում միայն Կուզայի դեպքում, վերջինիս իշխանությունը ճանաչելով ցմահ:[3]

Այսպիսով, ռումինների քաղաքականությունը, որը նպատակ էր հետապնդում միջազգային հանրությանը կանգնեցնել «կատարված փաստի» առջև, պսակվեց հաջողությամբ և պայքարի առաջին փուլը ավարտվեց Դանուբյան իշխանութունների հաղթանակով: Սակայն անհրաժեշտ էր միավորված իշխանությունները վերածել միացյալ պետության՝ հանուն որի մեկնարկեց պայքարի երկրորդ փուլը, որը մեծ հմտությամբ գլխավորեց նորընտրիր հոսպոդար Ա. Կուզան:

Սկսված գործընթացի էությունը ճշգրիտ ըմբռնելով՝ «Մասյաց աղավնին» այն համարում է «Օսմանյան տերութեան հպատակութենեն բոլորովին դուրս ելլելու» նախապատրաստություն, որին ֆրանսիացիները «ախորժելով մը կնային, բայց ոչ եւ անգդիացիք»:[4]

Դանուբյան իշխանություններում ծավալված ազգային-ազատագրական պայքարի այս փուլը ժամանակագրական առումով համընկավ իտալական Ռիսորջիմենտոյի վերելքի հետ, որի շուրջ ստեղծված միջազգային իրադրությունը ռումինները կարողացան առավելագույնս օգտագործել սեփական քաղաքական նպատակների իրականացման համար: Ա. Կուզան, ցուցաբերելով քաղաքական և դիվանագիտական հեռատեսություն, պատրաստակամություն հայտնեց միջամտելու Ավստրիայի դեմ Ֆրանսիայի և Սարդինիայի մղած պատերազմին: Հիշյալ պատերազմին Բալկանյան միջամտության փաստը չի վրիպել նաև «Մասյաց աղավնու» ուշադրությունից, որն իր համարներից մեկում գրում է, թե Ջ. Գարիբալդին Վենետիկը Դալմաթիայի կողմից պաշարելու փոխարեն որոշել է դա կատարել Մոլդովայից, որտեղ «Դանուբեան դաշնակցութիւն կատարուելու վրայ է Մաճառ, Սլաւեան ու Վլահ ազգերուն մեջ»:[5] Ինչ վերաբերում է անձամբ Կուզային, ապա ամսագրի տեղեկությունների համաձայն՝ նա

[1] «Մասյաց աղավնի», 1860, N1, էջ 19
[2] Նույն տեղում
[3] История Румынии 1848-1917, с.124-125
[4] «Մասյաց աղավնի», 1861, թիւ Ե, մարտի 1, էջ 58
[5] Նույնի, թիվ Ժէ, սեպտեմբերի 1, էջ 23

«դաշնակից եղեր է Սարտենիոյ թագավորին հետ եւ խօսք տուեր է նորան», որ ընդդեմ Ավստրիայի «նիզակակից օգնական» կլինի:[1]

«Մասյաց աղավնու» վերը բերած տեղեկությունները ամենևին հիմնազուրկ չեն, քանի որ, Նապոլեոն III-ը, իսկապես, Ա. Կուզայի հետ գաղտնի բանակցություններ էր սկսել ռազմական գործողություններում Դանուբյան իշխանությունների զորքերի ներգրավման շուրջ: Կուզան մինչև անգամ մոլդովական և վալախական զորքերի համատեղ զորահանդես կազմակերպեց Ֆլորեշտիում՝ անհանգստություն պատճառելով Վիեննայի իշխանություններին: Սակայն կողմերի միջև այդպես էլ որևէ պայմանավորվածություն չկայացավ ֆրանսիական կողմից բանակցությունների ընդհատման պատճառով: Իրականում ֆրանսիացիները չէին ցանկանում ավելորդ լարվածություն առաջացնել Անգլիայի հետ հարաբերություններում:[2]

Այնուամենայնիվ Դանուբյան իշխանությունների հարցը շարունակում էր մնալ չլուծված:

Ա. Կուզայի կառավարությունը դանուբյան հարցում եվրոպական տերությունների անգործության հետևանքով կանգնած էր դժվար երկընտրանքի առաջ. կամ սուլթանական կառավարության հետ սկսել երկկողմ բանակացություններ և դրանով լուծում տալ խնդրին, կամ էլ՝ միակողմանիորեն հռչակել Միացյալ Ռումինիա: Ի վերջո, ռումինների վճռականության շնորհիվ Ստամբուլում 1861թ. սեպտեմբերի 15 (27)-ին Դանուբյան իշխանությունների հարցով եվրոպական նոր համաժողով կայացավ: Տերությունների կողմից իշխանությունների միավորման մի տարբերակ ներկայացվեց, որը կտրականապես մերժվեց ռումինական կողմից, քանի որ այն Ռումինիայի միավորումը ճանաչում էր միայն Ա. Կուզայի կյանքի օրոք: Ռումինները դրան հակադարձեցին այն փաստարկը, որ նման դեպքում հոսպոդարի կյանքը գտնվում է մշտական սպառնալիքի ներքո, այն պարզ պատճառով որ հակաունիոնականները վայրկյան անգամ չեն հապաղի նրան մեջտեղից վերացնելու համար:[3]

Ի վերջո, մտավախություն ունենալով, թե ռումինները միացյալ պետությունը կհռչակեն առանց իրենց «լիազորման»՝ տերությունները զիջեցին:

1861թ. դեկտեմբերի 11(24)-ին իշխան Ալեքսանդրու Կուզան պաշտո-

[1] Նույն տեղում
[2] История Румынии 1848-1917, с.123-124
[3] Там же, с. 128

նապես հռչակեց Մոլդովայի և Վալախիայի միավորումը, որով նշանավորվեց ռումինական միասնական պետության ծնունդը: Մեկ ամիս անց՝ 1862թ. հունվարի 24-ին, Բուխարեստում հրավիրված Ազգային ժողովի նիստում նորաստեղծ պետությունը պաշտոնապես անվանակոչվեց Ռումինիա:

Անթաքույց հրճվանքով ողջունելով Դանուբյան իշխանությունների տարած հաղթանակը՝ «Մասյաց աղավնին» տեղի ունեցածը համարում է այդ ժողովրդի «ազգային հոգիի» զարթոնքը, ապա ամփոփելով արդյունքները՝ իրավացիորեն փաստում. «Մոլտաւիոյ եւ Վլահի ժողովուրդները գրեթե ինքնագլուխ եղան»:[1]Իսկապես «գրեթե», քանի որ Ռումինիան Օսմանյան կայսրությունից լիովին անկախացավ ավելի ուշ՝ 1878թ.:

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ Գաբրիել Այվազովսկու խմբագրած պարբերականը համակրանքով էր արտահայտվում ռումին ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ՝ այն դիտելով որպես օսմանյան տիրապետության տակ ճնշվող ժողովուրդների պայքարի անբաժան մաս: Հայ Ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող պարբերականի այսօրինակ ազատամտությունը էապես պայմանավորված էր Օսմանյան կայսրության տարածքից դուրս հրատարակվելու հանգամանքով, մի բան, որ իրենց թույլ չէին տալիս Թուրքիայում հրատարակվող հայ պարբերականները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մասյաց աղավնի», 1855, 1856, 1857, 1858, 1860, 1861, 1862
2. Լևոնյան Գ., Հայոց պարբերական մամուլը 1794-1894թթ., Ալեքսանդրապոլ, 1895
3. Կարինյան Ա.Բ., Հայ պարբերական մամուլի պատմությունից, Ե., 1963
4. Краткая история Румынии. С древнейших времен до наших дней. Отв. Ред. В.Н. Виноградов, М., 1987
5. История Румынии 1848-1917. Ред. Колл. В.Н. Виноградов и др., М.1971
6. И.-А. Поп, И. Болован, История Румынии, М. 2005
7. Проблеми внутри- и внешнеполитической истории Румынии нового и новейшего времени, Ред. Колл. С.А. Медиевски и др., Кишинев,1988
8. История внешней политики России. Первая половина XIX века. Ред. Колл. О.В. Орлик и др., М.1999
9. История внешней политики России. Вторая половина XIX века. Ред. Колл. А.В. Игнатьев и др., М.1999
10. Новичев А.Д., История Турции. Новое время, ч.3-я (1853-1857), Л.1978
11. Vlad Georgescu, The Romanian A History, Ohio State University, 1991

[1] «Մասյաց աղավնի», 1862, թիւ Ա, հունվարի15, էջ 21

„МАСЬЯЦ АГАВНИ" (МАСИСКИЙ ГОЛУБЬ) ОБ ОБРАЗОВАНИИ РУМЫНСКОГО ГОСУДАРСТВА

Арман Бернецян

РЕЗЮМЕ

В 19 веке румынский народ начал национально-освободительную борьбу с целью освободиться от тяжелого ига османской империи.

После Восточной войны создались международные благоприятние условия для соединения Дунайских княжеств Валахии и Молдовы, в резултате чего возникло Румынское государство.

Армянское общественное мисль постоянно обращалось к обстановке в Дунайских княжествах и выражало свою четкую позицию. Журнал „Масьяц агавни" (Масисиский голубь), которий сначала печатался в Париже (с 1855г.), а затем, с 1860 г. В Феодосии, постоянно держал в центре внимания антитурецкоэ освободительноэ движение румынского народа. Редактором журнала был известный национально-консервативный деятель Габриел Айвазовский.

Армянское периодическая издание „Масьяц агавни" (Масисиский голубь), несмотря свои консервативние взгляди, беспристрастно освещало эти события и с нескриваемым воодушевлением встретило победу румын. Этим журнал четко выразил свое отношение к освободительной борьбе народов, находящихся под гнетом турецких властей. Пологается, что такая позиция армянского журнала обусловлена издаваймостю за пределом Османской империи.

"MASYAC AGHAVNI" THE FORMATION OF THE STATE OF ROMANIA

Arman Bernetsyan

SUMMERY

In the 19th century Romanians put up a liberation fight to throw off the heavy Osman yoke (iron heel).

The international situation formed after the oriented war created favorable conditions for the unification of Danube powers- Moldova and Vatican, which ended with the declaration as the State of Romania.

The Armenian public mind constantly referred to the events that took place between to anube powers and expressed his clear-cut stance about them.

Initially being published in Paris, then transferred to Theodosia since 1860, "Masyac Aghavni" magazine always lupt the anti-Turkish liberation movements of the Romanian people in the limelight of his attention.

The editor of the magazine was the outstanding national conservative figure G.A.

Though very conservative, the Normenien media elucidates those events neutrally and openly shows its exultation about the Romanian victory. By this, he magazine clearly shows its positive attitude to the liberation struggle of the nations under Ottoman domination. We consider that such an attitude of "Masyac Aghavni" magazine is mostly connected with its being published out of Ottoman Empire.

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՆԴԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Սամսոն Քառյան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայ ժողովրդի պատմության բազում դրվագներ արժանացել են բանավեճերի և բազմակարծությունների:

Թվում էր՝ Հայաստանի անկախացումից հետո հայ պատմագրությունը կշտկեր իր իսկ ստեղծած խառնաշփոթները, տարակարծությունները, անհարկի քննադատություններն ու տարաբնույթ գնահատականները:

Եթե խորհրդային տարիներին գաղափարական ու քաղաքական շատ հարցեր մեկնաբանվում էին յուրովի, ապա այժմ անհասկանալի է նույնանման վերաբերմունքը: Նոր, ազատ ու անկաշկանդ հետազոտման կարիք է զգում հայոց պատմության սպիտակ էջերից մեկի՝ Կամավորական շարժման խնդիրը Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի կազմում:

Ըստ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի, հայկական կամավորական զորամասերի մարտական գործողությունները ռուսական բանակի կազմում մեր պատմության սպիտակ էջերից մեկն է:[1]

1914թ. սեպտեմբերի սկզբներին ցարական կառավարության կողմից հայտարարվեց կամավորական խմբեր ստեղծելու մասին որոշումը: Այս հարցն այնքան կարևորվեց, որ 1914թ. նոյեմբերի 29-ին ռուսական ցարն ընդունեց հայոց կաթողիկոսին և նրան առատ խոստումներ տվեց, միայն թե հովվապետն իր հոտն առաջնորդի թնդանոթի երախ:[2]

Սակայն և՛ ժողովրդի և՛ քաղաքական շրջաններում կամավորական խմբերի ստեղծման հարցը տարակարծությունների տեղիք տվեց: «Հենց պատերազմի սկզբին հայ ազգայնական շրջաններում հայերի՝ պատերազմին մասնակցելու հարցում գոյություն ուներ երկու կարծիք: Ոմանք գտնում էին, որ հայերը պետք է Ռուսաստանի հանդեպ կատարեն իրենց քաղաքացիական պարտքը և հրաժարվեն հատուկ կամավորական խմբեր կազմելուց, իսկ մյուսները պնդում էին, որ հայերը պետք է ամենա-

[1] Հր. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Երևան, Կաիսա, 1996, էջ 388:
[2] Նույն տեղում, էջ 376:

ակտիվ մասնակցություն ցույց տան և ոչ մի զոհաբերության առջև կանգ չառնեն, ելնելով այն համոզմունքից, որ հայերի երազանքները կիրականացվեն կամ այժմ, կամ էլ երբեք: Հաղթեց վերջին տեսակետը և սկսվեց կամավորական խմբերի կազմավորումը:»[1]

Կամավորական շարժումը վարում էր հայ հասարակական և քաղաքական հայտնի գործիչներից ու նշանավոր դեմքերից կազմված Ազգային Բյուրոն:

Ազգային Բյուրոն ևս միակարծիք չէր կամավորական շարժման գաղափարին, և տարակարծություններն ակնհայտ էին:

Ազգային Բյուրոն կառավարության կողմից չէր ճանաչվում, սակայն իշխանությունները տեղյակ էին նրա գործունեությանը:

Այնուամենայնիվ, ժողովրդին օգնության շտապեցին աշխարհի տարբեր ծագերում հանգրվանած նրա նվիրյալ որդիները: «Թիֆլիս շտապեցին հայ ազգային ազատագրական շարժման նշանավոր դեմքեր, ջերմ հայրենասերներ ու հանդուգն ռազմիկներ Դրոն, Խեչոն, Համազասպը, Վարդանը, Մուրատը, Քեռին, Սմբատը, Սեպուհը, Թորգոմը, իշխան Արղությանը, Արմեն Գարոն և ուրիշներ, որոնք եկան, որպեսզի կանգնեն կռվելու պատրաստ հայ երիտասարդների գլուխ, նրանց մարտի տանելու անարգ ոսոխի դեմ»:[2]

Երբ ռուս-թուրքական պատերազմն սկսվեց, Կովկասյան բանակի ընդհանուր հրամանատար (1914-1915թթ.), գեներալ-լեյտենանտ Ալեքսանդր Միշլաևսկին Թիֆլիսի իր բնակարանում հավաքեց բանակի վեց կորպուսների հրամանատարներին՝ իրենց պատկառելի էդա-Մածեորով:

Խորհրդակցությանը հրավիրված էին նաև հայ անվանի գործիչներ Անդրանիկը, Հ. Ջավրիևը, Մեսրոպ Եպիսկոպոսը, Ալ. Խատիսյանը, Սամսոն Հարությունյանը, Արշո Շահխաթունին: «Պատերազմի առիթով ցարական կառավարությունը նորից հիշել էր հայերին: Ռուսական իշխանությունները նրանց հիշում էին հատկապես պատերազմի ժամանակ…»:[3]

«Թիֆլիսը դարձավ հայ կամավորների հավաքատեղի: Կամավորների շարքերն էին ընդունվում շատ անփորձ, դեռևս զենքի երես չտեսած երիտասարդներ, ուստի խնդիր դրվեց հենց տեղում կազմակերպել նախ-

[1] Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 378:
[2] Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 376:
[3] Նույն տեղում, էջ 383:

նական զինավարժություններ: Այդ գործը կազմակերպվում էր Թիֆլիսի բուսաբանական այգու տարածքում, իսկ հայ զինվորականության հավաքատեղին Թիֆլիսի Երևանյան հրապարակն էր:

Սկիզբ առած կամավորական շարժմանը դեմ էին շատ անվանի գործիչներ (Արամ Մանուկյան, Սիմոն Վրացյան, Սահակ Թորոսյան)՝ մտավախություն ունենալով, որ թուրքերը դա պատրվակ կդարձնեն և կկազմակերպեն նոր ջարդեր:

Ռուսահայության կամավորական շարժմանը հատկապես դեմ էին ՀՅԴ արևմտահայ գործիչները, որոնք պահանջում էին հավատարիմ մնալ ՀՅԴ 8-րդ համագումարի որոշմանը, ըստ որի արևմտահայերն ու արևելահայերը վերահաս պատերազմում պետք է պահպանեին «բարի հպատակություն» իրենց պետությունների հանդեպ»:[1]

Կազմակերպվեցին զինվորական մասեր, որոնց ժողովուրդը մկրտեց «գնդեր» անունով: Հայկական կամավորական գնդերն իրենց կազմով 4 անգամ փոքր էին ռուսական գնդերից:

Կամավորական առաջին գնդի կազմավորումը հանձնարարվեց զորավար Անդրանիկին: Նա հավաքելու էր 1000 հոգուց բաղկացած զորք: Երկրորդ գնդի (500 հոգի) ղեկավարությունը ստանձնում է Դրոն: Երրորդ գունդը (500 հոգի) անցնում է Համազասպ Սրվանձտյանի հրամանատարության տակ: Չորրորդ գունդը (500 հոգի) ղեկավարելու է Փառապանծ Քեռին (Արշակ Գաֆավյան), հինգերորդ գնդի հրամանատարությունը ստանձնելու էր Խանասորի Վարդանը (Սարգիս Մեհրաբյան):

Հ. Յ. Դաշնակցության կենտրոնը գլխավորելու էր գնդերի ձևավորման գործընթացները: Սակայն, ինչպես մեր ժողովրդի պատմության հերոսական շատ դրվագներում, այս անգամ էլ ոչ մի տարբերակում չդրվեց դասերի, սոցիալական խավերի ու կուսակցությունների միջև: Ստեղծված պահը համազգային նշանակություն ուներ: Հնչակները ևս կազմավորեցին մի քանի խմբեր՝ Գրիգոր Ավշարյանի (Ավշարով) գլխավորությամբ: Պանդուխտի խումբը բաղկացած էր 350 հոգուց:

Կամավորական շարժումը վեր էր ածվում ազգային մեծ ուժի և գնալով հակադրվում էր ցարական իշխանությունների քաղաքական նկրտումներին: Ժանդարմական դեպարտամենտի ղեկավարությամբ իշխանությունները սկսել էին անհանգստանալ, որ եթե Ռուսաստանը հրա-

[1] Խ. Քառյան, Հովհաննես Թումանյանը և հայ ժողովրդի ողբերգությունը, Երևան, 2008, էջ 79:

ժարվեր Հայաստանին ինքնավարություն շնորհելուց, այդ նույն կամավորները վերածվելու էին պատրաստի զինված ուժի՝ ռուսական կառավարության դեմ պայքարելու և զենքը ձեռքներին «ազատ Հայաստան» նվաճելու համար: Այդ պատճառով էլ ցարական իշխանությունները սկսեցին խոչընդոտել կամավորական շարժման հետագա ընդլայնմանը:

Չնայած կամավորական շարժման նախաձեռնողն ու ֆինանսավորողը ցարական իշանություններն էին, սակայն չէին հավատում, որ կամավորները մինչև վերջ հավատարիմ կմնան Ռուսաստանին: Ցարական չինովնիկների այս տրամադրությամբ էր համակված նաև իշխանական ողջ համակարգը: Դա, վերջին հաշվով, բացասական հետևանքներ ունեցավ արևմտահայության ճակատագրի համար:

Այս ամենի արդյունքը եղավ այն, ինչը հայոց ճակատագրի հանդեպ ավանդական վերաբերմունք էր ցարիզմի կողմից: «Հայկական կամավորական գնդերը 1915թ.-ի դեկտեմբերին այնուամենայնիվ բաժանվեցին գումարտակների և մտցվեցին ռուսական զորախմբերի մեջ: Ցարական իշխանությունները նրանց զրկեցին ինքնուրույն գործելու իրավունքից և 250 հազար* ռուսահայ զինվորների հետ, որոնք զորակոչված էին ռուսական բանակ, ցրեցին ռուսական զորագնդերում»:[1]

Թե՛ Վանի և թե՛ Երկրի (Արևմտյան Հայաստանի – Ս.Ք.) այլ կուսակցական մարմինները դեմ էին Կովկասում սկսված կամավորականն շարժմանը, համարում էին այն մի ձեռնարկություն, որ չափազանց վտանգավոր է թուրքահերի համար: Վանի կոմիտեն պահանջում էր անմիջապես վերջ տալ այդ շարժմանը, թուրք կառավարությանը հայերի դեմ չգրգռելու համար:

Առաջին աշխարհամարտում մի նպատակ կար. վերաբաժանել աշխարհը, և այդ ամենից զերծ չմնաց Թուրքիան: Ռուսական բանակի կովկասյան ճակատը անմիջականորեն առնչվում էր մեր ճակատագրին: Հենց պատերազմի սկզբից այն թուրքերի համար աղետալի եղավ: 1914 թ.-ի դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ.-ի հունվարի 5-ը Սարիղամիշի մոտ ռուսական բանակը գլխովին ջախջախեց թուրքական 90 հազարանոց զորքին (փրկվեց միայն 12 հազարը), իսկ ռազմական նախարար Էնվեր փա-

---

* Այս թիվը տարբեր աղբյուրներում տարբեր է:

[1] Գ. Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից մինչև 1917թ.), ՀՀ ԳԱԱ, «Գիտության» հրատարակչություն, Երևան, 2004, էջ 668:

շան հազիվ խուսափեց գերեվարվելուց: Ռուսները թուրքերին վտարեցին նաև Իրանի Ատրպատական նահանգից:

1915թ.-ի մայիսին ռուսները հայ կամավորական ջոկատների աջակցությամբ գրավեցին Վանը: Սակայն հուլիսին ռուսական բանակը անհասկանալիորեն ժամանակավորապես թողեց հայկական տարածքները, որը ճակատագրական եղավ արևմտահայության համար: Այնուհետև Կովկասյան ճակատում ռուսական զորքերը, հաջող հարձակում ձեռնարկելով, 1916թ.-ին գրավեցին Էրզրումը, Երզնկան, Մամախաթունը, Տրապիզոնը, Բիթլիսը և այլ տարածքներ՝ հասնելով Սեբաստիայի վիլայեթ:

Հայոց քաղաքական կուսակցությունները լծվեցին Անտանտի ռազմական կառքին, բոլոր հնարավոր միջոցներով օգնեցին նրան, թե՛ կամավորական շարժման ծավալման, և թե՛ ռուսական բանակին աջակցելու գործում: «Սակայն, զգալով, որ կամավորական շարժումը վերաճելով կարող է մեծ ուժ դառնալ ազգային ազատագրական պայքարի գործում, ցարիզմը շուտով սկսեց արգելել նրա հետագա աճն ու հզորացումը»:[1]

Հայ քաղաքական շրջանները զարմանալիորեն չէին նկատում, որ ո՛չ արևմտյան տերությունները, և ո՛չ էլ ռուսական ցարիզմը շահագրգռված չէին Հայկական հարցի լուծմամբ, չէին մտահոգված հայ ժողովրդին թուրքական լծից ազատելու խնդրով:

Հայտնի է, որ դաշնակցական ներկայացուցիչ Հ. Ջավրիևը Փարիզի ռուսական դեսպան Իզվոլսկու միջոցով 1915թ. ջանքեր էր թափում, որպեսզի Թուրքիայի սահմաններում ճանաչվի «Հայաստանի ինքնավարությունը», ինչպես նաև «Կիլիկիայի ինքնավարությունը»՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հովանավորության տակ: Այդ առթիվ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովը, պատասխանելով Իզվոլսկու հարցումին, հեգնանքով նշում է, որ հայերի հետ տեղի ունեցող զրույցին պետք է տալ «զուտ ակադեմիական բնույթ»: Եվ դա տեղի ուներ այն ժամանակ, երբ թուրքերն արդեն սկսել էին հայերի զանգվածային ջարդը: Սա էր ցարիզմի դեմքը՝ խաբել և կրկին խաբել:[2]

Աշխարհամարտի ամենասև էջը, այնուամենայնիվ, հայոց Մեծ եղեռնն էր:

Երիտթուրքերը հենց սկզբից ծրագրել էին ոչնչացնել հայերին, ապա

---

[1] Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 373:

[2] Ծ. Աղայան, նույն տեղում, էջ 373:

նաև մյուս ժողովուրդներին, եթե նրանք հավատափոխ չլինեին և իսլամի հլու կամակատարը չդառնային:[1]

Ցեղասպանության ենթարկվեցին նաև Օսմանյան կայսրության այլ ժողովուրդներ՝ եզդիները, ասորիները և ուրիշներ:

Երիտթուրքական կուսակցության պարագլուխները արևմտահայերի տեղահանությունից ու ցեղասպանությունից հետո հանդես եկան հուշագրություններով, որոնցում նշում էին, որ հայերի «դժբախտության» պատճառը իբր եղել են հե՛նց իրենք՝ հայերը, քանզի դավաճանել են օսմանյան հայրենիքին, նրանք պնդում էին, որ արևմտահայերը, մինչ Թուրքիայում հայ ազգային կուսակցությունների երևան գալը, իբր ապրում էին հաշտ ու խաղաղ և ավելի լավ, քան թուրքերը: Կուսակցությունները, իբր ընկնելով եվրոպական տերությունների, հատկապես Ռուսաստանի ազդեցության տակ, թափանցեցին Թուրքիա, ոտքի հանեցին իրենց ազգակիցներին սուլթանական իշխանությունների դեմ, որոնք էլ հարկադրված եղան ճնշել նրանց ելույթները: Իթթիհատի ղեկավարները նաև պնդում էին, որ հայերը առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ընդհանրապես զինվորագրվեցին ցարիզմին և օսմանյան պետության դեմ ապստամբություն բարձրացրին Արևմտյան Հայաստանում, հետևաբար, իշխանություններն իրենց թիկունքի ապահովության համար հարկադրված եղան տեղահանել նրանց, ուղարկելով կայսրության խորքերը: Ավելացնենք, որ երիտթուրքական պարագլուխների այդ ստահոդ քարոզները քաղաքական ու այլ նկատառումներով այսօր էլ շարունակում են պաշտպանել ու կրկնել արտասահմանյան որոշակի շրջաններ, միայն թե հասնեն հայոց ցեղասպանության ժխտմանը:

Տարօրինակ է, որ վերջերս համարյա նույն բանը կատարում են Հայաստանի Հանրապետության պաշտոնական ու ոչ պաշտոնական շրջանների որոշ ներկայացուցիչներ՝ հայտարարելով, որ սուլթանական կարգերը ապահովում էին արևմտահայերի գոյության ու առաջադիմության պայմաններ, որ կուսակցությունների միջամտությունը միայն վնասել է նրանց: Այդ անձինք դատապարտում են նաև առաջին աշխարհամարտի տարիներին հայ կամավորական շարժումը՝ հայտարարելով, որ իբր մենք՝ հայերս ենք եղել մեր ցեղասպանության ու դժբախտության պատճառը:

Բայց արդյո՞ք այդ ամենն այդպես է: Դիմենք պատմական փաստերին: Նախ՝ տեսնենք, թե ի՞նչ քաղաքականություն էր վարում օսմանյան

[1] Նույն տեղում, էջ 367:

պետությունը հայերի հանդեպ մինչև 1885թ., այն ժամանակաշրջանում, երբ տակավին չկային հայ ազգային կուսակցությունները:

Սուլթանական կառավարությունը 1830-1840-ական թվականներին թեև հայտարարեց, որ կայսրությունում վերացվում է ազգային խտրականությունը, բայց Արևմտյան Հայաստանում այն պահպանվեց: Հայը շարունակում էր համարվել երկրի ոչ լիիրավ քաղաքացի, նույնիսկ օրենքից դուրս: Այդ տարիներին կառավարությունը երկրի ներքին վիճակը կայունացնելու և ամրապնդելու համար վերացրեց Արևմտյան Հայաստանում քրդական ավատատիրական կազմավորումները, սակայն շուտով հնարավորություն ստեղծեց քուրդ ավագանու ժառանգներին՝ կրկին ձեռք բերելու իրենց հայրենական կալվածքները և նախկին լուծը դնելու հայ գյուղացիների վզին: 1874-1875թթ. Կ. Պոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը բողոքեց այդ երևույթի դեմ, ցույց տվեց, որ «քուրդ բեյերը գյուղացի հայերին իրենց մեջ իբրև գերի կվաճառեն»: Սակայն Բ. Դուռն անուշադրության մատնեց նրա բողոքը: Արևելյան կամ Ղրիմի պատերազմից հետո բազմաթիվ մահմեդականներ Հյուսիսային Կովկասից գաղթեցին դեպի Թուրքիա: Օսմանյան կառավարությունը եկվորներից շատերին տեղավորեց հայաբնակ շրջաններում և խրախուսեց, որ ապրեն հայերի հաշվին: Հայերը բողոքում էին նրանց բռնությունների ու թալանի դեմ, բայց իշխանությունները անտեսում էին այդ գանգատները:

Զեյթունի հայերը ավանդական կարգով օգտվում էին առանձին ինքնուրույնությունից. նրանց իշխաններն էին կառավարում լեռնաշխարհը, հավաքում հարկերը և տալիս պետությանը: Սուլթանական կառավարությունը չհանդուրժեց դա: 1862թ. որոշեց իր պաշտոնային նշանակել նրանց կառավարիչ և բարձրացնել հարկերը: Զեյթունցիները դիմադրեցին: Բայց սուլթանը ճնշեց նրանց ելույթը և կատարեց իր որոշումը:

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հրապարակ ելավ Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը: Այն հրապարակ մտցնողը ոչ այլ ոք էր, եթե ոչ ինքը՝ սուլթան Աբդուլ Համիդը: Արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքին քաջատեղյակ Գ. Զոհրապը գրում էր, որ այդ պատերազմի ժամանակ, երբ ռուսները, գրավելով թուրքական տարածքները, շարժվում էին կայսրության խորքերը, սուլթանը նրանց առաջխաղացումը կանգնեցնելու համար ցանկացավ ստեղծել «տեսակ մը պատնեշ-պետություն»: Ուստի առաջարկեց հայ հոգևոր ղեկավարներին, որ նրանք «հայ բնակչությամբ նահանգներուն

համար քաղաքական ինքնավարություն մը պահանջեն օսմանյան գերիշխանության տակ»: Բայց երբ բրիտանական նավերը հասան Կ. Պոլիս, նա գոտեպնդվեց և հրաժարվեց հայկական ինքնավարության գաղափարից: Այնուամենայնիվ, եվրոպական պետություններն օգտագործեցին այդ հանգամանքը և Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով որոշեցին, «որ թուրքական կառավարությունը իրենց հսկողությամբ բարենորոգումներ անցկացնի հայկական վիլայեթներում՝ ապահովելով հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից»:[1] Հայկական հարցը, որ առաջ քաշվեց իբր արևմտահայերին հովանավորելու և օգնելու նպատակով, նրանց համար դարձավ չարիք: Մեծ տերություններն այն օգտագործում էին Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և նրանից օգուտներ ստանալու համար: Սուլթանը, զիջումներ կատարելով այդ տերություններին, չեզոքացնում է նրանց և իրագործում արևմտահայության պարբերական ու զանգվածային ջարդերը: Այդ կերպ նա ձգտում էր դատարկել Արևմտյան Հայաստանը հայերից և լուծել Հայկական հարցը:

Այնուամենայնիվ, Գրիգոր Զոհրապը, հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ճակատագրի մեջ Ռուսաստանի ունենալիք դերի մասին խոսելով, 1913թ. հունվարին գրում է. «Մեր գլխավոր հենարանը Հայկական հարցին մեջ Ռուսաստանն է՝ հարևանության իրավունքով ու շահագրգռվածության աստիճանով»:[2]

1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ և նրանից անմիջապես հետո հայ ազգային և հոգևոր գործիչները՝ տեսնելով, որ Բալկանյան ժողովուրդները իրենց ապստամբության շնորհիվ ազատագրվում են թուրքական լծից, կոչ արեցին արևմտահայերին՝ բռնել նույն ճամփան: Բայց նրանց կոչը մնաց անհետևանք: Այնժամ գործիչներն սկսեցին ստեղծել խմբակներ ու կազմակերպություններ, նպատակ ունենալով պայքարով եթե ոչ ազատագրվել օսմանյան տիրապետությունից, գոնե մեղմել այն: Այնուամենայնիվ, հայերը շարունակում էին իրենց մաքառումները: Ժողովրդական հուզումները գնալով ծավալվում էին: Կուսակցությունների հանդես գալը դարձավ անհրաժեշտություն, որպեսզի ղեկավարեին ժողովրդին: Եվ նրանք երևան եկան: 1885թ. բուն հայրե-

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1878-1923) Զոհ Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 106:

[2] Ի. Կիրակոսյան, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում: Երևան, 2009, էջ 95:

նիքում՝ Վանում, հայտնվեցին Արմենականները, 1887թ. Ժնևում՝ Հնչակյանները, իսկ 1890թ. Թիֆլիսում՝ Դաշնակցականները: Ելնելով բազմաթիվ ճնշված ժողովուրդների ազատագրման փորձից՝ ծրագրեցին լուծել արևմտահայության ազատագրման հարցը ապստամբության միջոցով՝ Եվրոպայի օգնությամբ: Սակայն կուսակցությունները ետ կկանգնեին այդ քայլից, եթե սուլթանական կառավարությունը կենսագործեր Բեռլինի որոշումները և բարելավեր արևմտահայության դրությունը, ստեղծեր հայերի համար գոնե անձի ու գույքի ապահովություն, հաստատեր այնպիսի վիճակ, որ նրանք էլ զգային իրենց՝ թուրքերի հետ երկրի իրավահավասար քաղաքացիներ:

Բայց սուլթանական իշխանությունները այդ մասին լսել անգամ չէին ուզում: Նրանք 1880-ական թվականների վերջերին ու 1890-ական թվականներին շարունակում էին իրենց բռնություններն ու հայաջինջ քաղաքականությունը:

Հայերը հարկադրված էին ոտքի կանգնել, պայքարել իրենց գոյության համար: Հնչակյանների նախաձեռնությամբ 1894թ. ապստամբեց Սասունը, իսկ 1895թ.՝ Զեյթունը: Նրանք արիաբար մարտնչեցին հանուն ազատության և փայլուն էջեր գրեցին հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ: Սակայն սուլթանական կառավարությունը դաժանորեն ճնշեց ոչ միայն նրանց ելույթները, այլև, օգտագործելով առիթը, սրի քաշեց շուրջ 300.000 հայերի: Համարյա այդքան էլ դավանափոխվեցին, մահմեդականացան և տարագրվեցին աշխարհի զանազան երկրներում: Չբավարարվելով դրանով, կառավարությունը խրախուսեց քուրդ ցեղապետերին ու աղաներին՝ շարունակել տիրանալ ավատատիրական կախումից ազատ մնացած հայկական գյուղերին:

1905թ. ռուսական հեղափոխությունը լուրջ տեղաշարժեր մտցրեց արևմտահայության ազատագրական հարցում հայ հասարակական-քաղաքական ուժերի դիրքորոշման մեջ: Պահպանողականներն առաջվա նման պնդում էին, թե պետք է շարունակել հարմարվել համիդյան պայմաններին՝ տանելով անտանելին: Բայց լիբերալ ու դեմոկրատական շրջանները խնդիր դրեցին թողնել տասնամյակներ շարունակ հայ ժողովրդին ցավ ու վիշտ պատճառած, նրա գլխին փորձանք դարձած Հայկական հարցը, միանալ թուրքական հեղափական ուժերին և նրանց օգնությամբ լուծել այն: Եվ հայ հասարակական-քաղաքական կյանքում դիրք նվաճած Դաշնակցություն կուսակցությունը ստորագրեց Փարիզի

1907թ. դեկտեմբերի վերջին Թուրքիայի ընդդիմադիր ուժերի հանրահայտ դեկլարացիան:

1908թ. հեղաշրջումից հետո իշխանության գլուխ անցած երիտթուրքերը կատարեցին հայանպաստ որոշ բաներ: Սակայն շուտով դիմափոխվեցին և շարունակեցին Աբդուլ Համիդի ազգային ու հայահալած քաղաքականությունը: Նրանք, միանալով սուլթանական ուժերին, 1809 թ. մարտի վերջին Կիլիկիայում իրագործեցին հայկական նոր կոտորածներ, սրի քաշելով շուրջ 30.000 մարդ: Դաշնակցականները հանդուրժեցին դա և շարունակեցին իրենց համագործակցությունը նոր կառավարիչների հետ:[1] Երիտթուրքերը, որդեգրելով օսմանիզմը, 1910թ. Սալոնիկի իրենց գաղտնի խորհրդակցությունում նպատակ դրեցին թուրքացնել կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին: Վերջիններիս համառ դիմակայության հետևանքով, սակայն, օսմանիզմի քաղաքականությունը տապալվեց: Այն ժամանակ երիտթուրքերը որդեգրեցին պանթուրքիզմի և պանիսլամիզմի քաղաքականությունը՝ ձգտելով ընդարձակել կայսրության սահմանները դեպի արևելք, դեպի Կովկաս ու Միջին Ասիա, դեպի Սիբիր ու Ուրալ: Նրանք անհրաժեշտ համարեցին առաջին հերթին վերացնել հայերին՝ գտնելով, որ իրենց ցնորամիտ երազանքների իրագործման ճանապարհին նրանք են գլխավոր խոչընդոտը:

Դառնացած նոր կառավարիչների հակահայկական քաղաքականությունից, արևելահայ հասարակական-քաղաքական շրջանները օգտագործեցին Բալկանյան ժողովուրդների ազատագրական պատերազմի հաջողությունները թուրքերի դեմ և 1912թ. դիմեցին ցարական բարձրաստիճան շրջաններին՝ բարձրացնել Հայկական հարցը միջազգային դիվանագիտական ոլորտներում ու լուծել այն: Ցարական կառավարությունը, հաշվի առնելով, որ դա բարենպաստ է իր արտաքին քաղաքականությանը, ընդառաջեց նրանց: Երիտթուրքերը, ձգտելով կրկին թաղել Հայկական հարցը, մի կողմից խոստանում էին Ռուսաստանին ու այլ տերություններին, թե կձեռնարկեն միջոցներ այդ հարցի լուծման համար, մյուս կողմից՝ հայերին ահաբեկելու նպատակով կազմակերպում էին նրանց զանգվածային հալածանքներն ու պարբերական ջարդերը:

1914թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) Ռուսաստանն ու Թուրքիան, վերջապես, պայմանագիր կնքեցին Հայկական բարենորո-

[1] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы политархива мид Кайзеровской Германии, составитель отв. ред. В. Микаелян, Ер. 1995, с. 17.

գումների մասին: Այդ պայմանագիրը թեև չնչին մի բան էր ու չէր գոհացնում հայ լիբերալ-դեմոկրատական շրջաններին, այնուամենայնիվ երիտթուրքերը այդ իսկ չէին իրագործում: Եվ դա հասկանալի է. նրանք պատրաստվում էին պատերազմ հայտարարել Ռուսաստանին և այդ ընթացքում լուծել հայկական հարցը՝ իրենց ցանկացած եղանակով: Սակայն Իթթիհատը կամենում էր նախապես օգտագործել հայերին, ոտքի հանել նրանց ռուսների դեմ՝ խոստանալով շնորհել ինքնավարություն Թուրքիայի կազմում: «Այդ նպատակով 1914թ. ամռանը նրա գործակալները բանակցություններ վարեցին Էրզրումում Դաշնակցության ներկայացուցիչների հետ: Վերջիններս մերժեցին նրանց առաջարկությունը՝ խոստանալով չեզոքություն պահել, եթե երկու պետությունների միջև ծագի պատերազմ: Այնժամ երիտթուրքերը որոշեցին հայերի հետ իրենց վերջնական անելիքը...»:[1]

Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի դիվանագիտական ոչ հետևողական ու անվճռական գործողությունները Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու հիմնախնդրում, անխուսափելի դարձրին, որպեսզի ընդունված նախագծերը դառնան «մեռած տարր», թղթի կտոր և որևէ կերպ չնպաստեցին արևմտահայության պայմանների բարելավմանը օսմանյան բռնատիրության համակարգում: Առջևում հրեշավոր 20-րդ դարն էր իր մահասարսուռ Մեծ եղեռնով՝ խառնաշփոթ աշխարհի սառն ու անտարբեր, երկչոտ ու ստրկամիտ աչքերի առաջ:

1914թ. հոկտեմբերի 15-ին, այսինքն՝ երբ դեռ չէր բացվել առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական ճակատը, տեղի ունեցավ իթթիհատական կուսակցության գերագույն կոմիտիե նիստը, ուր քննարկվեց ու ճշտվեց հայերի ցեղասպանության պլանը: Ջիա Գյոքալփը պահանջեց կոտորել բոլոր հայերին: Ջավիդ բեյը դեմ արտահայտվեց նրան՝ գտնելով, որ այդ դեպքում կկորչեն նաև նրանք, որոնք, իսլամություն ընդունելով, պիտանի կլինեն: Դոկտոր Նազիմը հայտարարեց, որ անհրաժեշտ է իսպառ բնաջնջել հայերին, քանզի նրանք «խանգարում են մեզ կովկասյան ռազմաճակատում, անհնարին դարձնելով մեր մուտքը Ռուսաստան»: Թալեաթ բեյը եզրափակեց. «Իմ անձնական պատասխանատվությամբ հայերի դեմ կգործադրեմ այն ամենը, ինչ անհրաժեշտ համարեմ»: Նիստի մասնակիցները մեծամասնությամբ որոշեցին. «Հայերի վերաբնակեցում կատարել, միաժամանակ ոչնչացնել նրանց անապատում»: Այդպես, ուրեմն, երիտթուրքերը, դեռ պատերազմի մեջ չմտած, որոշել էին հայոց

[1] Там же, с. 127.

բնաջնջման հարցը:

Իսկ ի՞նչ դիրք բռնեցին հայերը: Հենց որ սկսվեց պատերազմը Թուրքիայի ու Ռուսաստանի միջև, արևմտահայ հասարակական-քաղաքական բոլոր շրջանները, Կ. Պոլսի պատրիարքի գլխավորությամբ, 1914թ. հոկտեմբերի 20-ին (նոյեմբերի 3-ին) հավաքվեցին խորհրդակցության և որոշեցին պաշտպան կանգնել օսմանյան հայրենիքին, հորդորել ժողովրդին՝ չխուսափել զորակոչից, կատարել իր զինվորական պարտականությունը կառավարության առաջ: «Եվ 300 հազար հայեր մեկնեցին թուրքական բանակ: Ռուսաստանը ևս զորակոչ անցկացրեց՝ համալրելով իր բանակը 250 հազար արևելահայերով»:[1]

Ուինսթոն Չերչիլն* իր «Համաշխարհային ճգնաժամ» գրքում անդրադարձել է նաև հայկական կոտորածներին: Բոլոր ժամանակների ամենամեծ բրիտանացին գրում է. –«Համաշխարհային պատերազմում... հայ առաջնորդների առաջ ծառացավ մի զարհուրելի երկընտրանք. նրանք պետք է իրենց ժողովրդի բոլոր ուժերը տրամադրեին Ռուսաստանին կամ Թուրքիային, կամ էլ համաձայնվեին կռվել իրար դեմ երկու թշնամի բանակների կազմում: Վերջիվերջո, նրանք եկան այն համոզման, որ պատերազմի դեպքում Թուրքիայում և Ռուսաստանում ապրող հայ ժողովուրդը թող իր պարտքը կատարի երկու պետությունների հանդեպ:

Նրանք ավելի խելամիտ էին համարում գնալ եղբայրասպան պայքարի, կռվել տարբեր ճակատներում, քան իր լինելիության խնդիրը կապել որևէ մեկի հաղթանակի հետ:

Երբ Թուրքիան հարձակվեց Ռուսական Հայաստանի վրա, ցարական կառավարությունը վախենալով, որ Կովկասում հայերի հաջողությունը կարող է բորբոքել նրանց ազգասիրության զգացմունքները, 150 հազար հայ զինվորներ ուղարկեց Լեհական և Գալիցիայի ռազմաճակատ, իսկ Կովկասում հայերի պաշտպանության համար ուղարկեց ռուսական զորքեր:

Եվրոպական երկրներում այդ 150 հազար հայ զինվորներից քչերին հաջողվեց ողջ մնալ և վերադառնալ Կովկաս մինչ պատերազմի ավարտը: Դա սոսկալի պատժամիջոց էր հայ ժողովրդի հանդեպ, բայց հետա-

---

[1] Там же, с. 139.

* Անգլիայի պետական, քաղաքական գործիչ, դիվանագետ, հրապարակախոս, գրող, գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1953), որոշ հարցումներով՝ բոլոր ժամանակների ամենամեծ բրիտանացին

գայում նրան սպասում էին ավելի դաժան փորձություններ»:[1]

Հետագա դեպքերն ընթացան հետևյալ կերպ: Երիտթուրքերը, Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ մտնելու առաջին իսկ օրից, սկսեցին հայկական ջարդերը: Դա բացահայտ սանձարձակություն էր: Նրանք կոտորում էին հայության այն մասին, որը կանգնել էր Իթթիհատի կողմը, նշանաբան ունենալով պաշտպանել օսմանյան հայրենիքը Ռուսաստանի դեմ, այն մասին, որը դիմել էր արևելահայ եղբայրներին՝ չկատարել անխոհեմ քայլ, հանդես չգալ Ռուսաստանի կողքին, ընդդեմ Թուրքիայի: 1915թ. սկզբներին երիտթուրքերը արևմտահայության ջարդերը հասցրեցին ավելի մեծ չափերի: Վասպուրականի հայերը, դիմագրավելով թշնամուն, լցվեցին Վան: Վանեցիները հարկադրված եղան դիմել ինքնապաշտպանության, շուրջ մեկ ամիս (1915թ. ապրիլի 7-ից մայիսի 5-ը) վարելով մահու և կենաց գոտեմարտ: Այնուհետև իթթիհատական ոճրագործները հայկական զանգվածային կոտորածներ իրագործեցին կայսրության հայաբնակ այլ վայրերում: Մի շարք տեղերում հայերը կարողացան կազմակերպվել ու դիմել ինքնապաշտպանության (հունիսի 3-29-ը Շապին-Գարահիսարում, հուլիսի 12-13-ը՝ Մուշում, օգոստոսի 1-10-ը Սասունում, օգոստոսի 29-ից հոկտեմբերի 23-ը Ուրֆայում և այլն): Հայերի ինքնապաշտպանական այդ գործողությունները միանգամայն արդարացի էին: Ոչ մի անհատ, առավել ևս ժողովուրդ չի կարող անտարբեր մնալ իր բախտի հանդեպ: Դրանք ապստամբություններ չէին Թուրքիայում կամ թուրքական բանակների թիկունքում, ինչպես ներկայացնում էին իթթիհատական պարագլուխները կամ պատմության թուրք ու թուրքամետ կեղծարարները, այլ՝ ինքնապաշտպանական գոյամարտեր: Բայց եթե արևմտահայերն անգամ ապստամբեին օսմանյան լծի դեմ, դարձյալ կլինեին իրավացի: Ինչո՞ւ իմպերիալիստական, ուրիշի հողերը զավթելու ձգտումներով պատերազմող երիտթուրքերին կարելի է արդարացնել, նրանց պարտության համար նույնիսկ ցավակցել, իսկ իրենց ազատության համար մաքառող ժողովուրդների վարքագիծը դատապարտել: Անցյալում բազմաթիվ ժողովուրդներ, այդ թվում նաև Օսմանյան կայսրությունում, իրենց ազատությունը ձեռք են բերել ապստամբությունների միջոցով՝ սեփական ուժերով կամ դրսի օգնությամբ: Ոչ ոք նրանց չի դատապարտում,

[1] Սև գիրք, նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և հայոց ցեղասպանության մասին, Պետրոս Հովհաննիսյանի խմբագրությամբ, Երևան, հայագիտակ հրատարակչություն, 2011, էջ 367-368:

ընդհակառակը՝ արդարացնում են և ճիշտ են վարվում, իսկ հայերի նման գործողությունները դատապարտում են:

Կայզերական Գերմանիան՝ Թուրքիայի «դաշնակիցը», խրախուսում և պաշտպանում էր երիտթուրքերի հանցավոր ծրագրերը և գործողությունները: «Ելնելով իր զավթողական նպատակներից Մերձավոր Արևելքում և Կովկասում՝ նա ամեն կերպ աջակցում էր վանդալներին հայ ժողովրդի բռնագաղթը և կոտորածը կազմակերպելու գործում: Դեռ ավելին, Թուրքիայում գտնվող գերմանացի սպաները որոշ դեպքերում մասնակցություն էին ունենում երիտթուրքերի գազանություններին»:[1]

Լեփսիուսի համոզմամբ, թե՛ մոտ անցյալը և թե՛ ներկան բավականաչափ հիմքեր ընձեռնում էին այդ տեսակետի հիմնավորման համար: Ցարը (ռուսական-Ս.Ք.) նույնպես պատերազմի սկզբում խոստանում էր հայերին ազատագրել, սակայն, ինչպես ցույց տվեցին իրադարձությունները, նրան Հայաստանը պետք էր առանց հայերի: «Ռուսաստանի արտգործնախարար Լոբանովի կողմից ժամանակին արտահայտված այդ ըմբռնումը, Լեփսիուսի համոզմամբ, պատերազմից հետո որդեգրվել էր նաև բրիտանական քաղաքականության կողմից»:[2]

Ինչ վերաբերում է զորակոչված հայերին, ապա Ռուսաստանը նրանց օգտագործեց եվրոպական ու ասիական ռազմաճակատներում, իսկ Թուրքիան մեծ մասին սրի քաշեց: Այն էլ այն դեպքում, երբ թուրքերը կարող էին լուրջ օգուտներ ունենալ նրանցից՝ եթե չկոտորեին, եթե խելամտորեն օգտագործեին նրանց թիկունքում կամ ռազմադաշտում: Անդրադառնալով ռուսական բանակներում գործող հայ կամավորական խմբերին՝ առաջին հերթին պիտի ասել, որ նրանց թիվը փոքր էր, ըստ որոշ հեղինակների՝ 6000, իսկ ըստ այլոց՝ 10 հազար մարդ: Որքան էլ նրանք կռվեին անձնուրաց, չէին կարող «որոշել» Ռուսաստանի հաղթանակը կամ Թուրքիայի պարտությունը: Թուրքիան ասիական ճակատում ուներ 190 հազար, իսկ Ռուսաստանը՝ 170 հազար զինվոր: Եթե Թուրքիան այդ հարաբերակցությամբ պարտվում էր, ապա պատճառը պիտի փնտրել ոչ թե հայ կամավորների, այլ՝ իր զինվորական ուժերի, հատկապես հրամկազմի ապաշնորհության կամ սպառազինության ցածր մակարդակի մեջ: Այնուհետև՝ հայ կամավորները, մտնելով ռուսական բանակի շարքերը,

[1] Հայերի ցեղասպանություն Օսմանյան կայսրությունում: (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ.Գ. Ներսիսյանի խմբագրությամբ), Երևան, 1991, էջ 19:
[2] Ա. Հայրունի, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 366:

ցանկանում էին օժանդակել ոչ թե ցարիզմի նվաճողական քաղաքականությանը, այլ՝ օգնել իրենց արյունակից եղբայրներին, ապահովել նրանց գոյությունը երկու նվաճողական պետությունների կռվի դաշտում: Կամավորական շարժումն ուներ ինքնապաշտպանական նպատակ: Ուսումնասիրողները ցույց են տվել, որ կամավորները հազարավոր հայեր են փրկել կոտորածներից ու կործանումից: Եվ վերջապես՝ ցարական կառավարությունը, զգուշանալով, որ հայ կամավորները կդառնան ազգային բանակի հիմք, իր զորքերը վերակազմելու պատվակով 1915թ. վերջերին ցրեց նրանց իր բանակային միավորումների վրա: Չնայած դրան, երիտթուրքերը շարունակեցին իրենց հայակուլ քաղաքականությունը, ինչը մի անգամ ևս ապացուցում է, որ Իթթիհատի պարագլուխները կոտորում էին հայերին ոչ թե նրանց «դավաճանության», այլ՝ իրենց համաթուրքական պլանների կենսագործման համար:

Ահա այդպիսին են փաստերը, այդպիսին է եղել պատմական իրողությունը: Դեռ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ու նրանից անմիջապես հետո, ժամանակակիցներն ու ականատեսները, խղճի ու պատվի տեր մարդիկ, արտասահմանյան դիվանագետներն ու լրագրողները, աշխարհում շատ հայտնի և հեղինակավոր գործիչներ (Չերչիլ, Լլոյդ-Ջորջ, Լեփսիուս, Ռոման Ռոլան, Նանսեն, Դոստաևսկի, Մարկ Տվեն և շատ այլ ուրիշներ) նկարագրեցին հայերի դաժան բռնագաղթն ու ջարդը, հերքեցին Իթթիհատի ղեկավարների ստահոդ հայտարարությունները, դատապարտեցին նրանց կեղծ ու շինծու պնդումները, անարգանքի սյունին գամեցին հայաջինջ քաղաքականությունը: «Հայկական հարցը,- գրում է Լեփսիուսը,– մի ինքնաբույս տունկ չէ, այլ եվրոպական քաղաքագիտության ծնունդ: Հայ ազգը Ռուսաստանի և Անգլիայի հակադիր քաղաքական շահերի զոհն է… Լոնդոնի և Պետերբուրգի քաղաքագիտական ճատրակի մեջ հայը զինվոր էր, որ մերթ առաջ էր քշվում, մերթ զոհվում… մինչև այսօր հայերը միջոց առ վախճան են եղել Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի քաղաքագիտական խաղի…»:[1]

Թուրքերը որոշել էին ջարդել հայերին և այդ անելու էին, առանց հաշվի առնելու՝ հայ կամավորներ կային, թե՝ ոչ: Թ. Ագչամը* նշում է, որ այն լոկ պատրվակ էր ջարդերի համար:

---

[1] Նույն տեղում, էջ 766

* Թաներ Ակչամ – թուրք առաջադեմ պատմաբան, որն աչքի է ընկնում հայանպաստ աշխատություններով:

Մեր օրերի հայտնի ցեղասպանագետ Ստեփան Պողոսյանը գրում է. «Զարմանալ կարելի է, թե ինչպես Թիֆլիսում բազմածները չհասկացան ցարական իշխանությունների նենգությունը:

Ռուսական բանակում գտնվող 250 հազար հայի առկայության պայմաններում 5-7 հազար կամավորների շուրջը բարձրացած աղմուկը ռազմական նպատակներ չէ, որ հետապնդում էր: Սակայն ռուսական զորքերի առաջխաղացման ընթացքում նրան անհրաժեշտ էր, որ տաճկահայության ամբողջ համակրանքը լինի ռուսական զորքերի կողմը և դրան գերազանցապես կարող էր նպաստել կամավորական շարժումը»:[1]

Իսկ ֆրանսիացի նշանավոր հայագետ Ժան Ժակ Մորգանը իր «Հայերը» հրապարակման մեջ գրել է. «Ազգային քաղաքական կյանքի վերականգնման ձգտող բոլոր ժողովուրդների մեջ, հանուն ազգային վերածննդի, ամենից ավելի շահագրգիռներից ու արդարացիներից մեկն անտարակույս հայ ժողովուրդն է, որ չնայած ամենազարհուրելի հալածանքներին, հակառակ բարբարոս իշխողների ճիգերին, կարողացել է դարեր շարունակ պահել իր ավանդույթները, լեզուն ու նախնիների պաշտամունքը: Հայի կենսունակության այդ հարատևությունն Արևելքի պատմության ամենանշանակալի երևույթներից է և իր տեսակի մեջ համարյա եզակի մի բան, որովհետև արաբների ու թուրքերի կողմից ստրկացած ժողովուրդների մեջ քչերն են, որ կարողացել են պահել ազգության հատկանիշները՝ բարքերը, լեզուն և կրոնը»: [2]

Թվում էր, որ երիտթուրքական ղեկավարների և նրանց կողմնակիցների ու հետևորդների կեղծիքներն ու նենգափոխումները մերկացված են հասարակական առողջ ուժերի կողմից: Բայց ասօր հանդես են գալիս մարդիկ, որոնք հարություն են տալիս այդ քարոզներին:

Դրությունը բարդանում էր նրանով, որ արևմտահայ քաղաքական ուժերը միակամ չէին ռազմավարական խնդիրների լուծման հարցում: … Էրզրումից ընտրված թուրքական պառլամենտի անդամ Արմեն Գարոյի (Գարեգին Բաստրմաջյան) գլխավորությամբ, անհրաժեշտ էր համարում ստեղծել կամավորական ջոկատներ, որոնք ռուսական զորքերի առաջխաղացման դեպքում պետք է օգնեին նրանց Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում: Իսկ երկրի ներսում անհրաժեշտ էր համարում

[1] Ստ. Պողոսյան, Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2, Երևան, 2008, էջ 473, 475:
[2] Սև գիրք, էջ 133:

արևմտահայերի զինված ինքնապաշտպանության կազմակերպումը:

Քաղաքական ուժերի մյուս մասը բացառում էր ռուսների առաջխաղացման հնարավորությունը: … Այդ կարծիքի կողմնակիցները թեև պաշտպանում էին ինքնապաշտպանության գաղափարը, սակայն խիստ վտանգավոր էին համարում ռուսներին ակտիվ օգնություն ցույց տալը:[1]

Մեծավաստակ հայագետ Լեոն, ընդհանրացնելով այս ամենը, գրում է, որ ինքնապաշտպանության, կամավորական ջոկատների ստեղծման և այլ ակ տիվ գործողությունների հարցում քիչ չէին ձեռնպահ մնացողները:

Այնուամենայնիվ երկընտրանքը չէր կարող որոշիչ լինել, որի արդյունքում հայոց հոգևոր դասը սկսեց առավել ակտիվ գործել. չէր հավատում, որ ռուսաց ցարը կամ Կովկասի փոխարքան կարող են շահարկել հայոց ճակատագիրը և իրենց հեռագնա նպատակների իրագործման համար կեղծում էին և ճշմարտությունը չէին ասում նույնիսկ կաթողիկոսին: «1914թ. նոյեմբերի 8-ին Գևորգ V-ը կրկին դիմել է Վորոնցով-Դաշկովին, հաղորդելով նրան համոզելու Նիկոլայ II-ին, որպեսզի «սիրելի թագավոր կայսրի անունից» ներշնչի հայ ժողովրդին, որ այժմ հասել է ժամը վերջնականապես և անդառնալի կերպով լուծելու Հայկական հարցը Թուրքիայում, և որ հայ ժողովրդին մեծ Ռուսաստանի կողմից կտրվի ինքնավարություն, որի շրջանը կկազմի Թուրքաց Հայաստանի 6 վիլայեթները և նրանց հետ անխզելիորեն կապված Կիլիկիան»:[2]

Այս մասին հայ անվանի պատմաբան ակադեմիկոս Գալուստ Գալոյանը, գրում է.– «Հայաստանի անկախության մասին կաթողիկոսի իղձերը Նիկոլայ II-ը չէր կիսում, ավելին, մեծ վտանգ էր տեսնում հայերի այդ տրամադրությունների մեջ: Սակայն պահն այնպիսին էր, որ կայսրը չէր կարող անկեղծ լինել:

Նիկոլայ II-ը պատասխանել է կաթողիկոսին, թե չափազանց պայծառ ապագա է սպասվում հայերին և հավատում է, որ Հայաստանը ապագայում չի հետևի Բուլղարիայի օրինակին»:[3] (Բուլղարիան անկախություն ձեռք բերելուց հետո բռնեց հակառուսական քաղաքականություն - Ս.Ք.):

Հայ անվանի գործիչներն ու հայրենասեր մարդիկ ահազանգում էին Ռուսական կայսրությանը Թուրքիայում կատարվող ոճրագործություններ-

[1] Գ. Գալոյան, էջ 656:
[2] Լեո, Անցյալից, Թբիլիսի, 1912, էջ 312:
[3] Գ. Գալոյան, Հայաստանը Մեծ տերությունների աշխարհակալական առճակատամարտերում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004թ., էջ 653-654:

րի մասին:

Բժիշկ Զավրիևի նամակից՝ ուղղված ռուսական արտաքին գործերի մինիստր Սազանովին (Պետրոգրադ, 8 սեպտեմբերի, 1915թ.) ընթերցում ենք. «Այս տարվա գարնան և ամռան ընթացքում թուրքական համարյա ամբողջ բանակում հատուկ հնարքներով, մասնակիորեն, բայց անզիջում մորթատվել են զորակոչված համարյա բոլոր հայերը: Այդ կերպ սպանվել են մի քանի տասնյակ հազար տղամարդիկ՝ իրենց ծաղկուն տարիքում»:[1]

Թուրքիայիում կատարվող ոճրագործությունների և զանգվածային կոտորածների մասին ահազանգում էին ոչ միայն հայ գործիչները:

Պարսիկ Մեջետի Հաճի Իպրահիմը պատմեց հետևյալը. «1915թ. մայիսի մեջ վալի Թահսին Բեյը իր մոտ կկանչե զեթուպաշի Համըրվանի էյուպ օղլի Նատըրին և Պոլսեն եկած հրամանը ցույց տալով կըսե անոր. «Տեղվույս հայերուն քեզ կհանձնեմ, անվտանգ կտանիս մինչև Քեմախ, այնտեղ քյուրտեր և այլն վրաները պիտի հարձակվին: Դուն առ երեսս ցույց պիտի տաս, թե կուզես անոնց պաշտպանել և մի քանի զենք կը նետես դեպի հարձակվողներն, սակայն վերջ ի վերջո ցույց կուտաս, թե չէս կարող գլուխ հանել, ետ կնահանջես ու կվերադառնաս»:[2]

Հատված Մեծ Բրիտանիայի պատգամավորների զրույցից.

«Թուրքը տեղի է տալիս միայն ուժին, բայց մենք չենք կարող այդ նրա հարկադրել: Այսօր հայերի համար դարձյալ պատերազմ սկսելը անհնար է: Մենք չենք կամենում ուրանալ մեր ստանձնած պարտականությունները, սակայն ի վիճակի չենք դրանք իրագործել: Մեզ այլ բան չի մնում, քան թուրքերի պահանջները բավարարել: Պարզ է, այսպիսով հայերը զոհաբերվում են»:[3]

Ռուսական արտաքին քաղաքականությունը միտված էր նրան, որ պատերազմի դաշտում հայերը իրենց կօգնեն, իսկ հետո՝ ինչպես միշտ:

«Կամավորական շարժման տարեթվերը հիմք ընդունելով՝ հնարավոր է գործին անտեղյակ մարդուն համոզել, որ այն, իրոք, դեր խաղացել է: Իրականում այդպես չէ: Նախ, կամավորական գնդերի կազմավորումը միայն արտաքուստ էր կամավոր: Դրանց իսկական նախաձեռնողն ու

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1878-1923թթ.), Զոն Կիրակոսյանի խմբագրմամբ, 1972, էջ 363):

[2] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1878-1923 թթ.), էջ 375:

[3] Ա. Հայրունի, նշվ. աշխ., էջ 367:

իրականացնողը ցարական իշխանություններն էին»:[1]

Եթե ռուսական հրամանատարությունը կամավորական գնդերը համարում էր լոկ հոգեբանական ազդեցության ռազմական ուժ, ապա հայ գործիչները՝ կոտորածի վտանգի մեջ գտնվող հայերին օգնության հասնելու հնարավորություն: Այս էլ հանդիսացավ գլխավոր պատճառը, որ կամավորների ու ռուս հրամանատարության միջև առաջացան հակասություններ:

Ռուսները հայերին մեծամեծ խոստումներ էին տալիս՝ «ինքնավարություն 8 վիլայեթների և նրանց անբաժան մաս Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզոր հովանու տակ», ապա որոշ ժամանակ անց այդ կարգախոսն օգտագործելն իսկ պարսավանքի պատճառ էր դառնում: Եվ պատահական չէր, որ Ռուսական հրամանատարությունը թույլ չտվեց Անդրանիկին ու Դրոյին, որոնք հասել էին Բիթլիս, օգնության գնալ Մշո դաշտի և Սասունի ժողովրդին, նրանց փրկել կոտորածից»:[2] Նույնիսկ թուրքական դատարանը, 1919թ. դատելով երիտթուրքական պարագլուխներին, մեղադրեց նրանց նաև հայկական ջարդեր կազմակերպելու մեջ: Ավելի ուշ հրապարակվեցին բազմաթիվ փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, տարալեզու ծավալուն ու համառոտ ուսումնասիրություններ, որոնք ապացուցեցին Իթթիհատի հակահայկական ոճրագործությունները:

«Ռուսական բանակի հայ կամավորները որոշ ժամանակ կարողացան կասեցնել թուրքական առաջխաղացումը: Այն դեպքում, որ ռուսական բանակ զինվորագրված 150 հազար հայերի մեծ մասը զոհված կամ ցրված էր տարբեր միավորումներում, ուստի հայերը կարող էին հանել ընդամենը 35 հազար մարդ»:[3]

Հայ ժողովուրդը Համաշխարհային պատերազմից դուրս եկավ ամբողջովին սփռված, իսկ որոշ նահանգներում՝ լրիվ բնաջնջված: «Կոտորածները, ռազմական կորուստները, բռնագաղթերը, որ սպանության դյուրին միջոց էին, հայերի թիվը կրճատեցին որպեսզի հայկական վիլայեթներում մեծամասնություն չկազմեն և, 2,5 միլիոն բնակչության երեք չորրորդը սպանվեց: Թվում էր, դրանով ավարտվելու էին հայ ժողովրդի տառապանքները»:[4]

---

[1] Խտ. Պողոսյան, Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2-րդ, էջ 473:
[2] Նույն տեղում, էջ 477:
[3] Տես Ու. Չերչիլ, «Համաշխարհային ճգնաժամ», էջ 368:
[4] Սև գիրք, էջ 369

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիան ձեռնարկեց Հայաստանը հողին հավասարեցնելու և հայ ժողովրդին ոչնչացնելու վիթխարածավալ ճիվաղային ծրագիրը, որպեսզի մեկընդմիշտ իր թիկունքն ապահովի Կովկասից թափանցող վտանգից և ռուսական հավակնություններից:

«Թուրքական նախճիրը համաշխարհային պատմության մեջ մի բացառիկ էջ է սկսյալ Չինգիզ խանի ժամանակներից: 1914-ի սեպտեմբերին հայկական նահանգներում տեղի ունեցավ բծախնդրորեն անցկացրած անխնա զորահավաք, որը ուժաթափ արեց բովանդակ հայությանը. երկրում մնացին միայն երեխաներ, կանայք, զառամյալ ծերեր»:[1]

Կայսերական Ռուսաստանի դիվանագիտությունը այս պատմափուլում առանձնապես շահագրգռված չէր Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու հարցում: Հայկական հարցը միջազգային հարաբերությունների համակարգում շուրջ չորս տասնամյակ գտնվեց մեծ տերությունների ուշադրության կիզակետում: «Հայկական հարցը մեծ տերությունները դիտարկում էին Արևելյան հարցի լույսի ներքո: Միջազգայնացված Հայկական հարցը ռուսաց դիվանագիտության համար մարտավարական միջոց էր:[2]

«Արևմտահայության ցեղասպանության գիտական ուսումնասիրությունը անհրաժեշտ է մանավանդ այն պատճառով, որ երիտթուրքական պետական գործիչները, թուրք պատմաբանները, իմպերիալիստական տերությունների քաղաքականությունն արդարացնող բազմաթիվ հեղինակներ... խեղաթյուրում են պատմական ճշմարտությունները, փորձում են արևմտահայության ցեղասպանության հանգամանքները թաքցնել»:[3]

Այսպիսով, եղած փաստերի վերլուծությունները, աշխարհի մեծերի կարծիքներն ու մտահոգությունները ցույց են տալիս, որ թուրքական իշխանությունները կանխամտածված, հայերի ոչնչացման ծրագիրը դարձրեցին պետական քաղաքականություն և իրագործեցին մարդկության հանդեպ իրականացված ոճիրներից ամենասարսափելին՝ հայազրկեցին մի ողջ տարածաշրջան, որը դարերով եղել է հայի հայրենիքը, ուր կերտվել է հայոց պատմությունն ու մշակույթը, այստեղ է հայը կառուցել ու արարել:

---

[1] Е. Тарле, Сочинения, т. V, М., 1958, с. 397-398.

[2] Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համատեքստում (XVIII-XIX դդ.), Երևան, 2005թ., էջ 447-448:

[3] Ջ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 94:

Այնպես, որ հասկանալի է թուրք կառավարության մտահոգությունը, որքան հնարավոր է ժխտել ամեն ինչ և մեղքը բարդել անմեղ զոհերի վրա: Թուրք իշխանավորները պետք է մի բան հստակ իմանան, որ արդարությունը երբեք չի մեռնում, և մի գեղեցիկ օր կանգնելու են ահեղ դատաստանի առջև ու պատասխան են տալու իրենց նախնիների գործած ոճրագործությունների համար:

Այս հանգամանքն ի նկատի ուներ հայ իրականության ականավոր մտածող Գարեգին Նժդեհը, երբ գրում էր. «... մի ժողովրդի հայրենի հողը չի կարող ուրիշի մնայուն Հայրենիքը դառնալ: Նա գիտե, որ մնայուն Արդարության, Օրենքի ուժով բռնագրավված երկրամասերը միշտ էլ, վաղ թե ուշ, անցնում են իրենց պատմական տերերի ձեռքը՝ պայմանով, որ այդ վերջինի մեջ ժամանակը տկարացրած չլինի սերը, կարոտն ու պաշտամունքը դեպի Հայրենի Երկիրը»:[1]

Հենց այս հավատով էլ վերջացնենք մեր այս ոչ մեծածավալ աշխատանքը, որի նպատակն է կորուսյալ Հայրենիքի նկատմամբ չտկարանա սերը, կարոտն ու պաշտամունքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հր. Սիմոնյան, Անդրանիկի ժամանակը, Երևան, Կաիսա, 1996:
2. Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:
3. Խ. Քառյան, Հովհաննես Թումանյանը և հայ ժողովրդի ողբերգությունը, Երևան, 2008;
4. Գ. Գալոյան, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից մինչև 1917թ.), ՀՀ ԳԱԱ, «Գիտության» հրատարակչություն, Երևան, 2004:
5. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1878-1923) Ջոն Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:
6. Ջ. Կիրակոսյան, Անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում: Երևան, 2009:
7. Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы

[1] Գ. Նժդեհ, Ասույթներ, Երևան, 2012թ., էջ 10:

политархива мид Кайзеровской Германии, составитель отв. ред. В. Микаелян, Ер. 1995.
8. Սև գիրք, նշանավոր օտարերկրացիները թուրքական ոճիրների և հայոց ցեղասպանության մասին, Պետրոս Հովհաննիսյանի խմբագրությամբ, Երևան, 2011:
9. Մ.Գ. Ներսիսյան, Հայերի ցեղասպանություն Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1991:
10. Ա. Հայրունի, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002:
11. Ստ. Պողոսյան, Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 2, Երևան, 2008:
12. Լեո, Անցյալից, Թբիլիսի, 1912:
13. Ջ. Կիրակոսյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1878-1923թթ.), Երևան, 1972:
14. Е. Тарле, Сочинения, т. V, М., 1958.
15. Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համատեսքստում (XVIII-XIX դդ.), Երևան, 2005:
16. Գ. Նժդեհ, Ասույթներ, Երևան, 2012:

К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКИХ ДОБРОВОЛЬЧЕСКИХ ОТРЯДОВ НА РУССКО-ТУРЕЦКОМ КАВКАЗСКОМ ФРОНТЕ ВО ВРЕМЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Самсон Карян
доктор исторических наук, професор

РЕЗЮМЕ

Многочисленные эпизоды истории армянского народа становятся предметом дискуссий и разночтений.

Если в советские годы многие идеологические и политические вопросы трактовались специфически, то сейчас подобное отношение просто непонятно. В новом, независимом, непредвзятом исследовании нуждается одна из белых страниц армянской истории: проблема Добровольческого движения в составе русской армии в годы Первой мировой войны.

Научное изучение геноцида западных армян необходимо по той причине, что государственные деятели младотурок, турецкие историки, ряд протурецки

настроенных деятелей и многие другие авторы искажают историческую правду и пытаются скрыть обстоятельства геноцида западных армян.

Однако анализ исторических фактов, мнения великих людей мира, их озабоченность этим вопросом показывают, что турецкие власти преднамеренный план уничтожения армян превратили в государственную политику и осуществили самое ужасное из всех злодеяний против человечества: истребили армян на всей территории, которая испокон веков была родиной армян, где создавались армянская история и культура.

THE MATTER OF THE ESTIMATION OF THE ARMENIAN VOLUNTARY ROUND SHOTS' ACTIVITIES IN THE RUSSIAN-TURKISH CAUCASIAN FRONT OF THE FIRST WORLD BATTLE

Samson Qaryan
Doctor of Historical Sciences, Professor

SUMMARY

Many episodes, coinages of Armenian history have been honoured with debates and different opinions.

If in the Soviet years many ideological and political matters were commented in a peculiar way, now the identical attitude isn't comprehensible. The problem of the voluntary movement of the Armenian history in Russian Army in the years of the first world battle, which needed new, free and unembarrassed research.

The scientific research of the Western Armenians' genocide is necessary for the purpose that the New Ottoman statesmen, Turkish historians and promoters, various authors distort the historical truths and try to hide the circumstances of Western Armenian genocide.

Though the analysis of the historical facts, the opinions and anxiety of the great people showed that the Turkish authorities made the destructive plan of the Armenians an official policy on purpose and carried out the most terrible crime against the humanity, they deprived the Armenians from a whole region, which had been the motherland of the Armenians for centuries, where the Armenian history and culture were created.

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՕԿՈՒՊԱՑԻԱՆ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ԴՐԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Գագիկ Եթիմյան
պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ղարաքիլիսայի ճակատամարտը մայիսյան հերոսամարտերի շարքում իր նշանակալի տեղն ունեցավ թուրքական հարձակումը կասեցնելու և Հայաստանի անկախությունը Բաթումի բանակցություններում ճանաչելու գործում: Ճակատամարտում մեր զինվորների և աշխարհազորի պայքարը բարձր են գնահատել ոչ միայն պատմաբանները, ռազմական մասնագետները, այլև մեր թշնամիները՝ թուրք զորահրամանատարները:[1]

Ղարաքիլիսայի ճակատամարտի և գյուղաքաղաքի անկման ու հետևանքների մասին կան առանձին աշխատություններ, հուշեր, ժամանակակիցների վկայություններ, սակայն ամբողջի համահավաք վերլուծություններ Հայաստանի այդ շրջանի սոցիալ-տնտեսական և քաղաքական համայանապատկերի վրա գրեթե չկան: 1918 թվականի մայիսյան հերոսամարտերի վերաբերյալ հետաքրքրությունը մեծ էր ժողովրդի շրջանում և հենց միայն այն փաստը, որ Ղարաքիլիսայի դեպքերից ընդամենը ամիսներ անց արդեն լույս են տեսնում Մուշեղ Ղազարյանի հուշերը ճակատամարտի վերաբերյալ, գրվում են ավագ քահանա տեր Խորենի հուշերը նույն խնդրի շուրջ, ժամանակի մամուլում (Մշակ, Кавказское слово և այլն) հանդես են գալիս այդ օրերի դեպքերի լուսաբանմամբ, արդեն խոսում է հարցի կարևորության մասին:[2]

Սակայն խորհրդային տարիների առաջին տասնամյակներին հանիրավի մոռացվեց Ղարաքիլիսայի ճակատամարտը և միայն անցած դարի 70-ական թվականներից նոր ուսումնասիրություններ սկսեցին հանդես գալ խորհրդահայ պատմագրությունում:[3] Սա էլ առաջին հերթին բա-

---

[1] Վ. Մելիքյան, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը, «Հայկական բանակ», N 2, 1998թ., էջ 59

[2] Մուշեղ Ղազարյան, Ղարաքիլիսայի հերոսամարտը, ականատեսի վկայություններ, Թիֆլիս, 1920թ., Խորեն ավագ քահանա Խանզադյան,Հուշեր և տպավորություններ,1919թ.,Եր., 1998թ., Кавказское слово, 1918г, Մշակ, 1918թ., Թիֆլիս:

[3] Ե. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918թթ.), Եր., 1964թ

ցատրվում է խորհրդային պատմական մտքի կապանքների մեջ լինելու և խիստ կուսակցականացվածութան հանգամանքներով, երբ փորձում էին մոռացության տալ առաջին հանրապետության հետ կապված ամեն ինչ, երբ ստալինյան ռեժիմը հերոսությունը տեսնում էր միայն սոցիալիզմի ստալինյան մոդելի կառուցողների կերպարում: Արդյունքում մեծապես տուժեց մեր նորագույն պատմությունն ու պատմագրությունը: Անցած այդ տարիներին կյանքից հեռացան ճակատամարտի շատ մասնակիցներ, արհավիրքի վերապրողներ, ականատեսներ, աղավաղվեցին կենդանի մնացածների հիշողությունները, նույնիսկ տեղական մամուլը որևէ տարելիցի առթիվ երբևէ չհիշեց անցաց-գնացած օրերի պատմությունը:

Երրորդ հանրապետության հաստատմամբ իրավացիորեն անհրաժեշտություն դարձավ կրկին անդրադառնալ մայիսյան հերոսամարտերին, նորովի վերլուծել, արժևորել այն ժամանակները: [1]

Այս հոդվածով խնդիր ենք դնում լրացնել վերոհիշյալ բացթողումները, բարձրացրած հարցերի վերլուծությամբ ամբողջացնել ժամանակի նկարագիրը: Դրանում մենք չենք մանրամասնի Ղարաքիլիսայի ճակատամարտի, նրա ելքի պատճառների հարցը, այդուհանդերձ անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ մեր պարտությունը արդյունք էր իշխանությունների և զորքի անհամաձայնեցված գործողությունների, և որ իրավիճակն աղետալի դարձավ ապաշնորհ ռազմական գործիչների և մասնավորապես Անդրանիկի վիճարկելի պահվածքի պատճառով: Շրջակա գյուղերի և Ղարաքիլիսայի բնակիչներից կազմված աշխարհազորը անսահման հերոսությամբ, անձնուրաց կռվեց զորքի հետ կողք կողքի. ճակատամարտի սկզբում հասան էական հաջողությունների, սակայն մարդկային ռեսուրսների, զենքի ու զինամթերքի պակասը, ինչպես նաև վերոհիշյալ պատճառները հասցրին Ղարաքիլիսայի անկմանը և նրա օկուպացմանը:

Ծ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976թ. Ա. Հարությունյան, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984թ.:

Հ. Ավետիսյան, Հայոց ազգային միասնության հաղթանակը, Եր., 1988թ.

[1] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993թ.

Գ. Նժդեհ, Երկեր, Եր., 2002թ.

Ս. Աֆանասյան, Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս,1918թ.), Եր., 1991թ.

Գ. Օհանյան, Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտը, 1918թ., Եր., 1992թ.

Վ. Դալլաքյան, Ա. Մարուքյան, Ղարաքիլիսայի 1918թվականի հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2008թ.

Ղարաքիլիսայի ճակատամարտը սկսվել է մայիսի 25-ին և շարունակվել մինչև մայիսի 28-ը: Զգալով մոտալուտ պարտությունը՝ մայիսի 28-ի ցերեկվա ժամը 2-ին Ղարաքիլիսայից պատվիրակություն է մեկնում թուրքական զորքերի հրամանատար Ջավիդ բեյի մոտ և իր հնազանդությունը հայտնում՝ բնակչությանը և գաղթականներին կոտորածից փրկելու նպատակով: Նա թուրքին հատուկ երեսպաշտությամբ ընդունում է պատվիրակներին, խոստանում թույլ չտալ, որ որևէ «հայի քթից արյուն գա»: Վերջիններս «ուրախ լուրը» հասցնում են ժողովրդին: Ժամը 4-ին մոտ գյուղաքաղաքը արդեն շրջափակված էր բոլոր կողմերից, և միայն հատուկենտ կրակոցներ էին լսվում. Ղարաքիլիսան ընկավ: Շուտով լուր տարածվեց, որ թուրքերը մտնում են գյուղաքաղաք: Սպիտակ դրոշներով, աղ ու հացով՝ քահանայի ուղեկցությամբ մի խումբ գնում է ընդառաջ նրանց դիմավորելու: Բնակչությունն էլ Ջավիդ բեյի խոստումներից սրտապնդված դուրս էր թափվել փողոցները՝ տեսնելու զինվորական քայլերգով բնակավայրի կենտրոնը շարժվող զորքին: Թուրք զինվորներն ու սպաները, հասնելով կենտրոն, սկսում են տեղավորվել իրենց հավանած շենքերում, տներում, առանց ստանալու դրանց տերերի համաձայնությունը: Թուրքական հրամանատարությունը հայտարարում է անձի ու գույքի անձեռնամխելիության ու անվտանգության երաշխավորություն:[1] Իրավիճակը դառնում է ծանր սպասողական: Մարդիկ փակվում են իրենց տներում, տեղափոխվում բարեկամների մոտ, պատսպարվում թաքստոցներում: Տագնապը իզուր չէր:

Մայիսի 28-ից 29-ի գիշերը թուրք զինվորները և զորքին միացած շրջակա գյուղերի խուժանը սկսում են տների վրա հարձակումները, որոնք ուղեկցվում են բռնություններով, թալանով ու սպանություններով: Սանձարձակություններ շարունակվեցին երեք-չորս օր: Միայն առաջին գիշերը թուրքերի բարբարոսությանը Ղարաքիլիսայում ու նրա շրջակա գյուղերում զոհ գնացին հարյուրավոր մարդիկ: Հետագայում պատերազի վնասներն ու կորուստները հաշվառող հատուկ հանձնաժողովի նյութերից տեղեկանում ենք, որ Ղարաքիլիսայում առանձին ընտանիքներ, մարդիկ, չդիմանալով թուրքերի քստմնելի գործողություններին, չցանկանալով կորցնել իրենց պատիվը, ինքնասպան են լինում: Այսպես. Արմեն Աթոյանը՝ կնոջ հետ, Ավետիս Աղաբաբյանը՝ եղբոր հետ, Ծատուրյանների ըն-

[1] Խորեն ավագ քահանա Խանզադյան,Հուշեր և տպավորություններ,1919թ.,Եր., 1998թ., էջ 91

տանիքը թույն են խմում, մահանում:[1] Վերոհիշյալ հանձնաժողովը ստեղծվել էր Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ և աշխատել թուրքական բռնություններից տուժած բոլոր շրջաններում: Միայն Ղարաքիլիսայում լրացվում է 1000 քարտ, ինչը մեզ հնարավորություն է տալիս մանրամասն տեղեկանալ բնակչության կրած մարդկային և նյութական կորուստների չափին:

Ղարաքիլիսան այդ շրջանում Լոռի-Փամբակի ամենաաշխույժ ու զարգացած բնակավայրն էր, ուներ կայուն սոցիալ-տնտեսական կառուցվածք: Այստեղ կային աղյուսի, փայտամշակման գործարաններ, նավթամթերքի պահեստ, ատաղձագործական արհեստանոցներ: Գործում էին անտառարդյունաբերողների և այգեգործական ընկերություններ: Կային նաև զանազան խանութներ, կոոպերատիվներ, ինչպես օրինակ մանուֆակտուրային ապրանքների, նպարեղենի, մանրածախ իրերի, արդյունաբերական մթերային ապրանքների, ժամագործական, ինչպես նաև դեղատուն, հյուրանոց և այլն: Աշխույժ էր նաև կուլտուր-լուսավորչական կյանքը. դպրոցներ, գրադարան, մշակույթի կենտրոն, զբոսայգիներ և այլն: Եթե սրան ավելացնենք նաև խնամքի կենտրոնը, հիվանդանոցը, բուժկետը, ապա ամբողջական կդառնա զարգացող գյուղաքաղաքի պատկերը:

Ահա ամբողջ այս կառույցը ենթարկվեց թուրքական հարձակմանը, այնուհետև օկուպացիային՝ իր ավերիչ, տխուր հետևանքներով: Թուրքերը ծրագրված և հետևողականորեն իրականացնում էին բռնաճնշումների, իրենց ենթարկելու, հակառակորդին ուծացնելու կամ ոչնչացնելու քաղաքականություն, ինչը ուղեկցվում էր ջարդերով և բնակչությանը տաժանակրության քշելով: Թուրքական ռեժիմի հաստատումը սկսվեց տղամարդկանց հավաքագրումով: Երկու օր տներից, թաքստոցներից հավաքում էին նրանց, բերում գրասենյակի մոտ, այնուհետև նրանց շրջապատած ասկյարները վերցնում են արժեքավոր իրերը, շորերը, փողը, ոսկյա զարդերը: Թալանից հետո փաշան կարգադրում է տանել նրանց: Մետաղալարերով կապկպում են գերեվարածների ձեռքերը, խմբերի բաժանում և զինվորների ուղեկցությամբ տանում Ղարաքիլիսայի շրջակա հանդամասերը (Բադադօղլու, Տաք աղբյուրներ, Մայմեխ, Ալթուն թախտ և այլն), որտեղ էլ նրանց գնդակահարում են, սրախողխող անում: Առանձնապես դաժան են վարվում ռազմագերիների հետ: Վերջիններիս տանում են Ղա-

[1] ՀԱԱ Ֆ 221, ց 1, գ 56

ռաքիլիսայից ոչ հեռու՝ Հաջիղարա գյուղի շրջակայքը, որտեղ թուրքերը ճակատամարտի առաջին օրը մեծ կորուստներ էին կրել՝ տալով մոտ 400 սպանված, և գնդակահարում կամ սվինահար անում իբր թե հայ զինվորները զոհվել են մարտի ժամանակ:[1]

Բնակչության դիմադրական ոգին վերջնականապես կոտրելու և անվերապահորեն նրանց հնազանդ պահելու նպատակով թուրքերը ցուցադրաբար փողոցներում անցորդների աչքի առաջ անարգում, ծեծում, հաճախ էլ սպանում էին Ղարաքիլիսայի ճանաչված ու հարգված մարդկանց:

Թվում էր, թե թուրքերը հաստատելով դաժան ռեժիմը կհանդարտվեն, բայց թուրքը թուրք չէր լինի, եթե չգնար տմարդի քայլերի: Մայիսի 30-ին Ջավիդ բեյը հրամայում է քաղաքի բոլոր մարդաշատ վայրերում (եթե դեռևս այդպիսիք կային) ի տես ամենքի փակցնել հայտարարություններ երկաթուղային հանգույցի աշխատանքների վերսկսման մասին: Գրության մեջ հրամայվում էր երկաթուղու բոլոր աշխատողներին 24 ժամվա ընթացքում ներկայանալ գրասենյակ՝ ցուցակագրվելու: Մարդիկ, հավատալով գրությանը, հավաքվում են գյուղաքաղաքի կենտրոնում: Բռնություններից փրկվելու համար քիչ չէին նաև կեղծ ցուցակագրվողները: Հավաքվածներին դարձյալ շրջապատում են պահակախմբով, գիշերը պահում, իսկ լուսաբացին խումբ-խումբ տանում գնդակահարում վերոհիշյալ հանդամասերում: [2]

Իդեպ, մինչև հիմա էլ այդ վայրերում հողային աշխատանքների ժամանակ երբեմն հանդիպում են մասսայական թաղումներ, որոնք անշուշտ տխուր արձագանքն են անցած դժնդակ տարիների:

Թուրքերը չունեին բրոյական որչևէ չափանիշ. գերիների մի խմբին փակում են գոմում և կենդանի-կենդանի այրում: Առանձին դեպքերում գերեվարվածը կամ նրա հարազատը ասկյարին կաշառելով փրկվել է սպանդից: 3 օրվա ջարդերին զոհ գնաց ավելի քան 600 մարդ: Սովորական դարձած տների թալանի, փողոցային շուրջկալների արդյունքում սպանվածների դիակները ընկած էին ամենուր: Ղարաքիլիսան անթաղ դիակների մի մեծ գերեզմանոց էր հիշեցնում: Ժամանակակցի վկայությամբ «չէիր հանդիպի ոչ մի շունչ, չկար ոչ մի ձայն, շուրջը մեռելային

[1] Մուշեղ Ղազարյան, Ղարաքիլիսայի հերոսամարտը, ականատեսի վկայություններ, Թիֆլիս, 1920թ., էջ 42
[2] Նույն տեղում, էջ 45

լռություն էր»:[1]

Ղարաքիլիսայի շրջակա դաշտերում ապաստանած գաղթականությունը նոր արհավիրքի առաջ կանգնեց: Թուրքերը հարձակվում էին նրանց վրա, թալանում, կոտորում: Վերջիններս ճանապարհներին թողնում էին ամեն ինչ՝ կահ-կարասի, սնունդ, անկողին, իրենց կյանքը փրկելու համար փախչում դեպի Լոռվա անմատչելի ձորերը ու դեպի Դիլիջան:

Տարածքը համարելով վերջնականապես նվաճված՝ Ջավիդ բեյը օսմանյան կայսրության անունից Փամբակի ժողովրդին հայտարարում է հպատակ (ռահաթ), իսկ նրա ունեցվածքը՝ պետական սեփականություն (դովլաթ-մալի):

Դա ըստ էության բնակչության անխնա թալանելու և հարստահարելու հրաման էր, ինչին անսահման պատասխանատվությամբ և անսանձ դաժանությամբ ձեռնամուխ եղան թուրքերը: Տներից, պահեստներից, խանութներից, արհեստանոցներից, հասարակական հիմնարկներից, դպրոցներից, անգամ արդեն ծայրահեղության հասած գաղթականներից կողոպտում էին ամեն ինչ, հանում էին անգամ երկաթուղու գծերը, բարձում գնացքները և ուղարկում Թուրքիա:

Բերենք մի քանի փաստեր վնասները հաշվարկած հանձնաժողովի փաստաթղթերից օկուպացիոն ռեժիմի քաղաքականության վերաբերյալ: Թայիրովների խնամքի կենտրոնից թուրքերը տանում են կահավորանք, հագուստ, ամանեղեն, մթերք, խոշոր եղջերավոր անասուններ, գրադարան, կարի մեքենաներ, գործիքներ, ավերում շենքը: Արդյունքում որբ երեխաները զրկվում են ամեն ինչից, հայտնվում դրսում առանց ապրուստի միջոցների և տանիքի: Խնամքի կենտրոնին պատճառված վնասը կազմում էր մոտ 27 հազար ռուբլի:[2] Ամբողջությամբ թալանվում է երկդասյա դպրոցը՝ իր կահավորանքով, կաբինետներով, շենք-շինություններով: Վնասը հասնում է 150 հազար ռուբլու, դպրոցն էլ դադարեցնում գործունեությունը: Մեծապես տուժում է անտառարդյունաբերողների արտադրական շենքը, թալանվում սարքավորումները, փայտանյութը: Ընկերությանը հասցվում է մոտ 70 հազար ռուբլու վնաս, այն դադարում է գոր-

[1] Խորեն ավագ քահանա Խանզադյան,Հուշեր և տպավորություններ,1919թ.,Եր., 1998թ., էջ 93

[2] Վնասների գումարը հաշվարկված է ապրանքների նախապատերազմյան գներով, թեև հաշվարկի պահիին դրանք արդեն բարձրացել էին մինչև երեք անգամ:

ծել:[1] Նույն ճակատագրին են արժանանում կոոպերատիվ խանութն իր պահեստով (վնասը 200 հազար ռուբլի), մթերային խանութը (271 հազար ռուբլի):[2] Այս տխուր շարքը կարելի է երկար շարունակել: Պատկերը ամբողջացնելու համար բերենք նաև մի քանի փաստեր բնակչությանը և նրանց անհատական տնտեսությանը հասցրած վնասների շարքից: Ամբողջությամբ թալանել են Գևորգ Համբարձումյանի տունը՝ պատճառելով մոտ 27 հազար ռուբլու վնաս, հետագա չորս ամիսներին նա բուժվել է թուրքերի հասցրած ծանր վերքերից: Մարտին Վեքիլյանին սպանել են՝ տանելով մոտ 13 հազար ռուբլու գույք: Գրիշո Եղշատյանի տնից տարել են մոտ 22 հազար ռուբլու ունեցվածք՝ սպանելով իրեն, մորը, եղբորը: Թուրքական վայրագությունները դադարեցնելու նպատակով Ղարաքիլիսայի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Խորեն Խանզադյանը նամակով դիմում է թուրքերի կողմից տեղական կառավարման ղեկավար նշանակված կոմիսար Հովհաննես Հարությունյանին (Արսենանց Վանո) թաղամասերում բռնություններին ու սպանություններին վերջ տալու համար: Սակայն որևէ արդյունքի չի հասնում:[3]

Ընդհանրացնելով ասենք, որ չի եղել գրեթե մի ընտանիք, մի տուն որ չունենար սպանված, չլիներ թալանված կամ տաժանակիր աշխատանքի ուղարկված անձ: Մարդկային կորուստների թիվը Ղարաքիլիսայում ուսումնասիրողների մոտ տատանվում է չորսից մինչև յոթ հազար: Հավանաբար ոմանք զոհերի թվում հաշվարկել են նաև գաղթականության կրած մարդկային կորուստները:

Թուրքերը ամբողջությամբ կազմալուծել էին տարածքի սոցիալ-տնտեսական կառուցվածքը և կյանքը: Արտերի ու ցանքսերի մի մասը ոտնակոխ էր արված, մի մասն էլ ժամանակից շուտ հնձել էին իրենց ձիերին կերակրելու համար, իսկ մնացած հողակտորների վրա էլ թույլ չէին տալիս աշխատել: Խզվել էր կապը Ղարաքիլիսայի և շրջակա գյուղերի միջև, արգելվում էր որևէ հաղորդակցություն: Ամբարները դատարկվել էին, հին բերքը վերջացել, նորը դեռևս չկար: Երբ գյուղացիները գանգատվելու են գնում փաշայի մոտ արտերը ժամանակից շուտ հնձելու համար, հետևում է նրա լկտի պատասխանը. «Լավ է յոթ գյավուր սատկի,

[1] ՀԱԱ Ֆ 221, ց 1, գ 52

[2] Հոդվածում բերվել են ամենամեծ նյութական կորուստներ ունեցող օբյեկտների օրինակներ:

[3] Հովհաննես Հարությունյանի (Արսենանց Վանոյի) մասին Տեր Խորենը իր հուշերում թողել է ծանր մեղադրանքներ:

քան թե դովլաթի ձին սոված մնա»:[1]

Նոր դժբախտությունները երկար սպասեցնել չտվեցին. Ղարաքիլիսայում սկսում է սովը, դրան հաջորդում է համաճարակը (տիֆ, խոլերա): Մարդիկ սովամահ չլինելու համար գնում էին դաշտերը՝ ուտելի բույսեր հայթայթելու և ինչպես ժամանակակիցն էր պատկերավոր ներկայացնում «գնում էին խմբերով արածելու»: Չկար բժշկական բավարար օգնություն, թալանված էին հիվանդանոցները, դեղատունը: Միայն հուլիս-օգոստոսին սովին ու համաճարակին զոհ գնաց հազար մարդ, իսկ շրջակա գյուղերում մահացությունը հասնում էր բնակչության մինչև 20 տոկոսը: Օգոստոսին թուրքերը տեսնելով, որ գյուղատնտեսական աշխատանքների արգելքը սպառնում է նաև իրենց իսկ սննդի ու ձիերի անասնակերի կանոնավոր մատակարարմանը՝ հրամայեցին գյուղացիներին դուրս գալ դաշտային աշխատանքների, հնձել դեռևս չվնասված արտերը, հավաքել բերքը «դովլաթի հարկերը տալու համար»: Այժմ էլ չնչին քանակի այս բերքի վրա թուրքերից բացի աչք էին տնկել նաև գյուղաքաղաքի համայնքի ղեկավարները: «Քյոխվեն ու գզիրն էլ իրենցն էին տանում՝ գյուղացիներին թողնելով մի բուռ բերք», դառնորեն բողոքում էր ժամանակակիցը:

Թուրքիան թեև Բաթումի պայմանագրով ճանաչել էր Հայաստանի Հանրապետությունը հաստատագրված սահմաններով, սակայն չէր շտապում հանել իր զորքերը օկուպացված տարածքներից: Առաջին հանրապետության պաշտոնական մի քանի դիմումներից հետո միայն նրանք մաս-մաս սկսեցին թողնել Հայաստանը: Ղարաքիլիսայից թուրքերը հեռացան հոկտեմբերի 5-ին՝ իրենց հետևից թողնելով ավերված ու թալանված մի տարածք, ծայրահեղ աղքատության ու չքավորության եզրին հասցրած մարդկային ծանր կորուստներ կրած փոքրաքանակ բնակչությամբ, հսկայական ու անհաղթահարելի հոգսերով: Ժամանակակցի գնահատմամբ անհրաժեշտ էր 50 տարվա խաղաղ կյանք կորցրածը վերականգնելու և սոցիալ-տնտեսական իրավիճակը կարգավորելու համար:[2]

Թուրքերի հեռանալուց անմիջապես հետո՝ հոկտեմբերի 5-ին, Դիլիջանից Ղարաքիլիսա է վերադառնում հայկական զորքը, որին ուժասպառ ժողովուրդը դիմավորում է մեծ ոգևորությամբ: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի

---

[1] Մուշեղ Ղազարյան, Ղարաքիլիսայի հերոսամարտը, ականատեսի վկայություններ, Թիֆլիս, 1920թ., էջ 61

[2] Խորեն ավագ քահանա Խանզադյան,Հուշեր և տպավորություններ,1919թ.,Եր., 1998թ., էջ 59

6-ին հոգեհանգիստ է կազմակերպվում զորքի և ժողովրդի մասնակցությամբ «Ասլան-Բեգի փոս» կոչվող հանդամասում՝ թուրքական բռնություններին զոհ գնացած ղարաքիլիսեցիների ամենամեծ անթաղ գերեզմանի մոտ:

Թուրքական օկուպացիայի շրջանում Լոռի-Փամբակի տարածքի մարդկային կորուստների ու մարդկային վնասի չափը որոշելու համար տեղծվում է 5 հոգուց կազմված հանձնաժողով: Նրա անդամներից Ա. Տեր-Հարությունյանի ենթահանձնաժողովին հանձնարավում է ցուցակագրել արևելյան Փամբակի կամ Ղարաքիլիսայի և շրջանի 9-ը գյուղերը: Դեկտեմբերի 8-ին հանձնաժողովը գալիս է Ղարաքիլիսա, սկսում իր աշխատանքները: Շրջում են տուն առ տուն և, ըստ մշակված բլանկների, լրացնում տվյալները, անհրաժեշտության դեպքում կատարում լուսանկարահանումներ:[1] Հաջորդ տարվա սկզբին հանձնաժողովը ներկայացնում է իր հաշվետվությունը:

Մեկ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ ամբողջությամբ ներկայացնել վերոհիշյալ բոլոր հարցերի պատասխանները, ուստի փորձենք ընդհանրացնել հանձնաժողովի եզրակացությունները և մեր ուսումնասիրությունները առավել կարևոր հարցադրումների վերաբերյալ.

- Թուրքական կոտորածները կրել են ծրագրավորված, համակարգված և մասսայական բնույթ:
- Սպանվել են բոլոր հայ սպաները և զինվորները, որոնք գերի են ընկել թուրքերին կամ ապավինել թշնամու գթությանը:
- Խիստ ու դաժան կարգապահություն ունեցող թուրքական զորքը 3 օր անընդհատ ազատ է թողնվել իր գործողություններում, սպանել, թալանել, լլկել բնակչությանը և գաղթականներին, ինչը չի կանխվել հրամանատարության կողմից. ասել է թե զինվորները կատարել են նրանց հրամանները, ինչի արդյունքում Ղարաքիլիսայում և նրան հարակից հանդամասերում սպանվել է մինչև 7 հազար մարդ:
- Հարյուրավոր բնակիչներ տարվել են Թուրքիա տաժանակիր աշխատանքի: Կենդանի մնացածները, որ փախել էին այնտեղից,

[1] Շուտով սակայն սկսվում է հայ-վրացական զինված ընդհարումը, խափանվում է երկաթուղու գործունեությունը, ինչը դադաղեցնում է հանձնաժողովի աշխատանքները, քանի որ ժամանակին չէին հասնում բլանկները, լուսանկարչական թղթերը, դրամը և այլ: Այս բոլորով հանդերձ հանձնաժողովը հնարավորինս բարեխղճորեն ավարտեց իր աշխատանքները:

պատմում էին, որ իրենց լծում էին սայլերին և քշում երկաթե ճիպոտներով:

- Մեծապես տուժել ու վերացման եզրին է հասել բնակավարի տնտեսությունը իր բոլոր ենթակառոյցներով:
- Հսկայական վնասներ է կրել անասնապահությունը, երկրագործությունը, մեղվաբուծությունը, անտառարդյունաբերությունը:
- 1920թ-ի դրությամբ թալանի ու ավերածությունների պատճառով Փամբակի ամբողջ տարածքում չի գործել և ոչ մի դպրոց, մշակույթի օջախ:
- Խախտվել է ժողովրդագրական հաշվեկշիռը, ինչը մեծապես ազդել է Ղարաքիլիսայի և տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութայի կյանքի հետագա առաջընթացի վրա:
- Ջրի ու պարտադիր աշխատանքի է քշվել ամբողջ բնակչությունը անկախ սեռից:
- Գյուղաքաղաքի կրած ընդհանուր վնասները դրամական արտահայտությամբ հասնում են 3.5 մլն ռուբլու, շրջակա անտառներինը՝ 300 հազար ռուբլու:

Անշուշտ, վերոհիշյալ կորուստները չէին լինի, եթե չլինեին մի քանի հանգամանքներ. եթե պատմությունից ճիշտ դասեր քաղեինք, զորքը ունենար ընդունակ և ընդունված ղեկավարություն, վճռական պահին ժողովրդական աշխարհազորի հետ ռազմավարական և մարտավարական ճիշտ ու հմուտ ծրագրեր իրականացներ, չապավինեինք հակառակորդի, այն էլ թուրքի գթասրտությանը և պայքարեինք մինչև վերջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ծ.Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976թ.
2. Հ. Ավետիսյան, Հայոց ազգային միասնության հաղթանակը, Եր., 1988թ.
3. Ս. Աֆանասյան, Սարդարապատի հաղթանակը (Հայաստան, մայիս,1918թ.), Եր., 1991թ.
4. Վ. Դալլաքյան, Ա. Մարուքյան, Ղարաքիլիսայի 1918թվականի հերոսամարտը,
5. Խորեն ավագ քահանա Խանզադյան, Հուշեր և տպավորություններ,1919թ., Եր., 1998թ.,
6. Ա. Հարությունյան, Թուրքական ինտերվենիցան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984թ.:
7. Մ. Ղազարյան, Ղարաքիլիսայի հերոսամարտը, ականատեսի վկայություններ, Թիֆլիս, 1920թ.,
8. Վ. Մելիքյան, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերը, «Հայկական բանակ», N 2, 1998թ., էջ 59
9. Մշակ, 1918թ., N 104,108,112, Թիֆլիս
10. Գ. Նժդեհ, Երկեր, Եր., 2002թ.
11. Ե. Սարգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918թթ.), Եր., 1964թ
12. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993թ.
13. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2008թ.
14. ՀԱԱ Ֆ 221, g 1, գ 56
15. Գ. Օհանյան, Մեծ Ղարաքիլիսայի հերոսամարտը, 1918թ., Եր., 1992թ.
16. Кавказское слово, 1918ã, N 112 , 332, Թիֆլիս

ОККУПАЦИЯ КАРАКИЛИСА В 1918ГОДУ ТУРКАМИ И ЕЕ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ

Гагик Етимян
доктор исторических наук, доцент

РЕЗЮМЕ

Статья касается падения Каракилисы после майских боев 1918г., шестимесячной турецкой оккупации с ее социально-политическими последствиями, результатом которой стали нарушение демографического баланса населенного пункта, спад земледелия и животноводства. Было разрушено малое и среднее производство, ограблены и переввезены в Турцию значительное количество движимости и человеческих ресурсов, и в целом был нанесен огромный ущерб всей социально-экономической структуре региона.

TURKISH OCCUPATION OF GHARAKILISA IN 1918 AND ITS SOCIAL- ECONOMIC CONSEQUENCES

Gagik Etimyan
Doctor of Historical Sciences, Associate Professor

SUMMARY

The article concerns to Gharakilisa decline in 1918 and the six-month turkish occupation with its social and economic consequences after may battles. It caused the demographic disbalance of the populated area and destroyed the agriculture and stock-breeding there. Small and middle production was brought to the verge of decline. A great amount of movable property and human resources was robbed and transfered to Turkey and the whole social and economic structure of region was essentially damaged.

ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՐՑԸ (1919-1920 ԹԹ. ՄԱՅԻՍ)

Յուրիկ Ղուլյան
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

1919թ. դրությամբ Ադրբեջանի հայ բնակչությունը շարունակում էր մնալ իրավազուրկ ու անպաշտպան վիճակում: Ծանր էր հատկապես Նուխու և Արեշի հայ բնակչության վիճակը, որը, կտրված արտաքին աշխարհից շրջապատված թուրքերով շարունակում էր գտնվել անօգնական վիճակի մեջ՝ ենթակա սպանության ու թալանի: Բաքվի հայկական տեղեկատու բյուրոն պարբերաբար հաղորդագրություններ էր տալիս Ադրբեջանում հայության հետապնդումների, կոտորածների ու անհետացումների վերաբերյալ: Կառավարական պաշտոնաթերթ «Ադրբեջան»-ը դրանք համարում էր վնասակար, իսկ նրա տարածած լուրերը սուտ և պրովոկացիոն[1]:

1919թ. մայիսի 14-ից-18-ը Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի ներկայացուցչի հետ Նուխու և Արեշի գավառների հայերի դրությունը ուսումնասիրելու համար հիշյալ գավառներ կատարած ուղևորության արդյունքների մասին Լիսիցյանի զեկույցի համաձայն իրավիճակը Նուխու և Արեշի շրջաններում հետևյալն էր. Նուխի քաղաքը ընդհանուր կոտորածի չէր ենթարկվել: Ըստ Ադրբեջանի խնամատարության նախարարության հանձնաժողովի տվյալների (լիազոր –Սուլթանով) քաղաքում հայ փախստականների թիվը 1051 մարդ էր, որից 240 տղամարդ, 348 կին, 463 երեխա, մահմեդական փախստական չկար: Գոյություն ուներ Ազգային խորհուրդ, որը միջոցներ չունենալու պատճառով մատնված էր անգործության: Խորհրդի նախագահը քահանա Սահակ Տեր-Պողոսյանն էր: Հայերն ապրում էին սարսափի և ամենօրյա կոտորածի վտանգի տակ: Պետության կողմից նրանց ոչ մի օգնություն չէր ցուցաբերվում: Ամերիկյան կոմիտեն այնտեղ որբերի ու կարիքավորների համար թողել էր 50.000ռուբլի[2]:

---

[1] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.79, թթ.167-168:

[2] Միրզոյան Ս. «Փաստաթղթեր Նուխիի և Արեշի հայերի 1919-1920թթ. ջարդերի մասին», «Լրաբեր Հասարակական գիտությունների », Երևան, 1992, էջ 146-147:

Վարդաշեն գյուղը Նուխու շրջանի այն երեք գյուղերից մեկն էր, որին հաջողվել էր փրկվել կոտորածներից ու տեղահանությունից: Թաքնվելով լեռնային վայրերում այնտեղ մնացել էին 1918թ. անհանգիստ հուլիս-օգոստոս ամիսներին: Վերադառնալով իրենց տները՝ դրանք գտել էին ամբողջովին թալանված: Վարդաշենը նախկինում համարվում էր ողջ երկրամասի ամենից հարուստ գյուղերից մեկը: Ըստ կազմված զեկույցի 1919թ. մայիսի դրությամբ Վարդաշենում կային 600 տուն ուդին-հայեր (Գրիգորյան), մոտ 300 տուն ուդին-«վրացի» (ուղղափառ) և 300 տուն պարսկական հրեաներ: Ադրբեջանի կառավարության կողմից միայն 1919թ. փետրվարին մոտ 200-ի հասնող որբերին բաժանվել էր 150 փութ ալյուր՝ յուրաքանչյուրին 10 փութ: Ամերիկյան կոմիտեն որպես պարենային օգնություն երեխաների և առավել կարիքավորների համար թողել էր 37.500 ռուբլի, դրա համար պատասխանատու նշանակել Քրիստափոր Տեր-Աբրահամյանին[1]:

Ճալեթը՝ Վարդաշենի և Նիժի համեմատ ամենից աղքատ գյուղն էր, որի բնակչությունն ամբողջովին հարստահարված էր: Զրկված գյուղատնտեսական գործիքներից և անասուններից նրանք վախենում էին գյուղից դուրս գալ: Որբերի թիվն այստեղ հասնում էր շուրջ 100-ի:

Նիժ գյուղը թուրքական օկուպացիայի շրջանում պարբերաբար հարկ էր վճարել չստանալով փոխհատուցում: Չնայած այս հանգամանքին նրանք ամենից շատ կարիք էին զգում քաղաքական օգնության և ամերիկյան կոմիտեին խնդրել էին թաթարների կամայականությունները[2] կանխելու համար ուղարկել իրենց ներկայացուցչին: Նախկինում մոտ 7000 բնակչություն ու 900 հայ տուն ունեցող գյուղից մնացել էր 747 տուն: Կար նաև 82 թաթար տուն: 1919թ. փետրվարի դրությամբ Նիժում կար 1400 փախստական: Ըստ զեկույցի թաթարական գյուղերում գտնվող հայերի թիվը 3600-ից քիչ չէր, այն դեպքում, որ Ադրբեջանի կառավարական հանձնաժողովը ներկայացրել էր նվազեցված թվեր՝ Նուխու և Արեշի գավառներում միասին՝ 1504[3]: Հայրենակցական միության մոտավոր և ոչ լրիվ տվյալներով թաթարների մոտ գերու կարգավիճակով

[1] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.79, թ.190:
[2] Միրզոյան Ս., նշվ. հոդվածը,էջ 149-153:
[3] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920թթ., (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2003, էջ 311-318:

պահվող հայերի թիվը՝ 1990-ն էր: Այսպիսով, ի մի բերելով Նուխու և Արեշի գավառների փրկված հայերի ընդհանուր թիվը ստացվում էր հետևյալ պատկերը.

18.000-ք. Նուխի, Վարդաշեն, Նիժ, Ջալեթ

3606-նույն տեղերում փախստական

3600-գերի

1500-որոնք մեծամասամբ անցել էին Ղարաբաղ և Ելիզավետպոլի մերձակա հայկական գյուղերը

2000-գերի հայեր Սամուխի շրջանում

1500-Վրաստանի սահմաններում

Ընդամենը՝ 30200 այսինքն, մոտ 50%, այն հայերի՝ որոնք 1917թվականին 52813-ն էին[1]: Որբերի թիվը չհաշված թաքարների մոտ եղածի `850-ն էր: Եզրափակելով վերոնշյալ զեկույցը նշվում էր, որ Հայաստան նրանց վերաբնակեցման հարցը համընդհանուր հավանության է արժանացել և որ բոլորը համոզված են դրա անհրաժեշտության մեջ[2]: Հիշյալ գավառների հայ բնակչությունը անմխիթար և իրավազուրկ վիճակում, գտնվում էր ամենօրյա կոտորածի սպառնալիքի տակ: Թիֆլիսում գործող Նուխու-Արեշի հայրենակցական միության վարչությունը անհապաղ ձեռնարկվելիք միջոցների մասին 1919թ. մայիսի 16-ին ՀՀ ԱԳ նախարարին ուղարկած հուշագրում ներկայացնելով հայ բնակչության օրհասական վիճակը փոխանցում էր վերջիններիս ցանկությունը: «Փրկություն են խնդրում, աղաչում են թույլ տալ գոնե հեռանալու երկրից, բայց Ադրբեջանի կառավարությունը մինչև այժմ չկարողացավ դեռ հնարք գտնել զսպելու տևական սանձարձակությունները և թողնելու, որ անմեղ ժողովուրդը հեռանար դեպի ուրիշ կողմեր և ուրիշ երկնքի տակ որոներ իր ապրուստն ու կյանքի ապահովությունը[3]»: Հարցի հրատապությունից ելնելով հռչակագրի հեղինակները ԱԳ նախարարին խնդրում էին. «Չզլանաք վերոհիշյալ սոսկումների մասին շեշտել Անդրկովկասի հասարակապետությունների կոնֆերանսի մեջ և չհապաղեցնեք ամեն միջոցներ ձեռք առնելու, որպեսզի օր առաջ ճանապարհները բացվեն և արգելափակ հայերը կարողանան անվտանգ ելնելու իրենց արյունոտ հայրենիքից և կամ

[1]Նույն տեղում:
[2]Նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.79, թթ.206-208:

թե ապահովվելու իրենց եղած տեղերում գույքով և կյանքով[1]»: Դրությունը այնքան էր լրջացել, որ Վարդաշեն գյուղի բնակչությունը կառավարության ճնշումներից իրենց ազատելու խնդրանքով 1919թ. ապրիլի 30-ին դիմեց Ադրբեջանի պառլամենտի դաշնակցական ֆրակցիային և մինչև իսկ խնդրեց, որ իրենց տեղափոխեն ավելի ապահով տեղ «որովհետև նրանք վախենում են դաշտային աշխատանքների դուրս գալ[2]»:

Չնայած Ադրբեջանի կառավարությունը փախստականներին օգնելու նպատակով 1 միլիոն էր հատկացրել, սակայն բացի 500 փութ ալյուրից հայությունը այդ նախատեսված օգնությունից ոչինչ չստացավ[3]:

Նշենք, որ ՀՀ կառավարությունը մշտական ուշադրության մեջ էր պահում հայ փախստականների հարցը՝ Բաքվի իր ներկայացուցչից պահանջում պարբերական տեղեկատվություն հայության վիճակի մասին[4]: ՀՀ կառավարությունը հայ փախստականների խնդիրը մշտապես պահում էր իր ուշադրության կենտրոնում չնայած որ նրանց օգնելու նրա հնարավորությունները սահմանափակ էին: Այդուհանդերձ, հայ փախստականների խնդիրը հաճախ քննարկման նյութ էր դառնում կառավարության նիստերի ընթացքում: Այսպես, կառավարության 1919թ. մարտի 14-ի նիստը մի շարք հարցերի թվում անդրադառնալով Վրաստանում և Ադրբեջանում գտնվող գաղթականների ու որբերի խնամատարությանը որոշեց, որ հիշյալ հանրապետություններում գտնվող և այդ պետությունների հպատակ չհանդիսացող հայ գաղթականների և որբերի խնամատարությունը պիտի հոգա Հայաստանի կառավարությունը՝ հանձինս Խնամատարության նախարարության[5]: Որքան էլ ՀՀ կառավարությունը Ադրբեջանում իր դիվանագիտական ներկայացուցչի միջոցով բանակցություններ էր վարում Ադրբեջանի կառավարության հետ փախստականների համար նորմալ կյանք ապահովելու ուղղությամբ, այնուամենայնիվ բռնությունները շարունակվում էին: Այդ նկատի ունենալով է, որ ՀՀ կառավարությունը նպատակահարմար գտավ հայության վերջին բեկորներին տեղափոխել Հայաստան[6]: 1919թ. մայիսի 26-ին Հայաստանի մինիստրների խորհուրդը որոշում կայացրեց Նուխու, Արեշի, Շամախու և Գյոկչայի շրջանների հայ

[1] Նույն տեղում:
[2] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում,էջ 310:
[3] Միրզոյան Ս.նշվ. հոդվածը, էջ 149-153:
[4] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.293, թ.85:
[5] Նույն տեղը, ֆ.199, g.1, գ.100, թ.39:
[6] Նույն տեղում, գ.61, թթ.72-73:

բնակչությանը Հայաստանի սահմանները տեղափոխվելու անհրաժեշտության մասին[1]: Հայաստանի խնամատարության և աշխատանքի մինիստր՝ Սահակ Թորոսյանը մինիստրության Վրաստանի ներկայացուցչին կարգադրեց այդ գործի համար հատուկ մարդ ուղարկել Ադրբեջան: Վերոնշյալի մասին ՀՀ ԱԳ նախարարին տեղեկացնելով նախարարը խնդրեց, որ նա ևս համապատասխան կարգադրություններ աներ ներգաղթի համար[2]: Կառավարության որոշման մասին ՀՀ ԱԳ նախարարը Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչին նամակով տեղեկացնելով հանձնարարեց, որ այդ ուղղությամբ դիմումներ անի Ադրբեջանի կառավարությանը՝ հիշյալ շրջանների ազգաբնակությանը տեղափոխվելու դյուրություններ տալու համար[3]: Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը գտնում էր, որ անհրաժեշտ է Հայաստան նուխեցիների, ղուբացիների, արեշցիների և շամախեցիների ներգաղթի պայմանների մասին Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների միջև ստորագրել համաձայնագիր: Ադրբեջանի կառավարության մինիստր Խ.Համասփյուռին[4] գրած նամակում Տ.Բեկզադյանը ներգաղթի իրականացումը տեսնում էր հետևյալ ձևով՝ նրանց Հայաստանի տարածք գաղթելով փոխանակել համապատասխան մուսուլմանական բնակչության հետ, որոնք պետք է տեղահանվեին Հայաստանից[5]: Իսկ մինչ այդ Նուխու, Արեշի, Գեոկչայի և Շամախու գավառի հայերի դրությունը շարունակում էր մնալ անտանելի ու հուսահատական և կարիք կար անհրաժեշտ միջոցների իրականացման, քանի որ հայերից շատերը դեռևս թաթարական գյուղերում գտնվում էին գերության մեջ, հայերի ֆիզիկական գոյության անապահովվածության պատճառով հնարավոր չէր նրանց տեղում օգնություն ցուցաբերելը: Նուխու Հայոց Ազգային կոմիտեն Բաքվի Հայոց ազգային խորհրդին խնդրում էր. «խնդրել ուր հարկն է, որ կարգը վերականգնվի Նուխու շրջանում, որ Նուխի-Եվլախ ճանապարհը անվտանգ դառնա հայերի համար, որ այդ ճանապարհի վրա գտնվող Խալդան կայարանը՝ հայերի սպանդանոցը մաքրվի անվստահե-

[1] Նույն տեղը ֆ. 278, g.1, գ.8, թ.2:
[2] Նույն տեղում, ֆ.200, g.1, գ.79, թ.182:
[3] Նույն տեղում,ֆ.278, g.1, գ.8, թ.2:
[4] Ծանոթություն. Խ.Համասփյուռը 1919թ. ապրիլի 14-ին Ադրբեջանի պառլամենտի կողմից հաստատված Ն.Ուսուբբեեկովի կառավարության մեջ զբաղեցնում էր նախարարական պաշտոն:
[5] ՀԱԱ, ֆ.223, g.1, գ.80, թ.109:

լի տարրերից»[1]: «Նուխի-Եվլախ ճանապարհին ճրագով հային փնտրում և գտածին սպանում էին... Դպրոցական գործերը փակած ուսուցիչ-ուսուցչուհիներ, ուսանողներ, վաճառականներ ձեռքները ծալած գլխիկոր նստած չեն կարողանում հեռանալ Նուխուց»[2], - գրում էր Նուխու Հայոց Ազգային կոմիտեի նախագահ Սահակ քահանա Տեր-Պողոսյանը: Դա նկատի ուներ ՀՀ խնամատարության ներկայացուցիչ Դավիթխանյանը, երբ Հայաստանի խնամատարության նախարարին ուղարկած հեռագրում գտնում էր, որ «անհրաժեշտ է ձեռք առնել ամենաարագ միջոցներ[3]»: Ստեղծված իրավիճակում փրկության միակ ելքը տեսնելով նրանց Հայաստան տեղափոխելը՝ տեղական կազմակերպությունները համապատասխան որոշումներ էին ընդունում, որոնցում հիմնավորում էին իրենց քայլի անհրաժեշտությունը: Այսպես, Ադրբեջանի կառավարության մեջ նախարարի պաշտոն զբաղեցնող Խորեն Համասփյուռին գրած նամակում Նուխու Հայոց Ազգային Կոմիտեն Նուխու-Արեշի փախստականներին Հայաստան տեղափոխելու իրենց որոշումը հիմնավորում էր հետևյալ հանգամանքներով. որ «Նուխու-Արեշի հայերի բոլոր գյուղերը հավասարեցված են հողին և փախստականները զրկված են գյուղացիական տնտեսության համար ամեն անհրաժեշտությունից, նրանց հողերն ու սեփական այգիները կառավարության կողմից աճուրդով հանձնված են վարձակալությամբ մինչև 1920թ. հունվարի 1-ը, դրա համար էլ հնարավորություն չկա նրանց տեղավորել իրենց գյուղերը, նրանց իրենց գյուղերը վերադարձի դեպքում անգամ՝ ապահովելով գյուղատնտեսական գործիքներով և անասունով, նրանց անձի և գույքի անձեռնմխելիությունը չի կարող ապահովվել, քանի որ նրանք առանց զենքի են, հարևան գյուղերի մահմեդական բնակչությունն առանց բացառության զինված են, որը մահացու կերպով անդրադարձել է հայ բնակչության վրա: Հայ կանայք հազարներով գտնվում են մուսուլմանների մոտ և անգամ հիմա շարունակում են գողանալ, իսկ որոշ ժամանակ անց նրանց դարձնել մահմեդականության: Նախկինում հայերը բռնությամբ վեր էին ածվում մահմեդականության, իսկ այժմ տեսնելով իրենց անտանելի վիճակը և դաշնակից տերությունների և Հայաստանի անտարբեր վերաբերմունքը, շատերն իրենք են անցնում մահմեդականության: Եթե մի քանի տարի փախստականները

[1] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում,էջ 356:
[2] Նույն տեղում:
[3]Նույն տեղում, էջ 324:

մնան նման անելանելի վիճակում, ապա նրանցում հայության հետք անգամ չի մնա գոյություն ունեցող պայմաններում: Նուխու Հայկական Ազգային խորհուրդը Ձեր առաջարկությունը՝ Նուխու-Արեշի փախստականների մնացորդներին Հայաստան տեղափոխելու մասին գտավ միակ միջոցը և խիստ անհետաձգելի: Այդ պատասխանատու գործի կազմակերպման համար ամիրաժեշտ է, որ Նուխի գան Ադրբեջանի, Հայաստանի և Դաշնակից տերությունների ներկայացուցիչները: Վերաբնակեցումը անհրաժեշտ է կազմակերպել մինչև օգոստոս ամիսը, որպեսզի նրանք հասցնեն նոր ցանքին[1]»: Նամակն ուղարկված էր կոմիտեի նախագահ՝ քահանա Սահակ Տեր-Պողոսյանի ու անդամ-քարտուղար Ա. Մանուչարյանի ստորագրությամբ:

1919թ. հունիսի 21-ի կառավարության նիստում լսելով խնամատարության նախարարության զեկուցումը Նուխու, Արեշի, Շամախու և Գեոկչայի գավառների հայ ազգաբնակությանը Հայաստան տեղափոխելու մասին որոշվեց հիշյալ շրջանների հայությանը տեղափոխել Հայաստան: Առաջին հերթին պետք է տեղափոխեին գերության մեջ գտնվողներին, Գանձակի նահանգում անտուն մնացած և Վրաստանում գտնվող թվով 15.000 հոգու: Որոշվեց մնացած մոտ 35.000-ի տեղափոխությունը կատարել առաջին հերթին ընդհանուր ներգաղթի ծրագրով: Հանձնարարվեց ԱԳՆ-ին դիվանագիտական բանակցություններ վարել Դաշնակիցների Կովկասյան ներկայացուցիչների և Ադրբեջանի կառավարության հետ ներգաղթը իրականացնելու համար: Ներքին Գործերի նախարարությանը հանձնարարվեց Հայաստանում 50.000 հոգու համար մշտական բնակավայրեր որոշել և ներկայացնել ներգաղթի ծախսերի նախահաշիվը, ինչպես նաև հոգալ գաղթողների գույքի և կյանքի ապահովության և փոխադարձ հատուցման խնդիրը: Այդ գործն իրականացնելու համար նախատեսվեց Հայաստանում և Ադրբեջանում հայ և թուրք գաղթականների խնամատարության համար Խնամատարության Մինիստրությանը կից ունենալ ներկայացուցիչներ: Անհրաժեշտ համարվեց նաև, որ ներկայացուցչի հետ միասին Ադրբեջանից հայության ներգաղթը կազմակերպելու համար պաշտոնյաներ պահվեն նաև Ադրբեջանի հայաբնակ վայրերում[2]: Որոշվեց նաև Վրաստանում ժամանակավորապես ապրող Նուխու և Արե-

[1] ՀԱԱ, ֆ.223, g.1, գ.80, թ.107:
[2] ՀԱԱ, ֆ.200, g.1, գ.79, թ.194:

շի հայ գաղթականներին տալ Հայաստանի քաղաքացու վկայականներ[1]:

Գաղթի իրականացման նպատակով Հայաստանի պառլամենտն օրենք ընդունեց Նուխու, Արեշի, Շամախու, Գեոկչայի և Ղուբայի գավառների 20.000 հայ ազգաբնակությանը Հայաստան տեղափոխելու ծախսերի համար 9.744.100 ռ. վարկ բացելու մասին[2]: Վերոնշյալ վարկը հատկացվեց հետևյալ հաշվով.

1. Ճանապարհածախսի համար - 1.000.000

2. Առաջին ամսում սնունդ բաշխելու համար - 4.200.000

3. Երկու ամսվա համար որպես ապրուստի միջոց փոխարինաբար տալու համար - 600.000

4. Ներգաղթի վարչական մասը կազմակերպելու համար - մնացած գումարը

ընդամենը 9.744100

Ինչպես նշեցինք, հայ փախստականների հայրենիք տեղափոխելու խնդրի շուրջ Ադրբեջանի կառավարության հետ բանակցություններն անմիջականորեն վարում էր Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ.Բեկզադյանը: Վերջինս Թիֆլիս և Երևան կատարած ծառայողական ուղևորությունից վերադառնալով և անցնելով իր պարտականությունների կատարմանը 1919թ. հուլիսի 6-ին այցելեց Ադրբեջանի մինիստրների խորհրդի նախագահ Ն.Վ.Ուսուբբեկովին և առաջին անգամ ԱԳ նախարար Մ.Յ. Ջաֆարովին[3]: Ն.Ուսուբբեկովի առաջ դիվանագիտական ներկայացուցիչը դրեց Նուխու, Արեշի և Գեոկչայի գավառների առանց տանիքի մնացած գաղթականների Հայաստանում վերաբնակեցնելու հարցը: Այդ հարցը մինիստրների խորհրդում լսվելու էր մոտակա օրերին: ԱԳ նախարար Մ.Յ.Ջաֆարովի հետ Տ.Բեկզադյանի մոտ երկու ժամ տևած զրույցի ընթացքում հայ-ադրբեջանական հարաբերությունների շրջանակում ի թիվս այլ հարցերի անդրադարձ եղավ նաև փախստականների խնդրին: Կողմերի միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում համաձայնություն կայացավ Նուխու, Արեշի, Գեոկչայի հայությանը Հայաստան տեղափոխելու հարցի վերաբերյալ[4]: Հայաստանում մուսուլմանների Ադրբեջանում հայերի դրության ուսումնասիրության

---

[1] Նույն տեղում, ֆ.199, g.1, գ.100, թ.132:

[2] Նույն տեղում, g.1, գ.61, թ.71, ««ՀՀ պառլամենտի օրենքները 1918-1920թթ.», Երևան, 1998, էջ 102:

[3] Նույն տեղում , ֆ.278, g.1, գ.3, թ.37:

[4] Նույն տեղում, թ.26:

հարցի վերաբերյալ երկու հանրապետությունների միջև կայացավ համաձայնություն, ըստ որի պետք է ընտրվեր մի ընդհանուր հանձնաժողով՝ ամեն մի պառլամենտից երկուական ներկայացուցիչ, նույնքան էլ Դաշնակիցների կողմից: Այդ հանձնաժողովը պետք է տեղում ծանոթանար հայերի ու մուսուլմանների վիճակին և այդ մասին տեղեկացներ ինչպես երկու պառլամենտներին, այնպես էլ մամուլին[1]: Նուխու-Արեշի գաղթականության խնդիրը քննարկման նյութ դարձավ նաև հուլիսի 21-ին Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի ու Ադրբեջանի ԱԳ նախարար Ջաֆարովի միջև, որի վերաբերյալ ՀՀ ԱԳ նախարարին հղած զեկուցագրում Տ.Բեկզադյանը հայտնեց, որ Ադրբեջանը Նուխու և Արեշի գաղթականության խնդրի վերջնական լուցումը որոշել է թողնել սահմանային վեճերը վերջանալուց հետո: «Ոչինչ դեմ չունին մասնակի գաղթի Ադրբեջանից: Իմ հարցին, թե պասիվ դիտող պիտի լինեն, Ջաֆարովը պատասխանում է, որ իհարկե կաջակցեն, բայց հասկանալի է ոնց պիտի աջակցեն[2]»,– ասվում էր զեկույցում: Սակայն մի քանի օր անց Ադրբեջանի կառավարության որոշմամբ մինչև տեղում փախստականների դրությունը ուսումնասիրելու նպատակով ստեղծված Կենտրոնական հանձնաժողովի փախստականների դրությանը ծանոթանալը, արգելվեց ինչպես Մուղանի, այնպես էլ հանրապետության մյուս շրջանների փախստականների և վերաբնակիչների բնակեցումը: Այլ կերպ ասած արգելք էր դրվում երկրի ներսում փախստականների ինչպես տեղավորման, այնպես էլ տեղաշարժի վրա: Որոշման համաձայն հետագա ընդունման կարգի և պայմանների վերաբերյալ պիտի ընդունվեր լրացուցիչ որոշում: Ադրբեջանի կառավարության փախստականների և վերաբնակիչների տեղավորման որոշման մասին Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը տեղեկացվեց Ադրբեջանի հողագործության և պետական ունեցվածքի նախարարության հաղորդագրությամբ[3], որից պարզ դարձավ, որ մինչև վերոնշյալ հանձնաժողովի աշխատանքների ավարտը փախստականների խնդրում տեղաշարժ ակնկալելն անիմաստ է:

Ադրբեջանի տարածքում գտնվող հայ փախստականների Հայաստան տեղափոխմամբ զբաղվում էր Գաղթականական կոմիտեն, որն Ադրբեջանի խնամատարության նախարարության միջոցով փորձում էր

[1] Նույն տեղում, թ.27:
[2] Նույն տեղում, ֆ.200, g.1, գ.341, թ.4:
[3] Նույն տեղում ֆ.223, g.1, գ.90, թ.28:

հաջողեցնել հայ փախստականներին գնացքով անվճար տեղափոխելու գործը: Հաճախ ադրբեջանական իշխանությունները, երկաթգիծը սպասարկող ժանդարմերիան այս կամ այն պատրվակով հետաձգում էին հայ փախստականների մեկնումը, նրանց իջեցնում վագոններից[1], հարուցում զանազան խոչնդոտներ՝ արգելք հանդիսանում գաղթի իրականացման համար:

Միաժամանակ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի և ճանապարհային վարչության պետի միջև կայացած բանակցությունների արդյունքում ադրբեջանական կողմը համաձայնել էր փախստականների տեղափոխման համար տրամադրել համապատասխան քանակության վագոններ: Ելնելով վերոնշյալից Գաղթականական կոմիտեի նախագահը վագոնների տրամադրման հարցով դիմումներ էր հղում Ադրբեջանի ղեկավարության անունով[2]: Սակայն, երբ սկսվեցին այդ ուղղությամբ գործնական քայլեր կատարվել Ադրբեջանը զանազան խոչնդոտներ հարուցելով արգելք հանդիսացավ գաղթի իրականացման համար: Դրանում իր մասնակցությունն ուներ նաև մոլի հայատյաց ՀՀ-ում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին: Վերջինս շտապ հեռագրով իր կառավարությանը խորհուրդ էր տալիս. «Շտապ միջոցներ ձեռնարկեք Հայաստան տեղափոխվել ցանկացող հայերի գաղթը կանխելու համար[3]»,– ավելացնելով, որ նա շուտով կգա Բաքու և կբացատրի: Հիշեցնենք, որ դա այն օրերին էր, երբ ՀՀ օրինական իշխանությունների դեմ մահմեդական ըմբոստ շրջանները հակապետական ապստամբություն էին բարձրացրել: Չբավարարվելով միայն գաղթին խոչնդոտ հանդիսանալ, կարճ ժամանակ անց գաղթը պաշտոնական կերպով արգելվեց: Այդ օրերին էր, որ անգլիացիներին Անդրկովկասում փոխարինեցին ամերիկացիները, որոնց հետ էլ անմիջական բանակցությունների մեջ մտավ նաև Նուխու և Արեշի հայրենակցական միությունը: Գնդապետ Հասկելը հայությանը տեղափոխելու համար տվեց իր համաձայնությունը[4]:

Թերևս ներգաղթի խնդրի կարևորությամբ էր պայմանավորված, որ ՀՀ ՆԳ նախարարությանը կից ստեղծվել էր ներգաղթի և վերաշինության մարմին՝ որը կոչված էր իրականացնել արտասահմանում այդ թվում նաև

[1] Նույն տեղում, գ.70, թ.177:
[2] Նույն տեղում, գ.103, թ.31:
[3] Նույն տեղում, ֆ.200, ց.1, գ.299, մաս 2, թ.143:
[4] «Աշխատավոր», Թիֆլիս, 1919, 9 սեպտեմբերի:

Ադրբեջանում եղած հայ բնակչության ներգաղթը: ՆԳ նախարարի օգնական Ա.Մաքսապետյանը որպեսզի կարողանար կատարել իր վրա դրված պարտականությունները Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ.Բեկզադյանի միջոցով դիմեց Բաքվի Հայոց Ազգային խորհրդին, պարզելու համար Ադրբեջանից Հայաստան տեղափոխվել ցանկացողների թիվը, ձեռքի տակ ունեցած հինգ միլիոնից բացի նրանց օգնելու համար ինչ միջոցներ ունի իր տրամադրության տակ և ինչ միջոցներ են պակասում նրանց վերադարձի համար: Միաժամանակ խնդրում էր իրազեկել փոխադրվող ժողովրդի նկատմամբ Դաշնակիցների ու Ադրբեջանի վերաբերմունքի մասին[1]:

Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ.Բեկզադյանի նախաձեռնությամբ սեպտեմբերի 1-ին կազմվեց հատուկ մարմին՝ «Ներգաղթի գլխավոր խորհուրդ Ադրբեջանում»: Խորհուրդը բաղկացած էր 9 հոգուց: Խորհրդի նախագահը ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանն էր, չորսը Բաքվի Հայոց Ազգային խորհրդի անդամներից, երկուական ներկայացուցիչներ Բաքվի Հայրենակցական Միություններից:[2] Ներգաղթի խորհրդի նպատակն էր առաջին հերթին Ադրբեջանի սահմաններում՝ ինչպես Բաքվում, այնպես էլ գավառներում աստանդական թափառող և գերության մեջ եղած գաղթականներին Հայաստան տեղափոխելը: Նախատեսվում էր քաղաքական նպաստավոր պայմանների պարագայում ներգաղթի ընդհանուր ծրագրով իրականացնել Շամախու, Գյոկչայի, Նուխու և Արեշի հայ բնակչության մասսայական տեղափոխությունը: Ելնելով վերը նշված խորհրդի գոյության փաստից Ադբեջանում ՀՀ խնամատարության մինիստրի լիազոր ներկայացուցիչը[3] նամակով դիմեց Բաքվի Հայոց Ազգային խորհրդին տեղեկացնելով այդ խորհրդի անելիքների մասին և խնդրեց տեղեկություններ այդ խորհրդի անելիքների ու Ադրբեջանից Հայաստան տեղափոխվող հայերի վերաբերյալ: Ներգաղթի խորհրդում իր ներկայացուցիչն ունենալու ցանկություն հայտնեց նաև Նուխու-Արեշի Հայրենակցական միությունը: «Ներգաղթի խորհրդում» իր ներկայացուցիչն ունենալու անհրաժեշտության մասին Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությանը Նուխու-Արե-

[1] ՀԱԱ, ֆ.223, ց.1, գ.81, թ.36:
[2] Նույն տեղում, ֆ.278, ց.1, գ.8, թ.73:
[3] Ծանոթություն. ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի օգոստոսի 29-ի N29 գրության համաձայն նախկին լիազոր Հակոբյանի փոխարեն ՀՀ խնամատարության մինիստրի լիազոր էր նշանակվել Զ. Գեղամյանը:

շի հայրենակցական միության վարչության գրության մեջ մասնավորապես ասված էր. «Հայրենակցական միությունս առաջինն է եղել արտագաղթի նախաձեռնողը և անշուշտ նախանձախնդիր է այդ գործի հաջողությանը: Բայց այս հանգամանքը միանգամայն զանց է առնված «Ներգաղթի խորհուրդի» կազմակերպման ժամանակ և Հայրենակցական միությունս չունի այդ նոր մարմնի մեջ իր ներկայացուցիչը և այդպիսով չեզոքացվում է Թիֆլիսի Նուխու-Արեշի Հայրենակցական միության ակտիվ մասնակցությունը այդ գործում, որ ինքն է սկսել և պատասխանատու է նրա ելքին: Ուստի խնդրում ենք Ձեզ, բարի եղեք հարկ եղածը անել ընդունելու այդ մարմնի կազմում նաև Միությանս ներկայացուցչին[1]»:

Ադրբեջանի կառավարությունն իր հերթին Հայաստանից Ադրբեջան գաղթող փախստականների հարցը փորձում էր լուծել ի հաշիվ հայկական գյուղերի, որոնք հայտնի իրադարձությունների ժամանակ ավերվել էին ու դատարկվել բնակչությունից: Ադրբեջանի կառավարությունը, հողագործության մինիստրությանը կից կազմված Գաղթականական կենտրոնական կոմիտեի մշակած ծրագրի համաձայն նախատեսում էր Երևանի թուրք գաղթականությանը տեղավորել Շամախու, Գյոկչայի, Նուխու և Արեշի գավառների հայկական գյուղերում, որոնց մի մասը բնակչությունից զուրկ էր ու ավերված: Որպեսզի հայկական գյուղերի մնացորդ բնակչությունը իրարից կտրված չմնար վերը նշված գավառների հայրենակցական միությունների ժողովը միաձայն որոշում կայացրեց Հայոց Ազգային խորհրդի միջոցով խնդրել Ադրբեջանի կառավարությանը, որպեսզի հիշյալ գավառներում հայ գյուղացիներին դասավորեն այդպես: Միաժամանակ հայրենակցական միությունների համատեղ նիստը արձանագրեց, որ «Արեշի գավառի նկատմամբ ժողովս ոչինչ չունի ասելու, քանի որ այդ գավառում հայություն այլևս չկա[2]»: Փախստականներ էին ժամանում Հայաստան Նուխուց, Արեշից ու Գանձակից: «Էջմիածին կայարան է ժամանել Արեշի փախստականների նոր խումբ՝ 135 մարդ: Գյանջայից դուրս է եկել ևս 705 մարդ[3]»,– կարդում ենք “Слово” թերթի նոյեմբերի 11-ի համարում:

Փախստականների Հայաստան տեղափոխման գործին իրենց մասնակցությունն էին բերում նաև Ադրբեջանի պառլամենտի հայ պատգամա-

---

[1] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում,էջ 416:
[2] ՀԱԱ, ֆ.223, ց.1, գ.95, թ.10:
[3] “Слово”, Тифлись, 1919, 11 ноября.

վորները[1], որոնք պառլամենտին հղած իրենց դիմումներում խնդրում էին գաղթականներին տրամադրել փոխադրամիջոցներ, նրանց հետ նշանակել պահակներ, վերջ տալ երկաթուղու վրա հայ փախստականների թալանին ու արգելքին գաղթել Հայաստան[2]: Հայ փախստականների թալանի դեպք տեղի ունեցավ մասնավորապես Թոուզ կայարանում: Երկու հարյուր հայ փախստականների մեկնումը որոնք Գյանջայից ուղղություն էին վերցրել Սանահին կասեցվեց՝ Թոուզ կայարանում փախստականների վագոնի կողոպուտի պատճառով: Միջադեպի հետ կապված ՀՀ խնամատարության մինիստրության ներկայացուցիչը դիմեց Ադրբեջանի կառավարությանը խնդրանքով մինչև Փոյլի կայարան անվտանգ ուղևորության համար ձեռնարկել համապատասխան միջոցներ: Միջադեպը հարթվեց միայն Ադրբեջանի վարչապետ Ն.Ուսուբբեկովի անմիջական միջամտությունից հետո: Ըստ պաշտոնաթերթ «Ազերբաջան»-ի հաղորդագրության նոյեմբերի 12-ին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Տ.Բեկզադյանը հանդիպում էր ունեցել մինիստր-նախագահ Ուսուբբեկովի հետ և իր շնորհակալությունը հայտնել Թոուզ կայարանի միջադեպը վերացնելու գործում կատարած աշխատանքի համար[3], հատկապես որ բոլոր մեղավոր պաշտոնյաները դատի են տրվել: Նա շնորհակալություն էր հայտնել նաև Ղազախի գեներալ նահանգապետ Խան-Խոյսկուց, այցելել ճանապարհային կապի նախարար Մելիք-Ասլանովին՝ երկաթուղային հսկողություն իրականացնելու համար:

Այդուհանդերձ Ադրբեջանից հեռացող հայ փախստականների ճանապարհը լի էր վտանգներով ու դժվարություններով: Այսպես, 1919թ. դեկտեմբերի 8-ին Նուխուց Հայաստան մեկնող երկրորդ գաղթախումբը 16 սայլով Նուխի-Եվլախ խճուղու վրա Նալբանդի Դարա կոչված վայրում կողոպտվում է բոլորովին, իսկ գեղեցիկ կանայք ու աղջիկները արատավորվում են: Հատկանշականն այն է, որ կողոպտողները և արատավորողները եղել էր նրանց ճանապարհող պահակախումբը[4]: Գաղթի ճանապարհին հայ բնակչությունը ենթարկվում էր պետական պահակախմբերի դրամաշորթմանը, թալանի, պահակների կամայականություններին: Պաշտոնյաները հայ փախստականներից դրամ էին շորթում ըստ իրենց աստիճա-

[1] Նույն տեղում, 13 ноября.
[2] Նույն տեղում, 15 ноября.
[3] “Слово”, Тифлись, 1919, 15 ноября.
[4] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում,էջ 467:

նի ու դիրքի: Այսպես, 1920թ. հունվարի 13-ին Նուխուց Հայաստան մեկնող 244 հոգուց բաղկացած գաղթախմբին Նուխուց մինչև Եվլախ կայարան ուղեկցող պետական պահակախմբի յուրաքանչյուր պահակ ամեն մի գաղթականից վերցրել էր 50 ռուբլի, իսկ ուրրյադնիկը - 118 հոգուց՝ հարյուրական ռուբլի: Աղստաֆա կայարանում թուրքերը գաղթականներից յուրաքանչյուրից վերցրել էին մի հազար ռուբլի ևս:

1919թ. աշնանը Նուխու շրջանի հայության մեծամասնությունն արդեն հեռացել էր իր բնակավայրերից: Նուխի քաղաքի ունևոր դասը, օգտվելով տիրող ժամանակավոր հանգստությունից առաջինն էր հեռացել քաղաքից: Նրան հաջորդել էր միջին դասը՝ աստիճանաբար ծախելով իր ունեցվածքը և հետևելով նրան տեղափոխվել Թիֆլիս, Բաքու, կամ Հայաստան: Նույն կերպ վարվեց նաև շրջանի հայ բնակչությունը[1]: Նկատենք որ դեռևս Նուխի քաղաքում մնացած հայերի դրությունը շարունակում էր մնալ ծանր ու վտանգված: Մնացած հայության կացության մասին ուշագրավ է Բաքվի նահանգի Շամախի քաղաքից գնդապետ Տիգրան Իսահակի Բախտամովի Թիֆլիսի Նուխու-Արեշի հայրենակցական միությանը հասցեագրված նամակը, որում երախտագիտություն հայտնելով Նուխի[2] քաղաքում բանտարկված եղած ընթացքում Նուխու կոմիտեի կողմից ստացած մեծ աջակցության համար, դրան զուգահեռ հայտնում էր, որ «նրանք խնդրել են արագացնել մնացած ընտանիքների էվակուացիան, որոնց դրությունը ստեղծված պայմաններում ծայրահեղ ծանր է[3]»:

Փախստականական խնդիրը ներառնվեց նաև 1919թ. դեկտեմբերին Բաքվում հրավիրված հայ-ադրբեջանական կոնֆերանսի օրակարգում, որի նախաձեռնությունը հայկական կողմինն էր[4]: Կոնֆերանսի ընթացքը ցույց տվեց, որ Ադրբեջանի նպատակը Անդրկովկասյան հանրապետությունների կոնֆեդերացիայի ստեղծումն էր: Հայերն իրենց հերթին առաջարկում էին նախապես քննարկելփոքր հարցերը՝ այդ թվում և փախստականանակը[5]: Հայկական պատվիրակությունը այդ առաջարկությունը կրկնեց նաև դեկտեմբերի19-ի նիստում, երբ առաջարկեց օրակարգում դնել՝ տարածքային, գաղթականների, առևտրա-երկաթուղաճանապարհային պայմանագրերի ստորագրման հարցերը: Խան-Խոյսկին ելույթ

[1] «Յառաջ», Երևան, 1919, 12 նոյեմբերի:
[2] Նույն տեղում:
[3] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, էջ 441:
[4] Туманов М. “Дипломатическая история РА”, 1925, ст. 241.
[5] ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.365, թ.37:

ունենալով երկու հանրապետությունների միջև բարիդրացիական հարաբերությունների պահպանման կարևորության ու անհրաժեշտության մասին՝ գալով ընթացիկ հարցերի լուծմանը, նշեց. «Եթե մենք նույնիսկ լուծենք այս կամ այն հարցը, մենք մտավախություն ունենք, որ դրանց լուծումը կլինի ոչ այնքան ամուր: Մեր կյանքի գլխավոր հարցը այնուամենայնիվ հանդիսանում է Անդրկովկասյան ժողովուրդների պետական կառավարման մի շարք բնագավառների միավորումը, նրանց քաղաքական-տնտեսական միավորումը»[1]: Խան-Խոյսկին նկատի ուներ կոնֆեդերացիան, որիստեղծումով ըստ նրա տարածքային սահմանաբաժանման հարցը կկորցներ այն սրությունն ու բարդությունը, որ կար ներկա պահին: Հայկական պատվիրակությունն իր հերթին պնդում էր, որ առաջին հերթին որոշեն երկաթուղային և առևտրական հարաբերությունների խնդիրը, կարգավորեն գաղթականների վիճակը և այլ հարցեր, այդպիսով երկու ժողովուրդների միջև հաստատեն նորմալ տնտեսական ու իրավական հարաբերություններ՝ դրանով նախապատրաստելով թե սահմանաբաժանումը և թե կոնֆեդերացիան: Սակայն ադրբեջանական պատվիրակությունը խնդիրների քննության համար ուզում էր այլ կարգի հետևել, պատճառաբանելով, որ մնացած հարցերը հեշտությամբ կլուծվեն[2]: Կոնֆերանսում համաձայնության չգալով, կողմերը որոշեցին հարցերի քննարկումը տեղափոխել Թիֆլիս, որտեղ էլ ավարտին հասցնել հայ-ադրբեջանական կոնֆերանսի ժամանակ իրենց լուծումը չստացած հարցերը[3]»: Այսպիսով, չնայած փախստականական հարցի կարևորությանը, այն հերթական անգամ անուշադրության մատնվեց:

Գաղթականների Հայաստան տեղափոխվելու գործընթացը չնայած դանդաղ, բայց այնուամենայնիվ իրականացվում էր:Վրաստան հասած գաղթականներին Նուխու և Արեշի Հայրենակցական միության միջնորդությամբ Հայաստանի կառավարությունը նրանց տեղափոխում էր Հայաստան, որտեղ հնարավոր օգնություն էին կազմակերպում[4]: Նուխու և Արեշի հայության բեկորների Հայաստան տեղափոխման հարցում մեծ էր նաև Նուխու և Արեշի հայրենակցական միության դերը, որի կատարած աշխատանքները պարզ կերպով երևում են վերստուգիչ հանձնաժողովի կողմից

[1] Նույն տեղում:
[2] «Աշխատավոր», 1919, դեկտեմբերի 22:
[3] ՀԱԱ, ֆ.278, ց.1, գ.10, թ.31:
[4] «Աշխատավոր», 1920, 4 հունվարի:

կազմված միության մեկ տարվա գործունեության մասին զեկույցում: Անդրադառնալով 6.04.1919-ից 4.04.1920թթ. ընթացքում հայրենակցական միության գործունեությանը նրանում մասնավորապես նշվում էր, որ վարչությունը հայրենակիցների փրկության միակ ելքը տեսնելով Հայաստան նրանց արտագաղթի մեջ, ձեռնարկել է մի շարք նախապատրաստական աշխատանքներ, արտագաղթի իրականացման համար դիմել Հայաստանի կառավարությանը, անգլիական հրամանատարությանը, Գերագույն կոմիսար Հասկելին: Ամերիկյան կոմիտեին ուղղված վարչության դիմումների շնորհիվ «իր ժամանակին կանխվել են Նուխու և Արեշի գավառներում կոտորածները, Վրաստանում ապաստանած հայրենակիցները չեն ենթարկվել հալածանքների և բռնի արտաքսման[1]»: Նրա ջանքերով ու միջնորդությամբ գաղթականներին պարեն էր հատկացրել Վրաստանում ՀՀ խնամատարության ներկայացուցչությունը, Նուխիում և Վարդաշենում՝ Ամերիկյան կոմիտեն, ՀՀ-ում `կառավարությունը[2]: Նուխու և Արեշի հայությունը նոր սարսափներ ապրեց 1920թ. գարնանը՝ կապված ղարաբաղյան իրադարձությունների հետ: Ղարաբաղի և Զանգեզուրի ճակատներում ջարդված ադրբեջանական ուժերը, վերսկսեցին իրենց «քաջագործությունները» թիկունքի խաղաղ ազգաբնակության գլխին: Տեղի հայությունը, որը կենտրոնացած էր Վարդաշեն, Նիժ և Ճալեթ գյուղերում նորից ենթարկվեց կոտորածի[3]: Վարդաշենի և Ճալեթի բնակիչները գլխովին սրի քաշվեցին[4], իսկ Նիժի բնակիչների մի մասը փրկվեց անտառներում: Կապված նշված գավառներում հայերի ու ուդիների շարունակվող կոտորածների հետ Թիֆլիսում գործող Նուխի-Արեշի հայրենակցական միությունը նամակով դիմեց Անդրկովկասում գերագույն կոմիսար գնդապետ Հասկելին խնդրելով, որ Նուխի և տուժած գյուղեր հանձնաժողով ուղարկեն այդ իրադարձությունները ուսումնասիրելու համար և փրկեն դեռևս կենդանի մնացած՝ Նուխի, Զաքաթալա և Կախի քաղաքների հայերի կյանքը: Նամակում նաև խնդրում էին, որ ապահովեն Հայաստան նշված գավառի հայ բնակչության մնացորդների տեղահանությունն ու նրանց անվտանգությունը[5]:

«Նուխու և Արեշի գավառների 48 հայկական գյուղերի մնացորդները,

---

[1] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում,էջ 452:
[2] Նույն տեղում:
[3] «Բանբեր Հայաստանի արխիվների», երևան, 1990, էջ 174:
[4] «Յառաջ», Երևան, 1920 , 11 ապրիլի:
[5] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում,էջ էջ 454:

ավերված են, իսկ ժողովուրդը սրի քաշված[1]»,– վկայակոչելով ամենահավաստի աղբյուրից ստացված հաղորդումը գրեց «Աշխատավոր»-ը 1920թ. ապրիլի 7-ի համարում: Այդպիսի գործելակերպով «Ադրբեջանը որոշել էր լուռ ու մունջ բնաջինջ անել յուր տերիտորիայի վրա ապրելու դժբախտություն ունեցող հայությանը»,– այդ օրերի դեպքերի մասին գրում էր Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Հարությունյանը ՀՀ կառավարությանը ներկայացրած զեկույցում: Մի կերպ փրկվածները թաքնվեցին անտառներում: Հայության մի մասը շարունակում էր գերի մնալ թուրքական գյուղերում, մի մասը ուժով մահմեդականացվել էր:

Հանրապետությունների միջև առկա փախստականական սուր խնդիրը չլուծվեց նաև 1920թ. ապրիլին Թիֆլիսում հրավիրված Անդրկովկասյան հանրապետությունների թվով երկրորդ կոնֆերանսում: Նախկինում հրավիրված երկկողմ ու եռակողմ կոնֆերանսների նման այն էլ ընթացավ լարված ու անզիջում մթնոլորտում: Ադրբեջանը կրկին առաջնային պլան մղելով արտաքին ճակատում համատեղ հանդես գալու խնդիրը, հրաժարվեց մյուս հարցերի քննարկումից: Հայկական կողմն իր հերթին չհրաժարվելով դրանց քննարկումներից առաջարկեց բանաձև, որում ընդգծվում էր հանրապետությունների միջև մի շարք պայմանագրային բնույթի համաձայնությունների ստորագրում: Դրանցից էին նաև. …Ե) Հայտնի օտարածին բնակչության ազատ տեղաշարժ համապատասխան հանրապետության տարածքում՝ նրան աջակցություն ցույց տալով հողերի, ունեցվածքի և հանդակների փրկագնի տեսքով և այդ վերաբնակեցման պետական կազմակերպում, Զ) Համապատասխան հանրապետությունում ազգային փոքրամասնությունների իրավունքների ապահովում[2]: Քանի որ կոնֆերանսն այդպես էլ համաձայնության չեկավ հիմնական հարցերի շուրջ, որպիսիք էին սահմանային ու կոնֆեդերացիայի հարցերը, մյուս հարցերը, այդ թվում և փախստականականը այդպես էլ քննարկման առարկա չդարձան և մնացին առանց լուծման:

Այսպիսով, գտնվելով անմխիթար ու իրավազուրկ վիճակում Նուխու և Արեշի հայ փախստականները փրկության միակ ելքը տեսնում էին Հայաստան տեղափոխվելու մեջ: Չնայած որ Հայաստանն ու Ադրբեջանը հա-

[1] «Աշխատավոր», 1920, 7 ապրիլի:
[2] Վիրաբյան Վ., Հայաստանը Անդրկովկասյան Հանրապետությունների 1920թ. ապրիլյան վեհաժողովում, Երևան, 2004, էջ 33:

մածայնության էին եկել փախստականների տեղափոխման հարցում, սակայն Ադրբեջանը գաղթի իրականացման համար խոչնդոտներ էր հարուցում: Այդուհանդերձ, փախստականների Հայաստան տեղափոխվելու գործընթացը չնայած դանդաղ, բայց այնուամենայնիվ իրականացվում էր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Աշխատավոր», Թիֆլիս, 1919,1920:
2. «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1990:
3. «ՀՀ պառլամենտի օրենքները 1918-1920թթ.», Երևան, 1998:
4. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում, 1918-1920թթ., (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2003:
5. Միրզոյան Ս. «Փաստաթղթեր Նուխիի և Արեշի հայերի 1919-1920թթ. ջարդերի մասին», «Լրաբեր Հասարակական գիտությունների », Երևան, 1992:
6. «Յառաջ», Երևան, 1919,1920:
7. Վիրաբյան Վ., Հայաստանը Անդրկովկասյան Հանրապետությունների 1920թ. ապրիլյան վեհաժողովում, Երևան, 2004:
8. “Слово”, Тифлись, 1919.
9. Туманов М. “Дипломатическая история РА”, 1925.

ПРОБЛЕМА ПЕРЕСЕЛЕНИЯ АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ ИЗ АЗЕРБАЙДЖАНА В АРМЕНИЮ (МАЙ 1919Г. – МАЙ 1920Г.)

Юрик Гулян
кандидат исторических наук, доцент

РЕЗЮМЕ

Находясь в безысходном и бесправном положении, под постоянной угрозой физического истребления, армянские беженцы из Нухи и Ареша единственный выход в сложившейся ситуации видели в переселении в Армению. Проблема армянских беженцев находилась в центре внимания правительства РА, которое посчитало целесообразным последние части армянского населения переселить в Армению. Переговоры по вопросу переселения армянских беженцев на Родину вел непосредственно дипломатический представитель РА в Азербайжане Т.Бекзадян. Несмотря на то, что стороны пришли к соглашению по вопросу переселения армянских беженцев в Армению, однако, на деле Азербайджан чинил всевозможные препятствия, направленные на срыв иммиграции.

Проблема беженцев не была разрешена и в апреле 1920г. на состоявшейся в Тифлисе конференции Закавказских республик. Впрочем, следует заметить, что процесс переселения в Армению, несмотря на медленный ход, тем не менее осуществлялся.

THE PROBLEM OF THE ARMENIAN REFUGEES MIGRATION FROM AZERBAIJAN

Yourik Ghulyan
Candidate of History, Associate professor

SUMMARY

Having been in inconsolable state and under the constant threat of the enemy the refugees of Noukhi and Aresh the only salvation chance saw in moving to Armenia. As fast as the Armenian refugees problem had always been in the focus of attention of RA government, the latter decided to emigrate the last survivors of Armenians. For that reason the negotiations with the Azerbaijan government were directly conducted by T.Bekzadyan, the diplomatic representative of the RA. Both sides hadn't come to an agreement on the point, some practical steps were taken though. Azerbaijan put a great number of obstacles in the process of emigration.

The refugee problem wasn't solved later either at the Tbilisi conference of the Transcauscasion republics in April of 1920.

Nevertheless, the process of the refugees migration to Armenian though too slow was being realized.

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԻԱՑՈՒՄԸ ՀԱԽՀ-ԻՆ

Կարեն Խաչատրյան
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

1920 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդայնացումից հետո Սյունիք-Զանգեզուրի երկրամասը շարունակում էր պահպանել ինքնուրույնությունը: Դեռևս 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում ՌՍԴԽՀ կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված համաձայնագրով Զանգեզուրը (Ղարաբաղի ու Նախիջևանի հետ միասին) հայտարարվեց «վիճելի տարածք», օրինականացվեց վերջիններիս զինագրավման փաստը խորհրդային Կարմիր բանակի զորամասերի կողմից: Դրանով, սակայն, երկրամասի բնակչության նկատմամբ իրականացվող բռնությունները չդադարեցին: 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Զանգեզուրի մի շարք շրջաններում, ինչպես նաև Կապանում ու Սիսիանում հակաբոլշևիկյան ապստամբություններ բռնկվեցին: Գարեգին Նժդեհը, որը հուլիսի սկզբին բոլշևիկների Գորիս ներխուժելուց հետո ստիպված էր կռիվներով քաշվել դեպի Խուստուփ լեռը, հոկտեմբերի կեսերին գլխավորեց համազանգեզուրյան ապստամբությունը: Նոյեմբերի 14-ին Նժդեհը ապստամբների անունից վերջնագիր ներկայացրեց Կարմիր բանակի հրամանատարությանը, դրանում պահանջվում էր դադարեցնել բռնությունները և հեռանալ Զանգեզուրի սահմաններից: Վերջնագիրը մնաց անպատասխան, իսկ ապստամբներին ճնշելու կարմիրբանակային ստորաբաժանումների փորձերը հաջողություն չունեցան: Նոյեմբերի 21-ին զանգեզուրցիներին հաջողվեց ազատագրել Գորիս կենտրոնը, մինչև ամսվա վերջը թուրք-թաթարական և կարմիր զորքերի զինագրավումից ազատագրվեց ամբողջ Զանգեզուրը:

Երկրամասը կառավարելու համար Գ. Նժդեհի անմիջական ղեկավարությամբ ստեղծվեց Զանգեզուրի գյուղացիության ժամանակավոր խորհուրդ: Թերահավատ վերաբերվելով Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի՝ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի հանրապետության մաս համարելու»

մասին որոշմանը[1], ինչպես նաև այն փաստին, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը Զանգեզուրը ճանաչել էր ՀՍԽՀ կազմում, 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան համագումարում երկրամասը հռչակվեց ինքնավար՝ քանի դեռ քաղաքական իրադրությունը հնարավորություն չի ընձեռի Հայաստանի Հանրապետությանը միանալու համար: Սյունիք-Զանգեզուրի սպարապետ նշանակվեց Գ. Նժդեհը:

Զանգեզուրի ինքնուրույնությունը լրջորեն անհանգստացնում էր տարածաշրջանում գործող բոլշևիկյան գործիչներին. 1921 թ. հունվարի 23-ին Գ. Օրջոնիկիձեն շտապում է Բաքվից հեռագրել Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ - Կենտկոմ, պատճենը՝ Վ. Լենինին, Լ. Տրոցկուն և Ի. Ստալինին, այն մասին, թե իբր զանգեզուրցիներին Թավրիզից աջակցում են անգլիացիները, «որոնք պատրաստվում են հարվածել մեզ դաշնակների օգնությամբ՝ Զանգեզուրի միջոցով»: Օրջոնիկիձեն նշում է, որ Դրոյի հետ հանգամանալից զրույցից հետո ինքը համոզված է, որ «եթե անգամ հաջողվի Հայաստանի համար թուրքերից կորզել 1914 թ. սահմանները (ինչը հազիվ թե հաջողվի), ապա այդ դեպքում էլ Զանգեզուրը մնալու է հակահեղափոխության հենադաշտը»: Օրջոնիկիձեն Զանգեզուրը ռազմական ներխուժմամբ խորհրդայնացնելու կողմնակից էր, սակայն Մոսկվային հայտնում է, որ «ճանապարհների անանցանելիության պատճառով Ադրբեջանի կողմից ռազմական գործողություններ ձեռնարկել Զանգեզուրի դեմ ներկայումս անհնար է»:[2]

1921 թ. ձմռանը 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը փորձում է բանակցությունների միջոցով հանգուցալուծել Զանգեզուրի խորհրդայնացման խնդիրը: Այդ նպատակով փետրվարի 2-ին Գարեգին Նժդեհի մոտ Գորիս դիվանագիտական առաքելությամբ ժամանում է 11-րդ Կարմիր բանակի և Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների միացյալ պատվիրակությունը՝ Գրիգոր Վարդանյանի գլխավորությամբ: Բանակցությունները սկսելուց առաջ վերջինս Նժդեհին փոխանցում է Դրոյի նամակը: 1921 թ. հունվարի 21-ին Բաքվում գրած այդ նամակում նշելով, որ առաջիկայում Մոսկվայում գումարվելիք խորհրդաթուրքական կոնֆերանսում Հայաստանի սահմանների հարցը կլուծվի Հայաստանի օգտին,

[1] «Կոմունիստ», Երևան, դեկտեմբերի 7, 1920, թիվ 2:
[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), միկրոժապավենների հավաքածու 1, գ. 3, թ. 12:

Դրոն Նժդեհին համոզում է ընդունել խորհրդայնացման առաջարկը: Դրոն «վստահ էր», որ Մոսկվայի կոնֆերանսը «կապացուցի, որ Խորհրդային Ռուսաստանը պաշտպանելու է հայ աշխատավորության շահերը»[1]: Ավաղ, Դրոն չէր կարող կռահել, թե որքան մեծ կորուստներ է կրելու հայությունը Մոսկվայի ռուս-թուրքական «բարեկամության պայմանագրով»:

Նժդեհը չէր կիսում Դրոյի լավատեսական հույսերը, նա մերժում է ինչպես նրա, այնպես էլ խորհրդային պատվիրակության առաջարկությունը՝ երկրամասի խորհրդայնացումն ընդունելու մասին: Բանակցությունների ընթացքում Նժդեհը շեշտում է, որ դեմ չի Զանգեզուրի խորհրդայնացմանը, եթե խորհրդային իշխանությունը ոչ թե խոսքով, այլ գործնականում ապացուցի իր արդար և բարի վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Հերքելով Անտանտի հետ իր համագործակցության մասին խորհրդային կողմի մեղադրանքները, Նժդեհը Զանգեզուրի խորհրդայնացման հետևյալ նախապայմաններն է դնում. հեռացնել քեմալական զորքերը Հայաստանի զինագրաված շրջաններից, Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը փաստացի միացնել Հայաստանին, ազատել հայ մտավորականներին խորհրդային բանտերից[2]: Այս ամենի մասին է նշվում նաև 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Հեկկերին ուղղված Գարեգին Նժդեհի նամակում: Այն, ինչպես նաև Սյունիքի կառավարության կողմից փետրվարի 4-ին կազմված բողոք-հուշագիրը՝ ուղղված ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինին, խորհրդային պատվիրակությանն է հանձնում Սյունիքի կառավարության նախագահ Գեդեոն Տեր-Մինասյանը: Հուշագրում Խորհրդային Ռուսաստանի իշխանություններից և Կարմիր բանակի հրամանատարությունից պահանջվում է հանգիստ թողնել Զանգեզուրը և նրա բնակչությանը, որովհետև «Արևելքի Ձեր քաղաքականությամբ Հայաստան կոչված երկիրը կատարյալ դժոխքի եք վերածել»[3]:

Նժդեհին ուղղված պատասխանում Ա. Հեկկերը մերժում է քեմալաբոլշևիկյան հակահայկական դաշինքի ձևավորման փաստը, շեշտում, որ Մոսկվայի կոնֆերանսը նպաստավոր ընթացք է տալու հայկական հարցի լուծմանը: 1921 թ. փետրվարի 24-ին Հեկկերին ուղղված հերթական նամակում Նժդեհը հեռատես պատասխան է տալիս. «Միամիտ չլինենք են-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 29:
[2] Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, 1991, էջ 131-134:
[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 70, թ. 32-34:

թաղրելու, որ Մոսկվայի Ձեր կոնֆերանսը մուկ չի ծնելու: Ձեր ցանկությամբ տաճիկները մտան Հայաստան, սակայն Ձեր հրամանով նրանք չպիտի հեռանան»[1]:

Գիտակցելով, որ հաջողությունների չհասնելով բանակցությունների միջոցով Կարմիր բանակի հրամանատարությունը ձգտելու է ռազմական գործողությունների միջոցով խորհրդայնացնելու Զանգեզուրը, երկրամասի անվտանգությունն ապահովելու նպատակով, 1921 թ. փետրվարի 16-ին Նժդեհի զինակից Յապոնի (Հ. Պարոնյան) ջոկատը գրավում է Դարալագյազը (Վայոց Ձոր): Կարմիր բանակի զորամասերը լուրջ դիմադրություն ցույց չտվեցին, իսկ մոտ 400 կարմիրբանակայիններ գերի հանձնվեցին: Դարալագյազը հռչակվեց Զանգեզուրի անբաժան մասը:

Զանգեզուրում մեծ ոգևորություն առաջացրեց Երևանում փետրվարյան ապստամբության հաղթանակի լուրը: 1921 թ. մարտի 5-ին Յապոնի ջոկատը թեև ազատագրեց Նոր-Բայազետը (Գավառ), սակայն Հայրենիքի փրկության կոմիտեին օգնության հասնելու և նրա զինված ուժերին միանալու բոլոր ջանքերն ապարդյուն անցան: Այդուհանդերձ, պետք է նշել, որ փետրվարյան ապստամբության պարտությունից հետո, երբ ապստամբները և հազարավոր փախստականներ Հայրենիքի փրկության կոմիտեի գլխավորությամբ Բաշ-Գյառնիով (Գառնի) և Դարալագյազով (Վայոց Ձոր) նահանջեցին դեպի Զանգեզուր, նահանջի միջանցքի անվտանգությունն ապահովված էր Գարեգին Նժդեհի զինված ուժերի կողմից: Դա թերևս միակ իրական օգնությունն էր, որ կարողացավ ցույց տալ Հայրենիքի փրկության կոմիտեին և ապստամբներին ինքնավար Սյունիքը: Ինքը՝ Նժդեհը, նշում է, որ ազատ Սյունիքը «հոգեբանական հրահրիչներ Հայաստանի փետրվարյան համաժողովրդական ընդվզումի», և ընդգծում, որ պետք էր «փրկության կամուրջ հանդիսանալ բոլշևիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտավորականության համար»[2]:

Մեկ այլ առիթով Նժդեհը նշում է. «Երևանի ապստամբությունը նպատակ չուներ երկար ժամանակով վերականգնելու հանրապետական Հայաստանը: Ավելի պարզ էր նրա առարկան՝ փշրել խորհրդային բանտերի դռները, ուր հոգևարում էր հայ մտավորականությունը», իսկ այնուհետև՝ ուղի բացեր «մղվելու դեպի Սյունիք»[3]:

---

[1] Գևորգյան Վ., նշվ.աշխ., էջ 135-139:
[2] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001, էջ 236, 238:
[3] Գարեգին Նժդեհ, Ազատ Սյունիք, «Հայրենիք», 1925, թիվ 9, էջ 84:

Ապրիլի սկզբին Հայրենիքի փրկության կոմիտեի իշխանությունը տապալելուց, փետրվարյան ապստամբությունը ճնշելուց և Հայաստանի կենտրոնական շրջաններում խորհրդային իշխանությունը վերականգնելուց հետո Կարմիր բանակը շարունակեց ապստամբների հետապնդումը և ապրիլի 15-ին գրավեց Դարալագյազը: Յապոնի ջոկատը մարտերով նահանջում է դեպի Գորիս: Հաջորդ իսկ օրը, ապրիլի 16-ին հրապարակվում է Երևանյան խմբավորման հրամանատար Մ. Վելիկանովի հրամանն ուղղված կարմիր զորքերի մարտիկներին: Դրանում հրամայվում է շարունակել դաշնակների հետապնդումն ու ջախջախումը և կարճ ժամանակում դուրս գալ Զանգեզուրի սահմաններին: Նշենք, որ ապրիլի կեսերին 11-րդ բանակի զորամասերին հաջողվեց ճնշել նաև Նժդեհի զինակից Թևանի (Ստեփանյան) ղեկավարած ապստամբությունը Ղարաբաղում, Թևանի ջոկատը նույնպես նահանջում է դեպի Զանգեզուր:

Վրաստանի խորհրդայնացումից և Հայաստանում փետրվարյան ապստամբությունը ճնշելուց հետո 1921 թ. գարնանը Զանգեզուրը մնացել էր անկախության միակ կղզյակը Անդրկովկասում և իր վրա սևեռել բոլշևիկների ամբողջ ուշադրությունը և ռազմական ներուժը: Ստեղծված նոր իրադրության պահանջով Տաթևում հրավիրված համազանգեզուրյան 2-րդ համագումարը ապրիլի 27-ին ինքնավար Սյունիքը հռչակում է Լեռնահայաստան և վարչապետ նշանակում Գ. Նժդեհին, վերջինս պարգևատրվում է «Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով: Շատ չանցած, հունիսի 1-ին, Լեռնահայաստանը վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, Սիմոն Վրացյանի վարչապետությամբ, Նժդեհը պահպանում է զինվորական նախարարի և սպարապետի պաշտոնները:

Զանգեզուրի ուղղությամբ կարմիր զորքերի ապրիլյան հարձակումը մայիսի սկզբին կրկին դադարեցվում է. խորհրդային կողմը վերստին որոշում է դիմել բանակցությունների՝ խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով: Մայիսի 12-ին Սիսիանի Ղալաջուղ գյուղում խորհրդային (ՀՍԽՀ ներկայացուցիչ՝ Արտաշես Կարինյան և Կարմիր բանակի՝ Վ. Մելնիկով) և Լեռնահայաստանի (Գ. Տեր-Մինասյան, Մ. Մինասյան և Լ. Մինասյան) պատվիրակությունների միջև սկսված բանակցությունները, ինչպես և նախորդները, ավարտվում են անարդյունք[1]: 1921 թ. մայիսի 23-ին տեղեկացնելով այդ մասին Ա. Հեկկերին, ՀՍԽՀ ժողկոմխորհի նա-

[1] Տե՛ս Բաղալյան Ա., Լեռնահայաստանի հերոսամարտը, «Դրօշակ», մարտի 12-25, 1998, թիվ 5, էջ 28-29:

խագահ և միաժամանակ ռազմգործժողկոմ Ալեքսանդր Մյասնիկյանը խորհուրդ է տալիս նրան համալրել Զանգեզուրի սահմաններին տեղակայված խորհրդային զորամասերը[1]:

Հերթական բանակցությունների ձախողումը ստիպում է ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյին Զանգեզուրը խորհրդայնացնելու նպատակով դիմել վճռական քայլերի: Բյուրոյի կողմից 1921 թ. հունիսի 3-ին ընդունված «Զանգեզուրը հակահեղափոխականներից մաքրելու մասին» որոշման մեջ նշվում է. «1. Զանգեզուրը լիկվիդացնել հունիսի վերջին: 2. Անմիջապես անցնել ռազմական գործողությունների նախապատրաստմանը: 3. Դրա հետ մեկտեղ հանձնարարել Հայաստանի կառավարությանը հռչակագիր ուղարկել Զանգեզուր: 4. Միջոցներ ձեռնարկել Մեղրին անմիջապես գրավելու համար»[2]:

Կատարելով որոշման 3-րդ կետը, ՀՍԽՀ կառավարությունը հունիսի 13-ին ևս մեկ անգամ դիմում է Զանգեզուրի կառավարությանը՝ պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումը ընդունելու կոչով: Հռչակագրում նշվում է նաև, որ Զանգեզուրը և Ղարաբաղը լինելու են Խորհրդային Հայաստանի կազմում[3]:

Զանգեզուրի խաղաղ խորհրդայնացմանը կողմնակից էր նաև Հ.Յ. Դաշնակցության Գերագույն մարմինը: Վերջինիս որոշմամբ Վահան Փափազյանը 1921 թ. մայիսի 26-ին Բեռլինից Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմ, ուղարկած նամակում առաջարկում է բանակցություններ սկսել երկու կուսակցությունների միջև՝ միմյանց փոխհարաբերությունները ճշտելու, Զանգեզուրի խորհրդայնացման հարցը խաղաղ ճանապարհով լուծելու, Դաշնակցությանը հուզող մի շարք այլ հարցերի վերաբերյալ ՌԿ(բ)Կ դիրքորոշումը պարզելու համար: Նամակում հույս է հայտնվում, որ բոլշևիկյան կուսակցությունը սատար կկանգնի հայկական հարցի արդարացի լուծմանը[4]:

1921 թ. հունիսի 7-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված նամակում Հ.Յ. Դաշնակցության հետ բանակցություններ վարելու օգտին է արտահայտվում Ռուսաստանում ՀՍԽՀ ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը, նա նշում է նաև, որ հավանական է դրանք նպաստեն Զանգեզուրի հարցի

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4004, g. 1, գ. 42, թ. 1:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, գ. 1187, թ. 13:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, g. 3, գ. 61, թ. 26:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, g. 1, գ. 191, թ. 5-8:

խաղաղ լուծմանը[1]: Հ.Յ. Դաշնակցության հետ բանակցությունների մեջ մտնելու անհրաժեշտության մասին է նշվում նաև Ռուսաստանի արտգործժողկոմատի կոլեգիայի անունից ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղղված արտգործժողկոմ Գ. Չիչերինի 1921 թ. հունիսի 10-ի նամակում[2]:

1921 թ. հունիսի 10-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն ընդունում է Հ.Յ. Դաշնակցության Գերագույն մարմնի առաջարկությունը և բանակցությունների անցկացման վայր նշանակում Ռիգան, իսկ խորհրդային պատվիրակության անդամներ՝ Բեռլինում Ռուսաստանի ներկայացուցիչ Ադոլֆ Իոֆֆեին (որպես ՌԿԿ Կենտկոմի ներկայացուցիչ) և Սահակ Տեր-Գաբրիելյանին[3]:

Հ.Յ. Դաշնակցության հետ բանակցություններ վարելու մտադրությանը դեմ հանդես եկավ ՀՍԽՀ կառավարությունը և ՀԿ(բ)Կ Կենտկոմը: Վերջիններիս անունից 1921 թ. հունիսի 22-ին Տեր-Գաբրիելյանին և ՌԿ(բ)Կ - Կենտկոմ ուղղված հեռագրում Ա. Մյասնիկյանը նշում է, որ Հ.Յ. Դաշնակցության մայիսի 26-ի առաջարկությունը «պետք է անպատասխան թողնել… անթույլատրելի է նաև Հայաստանի ներկայացուցչի մասնակցությունը բանակցություններին»: Խորհրդային Հայաստանի իշխանությունների նման դիրքորոշումը Մյասնիկյանը բացատրում է նրանով, որ այն դեպքում, երբ իրենք ջանք չեն խնայում Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար, ապստամբները դավադրաբար հարձակվել են Դարալագյազում գտնվող կարմիր զորքերի վրա: ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահը հանդես է գալիս վճռական հայտարարությամբ. «Զանգեզուրի հարցն այսուհետև պետք է լուծվի բացառապես պատերազմով»[4]: Դաշնակցության հետ բանակցություններ վարելու որոշմանը դեմ էր նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոն: Հունիսի 30-ին Կենտկոմ ուղարկած դիմումում բյուրոն իր աջակցությունն էր հայտնում Հայաստանի իշխանությունների դիրքորոշմանը:[5]

ՌԿ(բ)Կ Կենտկոմի հանձնարարությամբ Մյասնիկյանի դիմումի վերաբերյալ կարծիք է հայտնում Վահան Տեր-Վահանյանը, որը նույնպես նշանակվել էր Ռիգայի բանակցություններում խորհրդային պատվիրակության անդամ: Հունիսի 25-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո ուղղված նամա-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 2-3:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 10:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 1:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 17:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, g. 2, գ. 1187, թ. 14:

կում Տեր-Վահանյանը Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը ո-րակում է «քաղաքականապես սխալ», նա միանշանակ կողմ է արտա-հատվում Հ.Յ. Դաշնակցության հետ բանակցություններին[1]: Նույն օրը Կենտկոմի քաղբյուրոն վերահաստատում է բանակցություններ վարելու անհրաժեշտության մասին նախկինում ընդունած իր որոշումը:[2]

Մինչ Մոսկվայում մտորում էին Հ.Յ. Դաշնակցության հետ բանակ-ցություններ սկսելու նպատակահարմարության հարցի շուրջը, Հայաս-տանում իրադարձությունները զարգանում էին կայծակնային արագութ-յամբ: Երբ ՀՍԽՀ իշխանությունները դեռևս սպասում էին զանգեզուրցի-ներին հունիսի 13-ին ուղղված վերը նշված դիմումի պատասխանին, Նժդեհի զինված ուժերը ռազմական գործողություններ ծավալեցին կար-միր զորքերի դեմ և հունիսի 15-ին, ինչպես նշվեց, գրավեցին Դարալագ-յազը: Որակելով դա որպես դավադիր քայլ և բանակցությունների վիժե-ցում, խորհրդային իշխանությունը դիմեց վճռական գործողությունների: 11-րդ բանակի Երևանյան զորախմբի հրամանատար Մ. Վելիկանովը 1921 թ. հունիսի 18-ին ապստամբությունը ճնշելու մասին հերթական հրամանն է արձակում[3]: Դեռևս հունիսի 6-ին, ի կատարումն Կովկասյան բյուրոյի հունիսի 3-ի որոշումների, նման հրաման էր արձակել նաև Ադր-բեջանում տեղակայված Կովկասյան առանձին բանակի հրամանատա-րությունը: Այսպիսով, Կարմիր բանակը Զանգեզուրի վրա հարձակվելու էր ինչպես արևմուտքից, այնպես էլ արևելքից:

Հունիսի 20-ին հարձակումը սկսվում է: Ա. Մյասնիկյանի և Մ. Վելիկա-նովի կողմից կարմիր զորքերին ուղղված «Պատգամներում» և «Հրաման-ում» կոչ է արվում անխնա լինել՝ ավազակ ապստամբների, և հոգատար՝ խաղաղ բնակչության նկատմամբ: Որպեսզի ռուս կարմիրբանակայիններ-ին ավելի պարզ լինեն իրենց առջև դրված խնդիրները, Նժդեհի ապս-տամբական ուժերը համեմատվում են «մախնոյական խմբերի» հետ: Ինչ-պես ժամանակին Հայաստանը, այնուհետև Վրաստանը, հետո նաև Երևանը՝ Զանգեզուրը նույնպես հայտարարվում է «համակովկասյան հա-կահեղափոխության որջը», որի ջախջախումը կարևորվում է համակով-կասյան շահերով[4]:

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 12:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 11:
[3] «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1980, թիվ 2, էջ 66-67:
[4] Տե՛ս Մյասնիկյան Ա., Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 339-342:

1921 թ. հունիսի 26-ին Կարմիր բանակը մտնում է Դարալագյազ, հունիսի 30-ին՝ Սիսիան: Վերջինիս անկումից հետո Գարեգին Նժդեհը որոշում է դադարեցնել պայքարը և Գորիսից նահանջում դեպի Կապան, պատգամելով գորիսցիներին՝ չդիմադրել հայ-ռուսական կարմիր զորքերին և անխնա լինել՝ եթե հարձակում ձեռնարկեն ադրբեջանական ջոկատները:

Հուլիսի 2-ին Գորիս են մտնում Կովկասյան առանձին բանակի և Երևանյան խմբավորման զորամասերը: Հուլիսի 7-ին նրանք արդեն Կապանում էին՝ ապստամբական ուժերը Նժդեհի գլխավորությամբ նախօրոք նահանջել էին դեպի Մեղրի: 1921 թ. հուլիսի 13-ին Կարմիր բանակի զորամասերը մտնում են Մեղրի, Զանգեզուրի խորհրդայնացման գործընթացն այդպիսով ավարտված էր:

Հայաստանում գտնվելու վերջին օրերին Նժդեհը դիմում է հղում Հայիեղկոմին. մի շարք պահանջներ և խորհուրդներ ներկայացնելով Հայաստանի խորհրդային իշխանություններին (որպեսզի հայ ժողովուրդը նորից չապստամբի խորհրդային իշխանության դեմ), նա նաև շեշտում է, որ ադրբեջանցիները չպետք է վերադառնան Զանգեզուրի իրենց կողմից լքված գյուղերը, Զանգեզուրը և Ղարաբաղը մեկընդմիշտ պետք է լինեն Հայաստանի կազմում: Զգուշացնելով, որ ինքն ընդմիշտ չի հեռանում Լեռնահայաստանից, այլ կվերադառնա՝ եթե «Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հողի վրա ոտք դնողը», Գարեգին Նժդեհը թողնում է Հայաստանի սահմանները և մի քանի հազար փախստականների հետ միասին անցնում Արաքսի իրանական ափը[1]:

1921 թ. հուլիսի 16-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշինը (Սրապիոնյան) շտապում է հեռագրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ, Գ. Չիչերինին և Ս. Տեր-Գաբրիելյանին. «Զանգեզուրը միանգամայն լիկվիդացիայի է ենթարկվել: Դաշնակցականների հետ բանակցությունների վարելը Հայաստանի կոմկուսի Կենտկոմը համարում է աննպատակահարմար և, նույնիսկ, վնասակար, նամանավանդ, որ… երկրի ներսում մենք նրանց վերջնականապես ոչնչացնում ենք»[2]: Լուկաշինը դեռևս տեղյակ չէր, որ հուլիսի 8-ին Ռիգայում սկսված բանակցություններն արդեն իսկ ավարտվել էին, իսկ հուլիսի 14-ին կողմերի միջև նախաստորագրվել էին մի շարք փաստաթղթեր:

---

[1] Գևորգյան Վ., նշվ. աշխ., էջ 173-175:
[2] ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 191, թ. 29:

Համաձայն դրանց խորհրդային պատվիրակությունը ՌԿ(բ)Կ-ի անունից համաձայնվեց, որ հայկական հարցը լուծված կհամարի միայն այն ժամանակ, «եթե Հայաստանը տարածքային առումով միավորված լինի»: Ըստ փաստաթղթի, հայկական հարցը լուծելու նպատակով ՌԿ(բ)Կ-ն պարտավորվում է ազդել Թուրքիայի վրա՝ «Հայ ժողովրդի քաղաքական ազատ գոյության համար բավարար տարածք (ելքով դեպի ծով) տրամադրելու համար», իսկ եթե Միացյալ Հայաստան ստեղծելու համար պահանջվեր ապախորհրդայնացնել Խորհրդային Հայաստանը՝ պատրաստ լինել դիմելու այդ քայլին[1]: Խորհրդային պատվիրակությունը հանդես է գալիս նաև գրավոր հայտարարությամբ, որում նշվում է, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմը պարտավորվում է միջնորդել ՀԿ(բ)Կ Կենտկոմի առջև՝ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցության գործունեությունը Հայաստանում օրինականացնելու և նրա հետ համագործակցելու համար[2]:

Նախաստորագրած փաստաթղթերը Ռիգայից ուղարկվում են Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի հաստատմանը: Փաստաթղթերի հետ միասին խորհրդային պատվիրակության ղեկավար Ա. Իոֆֆեն ՌԿ(բ)Կ Կենտկոմ և արտգործժողկոմ Գ. Չիչերինին ուղարկում է փաստաթղթերի վերաբերյալ իր հիմնավորումները: Դրանցում նա պնդում է, որ փաստաթղթերն անհրաժեշտ է անպայման հաստատել, Իոֆֆեն հուշում է, որ այդ դեպքում. կբարձրանա Խորհրդային Ռուսաստանի վարկանիշը Արևմուտքում, քաղաքացիական պատերազմը Զանգեզուրում կդադարի, եթե Զանգեզուրը և Ղարաբաղը միացվեն Խորհրդային Հայաստանին՝ հայ ժողովրդի վստահությունը Ռուսաստանի նկատմամբ կամրապնդվի: Իոֆֆեն շեշտում է նաև, որ «միաժամանակ լավ դաս կտանք Մուստաֆա Քեմալին և կապացուցենք նրան, որ մեր թիկունքում քաղաքականություն վարել անթույլատրելի է, և մեր նկատմամբ թշնամական վերաբերմունքի դեպքում՝ նրան օգնություն տրամադրել ամենևին էլ մտադիր չենք»: Նամակի վերջում Ա. Իոֆֆեն եզրակացնում է. «Ահա թե ինչու, մենք… համաձայնվեցինք նախաստորագրել կցվող փաստաթղթերը՝ այսինքն ցույց տվեցինք, որ անձամբ մենք դրանք ստորագրելու կողմնակից ենք, և ահա թե ինչու, ես Ձեզ համառորեն և վճռականորեն խորհուրդ եմ տալիս համաձայնվել մեզ հետ և պաշտոնապես թույլ տալ ստորագրել

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 36:
[2] Նույն տեղում, թ. 33:

այդ փաստաթղթերը»[1]:

Սակայն Զանգեզուրի խորհրդայնացումից հետո, երբ Հ.Յ. Դաշնակցությունն այլևս չէր կարող շահարկել Զանգեզուրի հարցը և այն կռվան դարձնել՝ բոլշևիկներից զիջումներ կորզելու համար, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1921 թ. հուլիսի 26-ին որոշում է «Վճռականորեն մերժել խորհրդային պատվիրակության կողմից Ռիգայում նախաստորագրված համաձայնագրի նախագիծը»[2]: 1921 թ. հուլիսի 28-ին Իոֆֆեն ստանում է Չիչերինի ծածկագիրը, որտեղ ՌՍԴԽՀ արտգործժողկոմը նրան տեղեկացնում է քաղբյուրոյի հուլիսի 26-ի որոշման մասին և շեշտում, որ «Անթույլատրելի էր արծարծել Թուրքահայաստանի հարցը, քանի որ մենք ամուր կանգնած ենք Մոսկվայի պայմանագիրը կատարելու դիրքերում»: Նա նշում է նաև, որ նախաստորագրած փաստաթղթերը չպետք է մնան դաշնակների մոտ, որպեսզի «ոչ մի հետք չմնա»[3]: Նույն օրը ՌԿ(բ)Կ - Կենտկոմ և Չիչերինին ուղղված պատասխան նամակում Իոֆֆեն նշում է, որ իրեն մեղավոր չի ճանաչում նախաստորագրած փաստաթղթերի համար, որովհետև իր բազմաթիվ խնդրանքները՝ բանակցություններ վարելու համար ստանալու ՌԿ(բ)Կ Կենտկոմի հրահանգները և ցուցումները, թողնվել են անպատասխան: Նա «ցավով» նշում է, որ այլևս «հետքերը վերացնել հնարավոր չէ», և զարմանք հայտնում, թե ինչո՞ւ Մոսկվան չի ցանկանում փոխշահավետ համաձայնության գալ Հ.Յ. Դաշնակցության հետ և փոխել իր քաղաքականությունը հայկական հարցում՝ «Հայկական հարցը համարելով սեփական շահերի հարցը»[4]: Սակայն խորհրդային դիվանագետ Ա. Իոֆֆեի միանգամայն ճիշտ դիրքորոշումը որոշիչ չէր կարող լինել, բոլշևիկյան կուսակցությունը շարունակում էր վարել ոչ հայանպաստ քաղաքականություն՝ այն շղարշելով համաշխարհային հեղափոխության շահերով:

Այդուհանդերձ, Գարեգին Նժդեհի գլխավորությամբ զանգեզուրցիների անհավասար, սակայն հերոսական պայքարը նպաստեց, որպեսզի ռազմավարական առումով կարևոր նշանակություն ունեցող հայկական երկրամասը կազմի Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը:

---

[1] Նույն տեղում, թ. 20-27:
[2] Նույն տեղում, թ. 30:
[3] Նույն տեղում, թ. 37:
[4] Նույն տեղում, թ. 37-38:

СОВЕТИЗАЦИЯ ЗАНГЕЗУРА И ПРИСОЕДИНЕНИЕ К СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Карен Хачатрян
кандидат исторических наук, доцент

РЕЗЮМЕ

После советизации Республики Армения в конце 1920 г. Зангезурская область Армении сохраняла свою самостоятельность. Несмотря на неоднократные заверения советской власти, что приняв советизацию область останется в составе Советской Армении, зангезурцы во главе с Гарегином Нжде продолжили национально-освободительную борьбу. С весны 1921 г. советская сторона многократно пыталась решить вопрос советизации мирным дипломатическим путем, но успеха не имела. С середины июня советские войска начали широкомасштабное наступление на Зангезур, которое принесло окончательный успех, область была советизирована и присоединена к Советской Армении.

THE SOVIETIZATION AND UNION OF ZANGEZUR WITH SOVIET ARMENIA

Karen Khachatryan
Candidate of Historical Sciences, Associate Professor

SUMMARY

After the sovietization of the Repuplic of Armenia at the end of 1920 the region of Zangezur in Armenia maintained its independence. In spite of the general assurance of the Soviet power that having adopted Sovietization the region will keep remaining in the union of the Soviet Armenia, the people of Zangezur at the head of Garegin Nzhdeh continued the national-liberational struggle. Since the spring of 1921 the Soviet side had made many attempts to settle the problem of Sovietization in a peaceful-diplomatic way, but their efforts were in vain. In the middle of June the Soviet army started a widespread attack on Zangezur, which ended in an eventual success, the region was sovietized and joined the Soviet Armenia.

РОЛЬ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИННЫХ ПРОЦЕССОВ В РЕГУЛИРОВАНИИ НАЦИОНАЛЬНЫХ ВОПРОСОВ В НИЖЕГОРОДСКОЙ ОБЛАСТИ

Ерануи Маргарян

За последнее десятилетие в Нижнем Новгороде произошли коренные изменения во всех сферах жизнедеятельности, в политической, экономической, социальной, культурной и в том числе в межнациональных отношениях. Регион развивается как во внешней, так и во внутренней среде. Внешний и внутренний имидж имеют свои составляющие, по которым определяется развитие региона. В Нижнем Новгороде проводятся различные программы, мероприятия которые нацелены на расширение культурного пространства города как инструмента развития имиджа региона, к ним относятся: «Столица Нижний», «Диалог культур и межрелигиозное сотрудничество» и другие; также открываются национально-культурны общества, автономия, центры которые влияют на культурную политику самого региона, такие как: «Туган Як», «Якташлар», «Джерело», «ЦВИ ГИРШ», «Нижегородская армянская община», «Корейская община», «Дагестанская община» и другие[1].

Данные мероприятия и программы приводят к развитию территорий, привлекают внимание общественности к проблемам национальных отношений в регионе и способствуют интеграции России в Европу. Участие в них дают колоссальные ресурсы для развития культуры, толерантности страны в целом[2]. Благодаря участию в программах меняется восприятие имиджа и репутация регионов. Кроме того, меняется и отношение самих жителей к своему городу. Ведь Нижний Новгород - является одним из крупнейших многонациональных и толерантных городов России.

Также хотелось бы рассмотреть наиболее крупные общины Нижегородской области, к которым относятся: Татарская, Еврейская и Азербайджанская, которые до сих пор проводят активную деятельность по национальным

---

[1] Правительство Нижегородской области (электронный ресурс)/электронные данные – официальный сайт - www.government.nnov.ru – заглавие с экрана.

[2] В Нижнем Новгороде начала работу Международная конференция диалог культур и межрелигиозное сотрудничество» (электронный ресурс)/ИА REGNUM – электронные данные – 07.09.06 -www.regnum.ru/news/700951.html – заглавие с экрана.

вопросам в регионе.

Татарская община Нижегородской области - население Нижегородской области составляет, по данным на 1 января 2001 года, 3 млн. 598,3 тыс. человек. Из них татар — 50 тыс. Большая часть татар проживает на юго-востоке Нижегородской области, в Краснооктябрьском, Пильнинском, Сергачском, Княгининском и Спасском районах[1].

Сейчас Нижегородские татары располагают опытом деятельности общественного движения «Туган як». Совместная деятельность областного общественного движения «Туган як», Региональной национально-культурной автономии татар Нижегородской области (РНКАТНО) и Духовного управления мусульман дает определенные положительные результаты. К таким результатам можно отнести[2]:

- Проведение таких общественно значимых мероприятий, как конкурсы, фестивали, вечера, посвященные творчеству выдающихся деятелей татарской культуры;
- Ежегодное проведение народного праздника Сабантуй в Нижнем Новгороде (где он получил статус общегородского) и в Дзержинске. В 2005 году праздник имел федеральный статус;
- Участие в дискуссиях СМИ по проблемам национальной школы;
- Участие в различных культурно-просветительских программах региона, в том числе в мероприятиях, проводимых органами народного образовании.

С 2004 года в регионе зарегистрирована Региональная национально-культурная автономия татар Нижегородской области (РНКАТНО)[3]. Региональная национально-культурная автономия татар Нижегородской области (РНКАТНО) является формой национально-культурного самоопределения и добровольной самоорганизации татар — граждан Российской Федерации, относящих себя к определенной этнической общности татар, для решения вопросов сохранения самобытности, родного языка и национальной культуры.

---

[1] Сайт национально-культурных объединений Нижегородской области (электронный ресурс)/официальный сайт – электронные данные -www.nizgar.ru – заглавие с экрана.

[2] Сайт национально-культурных объединений Нижегородской области (электронный ресурс)/официальный сайт – электронные данные -www.nizgar.ru – заглавие с экрана.

[3] Там же.

Таким образом, татарская община Нижегородской области является наиболее активным представителем этнической группы, которая проводит мероприятия, праздники, конференции, для развития национальной культуры, традиции, чтобы сохранился образ жизни, язык татарского народа совместно с органами региональной власти. Примером является национальный татарский праздник «Сабантуй», который уже давно перерос национальные рамки и стал общегородским, в котором принимают участие представители и других национальностей Нижнего Новгорода и области.

Азербайджанская община Нижегородской области – численность азербайджанцев в одном только Нижнем Новгороде (более 50 тыс.) уже сравнялась с численностью татар во всей области.

Нижегородские азербайджанцы в ноябре 2006 года зарегистрировали Местную национально-культурную автономию азербайджанцев Нижнего Новгорода (МНКАА НН). Задачи этих организаций — оказывать правовую поддержку мигрантам из Азербайджана, способствовать их интеграции в российскую культуру и защищать их от произвола чиновников и нападений фашиствующих группировок[1]. Нижегородские азербайджанцы, тесно связанные с другими мусульманскими народами, уже в течение долгого времени плодотворно сотрудничают с Духовным управлением мусульман, а также с Региональной национально-культурной автономией татар Нижегородской области. Совместно с Духовным управлением мусульман они выпускают газету азербайджанской общины «Аль-Хаят».

Таким образом, необходимо сказать, что азербайджанская община только начала свою организационную деятельность, но уже провела ряд важных мероприятий по улучшению жизнедеятельности азербайджанского народа. Развитию культуры, традиций народа а также гармонизация отношений с другими национальными сообществами.

Еврейская община Нижегородской области – общество еврейской культуры «ЦВИ ГИРШ» существует с 1989 года под названием «Клуб еврейской культуры», который стал первой еврейской организацией в

[1] Сайт национально-культурных объединений Нижегородской области (электронный ресурс)/официальный сайт – электронные данные -www.nizgar.ru – заглавие с экрана.

городе[1]. Цель общества – сохранение еврейских ценностей и ускорение процесса самоидентификации; дать людям возможность познакомиться с интереснейшей историей еврейского народа, с его традицией и культурным наследием, благодаря высокопрофессиональным лекциям и беседам, различным мероприятиям[2]. Общество организует крупные праздники и мероприятия, такие как Ханука, Пирум (»Пурим»), Холокост и другие, организуются концерты в крупнейших залах города, где собирается до тысячи человек.

Мероприятия[3]:

- «ЦВИ ГИРШ» известен своими культурными мероприятиями общегородского и регионального масштаба, прежде всего, ежегодными Фестивалями еврейской книги, проходящими регулярно с 1999 года.
- Выступление главного раввина России (ФЕОР) Берл Лазара на Международной конференции «Диалог культур и межрелигиозное сотрудничество».

Для того, чтобы понять как улучшается ситуация региона в политической, экономической, культурной и межнациональной обстановках, необходимо исследовать СМИ в контексте информационно-коммуникационных процессов в Нижнем Новгороде. Поэтому исследуем основные каналы распространения информации в регионе, к ним относятся: телевидение, газеты и журналы, Интернет.

Телевидение – является наиболее распространенным видом получения информации. Более 80% населения ежедневно смотрят телевизор. Телевизионные каналы можно разделить на государственные и местные. В Нижнем Новгороде вещают три местных телекомпании – «ННТВ» (Нижегородская теерадиостудия), «Сети НН», «Волга». ННТВ транслирует по всему региону четыре национальные программы: мусульманскую («Минарет»), еврейскую

[1] Из истории иудейской общины Н. Новгорода (электронные ресурсы)/электронные сведения – Нижний Новгород, 23.09.2002 - religio-nn.narod.ru/konfesio/j-hist.htm – заглавие с экрана.

[2] Там же.

[3] Из истории иудейской общины Н. Новгорода (электронные ресурсы)/электронные сведения – Нижний Новгород, 23.09.2002 - religio-nn.narod.ru/konfesio/j-hist.htm – заглавие с экрана.

(«Шалом»), православную («Источник жизни») и армянскую («Армянский коктейль»).

«Минарет» - является на данный момент единственной телевизионной программой в Нижнем Новгороде, которая освещает события исламского мира, является программа «Минарет», выходящая в эфир на областном канале ННТВ. «Минарет» - это культурно-просветительская программа, рассказывающая о традициях и обычаях мусульман, живущих на Нижегородчине[1]. Программа выходит более 10 лет и успела претерпеть несколько обновлений. Сегодня в передаче есть следующие рубрики: «новости ДУМНО», «события», «мир Ислама», «листая Коран», «вопрос-ответ»и другие.

Телепередача Духовного управления мусульман Нижегородской области «Минарет», выходящая на телеканале ННТВ, заняла второе место на конкурсе «Многоликая Россия» в номинации «Лучшее специализированное национальное издание, теле- и радиопрограмма»[2].

«Шалом» - является едва ли не единственной постоянной еврейской по содержанию телепередачей в России, она умудрилась продержаться на экране целых 10 лет. В ней рассказывается о еврейской религии, культуре и традициях**,** также показывается жизнь нижегородской еврейской общины. Кроме этого в городе – несколько еврейских организаций: синагога, Еврейский культурный центр «Цви Гирш», благотворительный центр «Хэсед Сара», детский сад «Ган Менахем», еврейская школа «Ор Авнер» и другие[3].

«Источник жизни» – православная программа, которая выходит на канале девятый год. В утренних выпусках - репортажи, интервью, последние новости о конкретных делах и жизни Нижегородской Епархии. Задача программы - показать всю многогранность и многосторонность жизни православного человека, которая на самом деле яркая, интересная и насыщенная[4]. В «Источнике жизни» всегда можно увидеть, как живут православные люди в разных приходах Нижегородской Епархии. В программе можно познакомиться с

---

[1]ИИК Ислам в Нижнем Новгороде (электронный ресурс)/официальный сайт – электронные данные – Передача «Минарет» - 11.06.06 - www.islamnn.ru – заглавие с экрана.

[2] Там же.

[3] Телепрограмма «Шалом» (электронный ресурс)/ литературно-публицистический журнал и издательство – Нижний Новгород, март – 2004 - www.lechaim.ru – заглавие с экрана.

[4] Телепрограмма «Источник жизни» (электронный ресурс)/ Нижний Новгород – 2005 - www.smi-nn.ru – заглавие с экрана.

замечательными профессионалами, исполнителями удивительных по красоте стиха и распеву духовных песнопений. С помощью телевизионного православного канала можно также узнать о православных праздниках и традициях их отмечания.

«Армянский Коктейль» - телепрограмма, которая появилась год назад. Это сравнительно новая программа, в которой рассказывается история Армении, ее традиции, культура, достопримечательности, также звучит национальная армянская музыка и к тому же сообщается обо всех концертах, мероприятиях, которые пройдут в Нижнем Новгороде.

Газеты и журналы – после телевидения большое влияние на аудиторию оказывают газеты и журналы. В Нижегородской области существует очень мало национальных газет. На сегодняшний день выходят такие газеты как: «Медина аль ислам», «Мир мираш», «Аль - Хаят». Первая является общемусульманской, вторая – татарская, а третья – азербайджанская. Все они направлены на изучение исламского мира, на развитие ислама в регионе, а также на сохранение культуры и традиций в исламском обществе.

Однако, еще в 2004 году существовали газеты украинской, мордовской, армянской диаспор. Украинская – «Джерело», информационный выпуск Нижегородского общества украинской культуры, мордовская – «Эрзянь Ойме», общественное движение мордовской культуры «Ялгат», армянская – «Еркрамас», газета армян. Все эти газеты можно было найти в Центре межэтнического взаимодействия «ДИАЛОГ». Но, что касается сегодняшнего дня, то об этом центре и о газетах ничего не известно.

Интернет – одним из наиболее активным средством передачи сообщения является Интернет. Развитие Интернета в XX веке привело к тому, что любую информацию можно найти в нем, начиная от обычной информации, заканчивая глобальными проблемами. В Нижнем Новгороде существует несколько сайтов, в которых можно найти информацию про этнические группы, общины, которые находятся на территории Нижегородской области. К таким сайтам относятся: www.islamnn.ru, www.nizgar.ru, www.dialog-nn.org/ethnic_mozaic/smi.htm и другие. Эти сайты направлены на изучение исламской культуры, также можно узнать основные новости в исламской жизни общества и о влиятельных людях региона. Что касается, еврейского Интернет – сайта, то он находится на стадии разработки.

Таким образом, рассмотрев наиболее крупные общины области, телевидение и другие СМИ, мы приходим к выводу, что деятельность организаций направлена на стабилизацию положения этнических групп в обществе; улучшение проживания меньшинств в регионе; создания условий для продолжения изучений национальных языков, культуры и традиций народов, проживающих в регионе. Это предоставляет возможность для развития не только одного региона, а регионов вместе, что приведет к сплочению государства и таким образом, повысит статус России на международной арене, сделав ее более сильной и развивающейся страной.

ЛИТЕРАТУРА

1. Правительство Нижегородской области - www.government.nnov.ru
2. В Нижнем Новгороде начала работу Международная конференция диалог культур и межрелигиозное сотрудничество», ИА REGNUM - 07.09.06 - www.regnum.ru/news/700951.html.
3. Сайт национально-культурных объединений Нижегородской области, официальный сайт – www.nizgar.ru.
4. Из истории иудейской общины Н. Новгорода - Нижний Новгород, 23.09.2002 - religio-nn.narod.ru/konfesio/j-hist.htm.
5. ИИК Ислам в Нижнем Новгороде - Передача «Минарет» - 11.06.06 - www.islamnn.ru.
6. Телепрограмма «Шалом», литературно-публицистический журнал и издательство – Нижний Новгород, март – 2004 - www.lechaim.ru.
7. Телепрограмма «Источник жизни», Нижний Новгород – 2005 - www.smi-nn.ru.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԵՐԸ ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Երանուհի Մարգարյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Նիժնի Նովգորոդը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ամենախոշոր բազմազգ և տոլերանտ քաղաքներից մեկը: Նրանում ընթացող համաքաղաքային և ներհամայնքային միջոցառումները նպաստում են քաղաքի մշակութային կյանքի զարգացմանն ու քաղաքի հեղինակության բարձրացմանը: Նիժնի Նովգորոդի թաթարական, հայկական, ադրբեջանական, հրեական և մյուս համայնքների մշակութային ինքնավարությունը, որն արտահայտվում է հասարակական կազմակերպությունների, մամուլի, ռադիո-հեռուստաալիքների գործունեության ձևով, մեծապես պայմանավորում է քաղաքի և ողջ շրջանի մշակութային և հասարակական կյանքի ինքնատիպությունը: Իսկ մասնավորապես տեղեկատվական-հաղորդակցական գործընթացը նշանակալից չափով ծառայում է Նիժնի Նովգորոդի շրջանում ազգային խնդիրների կարգավորմանը:

THE ROLE OF THE INFORMATIVE-COMMUNICTIVE PROCEDURE IN THE REGULATION OF THE NATIONAL MATTERS OF NIZHNI NOVGOROD

Eranuhie Margaryan

SUMMARY

Nizhni Novgorod is one of the biggeist multinational and tolerant cities in the Russian Federation. Its city-wide and intercommunity events contribute to the development of the city's cultural life as well as the increase in the city's reputation. The cultural autonomy of Tatar, Armenian, Azerbaijani, Jewish and other communities of Nizhni Novgorod, which is manifested in non-governmental organizations and the mass media conditions the originality of the cultural and social life of the city and the whole region. The informative-communicative procedure particularly serves to regulate the national problems which arise in Nizhni Novgorod.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սարգիս Պետրոսյան
ԱՄՊՐՈՊԻ ԱՍՏԾՈՒ ՄԱԿԴԻՐՆԵՐԸ ԳԱՀԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ..... 3

Ռուսլան Ցականյան
ՆԱԲՈՊԱԼԱՍԱՐԻ (Ք.Ա. 625-605 ԹԹ.) ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
18-ՐԴ ՏԱՐԻՆ (B.M. 22047, 1-13) ԵՎ «Bīt- ᵐḪa-a-nu-ni-ia»-Ի
ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ..... 13

Արթուր Մելիքյան
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՇԱԿ ԱՌԱՋԻՆԻ ԴՐԱՄՆԵՐԻ ՎՐԱ 33

Հովհաննես Խորիկյան
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ 79

Վլադիմիր Դմիտրիև
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՀՌՈՄԵԱԿԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆԻ IV
ԴԱՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 91

Ֆելիքս Մովսիսյան
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ,
ԹԵ ՄԱՍՈՆԱԿԱՆ ԴԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆ..... 109

Արման Բերնեցյան
«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻՆ» ՌՈՒՄԻՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ 155

Սամսոն Քառյան
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ ՀԱՅ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԳՆԴԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ..... 168

Գագիկ Եթիմյան
ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՕԿՈՒՊԱՑԻԱՆ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ
ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ԴՐԱ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 191

Յուրիկ Ղուլյան
ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ
ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՐՑԸ (1919-1920 ԹԹ. ՄԱՅԻՍ) 203

Կարեն Խաչատրյան
ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԻԱՑՈՒՄԸ ՀՍԽՀ-ԻՆ 222

Երանուհի Մարգարյան
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԵՐԸ
ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՐՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ..... 234

СОДЕРЖАНИЕ

Саркис Петросян
ЭПИТЕТЫ БОГА ГРОЗЫ В ТРОННЫХ ИМЕНАХ..... 3

Руслан Цаканян
18-Й ГОД ПРАВЛЕНИИ НАБОПАЛАСАРА
(625-605 ГГ. ДО Р.Х.) (B.M. 22047, 1-13)
И ПРОБЛЕМА ЛОКАЛИЗАЦИИ «Bīt- ^{m}Ḫa-a-nu-ni-ia» 13

Артур Меликян
ИКОНОГРАФИЯ ИДЕИ НЕЗАВИСИМОСТИ НА
МОНЕТАХ АРШАКА I..... 33

Оганнес Хорикян
НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИЧЕСКОЙ
ГЕОГРАФИИ АТРОПАТЕНЫ..... 79

Владимир Дмитриев
МЕСТО И РОЛЬ АРМЕНИИ
ВО ВЗАИМООТНОШЕНИЯХ РИМСКОЙ ИМПЕРИИ
И САСАНИДСКОГО ИРАНА В IV В..... 91

Феликс Мовсисян
ВЕЛИКАЯ ФРАНЦУЗСКАЯ РЕВОЛЮЦИЯ
ИЛИ МАСОНСКИЙ ЗАГОВОР? 109

Arman Бернецян
„МАСЯЦ АГАВНИ” (МАСИСКИЙ ГОЛУБЬ)
ОБ ОБРАЗОВАНИИ РУМЫНСКОГО ГОСУДАРСТВА 155

Самсон Карян
К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ДЕЯТЕЛЬНОСТИ
АРМЯНСКИХ ДОБРОВОЛЬЧЕСКИХ
ОТРЯДОВ НА РУССКО-ТУРЕЦКОМ
КАВКАЗСКОМ ФРОНТЕ ВО ВРЕМЯ ПЕРВОЙ
МИРОВОЙ ВОЙНЫ..... 168

Гагик Етимян
ОККУПАЦИЯ КАРАКИЛИСА В 1918ГОДУ ТУРКАМИ И ЕЕ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ 191

Юрик Гулян
ПРОБЛЕМА ПЕРЕСЕЛЕНИЯ АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ ИЗ АЗЕРБАЙДЖАНА В АРМЕНИЮ (МАЙ 1919Г. – МАЙ 1920Г.)..... 203

Карен Хачатрян
СОВЕТИЗАЦИЯ ЗАНГЕЗУРА И ПРИСОЕДИНЕНИЕ К СОВЕТСКОЙ АРМЕНИИ)..... 222

Ерануи Маргарян
РОЛЬ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАЦИННЫХ ПРОЦЕССОВ В РЕГУЛИРОВАНИИ НАЦИОНАЛЬНЫХ ВОПРОСОВ В НИЖЕГОРОДСКОЙ ОБЛАСТИ 234

CONTENT

Sargis Petrosyan
EPITHETS OF DEITY OF THUNDER IN THRONE-NAMES 3

Rooslan Tsakanyan
THE 18TH YEAR OF THE REIGN OF NABOPALASAR (625-605 B.C.) (B.M. 22047, 1-13) AND THE PROBLEM OF LOCALLIZATION OF THE «Bīt- ᵐḪa-a-nu-ni-ia» 13

Arthur Melikyan
THE ICONOGRAPHY OF INDENPENDENCE IDEA ON THE CURRENCY OF ARSACES I 33

Hovhannes Khorikyan
SOME ISSUES ON HISTORICAL GEOGRAPHY OF ATROPATENE..... 79

Vladimir Dmitriev
THE ROLE OF ARMENIA IN THE RELATIONS OF ROMAN EMPIRE AND SASANIAN IRAN IN THE IV CENTURY 91

Felix Movsisyan
THE GREAT FRENCH REVOLUTION OR MASONIC CONSPIRACY 109

Arman Bernetsyan
"MASYAC AGHAVNI" THE FORMATION OF THE STATE OF ROMANIA 155

Samson Qaryan
THE MATTER OF THE ESTIMATION OF THE ARMENIAN VOLUNTARY ROUND SHOTS' ACTIVITIES IN THE RUSSIAN-TURKISH CAUCASIAN FRONT OF THE FIRST WORLD BATTLE..... 168

Gagik Yetimyan
TURKISH OCCUPATION OF GHARAKILISA IN 1918 AND ITS SOCIAL- ECONOMIC CONSEQUENCES 191

Yourik Ghulyan
THE PROBLEM OF THE ARMENIAN REFUGEES MIGRATION FROM AZERBAIJAN 203

Karen Khachatryan
THE SOVIETIZATION AND UNION OF ZANGEZUR WITH SOVIET ARMENIA 222

Eranuhie Margaryan
THE ROLE OF THE INFORMATIVE-COMMUNICTIVE PROCEDURE IN THE REGULATION OF THE NATIONAL MATTERS OF NIZHNI NOVGOROD 234

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սարգիս Պետրոսյան
Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դոցենտ

Ռուսլան Ցականյան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հայցորդ

Արթուր Մելիքյան
Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դոցենտ

Հովհաննես Խորիկյան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Վլադիմիր Դմիտրև
Պսկովի պետական համալսարանի դասախոս

Ֆելիքս Մովսիսյան
Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ

Արման Բերնեցյան
Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս

Սամսոն Քառյան
Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի պրոֆեսոր

Գագիկ Եթիմյան
Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ

Յուրիկ Ղուլյան
Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դոցենտ

Կարեն Խաչատրյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն

Երանուհի Մարգարյան
Նիժնի Նովգորոդի Լոբաչևսկու անվան պետական համալսարանի սպիրանտ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

Գիտաժողովը նվիրված է
հայ գրատպության 500-ամյակին

Համակարգչային ձևավորումը՝
Աշխեն Գալստյանի

Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60 x 84 1/16
Ծավալը՝ 15.6 մամուլ
Տպաքանակը՝ 101

Տպագրվել է «ՍԻՄ տպագրատուն» ՍՊԸ տպարանում

ՎԱՆԱՁՈՐ – 2012